– զորքերում իրավակարգի և զինվորական կարգապահության պատշաճ մա-կարդակի պահպանումը,

– հոգեծին կորուստների նվազեցումը⁷,

– զինծառայողների հոգևոր և ֆիզիկական ուժերի վերականգնումն ու պահ-պանումը,

– մարտական գործողությունների վարման շրջաններում զինծառայողների համար բարենպաստ բարոյահոգերանական ու տեղեկատվական իրադրության ստեղծումը,

– զորքերի և բնակչության պաշտպանությունը հավանական հակառակորդի բացասական տեղեկութահոգերանական ներգրծությունից,

– զորքերի հոգևոր-մշակութային ապահովումը, և այլն:

ԲՀԱ-ն կազմակերպվում է տեղեկատվական անվտանգության խնդիրների լուծման հաշվառմամբ և իրականացվում է խնչվես խաղաղ պայմաններում, այն-պես էլ պատերազմի ժամանակ բոլոր կատեգորիաների իրամանատարների կող-մից՝ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության որոշումների և հանձնարա-րականների, ինչպես նաև ԳԸ պետի իրամանների ու իրահանգների հիման վրա:

⁶ Տես նույն տեղում, Էջ 875:

⁷ Մարտական իրադրությունը ներառում է մի շաբթ տարրեր, որոնք, ընկալվելով մարդու զգայա-րաններով, էապես փոխում են նրա հոգեվիճակը և վարքը: Մարտական իրավիճակի տարրերն ընդուն-ված է անվանել «մարտի հոգեծին գործուներ», կամ «մարտական սորտներ»: Որոնք հանգեցնում են հոգեծին կորուստների (տես, օրինակ, *Kris Mackab*. Психологическая подготовка подразде-лений специального назначения. М., 2002, с. 48):

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՕՊԵՐԱՏԻՎ-ՄԱՐՏՎԱՐԱԿԱՆ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ.**

2009 թ. ապրիլ



ՊԲ հրամանատար գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանը (կենտրոնում)
և ՀՀ ԶՈՒ-ի Մարտական պատրաստության վարչության պետ
գնդապետ Ի. Մաքեոսյանը (առաջին պլանում՝ ձախից)
զորավարժության ժամանակ



ՀՀ ԶՈՒ-ի ՄՊՎ պետ գնդապետ Ի. Մաթևոսյանը (ձախից)
և ՀՀ ԶՈՒ-ի ՀԶՀՎ պետ գնդապետ Ա. Մարդույանը (կենտրոնում)
զորավարժության նախապատրաստական աշխատանքների քննարկման ժամանակ



Զորավարժության շրջանում թիրախային դաշտի
նախապատրաստման աշխատանքներ



Չորավարժության դեկավար և միջնորդական կազմի հրահանգավորում



Զրահատեխնիկան անցնում է գրոհի



Զորավարժության մտահղացման գեկուցում。
Կենտրոնում՝ զորավարժությունների ղեկավար գեներալ-մայոր Հ. Բաղմանյան



Զորավարժության արդյունքներով աջի ընկած զինծառայողների
խրախուսման ժամանակ

ԲՀԱ-ն ունի համալիր բնույթ և կատարվում է ըստ միասնական մտահղացման ու տեղեկատվական-դաստիարակչական, հոգեբանական, ուսումնառության, մշակութամանցային աշխատանքների, հակառակորդի բացահայտման տեղեկութա- հոգեբանական ներգործությունից գորքերի պաշտպանության կազմակերպման պլանի:

Ժամանակակից տեղային պատերազմների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ ԲՀԱ-ի կարելի է հասնել՝

–ԲՀԱ-ի ուժերի ու միջոցների մշտական մարտական և զորահավաքային պատրաստությամբ,

–իրամանատարի կողմից ճիշտ ժամանակին ԲՀԱ-ի խնդիրների առաջա- դրմամբ,

–ԲՀԱ-ի հստակ պլանավորմամբ և բարձր մակարդակի կազմակերպմամբ,

–գորքերի գործողությունների հիմնական ուղղությունների և գլխավոր խնդիր- ների կատարման վրա ԲՀԱ-ի հիմնական ուժերի կենտրոնացմամբ,

–ԲՀԱ-ի կազմակերպման ժամանակ դաստիարակչական մարմինների և շտաբների, կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, հա- սարակական կազմակերպությունների հետ մշտական ներդաշնակ փոխգործութ- յան ապահովմամբ,

–բարոյահոգեբանական և տեղեկատվական իրադրության մշտական վեր- լուծությամբ ու զարգացման կանխատեսմամբ,

–դաշնադրային խմբավորումների կազմում վարվող մարտական գործողութ- յունների ժամանակ զորքերի ԲՀԱ-ի համար պատասխանառու մարմինների սերտ համագործակցությամբ,

–ԲՀԱ-ի միջոցների, ուժերի և ռեզերվի առկայությամբ, դրանց կշռադատված և հմուտ կիրառմամբ,

–ԲՀԱ-ի միջոցների և ուժերի պատեհաժամ տարաշարժով,

–ԲՀԱ-ի համակարգի բարձր մակարդակի կենսունակության պահպանմամբ,

–ԲՀԱ-ի միջոցների և ուժերի համաձայնեցված ու հմուտ կիրառմամբ,

–ԲՀԱ-ի կայուն, անընդհատ և բողարկված կառավարմամբ⁸:

Պաշտպանական բարեփոխումների պահանջներին համապատասխանող ԲՀԱ-ի օպտիմալ համակարգի ձևավորման նպատակով կարևոր ենք համարում ուսումնասիրել առաջին չեչենական պատերազմի (1994 թ. դեկտեմբեր–1996 թ. օգոստոս), մասնավորապես՝ ՌԴ ԶՈՒ-ի հրամանատարական կազմի կողմից իրականացվող ԲՀԱ-ն: Այս ներառում է բազմաթիվ տարրեր ու գործոններ, որոնց հաշվառումը խիստ կարևոր է ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի պատշաճ մակարդակի ԲՀՎ պահպանման համար: Այս հարցի շրջանակներում ուշագրավ է հոգեբա- նական գիտությունների թեկնածու Վ. Հ. Մարգարյանի վերլուծությունը: Իր գիտա- կան աշխատություններից մեկում նա գրում է, որ չեչենների տեղեկութահոգե-

⁸ Տես, օրինակ, *Виталий Азаров*. Утверждая в сердцах воинства силу. «Красная Звезда», 23 июня 2000 г.:

բանական ներգործության թուլացման և ՈՒ ԶՈՒ-ի անձնակազմի պատշաճ մակարդակի ԲՀՎ պահպանման անարդյունավետությունը պայմանավորված էր միշտ էական պյուրլեմներով: Մասնավորապես, նա նշում է, որ «չեղենական առաջին պատերազմի մարտական իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղեկութափերանական ներգործությանը հակազդման ՈՒ ԶՈՒ-ի համակարգն ուներ լուրջ թերություններ: Քարոզության հայեցակարգի մշակումը, տեղեկատվական նյութերի պատրաստումը, լրագրողների հետ նպատակային աշխատանքը, գորքերում բարոյահոգեբանական մթնոլորտի գնահատումը և քարոզչական աշխատանքի համար հրահանգների մշակումը, բարենպաստ հասարակական կարծիքի ձևավորումը տեղեկութափերանական (տեղեկութաքարոզչական) բնույթի այն խնդիրներն էին, որոնք միշտ չեն, որ իրենց արտացոլումն էին ստանում ուազմական կառավարման մարմինների գործունեության մեջ, ինչն էլ բարդացնում էր մարտական խնդիրների կատարումը»⁹:

ՀՀ ԶՈՒ-ի ԲՀՎ-ի արդյունավետ համակարգի մշակման համար անհրաժեշտ է նաև հանգամանորեն վերլուծել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների բանակներում գինծառայողների բարոյահոգեբանական պատրաստման (ԲՀՊ) համակարգը: Անշուշտ, դա հնարավորություն կտա՝

առաջին ստանալու այդ խնդիրի հետ կապված բազմակողմանի տեղեկույթ, երկրորդ լավագույնս համադրելու տարրեր երկրների գորքերի ԲՀՎ-ի համակարգերը և մեխանիզմները, դրանք համեմատելու ՀՀ ԶՈՒ-ում գործող համանման համակարգերի և մեխանիզմների հետ,

երրորդ՝ ընդօրինակելու ուշադրության արժանի համակարգերը, մեխանիզմները՝ տեղային պայմանների հաշվառմանը,

չորրորդ՝ որոշելու այն մերողների ու ձևերի արդյունավետության սահմանները, որոնք կիրառվում են ԲՀՎ-ի ընթացքում,

հինգերրորդ՝ մշակելու ԲՀՎ-ի նկատմամբ հայեցակարգային մոտեցումներ, վեցերրորդ՝ ստեղծելու գորքերի գործունեության ԲՀՎ-ի օպտիմալ համակարգ:

Օրինակ՝ ամերիկացի մասնագետների կարծիքով ԲՀՊ-ն մարտունակության մակարդակի բարձրացման կարևոր տարր է, որն անհրաժեշտ է դիտել որպես երկրի ուազմական անվտանգության պահովման համակարգի կարևոր բաղադրիչ: Միջազգային փորձագետները նշում են, որ ԱՄՆ-ի ԶՈՒ-ի անձնակազմի մասնակցությունը վերջին տարիների ուազմական հակամարտություններին առավելացույնս նպաստում է համաշխարհային հասարակության շրջանում այնպիսի բանակի կերպարի ձևավորմանը, որը համապատասխանում է ամենախիստ ստանդարտներին և ընդունակ է պատեհածամորեն արձագանքելու աշխարհում ուազմաքարաքական իրադրության ցանկացած փոփոխությունների: Անձնակազմի կամային հատկությունները և բարոյահոգեբանական պատրաստումը Պենտա-

⁹ Վ. Հ. Մարգարյան, Հավանական հակառակորդի բացասական տեղեկութափերանական ներգործությունից պաշտպանության հարցի շուրջ: «ՀԲ», 2007, հմ. 4: Ավելի հանգանաորեն տես նաև այդ հոդվածում նշված գրականության մեջ:

գոնում դիտում են որպես ժամանակակից և հատկապես ապագա ռազմական օպերացիաների հիմք: Իրաքում 2003 թ. մարտ ամսից ծավալված մարտական գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարտական ստրեսը, այնուամենայնիվ, ամբողջ ռազմաշախվի ընթացքում բացասական ազդեցություն գործեց առաջադրված խնդիրների կատարման արդյունավետության վրա¹⁰, հակադրայան դաշնարդության միավորված ուժերի գինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վրա¹¹: Պատահական չէ, որ անձնակազմի հոգեբանական բնութագրիչների ուսումնասիրությունը մշտապես եղել է ԱՄՆ-ի ԶՈՒ-ի բոլոր կատեգորիաների հրամանատարների գործունեության կարևոր ուղղություններից մեկը¹²: ԱՄՆ-ի ռազմաքաղաքական դեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստման հարցերին՝ տեղային հակամարտություններին, խաղարարական օպերացիաներին, համընդհանուր պատերազմներին մասնակցելու համար¹³: Այս տեսանկյունից ԱՄՆ-ի ԶՈՒ-ի ԲՀՊ-ն իրականացվում է զորքերի բոլոր տեսակների պատրաստման ընթացքում, ընդ որում, կիրառվում են առանձնահատուկ ձևեր ու մեթոդներ (մասնագիտացված ծրագրեր): Նույն սկզբունքներով են գործում նաև ՍԵծ Բրիտանիայի ԶՈՒ-ի և Գերմանիայի Բունդեսվերի անձնակազմների ԲՀԱ-ի համակարգերը¹⁵:

ՆԱՏՕ-ի և ՌԴ ԶՈՒ-ի ԲՀԱ-ի համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ դաստիարակչական ներգործությունը չի կարելի նույնացնել ԲՀԱ-ի հետ, այսինքն՝ մարտական գործողությունների ԲՀԱ-ն կապված է ոչ միայն և ոչ այնքան զինծառայողի հատկապես մասնագիտական առումով կարևոր հատկությունների ձևավորման, որքան առավել բարդ, կյանքի համար վտանգավոր, ոչ կայուն իրավիճակներում նրա հոգեկանի հուսալի գործառնան համար անհրաժեշտ պայմանների ստեղծման հետ¹⁶: Հետևաբար, մարտում հաղթանակի համելու համար գրագետ հրամանատարը նախ պետք է հոգ տանի անձնակազմի ԲՀՎ մակարդակի բարձրացման այնպիսի եղանակների մասին, ինչպիսիք են՝

– գործողությունների առավել արդյունավետ մարտավարության պարզաբնույնը անձնակազմին,

¹⁰ Stu Steve Bowman. Iraq: U. S. Military Operations. «CRS Report for Congress». October, 2003 (<http://fpc.state.gov/documents/organization/25375.pdf>):

¹¹ Stu C. H. Воронцов. Морально-психологическое состояние военнослужащих США и Великобритании в ходе военной операции в Ираке. «Зарубежное военное обозрение», 2005, № 5:

¹² Stu «Inside the Army» (<http://www.army.mil/news/insidethearmy/>):

¹³ Stu «Military, political leaders discuss terrorism solutions» (<http://web.mit.edu/newssoffice/2001/terrorism1-1107.html>):

¹⁴ Stu Howard Olsen, John Davis. Training U.S. Army Officers for Peace Operations: Lessons from Bosnia (<http://www.usip.org/pubs/specialreports/sr991029.html>):

¹⁵ Stu M. Ю. Зеленков. Морально-психологическая подготовка войск в зарубежных армиях. «Военная мысль», 2001, № 1:

¹⁶ Stu C. B. Гончаров. Управление морально-психологическим обеспечением боевых действий: вопросы теории и практики. «Военная мысль», 2004, № 2:

—քարոյալքող տեղեկույթից պատմեշավորումը և խուճապի մատնվելու հակում ունեցող անձանց հետ հատուկ աշխատանքների կատարումը:

Ներկայում ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի ԲՀԱ-ի համակարգի ձևավորման գործընթացը շարունակվում է ըստ պաշտպանական բարեփոխումների պահանջների: Կառուցվածքային առումով այն ներառում է հետևյալ գործունեությունը՝ գաղափարադաստիարակչական և տեղեկատվական, ռազմասոցիալական, սոցիալիրավական, մշակութաժամանցային, հոգեբանական, տեղեկատվական-հոգեբանական (պաշտպանություն հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից): Այդ ուղղություններով տարվող աշխատանքը պետք է վերաիմաստավորվի ու նորովի մշակվի՝ ներկայիս իրողության հաշվառմամբ:

Այսպես. հավանական հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործության կանխման կամ հնարավորինս քուլացման համար անձնակազմի դաստիարակության ուղղությամբ իրականացվող միջոցառումների հետ մեկտեղ առաջին պլան է մղվում գորքի տեղեկութային ապահովման միջոցառումների համալիրը. ընդամին այդ երկու տիպի միջոցառումների համակարգված և համարաված կիրառումը հնարավորություն կտա ապահովելու զինծառայողների արդյունավետ բարոյահոգեբանական կայունությունը, ուստի և՝ երկրի պաշտպանումակությունը¹⁷:

Հոգեբանական օպերացիաների ոլորտում իրականացվող գործունեության արդյունավետության չափանիշներից մեկը համապատասխան կառույցների կողմից միջազգային կարծիքի ձևավորման ունակությունն է: Պետք է նշել, որ անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու առումով Հայաստանի Հանրապետությունը կարևորում է իր ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտում, Հայաստանի և հայության մասին ճշմարտության արիեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակազդումը ապատեղեկատվությանն ու բարողությանը¹⁸:

Այսպիսով՝ որքան լավ է զինվորը հոգեբանական առումով պատրաստված այս կամ այն ուսումնամարտական խնդիրների կատարմանը, այնքան բույլ է նրա հոգեբանական լարվածությունը, և նրա հոգեկանը շատ ավելի արագ է հարմարվում լարված իրավիճակներին: Այլ կերպ ասած՝ որպեսզի մարտիկը քաջարար և վճռականորեն գործի ինչպես մարտական իրավիճակում, այնպես էլ մարտական հերթապահության խնդիրների կատարման ժամանակ, հարկավոր է կանոնավոր ու նպատակառողված կերպով ազդել ԲՀՎ բարոյական-քաղաքական և հոգեբանական բաղադրիչների վրա: Այս տեսանկյունից ԲՀԱ-ն մարտական գործողու-

¹⁷ Տես Վ. Հ. Մարզարյան, «Հոգեբանական օպերացիան նպատակները և միջոցները: «ՀԲ», 2001, հմ. 4, Առյանի՝ Զինծառայողների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից: «ՀԲ», 2002, հմ. 3, ինչպես նաև այդ հոդվածներում նշված գրականությունը, Առյանի՝ Տեղեկատվական դաշտի վերահսկողությունը հոգեբանական օպերացիաների տեսանկյունից: «ՀԲ», 2004, հմ. 2:

¹⁸ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 28:

թյունների ապահովման կարևոր տեսակներից մեկն է: Բարոյահոգերանական ապահովմամբ լուծվում է երեք կարևոր խնդիր:

– զինծառայողների մեջ ձևավորվում և ամրապնդվում են այն բարոյական հատկությունները, որոնք անհրաժեշտ են հայրենիքի պաշտպանին,

– զինծառայողների մեջ ձևավորվում են հոգեբանական կայունություն, պատրաստություն ակտիվ մարտական գործողություններին,

– զինծառայողների մեջ ձևավորվում է հակառակորդի բացասական տեղեկութափերանական ներգործությանը չենթարկվելու ընդունակություն:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ գործերում անձնակազմի ԲՀԱ-ի արդյունավետության կարևոր պայմաններից մեկը նախազորակոչային տարիքի երիտասարդության շրջանում զինվորական ծառայության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումն է: Սա համարի խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է տարրեր գերատեսչությունների համարաված նպատակային գործունեություն ըստ միջգերատեսչական եղանակով մշակված համապետական ռազմավարության, որում ներառված լինի ինչպես Զինված ուժերում, այնպես էլ ամրող բնակչության շրջանում տարվող աշխատանքի ծրագիրը: Միայն բոլոր համապատասխան կառույցների հանատեղ ջանքերով է հնարավոր ապահովել բարձր մարտական ոգի՝ որպես մեր ազգի ու պետության գոյատևման գրավական:

ЗАДАЧИ МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ЛИЧНОГО СОСТАВА ВС РА В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

А. Дж. АЛЕКСАНЯН, полковник, начальник Управления
по работе с личным составом ВС РА

РЕЗЮМЕ

Морально-психологическое обеспечение (МПО) войск является одним из самостоятельных видов обеспечения и деятельности и нацелено на поддержание боевого духа и соответствующего уровня морально-психологического состояния военнослужащих. В рамках осуществляемых в РА оборонных реформ происходят пересмотр принципов построения системы МПО и ее усовершенствование. С этой целью изучается опыт иностранных армий (как РФ, так и стран НАТО), в особенности, в условиях вооруженных конфликтов, а также и богатая зарубежная, и отечественная научная литература по данной тематике. Это позволяет осуществлять реорганизацию МПО ВС РА на научной основе и избегать возможных ошибок.

Поскольку МПО является сложным комплексом задач психологического и информационного характера, осуществляемых как в ВС, так и среди всего населения, то для их решения необходимо объединение усилий различных ведомств РА на основе общегосударственной стратегии.

THE TASKS OF MORAL-PSYCHOLOGICAL SUPPORT
OF THE ARMED FORCES PERSONNEL
IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS

A. J. ALEXANYAN, Colonel, Head of the Board
on Activities with the Personnel of the RA Armed Forces

SUMMARY

Troops' moral-psychological support (MPS) is one of the independent kinds of support and activity and is targeted at maintaining the fighting spirit and corresponding level of servicemen's moral-psychological state. The review of principles of forming the MPS system and its improvement take place in the framework of defense reforms being implemented in the RA. For this purpose the experience of foreign armies (both the RF and NATO countries), especially in conditions of armed conflicts, as well as both rich foreign and native academic literature on the given subjects are examined. That allows to carry out the reorganization of the MPS of the RA Armed Forces on the academic basis and avoid possible mistakes.

As the MPS is a complicated complex of tasks of psychological and informational essence, being implemented both in the Armed Forces and among the whole population, it is necessary to solve them combining efforts of the RA different agencies upon the basis of the all-state strategy.

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐ**

*Ի. Ժ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի
Մարդական պատրաստության* վարչության պետ*



Նախարան

Այսօր, երբ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման գործընթացում կատարվում են արմատական փոփոխություններ, երբ դրա հետ կապված էապես փոխվում են ռազմավարությունն ու մարտավարությունը, համագորային մարտի արդյունավետ վարման եղանակներին տիրապետող բանակ ունենալը դարձել է ժամանակի պահանջ: Մեր բանակը, Աղքադանի կողմից շիայտարարված պատերազմում տանելով փայլուն հաղթանակներ, ապացուցեց, որ տարածաշրջանի ամենամարտունակ, ամենակազմակերպված բանակներից մեկն է: Սակայն չի կարելի ապրել միայն անցյալով, ապավինել պատմությանը, պետք է խելամիտ կերպով զարգացնել ձևավորված ավանդույթները, ունենալ իր մարտունակության մակարդակը մշտապես բարձրացնող, պատշաճ մարտական պատրաստականությամբ բանակ, որն ունակ լինի հետ մղելու հնարավոր հակառակորդի ազրեսիան՝ նրան անընդունելի կորուստներ պատճառելով¹:

Մարտունակության մակարդակի բարձրացում՝ բարեփոխումների գերակա նպատակ

Մշտապես գտնվելով ռազմական գործողությունների վերսկսման վտանգի առջև՝ ՀՀ ԶՈՒ-ն պարտավոր է պահպանել բարձր աստիճանի մարտունակություն՝ մշտապես գտնվելով բարձր մակարդակի մարտական պատրաստության վիճակում: Ոխտի ՀՀ ԶՈՒ-ում իրականացվող բարեփոխումների գերակա նպատակն է ժամանակակից մարտահրավերներին համապատասխանող պատշաճ մակարդակի մարտական պատրաստականության ապահովումը մարտական պատրաստության որակի բարձրացման և արդյունավետության մեծացման միջոցով:

* Սույն հոդվածում հեղինակի պնդմամբ *поготововка* „готовность” ուստերեն ռազմագիտական տերմինների դիմաց մեր հանդեսում ընդունված և հայերենի նորմերին համապատասխանող «պատրաստում» և «պատրաստություն» տերմինների փոխարեն համապատասխանաբար օգտագործված են պաշտպանության համակարգում տարածում ստացած «պատրաստություն» և «պատրաստականություն» փոխարեն տերմինները: – Խնկը:

¹ Stein A. I. Калистратов. К вопросу о формах и способах ведения вооруженной борьбы. «Военная мысль», 2003, № 12:

Հակառակորդի ոտնձգություններին հաջողությամբ դիմակայելու համար անհրաժեշտ է բարձրացնել անձնակազմի մասնագիտական պատրաստության մակարդակը, հարտացնել նրա տեսական գիտելիքները, գործնական ունակությունները, դաշտային վարժվածությունը և ամրապնդել մարտական ոգին: Պետության համար տնտեսապես շահավետ չել պահել մի բանակ, որը չի գրաղվում մարտական պատրաստությամբ կամ դրան հաղորդում է ձևական բնույթ²:

ՀՀ ԶՈՒ-ում պետք է նշտապես կատարելագործել զորքերի հրամանատարական և մարտական պատրաստությունը՝ աշխարհում և, մասնավորապես, մեր տարածաշրջանի անվտանգային միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին ու նոր սպառնալիքներին, ինչպես նաև համաշխարհային ռազմարվեստի զարգացմանը համապատասխան:

Հիմնավորված որոշումներ ընդունելու, ենթականներին խնդիրները ճիշտ առաջարկելու, մարտերը պլանավորելու, փոխգործությունը և համակողմանի ապահովումը կազմակերպելու համար անհրաժեշտ է զարգացնել բոլոր օդակների հրամանատարների հմտություններն ու գործնական ունակությունները:

Զինված ուժերի մարտունակությունը պատշաճ մակարդակի հասցնելու համար հարկ է մշտապես կատարելագործել զորամիավորումների, զորամասերի և բոլոր զորատեսակների ուսումնական ծրագրերը, ինչպես նաև մշակել ու ներդրել ստուգման և զնահատման շափանիշների արդյունավետ մեխանիզմ: Այս ծրագրերը պետք է մշակվեն զորամիավորումների և զորամասերի հրամանատարների, ԳԸ և զորատեսակների շտաբների համագործակցությամբ:

Անհրաժեշտ է կատարելագործել, իսկ ավելի ստույգ՝ էապես վերանայել վարժական միջոցառումների համակարգը: Այս առնչությամբ հատուկ կարևորություն կստանա անմիջական համագործակցությունը ՀՀ ԶՈՒ-ի ԳԸ տարրեր օդակների և ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի միջև: Նոր տեսակների սպառագինության և ռազմական տեխնիկայի կիրառման կանոնակարգումը և դրանց ներառումը ուսումնավարժական ծրագրերում պետք է սկսվի հնարավորինս շուտ, երբեմն անգամ նախքան սպառագինության փոխանցումը գորքեր:

Անհրաժեշտ է կատարելագործել սերժանտական կազմի ուսուցման ծրագրերը³: Լավ պատրաստված ու գիտելիքներով օժտված արհեստավարժ սերժանտը դառնում է ոչ միայն կրտսեր հրամանատար, այլև զինվորների առաջին ուսուցիչը: Այդ դեպքում սպառները հնարավորություն կունենան ավելի շատ ժամանակ հատկացնելու իրենց ենթակա ստորաբաժնումների մարտական պատրաստության ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման նկատմամբ իրատեսական մոտեցումների ձևավորմանը:

Զինված ուժերի առջև դրվող նոր խնդիրները, զորքերի պրոֆեսիոնալացման

²Տես A. I. Скородумов. Боечная подготовка войск (сил): актуальные проблемы и пути их решения. «Военная мысль», 2003, № 9:

³Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեսրեր», 2007, հմ. 4, էջ 54:

գործընթացը (արիեստավարժ սերժանտական կազմի ստեղծում և նոր պահեստագորային հայեցակարգի ներդրում) կպահանջն ներկայիս ուսումնավարժական համակարգի զգալի փոփոխությունների: Սպառնալիքների հստակեցումը, որը պետք է կատարվի պաշտպանության ուղղմավարական վերաբայման շրջանակներում, իր հերթին կհանգեցնի ՀՀ ԶՈՒ-Ի մարտական պատրաստության առաջնահերթությունների ճշգրտմանը: Օրինակ՝ առկա է լեռնային պայմաններում ստորաբաժանումների և զորամասերի գործելու հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն: Ուստի պետք է էապես զարգացնել համապատասխան ուսումնական բազան, պատրաստել համապատասխան մասնագետների:

ՀՀ ԶՈՒ-Ի անձնակազմի մարտական պատրաստության և դաստիարակության միասնական համակարգի կատարելագործումը

Մարտական պատրաստության արդյունավետությունը և գորքերի մարտունակությունը մեծապես պայմանավորված են անձնակազմի համապատասխան դաստիարակությամբ ու դրանից ածանցված՝ բարոյահոգեբանական վիճակով⁴: Ուստի բարեփոխումների կարևորագույն նպատակներից մեկը կարելի է համարել մարտական պատրաստության և դաստիարակության միասնական համակարգի կատարելագործումը՝ դրանց սիներգիզմի ապահովմամբ:

Ինչպես կատարելագործել ՀՀ ԶՈՒ-Ի անձնակազմի մարտական պատրաստության և դաստիարակության միասնական համակարգը, ինչպես նաև բարձրացնել մարտական պատրաստության մակարդակը, ի՞նչ ստորեցնել զորքերին, որպեսզի նրանք պատրաստ լինեն դիմակայելու և հաղթելու հավանական հակառակորդին: Սրանք այն հարցերն են, որոնք բարեփոխումների այս փուլում ծառացել են մեր գինված ուժերի առջև: Ուստի Հայոց բանակը պետք է ունենա բարձր մակարդակի պատրաստականություն, որի կարևորագույն բաղկացուցիչներն են՝ մարտական, բարոյահոգեբանական և ֆիզիկական պատրաստությունը:

Բարդ մարտական գործողությունների վարման վարպետությունը հնարավոր է միայն բարձր գիտակցականության, մտավոր հասունության և հոգեբանական կայունության առկայության պայմաններում: Պատերազմները վարում են և դրանցում հաղթանակի են հասնում ոչ թե մերենաները, այլ մարդիկ: Սպառազինության և ուղղմական տեխնիկայի արագ զարգացման, մարտական գործողությունների վարման եղանակների անընդհատ կատարելագործման ու նոր եղանակների մշակման պայմաններում բարձր մարտունակության ապահովման համար անհրաժեշտ է ունենալ արիեստավարժ և խոր գիտելիքներ ունեցող հմտու սպայակազմ: Ուստի շատ կարևոր է մարտական պատրաստության, ուղղմական դաստիարակության գործընթացների ճիշտ, գիտականորեն հիմնավորված կազմակերպությունը: Միայն նման դեպքերում հրամանատարները կկարողանան մշակել ու կիրառել մարտական պատրաստության և դաստիարակության արդյունավետ

⁴ Stev A. I. Скородумов. Единая система боевой подготовки и воспитания военнослужащих. «Военная мысль», 2004, № 2:

գործնական միջոցներ ու հնարներ, ձեռք բերել ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ անձնակազմին ուսուցանելու և դաստիարակելու պատշաճ ունակություն:

Ուսուցանական արվեստի հիմնարար սկզբունքները վաղոր հայտնի են: Սակայն այսօր մենք պետք է կարողանանք նորովի իմաստավորել դրանք՝ հիմնվելով մեր ուսուցանական առանձնահատկությունների, ուսուցանական և տնտեսական հնարավորությունների վրա և միաժամանակ հաշվի առնելով մարտական պատրաստության գործընթացի կատարելագործման արդի համաշխարհային միտումները: Այս գործում մենք պետք է սերտորեն համագործակցենք ուսուցանական կրթության համակարգում գործող ուսումնական հաստատությունների և համապատասխան կառույցների հետ:

Չորքերին պետք է ուսուցանել այն ամենը, ինչն անհրաժեշտ կլինի կիրառել ուսուցանական գործողությունների ընթացքում: Այս սկզբունքը որոշում է մարտական պատրաստության պայմանները և ուսուցման բովանդակությունը, ուսուցմանը տալիս է ուսուցանական ուղղվածություն և ապահովության կապը նախորդ պատերազմների փորձի ու զինվորական գործի զարգացման մակարդակի հետ, արտահայտում է տեսության և պրակտիկայի առնչությունը: Այս սկզբունքով դեկավարվել են բոլոր տաղանդավոր գորավարները:

ՈՒսուցման ընթացքում զինծառայողների գործողությունները բազմաբնույթ են՝ սկսած դասախոսությունների ունկնդրումից մինչև գործնական պարապմունքները: Սկզբունքը դա մի ճանաչողական, ստեղծագործական գործընթաց է, որում համակցվում են տեսական ու գործնական աշխատանքները, գիտելիքների յուրացումն ու կիրառումը:

Պարապմունքների ու գորավարժությունների ընթացքում զինծառայողների ձեռք բերած գիտելիքները, ունակություններն ու հնտությունները օգտագործվում են լաւ նախանշանակման: Յուրացման ամրությունը ընթացքի և յուրաքանչյուր օլակի հիմքը գործնականում գիտելիքների կիրառումն է: Ցավոք, որոշ սպաներ (զինծառայողներ) ամենօրյա գործունեության մեջ ամրողությամբ չեն կիրառում իրենց գիտելիքները, այլ դեկավարիում են իրենց կենցաղային հայացքներով ու պատկերացումներով: ՈՒստի և՛ սպաներին, և՛ շարքային զինծառայողներին անհրաժեշտ է հատուկ ուսուցանել մտավոր և գործնական հնտությունների գուգակցման հնարներ: Ստացած գիտելիքների կանոնավոր կիրառման և վարժությունների կատարման ընթացքում զինծառայողները ձեռք են բերում համապատասխան ունակություններ ու հնտություններ: Այսպիսով՝ զինծառայողների ուսուցման գործընթացը պետք է հանդես գա որպես գիտելիքների հաղորդման, պրակտիկ գործունեության, անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական հարաբերությունների ձևավորման և պարապմունքների ու գորավարժությունների ժամանակ զինծառայողների դաստիարակության դեկավարման և կառավարման միասնական, ներդաշնակորեն գործող համակարգ:

Զինծառայողներն առաջին հերթին պետք է ուսումնասիրեն ժամանակակից

պատերազմների, հատկապես՝ լեռնային պայմաններում ռազմական գործողությունների բնույթը ու առանձնահատկությունները⁵, երկրի ռազմական հայեցակարգի հիմնական դրույթները⁶, մարտի դեկավարումը, գենրի մարտական հատկությունները, ինչպես նաև նախորդ պատերազմների փորձը: Ղեկավարվել այս սկզբունքներով՝ նշանակում է ուսուցման պայմանները համապատասխանեցնել պատերազմական պայմաններին՝ պարապմունքների ու զորավարժությունների միջոցով պահպելով բարձր մակարդակի մարտական պատրաստություն:

Զինծառայողների ուսուցման ու դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպել և իրականացնել այնպես, որ նրանք պարզ կերպով պատկերացնեն իրենց առջև դրված խնդիրները, ցուցաբերեն նեծ ակտիվություն, նախաձեռնողականություն և ինքնուրույնություն:

Վերջաբան

Ամփոփելով ասվածը՝ հարկ ենք համարում նշել, որ ապագայում, համապատասխան ուսումնավարժական նյութերի և ուղեցույց փաստարդերի մշակումից հետո, պետք է ձգտենք հնարավորինս նվազեցնելու գորամասերում կենտրոնական ապարատի կողմից իրականացվող ստուգումների թիվը: Փոխարենը այդ ստուգումները կարող են իրականացվել հրամանատարաշտարային, մարտավարական գորավարժությունների, մարզումների կամ պակաս ծախսեր պահանջող համակարգչային նմանարկող ծրագրերի միջոցով, ինչը հնարավորություն կտա ստուգումները կատարելու նաև զորամիավորումների մակարդակով:

ՀՀ ԶՈՒ-Ի գորամասերում մարտական պատրաստության գործընթացի ուսումնափոխությունը կայում է, որ գինծառայողների գերակշռող մասը պատվով է կատարում իր գինվորական պարտքը: Սակայն ռազմական գործն ինտենսիվ կերպով զարգանում է, շարունակվում է գենքի և մարտական տեխնիկայի արդիականացումը, ինչը բարդացնում է անձնակազմի խնդիրները, ավելի է խստացնում ուսուցմանն ու դաստիարակությանը ներկայացվող պահանջները:

Միայն այն սպան է ունակ հաջողությամբ կատարելու իր պարտականությունները, որը խորապես յուրացրել է զինվորական դաստիարակության սկզբունքներն ու մեթոդները, հմտորեն դեկավարում է ենթականներին և մեթոդապես գրագետ է կազմակերպում պարապմունքները:

Պաշտպանական բարեփոխումների համատեքստում՝ ժամանակակից պահանջներին համարայլ ընթանալու համար, յուրաքանչյուր զինծառայող, յուրաքանչյուր սպա պետք է կատարելագործի իր մասնագիտական պատրաստությունը, մշտապես խորացնի իր գիտելիքները, այդ թվում և զինվորական հոգեբանության ու դաստիարակության բնագավառում:

Այժմ ավելի, քան երբեմ, պետք է իրաժարվել կարծրացած մտածելակերպից,

⁵ Այս մասին ավելի հանգանարեն տես C. A. Борданов. Вероятный облик вооруженной борьбы будущего. «Военная мысль», 2003, № 12, նաև՝ И. Н. Воробьев. Опыт боевого применения специализированных формирований на горных ТВД. «Военная мысль», 2003, № 12:

⁶ Տես «ՀՀ ռազմական դոկտրինա»:

և արմատական փոփոխություններ կատարել սպաների ստեղծագործական մտածողության մեջ։ Յուրաքանչյուր հրամանատար պետք է հստակ գիտակցի, որ հնարավոր չէ լուծել մարտական պատրաստության և դաստիարակության խնդիրները՝ առանձնացնելով մեկը մյուսից։

ОБЕСПЕЧЕНИЕ ОБОРОНОСПОСОБНОСТИ И БОЕВОЙ ПОДГОТОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ РА- ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ОБОРОННЫХ РЕФОРМ

И. Ж. МАТЕВОСЯН, полковник,
начальник Управления боевой подготовки ВС РА

РЕЗЮМЕ

Одной из основных целей реформ оборононой организации РА является повышение боеспособности ВС РА. Боеспособность соединений, воинских частей и подразделений определяется многими факторами, но к основным из них безусловно относится уровень боевой выучки и морально-психологического состояния личного состава. Эти качества военнослужащих находятся в неразрывной взаимосвязи и, как свидетельствует опыт войн и вооруженных конфликтов, являются важнейшими составляющими боевого потенциала противоборствующих сторон, во многом определяющими ход и исход войны. В статье рассматривается ряд вопросов боевой подготовки и уровня боевой выучки, а также морально-психологической подготовки ВС РА, что затрагивает некоторые аспекты реформ в этой области.

ENSURING DEFENSE CAPABILITY AND COMBAT TRAINING OF THE RA ARMED FORCES – A PRIORITY TASK OF DEFENSE REFORMS

I. Zh. MATEVOSYAN, Colonel,
Head of the Board of Combat Training of the RA Armed Forces

SUMMARY

One of the main goals of the RA defense organization reforms is increasing fighting efficiency of the RA Armed Forces. The fighting efficiency of formations, military units and sub-units is conditioned by many factors, but the basic ones are undoubtedly the level of combat preparedness and moral-psychological state of the personnel. Those qualities of servicemen are inseparably correlated, and as the experience of wars and armed conflicts shows they are the most important components of the fighting potential of conflicting parties, which mainly determine the course and outcome of a war. In the article a number of problems of combat training and level of combat preparedness, as well as of the moral-psychological attitude development of the RA Armed Forces are examined, and that touches upon some aspects of reforms in that sphere.

ԻՄՐԱՅԵԼԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ
ԶԻՆՎՈՐԻ ՄԱՐՏՈՎԱԿԱՆ ՈԳՈՒ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ՝
ՀՀ ՊԱՇՏՈԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ
Հ. Ա. ՔՈԹՄԱՆՋՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական զիրուրյունների դոկտոր
(ՈԴ), Ռուսաստանի Ռազմական զիրուրյունների ակադեմիայի
իսկական անդամ, հակասահարեկչուրյան գծով փորձագեն զիրուրյան (ԱՄՆ),
ՀԱՊԿ-ի զիրափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի պետ



Հայաստանի Հանրապետուրյան անկախության տարիներին երկրի հասարակական-քաղաքական որոշ շրջաններում մեծ հետաքրքրություն առաջացավ Խորայելի Պետուրյան նըկատմամբ: Այդուհանդերձ, տարածաշրջանային թշնամական միջավայրում Խորայելի արդյունավետ գոյուրյան փորձի մասնագիտական ըմբռնման ու զնահատման ուղղությամբ էական քայլեր չենոնարկվեցին, մասնավորապես՝

չիտագոտվեց բնակչուրյան, հատկապես՝ զինվորականուրյան բարոյահոգեքանական պատրաստման խորայելական համակարգը: Մեր կարծիքով՝ հրեա զինվորականի դաստիարակուրյան գործում Խորայելի ծնոքքերումների զնահատողական վերլուծությունը առանձնակի կարևորություն է ստանում հայ զինվորականի մարտական ոգու ապահովման համակարգի բարեփոխման համատեքստում:

Փորձենք ՀՀ ազգային անվտանգության շահերի տեսանկյունից ներկայացնել հրեա զինվորականի վարքականոնի, նրա ռազմահայրենասիրական դաստիարակուրյան հայեցակարգային դրույթները: Հարցը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետուրյան և Խորայելի Պետուրյան ազգային անվտանգության ռազմավարական շահերը ոչ լիովին են համընկնում. Երկու պետուրյունների, ինչպես նաև համաշխարհային հրեության ու հայության միջև թեև առկա են որոշակի նմանություններ, սակայն կան և էական տարրերություններ¹: Կարևոր ենք համարում նաև շեշտել այն հանգամանքը, որ 2008

¹ Երկու պետուրյունների ստեղծման գործընթացի համեմատական վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել, որ, ի տարրերություն Հայաստանի Հանրապետուրյունից, Խորայելի Պետուրյունը հիմնարյակել է՝ «զրոյից»՝ արաբների թշնամական միջավայրում, իրեա բնակչություն շինելու պայմաններում՝ իրեաների ներգաղթի (Ալյա, 1908–1948 թթ.) միջոցով: Նրանց մեծ մասը Էրեց-Խորայելի վերականգնման քաղաքարին իրենց աճրող գործունությամբ, ռազմական ու մտավոր ներուժով նվիրված «մոլեռանդ հայրենասերներ» էին: Մեր իրականությունում այդպիսիք էին Սոնքե Մելքոնյանն ու Լեռիդ Ազգայիշանը: ՀՀ ԶՈՒ-ի բարեփոխման գործում Խորայելի փորձի ստեղծագործական ընկալումը ենթադրում է ազգային զաղաքարին նվիրված, ազնիվ, մեծ մտավոր կարողություններով օժտված, բազմակողմանի զարգացած հրամանատարական ու սպայական կազմի առկայություն:

թվականը նշանավոր էր այս երկու ժողովուրդների պատմության մեջ: Այդ տարի լրացավ հայոց պետականության՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության վերականգնման 90-ամյակը և հրեական պետականության՝ ի դեմս Խարայելի Պետության վերականգնման 60-ամյակը: Հատկանշական է, որ այս բախտորշ իրադարձությունները հաջորդեցին այդ երկու ժողովուրդների դեմ իրագործված ցեղասպանությանը՝ Հայոց Մեծ Եղեռնին (առաջին համաշխարհային պատերազմ) և հրեաների Ողջակիզմանը՝ Հոլոքոստին (երկրորդ համաշխարհային պատերազմ): Խարայելի Պետության վերաստեղծման 60-ամյակին նվիրված տոնախմբությունների շրջանակներում Երևանի՝ Փաշխստական Գերմանիայի նկատմամբ տարած «Հաղթանակի» զբոսայգում կայացավ հայ-հրեական բարեկամության ծառուլու և հրեա ժողովրդի պետականության վերականգնման հոբելյանին նվիրված հուշակորողի բացումը: Երևանի քաղաքապետարանի և ՀՀ-ում հրեական համայնքի համագործակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ ՀՀ-ում Խարայելի դեսպան Շեմի Ցուրն իր ելույթում նշեց, որ ենթադրվում է խարայելական «Կերեն Կեյմեն Լե-Խարայել» (Հրեական ազգային հիմնադրամ) կազմակերպության ու հայկական համայնքի համագործակցությամբ Խարայելում հիմնել հայկական պետականության վերականգնման 90-ամյա հոբելյանին նվիրված ծառուլի:

Վերադառնալով սույն ուսումնասիրության խնդրո առարկա հարցին՝ նշենք, որ Խարայելում հրեա զինվորականի ուազմահայրենասիրական դաստիարակության կարևորության աստիճանը զնահատելու համար մենք հատուկ ընտրեցինք Խարայելի նախագահ, ուազմական հետախուզության նախկին դեկավար Խայիմ Հերցոնի «Խարայելի հերոսները» գիրքը²:

Ինչպես իին, այնպես էլ ժամանակակից հրեաների հերոսականության օրինակները ներառող և շարունակ համարվող պանթեոնի մշակմանը նախագահ Խ. Հերցոնի անմիջական մասնակցությունը վկայում է, որ Խարայելում ուազմահայրենասիրական դաստիարակությունը պետության նախագահի ուղղակի դեկավարնան ոլորտն է:

Ե՛վ ուազմական, և՝ քաղաքացիական մասնագիտություններ ունեցող հրեա հերոսների պանթեոնի համարման շարունակականության սկզբունքը, որը համաձայնորեն որդեգրել են Խարայելն ու խարայելակենտրոն սփյուռքը, ծառայում է այն գաղափարին, որ հրեության հերոսականությունը մշտապես բնորոշ է եղել հրեա ժողովրդին հրեական պետականության երեքհազարամյա պատմության բոլոր շրջաններում³: Տվյալ մերողաբանության բացառիկ կարևորությունը միտված է հրեաների հերոսական վարքի լավագույն օրինակների մշտական բացահայտ-

² Տե՛ս Chaim Herzog. Heroes of Israel. Profiles of Jewish Courage. Israel, 1991: Քանի որ սույն հոդվածը հիմնականում գրված է այդ գրքի հենքի վրա, մենք այսուհետև չենք նշի դրան արվող հղումները, բացի հատուկ դեպքերից:

³ Տե՛ս Yael Zerubavel. Recovered Roots. Collective Memory and the Making of Israeli National Tradition. Chicago–London, 1995: Նշենք, որ սույն հոդվածը գրելիս մենք մեծապես օգտվել ենք նաև այս գրքից, ուստի հղումներում այն ևս չենք հիշատակում:

մանը: Դրա նպատակն է նույնիսկ միապաղադ բանակային առօրյայում իր ժողովրդին ծառայելու ունակության տեսանկյունից յուրաքանչյուր հրեայի կամ հրեուի մեծ ինքնահարգանքի պահպանումը՝ Էրեց-Իսրայելի պաշտպանության և ամրապնդման գործում յուրաքանչյուր հրեա զինվորականի անձնական ռեսուրսի առավելագույն և ստեղծագործական ներդրմանը: Այլ կերպ ասած՝ նախազահ Խ. Հերցոգը, հրեա երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարա-



Իսրայելի խորհրդարանի անդամ Դավիդ Բեն-Գուրիոնը կարդում է Իսրայելի «Անկախության հռչակագիրը». Թել Ավիվ, 1948 թ. մայիսի 14
(<http://images.google.com/hosted/life/l?imgurl=b79b01b434c81b88&q=Israel%20Proclamation%20of%20Nationhood&prev=/images%3Fq%3DIsrael%2BProclamation%2Bof%2BNationhood%26gbv%3D2%26hl%3Dhy>)

կուրյան գործում կատարելով իր պարտքը, հրեա ժողովրդի պատմությունը ներկայացնում է որպես ազգային ինքնուրյան պահպանման շարունակական հերոսական գործընթաց՝ այն բաժանելով երեք հիմնական ժամանակագրական փուլերի.

- օտարարքնակության պայմաններում պայքարի երկու հազարամյակ,
- գրեթե 100 տարի՝ Պաղեստին ներգաղթն սկսվելուց հետո,
- Իսրայելի ազգային պետականության վերականգնման ու պաշտպանության 60-ամյա շրջան:

Տվյալ առաքելությունը կատարում է տարածքով ու բնակչությամբ ոչ մեծ, սակայն իր քաղաքական, տնտեսական ու ռազմական հաղթանակների շնորհիվ համաշխարհային աշխարհաքաղաքական կենտրոններից մեկի դերն ստանձնած ու Մերձավոր Արևելյում առանցքային նշանակություն ծեռք բերած պետության նախագահը: Ակնհայտ է, որ նման ոչ սովորական պետության դեկավարը, ներգրավված լինելով Խորայելի և ավյուղի ազգային ռեսուրսի շարունակական նորարարական փոխսպազման միջոցով անվտանգության ապահովման դինամիկ գործնաքացում, լինելով հոյժ գրադադար գործիչ, ցուցադրաբար է ժամանակ հատկացնում հրետության հերոսներին նվիրված գիրք գրելուն: Խոսքն այն մասին է, որ երկիր նախագահը ցուցադրում է հրեա ժողովրդի գոյատևման և առաջադիմական զարգացման գործում համաշխարհային հրետության գլխավոր համազգային գերակայություններից մեկը՝ թելադրված Խորայելի կենսականորեն կարևոր շահերի բոլոր ոլորտներում և, առաջին հերթին, ռազմական անվտանգության ոլորտում հրեաների ամենօրյա ու զանգվածային հերոսականության անհրաժեշտությամբ:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու այն տրամաբանությունը, որով դեկավարվել է Խորայելի նախագահը հրեա ժողովրդի հերոսների անընդհատ համալրվող պանթեոնի կառուցվածքի և բովանդակության մշակման համար՝ այդ պանթեոնը դիտելով որպես հրեա և հրեուի գինվորականների մարտական ոգու ձևավորման համակարգի հիմք*:

1. Հին ժամանակների հրեա հերոսների կանոնացումը ժամանակակից հրեա գինվորականի մարտական ոգու դաստիարակության համակարգում

Հրեա հերոսների պանթեոնում առանձնահատուկ տեղ է հատկացվում ուժով ու թվաքանակով գերազանցող փոշտացիներին ծնկի բերած *Դավթի* որպես հերոս քազակորի (մ. թ. ա. 11–10-րդ դարեր) կերպարին: Մարտը, որում *Դավթի* քարի դիպուկ հարվածով տապալեց Գողիաթին, ապա սրով գլխատեց նրան, հիմնարար կերպով խորհրդանշում է հրեաների ռազմական պատմությունը, այն է՝ հրեա գինվորի հավատը, հնարամտությունը, արագաշարժությունն ու խիզախությունը ավելի զորեղ եղան, քան հսկա փոշտացու Փիգիկական ուժը: Դա այն փաստի արտացոլումն է, որ Խորայելի բանակը թեև միշտ եղել է հակառակորդի զորքերից սակավարիկ ու քոյլ, սակայն հաղթել է, քանի որ չի ընդունել խաղի՝ թշնամու թելադրած կանոնները:

Խորայելի պատմության պաշտոնական մեկնաբանությունը նպատակաւողված է հրեաների համախմբման այն զաղափարի շուրջ, որ մ. թ. ա. 2-րդ դարից՝ Մակարեների ապստամբության ժամանակներից, գործում է մի բարոյական

* Հոդվածում շնորհակալություն է հայտնում «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի պատասխանատու քարտուղար լեյտենանտ Ա Շահվերդյանին՝ լրացուցիչ աղբյուների ցանկի ճշտման գործում ցուցաբերած օգնության համար:

օրենք, ըստ որի՝ ամբողջ հրեա ժողովուրդը պատախանատվություն է կրում յուրաքանչյուր հրեայի անվտանգության համար, որտեղ էլ նա լինի: Հրեա զինվորին ոգեշնչող հերոսների շարքում կարևոր տեղ ունի Հունա Մակարեն («Մուրճ»), մի գեղջուկ, որը դարձավ քաջարի զինվոր, ապա՝ տաղանդավոր զորավար և ժողովրդին երկրի անկախության համար պայքարի ոգեշնչող առաջնորդ: Միևնույն ժամանակ, իսրայելական հայրենասիրական դաստիարակության



Իսրայելի Պաշտպանության բանակի զինծառայողները պարբերաբար արշավում են դեպի այն բլուրը, որի գագարին է եղել Մասաղա փառապանձ ամրոցը (արտատպվում է Յ. Զերոբավելի հիշատակված գրքից)

համակարգում Հուդա Մակարեն ներկայացվում է որպես մի զինվոր, որը, հասունության տարիքում դառնալով քաղաքական գործիչ ու դիվանագետ, ամրապնդում էր պետականության՝ որպես հրեւության բարձրագույն արժեքի առաջնայնության ճանաչման հրեական ավանդույթը և ձգուում էր հրեական պետությունը դարձնելու միջազգային հանրության և ուժերի հաշվեկշռի համակարգի մաս: Իսրայելի պաշտոնական պատմության մեջ և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում Հուդա Մակարենի կերպարն օգտագործվում է որպես այնպիսի հերոսի կերպար, որը հրեաների սրբներում սերմանեց անսասան հավատ դեպի ազատության անմար իդեալը ու պատրաստակամություն՝ կյանքն ի փառ Իսրայելի անկախության գոհարերելու:

Բար-Կոխբան, թշնամիների դեմ պայքարում այդ վճռական ու դաժան բռնապետ-առաջնորդը, միավորեց հրեաներին ու զիխավորեց 115–117 թթ. նրանց ապստամբությունը հոռոմեացիների դեմ: Նրա կերպարը քարոզվում է որպես հրեա ժողովրդի հերոսական տոկունության, անպարտելի Հոռմեական կայսրության դեմ փոքր ժողովրդին ոտքի հանելու համարձակություն ունեցող առաջնորդի խորհրդանշ: Հրեա զինվորի մարտական ոգու ամրապնդման համար ակտիվութեն օգտագործվում է Բար-Կոխբայի ապստամբական բանակից վերցված այն օրինակը, որ դրան զինվորագրվելու յուրաքանչյուր թեկնածու պետք է որպես

հայրենիքին իր նվիրվածության ու հանուն նրա կյանքը զոհելու պատրաստակամության ապացույց կտրեր իր մատը⁴: Ընդ որում, Ենթադրվում է թարձնված զուգահեռ սամուրայների «Բուսիդո» պատվո վարքականոնի հետ, որն ուներ նմանատիպ նորմ՝ մատը կտրել ի նշան նվիրվածության Հայրենիքի փրկության գործին: Հետագայում այդ նորմը կիրառվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կամիկաձեների երդման մեջ:

Հրեա երիտասարդության շրջանում որպես հրեական ոգու տոկունության, կամքի աննկունության և զինվորական արիության խորհրդանշ քարոզվում է զելուտների հերոսական պայքարը 73 թ. *Մասադա ամրոցը* պաշարած հոռմեական լեզենի դեմ⁵: Մինչև վերջ դիմակայելով հոռմեացիների զրոհներին՝ հրեա տղամարդիկ միաձայն որոշեցին սպանել իրենց կանանց ու երեխաներին, իսկ հետո վիճակ գցելով ընտրեցին այն տասը զինվորին, որոնք նախքան բերդ քշնամու մտնելն սպանեցին մյուսներին: Երիտասարդ զինվորները երդվում են այն ժայռի գագաթին, որտեղ գտնվում էր հերոսական Մասադան: Հրեա զինվորականների երդումն է՝ «Մասադան այլևս չի ընկին»:



Մոնշացող առյուծի հուշարձանը թեկ Հայում:

Հուշարձանի վրա փորագրված է Տրումպելորի հանրահայտ վերջին խոսքը՝ «Երջանիկ է նա, ով մեռնում է Հայրենիքի համար», ինչպես նաև նրանց անունները, ովքեր նրա հետ զոհվել են մարտում (արտատպվում է Յ. Զերութավելի հիշատակված գրքից)

⁴ Տե՛ս Yigael Yadin. Bar Kokhba: The Rediscovery of the Legendary Hero of the Second Jewish Revolt against Rome. Jerusalem, 1971:

⁵ Տե՛ս Yigael Yadin. Masada: Herod's Fortress and the Zealots' Last Stand. New York, 1966:

⁶ Տե՛ս N. Ben-Ari and E. Kena'ani, eds. Yosef Trumpeldor: Po'alo u-Tekufatd/Yosef Trumpeldor: His Life and His Times (Hebrew and English). Tel Aviv, 1970:

2. Տրումպելորի սիրագործությունը՝ որպես ժամանակակից հրեա զինվորականի վարքականոնի հիմք

Նորագույն ժամանակաշրջանի հերոս հոչակվեց *Իոսիֆ Տրումպելորը*⁶, որի շիրմին կանգնեցված է մոնշացող առյուծ: 1920 թ. մել Հայ ուազմազյուղատնտեսական բնակավայրի պաշտպանությունը զինավորած Տրումպելորն իր մահից առաջ ասաց մի խոսք, որը Խորայելի հայրենասիրական քարոզչությունը դարձրեց ժամանակակից հրեա հերոս զինվորականի՝ որպես անքերի անձնավորության, ազնիվ, համեստ ու խիզախ ասպեսի դաստիարակության օրինակ: Խորայելի պաշտպանության բանակի երիտասարդ զինվորականները երդում են տախս Տրումպելորի շիրմի վրա, որի քարին փորագրված է նրա վերջին խոսքը. «Երջանիկ է նա, ով մեռնում է Հայրենիքի համար»:

Հենց Թել Հայի պաշտպանության կազմակերպման օրինակը դարձավ տարածքային պաշտպանության համակարգի ստեղծման առաջին փորձը. 40-ական թվականներին կիրուցներում (կոմունաներում) աշխատանքի և ծառայության միջոցով արարական բանդկազմավորումների դեմ Հագանահի հատուկ նախանշանակման Պալմախ ստորաբաժանման պայքարում դրվեց ՆՈՀԱԼ տարածքային պաշտպանության հիմքը:

3. Ֆաշիզմին հրեական գետոտների մարտիկների դիմադրության ոգու հերոսականությունը

Հրեա զինվորականության հերոսապատման մեջ, որը լայնորեն կիրառում է Խրայելի և սփյուռքի հայրենասիրական քարոզությունը, առանձնահատուկ տեղ են գրավում Երրորդ ռայխի* համակենտրոնացման ճամբարներում (Օսվենցիմ, Մայդանեկ, Դահատ և այլն) հրեաներին ոչնչացնելու նախատակով գերմանական ՍՍ ջոկատների կողմից զանգվածային տեղահանումներին Վարչավայի և այլ գերլինների հրեաների զինված դիմադրության օրինակները⁷: Դաստիարակչական քարոզությունն ուղղված է հրեա զինվորների դրսևորած կորովի փառաբանմանը, երբեմնի ամորայի ու նսեմացուցիչ գետոտյի հասկացությանը զինվորական փառքի ու պատվի լուսապսակի վերագրմանը:

4. Խրայելի ինքնապաշտպանության և անկախության համար ընդհատակյա պայքարի հերոսականությունը

Հագանահի Պալմախի հերոսները: Երիտասարդ հրեաների մարտական ոգու դաստիարակության գործում կարևորություն է տրվում 1940-ական թվականներին Խրայելի Պետության ստեղծման համար մղված պայքարում Հագանահի Պալմախ հատուկ նախանշանակման ստորաբաժանման վարած մարտական գործողությունների փորձին⁸: Հենց այդ փորձով է հիմնավորվում Խրայելի Պաշտպանության բանակում՝ ՅԱՀԱԼ-ում, գործող այն սկզբունքը, ըստ որի՝ հրամանատարը պետք է գտնվի իր զինվորների առջևում: Քանի որ Պալմախն ուներ հասուլ նախանշանակման առաքելություն, նրա հրամանատարներից պահանջվում էր ոչ թե գնալ իր ենթականների հետևից, ինչպես ընդունված է մի շարք բանակներում, այլ առաջնորդել նրանց: Պալմախում, ինչպես նաև ներկայիս ՅԱՀԱԼ-ում, հրամանատարի՝ «Իմ հետևից» հրամանը շարքային զինվորներին ներկայացվում է որպես հրամանատարի պարտավորություն՝ առավել մեծ վտանգի ենթարկելու ոչ թե զինվորին, այլ իր անձը:

* Երրորդ ռայխ (կայսրություն)՝ Ֆաշիստական Գերմանիան:

⁷ Տես «Jewish Resistance: A Working Bibliography», «The Miles Lerman Center for the Study of Jewish Resistance», «Center for Advanced Holocaust Studies United States Holocaust Memorial Museum», Washington, DC (<http://www.ushmm.org/research/center/lerman/bibliography/pdf/bibliography.pdf>), նաև՝ «Holocaust Survivors and Remembrance Project: «Forget You Not». The Jewish Resistance During the Holocaust» (<http://isurvived.org/TOC-IV.html#Resistance>):

⁸ Տես «Israeli Special Forces History» (<http://www.isayeret.com/>):

Հայրենասիրական դաստիարակության հոգեբանական արդյունավետության ապահովման ընդհանուր սկզբունքի համաձայն՝ հրեա զինվորականի հերոսականությունը անպայման անձնավորվում է կոնկրետ հրեա հերոսների մեջ: Այստեղ երիտասարդությունը հետևում է Պալմախի այնպիսի մարտիկների օրինակներին, ինչպիսիք են Կցւեստի և կառավարության անդամ դարձած Իգալ Ալոնը, ապագայում Գլխավոր շտաբի պետ, ապա՝ Խորայելի նախագահ դարձած Իծհակ Ռաբինը, Գլխավոր շտաբի պետ ու պաշտպանության նախարար դարձած Մոշե Դայանը, որը 1956 թ. գլխավորեց Սինայի հաղթական ռազմարշավը:

Հրեա հերոսուհի Հաննա Սենեշը:

Նախագահ Խ. Հերցոգը անհրաժեշտ է համարել հրեա հերոսների պաճեռնում ներառել նաև քաներեքամյա հրեուիի Հաննա Սենեշին (1921–1944)՝ անվախ դիվերսանտ պարաշյուտիստուհուն, որը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանական դեսանտայինների կազմում կռվել էր Եվրոպայում, իշեցվել գերմանական թիկունք, լուր խոշտանգումների ժամանակ և 1944 թ. գնդակահարվել հունգարական քանտում: Հաննա Սենեշի կերպարի քարոզությունն ուղղված է հրեա կանաց զինծառայության հայրենասիրական շարժառիթավորմանը. Խորայելում, ի տարբերություն տղամարդկանցից, որոնք ծառայում են երեք տարի, կանայք ծառայում են երկու տարի, ինչը հնարավորություն է տալիս մեծ թվով տղամարդկանց ներգրավելու շարային ծառայության մեջ և դրանով իսկ որոշ չափով համակշռելու Խորայելին թշնամի պետությունների բանակների բվային գերազանցությունը:



Հաննա Սենեշ, որի անկուն կամքն ու Հայրենիքի թշնամիների դեմ պայքարելող զաղափարին անմնացորդ նվիրվածությունը քարոզվում են հրեուիիների շրջանում բանակուն ծառայելու ձգտման շարժառիթավորման համար (<http://en.wikipedia.org/wiki/File:HannahSzenes1.jpg>)

5. Զոհողության հերոսականացումը և թշնամուն զուգաչափ հատուցման անխուսափելիության սկզբունքը

Ամբողջ աշխարհի հրեա երիտասարդության մեջ հերոսական ոգու դաստիարակության գործում բացառիկ կարևորություն է տրվում թշնամուն զուգաչափ լիոնարդությունը: Այն հիմնվում է հետևյալ փաստի վրա: Հրեական ընդհատակյա պայքարը, որը երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ մինչև 1948 թ. Պաղեստինից բրիտանացիների հեռանալը, մղվում էր

հրեաների Պաղեստին Աերգաղթին խոչընդոտող Մեծ Բրիտանիայի դեմ, զիսավորում էր Իսրայելի ապագա վարչապետ Մենահիմ Բեգինը: Հրեա ընդհատակյա ուժերի մարտիկներին ճիշտահարելու ու կախաղան բարձրացնելու անքոյլատրելիության և դրա համար անզիջացներին անխուսափելի զուգաչափ փոխառուուցման մասին հրեական ընդհատակյի ահազանգը բրիտանական վարչակազմն ընդունեց իրեն հասուկ գորոգամիտ թերահավատությամբ և գերեվարված հրեա մարտիկների նկատմամբ բռնություն գործադրեց: Դրան ի պատասխան՝ գերեվարված բրիտանացի սերժանտները ցուցադրաբար և անհապաղ կախաղան հանվեցին, ինչը ցնցեց թե Մեծ Բրիտանիան, թե՛ ամրող արարական աշխարհը: Դա դաս եղավ հրեական ինքնապաշտպանական ուժերի ու հրեական պետության ստեղծման բոլոր հակառակորդների համար:

Իսրայելի Պետությունն իր ամենօրյա գործունեությամբ հաստատում է այն բանի քարոզությունը, թե այսօրվա հրեան այլևս նախկինում ստորացված մարդը չէ: Ժամանակակից հրեան, ինչպես և հերթական անցյալում, պարտավոր է իր խելքի, ոգու, կամքի և ուազմարվեստի ամբողջ ներուժը ներդրել հանուն հրեա ժողովրդի պատվի պաշտպանությամբ՝ թշնամուն ցուցադրելով այնպիսի փոխհառուցման անխուսափելիությունը, որը զուգաչափ լինի յուրաքանչյուր հրեա զինվորականի նկատմամբ կատարված և համայն հրեությանը նեմացնող հանցագործությանը:

6. Ազգի առաջնորդ հերոսները. Բեն-Գուրիոն՝ «Իսրայելը չի կարող իրեն բույլ տալ պարտություն անգամ մեկ պատերազմում», «Այլևս երբեք»

Պետական քարոզության մեջ Դավիդ Բեն-Գուրիոնը⁹ (1886–1973) հանդես է գալիս որպես ազնիվ և իմաստուն ազգային առաջնորդ: Նա մի հերոս է, որը ոգեշնչել է ժողովրդին իր նպատականդվածությամբ, ազգի ապագան խորը թափանցելու կարողությամբ: Բեն-Գուրիոնն աշքի է ընկնում համաշխարհային հրեության երկու զիսավոր փոխկապված կարգախոսների՝ «Իսրայելը չի կարող իրեն բույլ տալ պարտություն անգամ մեկ պատերազմում» և «Այլևս երբեք» (խոսքը Ողջակիզման կրկնության հնարավորության մասին է), երաշխավորված ապահովման շուրջ Իսրայելն ու սփյուռքը համախմբելու և կողմնորոշելու անվեհեր քաղաքական կամքով: Իսրայելական քարոզությունը Իսրայելի և ՑԱՀԱԼ-ի հիմնադիր Բեն-Գուրիոնի օրինակը ծառայեցնում է այն նպատակին, որ քաղաքական վերնախավն ու ժողովուրդը և՛ խաղաղ, և՛ մեծագույն ուազմական փորձության ժամանակ ձգուն գտնելու ամենալավ նորարարական պրագմատիկ լուծումը, թե ինչպես համաշխարհային հրեության անսահմանափակ հոգեւոր, կամային, մտավոր ու ֆինանսական ռեսուրսներն անկատելորեն հաղթական կերպով օգտագործեն ի նպաստ Իսրայելի և սփյուռքի:

Նշվում է 1950-ական թվականներին Եզիդական դեմ ձեռնարկված Սինայի

⁹Տես «David Ben-Gurion». «Knesset Members» (http://www.knesset.gov.il/mk/eng/mk_eng.asp?mk_individual_id_t=684), նաև՝ «David Ben-Gurion». The Jewish Agency for Israel (<http://www.jafi.org.il/education/100/people/BIOS/bg.html>):

ուազմարշավի ժամանակ և փոխհատուցման սկզբունքի ընդունման գործում Բեն-Գուրիոնի ճիշտ քաղաքական ու ուազմական պրագմատիկ հաշվարկը: Ըստ այդ սկզբունքի՝ ՑԱՀԱԼ-ին և այլ ուժային կառույցների հանձնարարվում է զսպել իսլամական ահարեւկությունը: Հետագայում այդ սկզբունքը դարձավ Իսրայելին հասցվող հարվածների կանխման նպատակով ահարեւկական ճամբարների և շտաբների չեզոքացմանն ուղղված հատուկ կանխիչ գործողությունների հիմքը: Նշվում է նաև, որ Բեն-Գուրիոնի շնորհիվ Իսրայելն ունի արդյունավետ պրոֆեսիոնալ, ըստ իրեռույան աջակցության բնույթի՝ ժողովրդական քանակ, որը քաղաքականությունից դուրս է և ենթարկվում է քաղաքացիական իշխանությանը:

Այսպիսով՝ Իսրայելի պետության ուազմահայրենասիրական քարոզչությունը, ինչպես նախորդ դեպքերում, Բեն-Գուրիոնի օրինակով ևս հարստացնում է իրեական պատմության պանթեոնը՝ նրան պատվավոր տեղ հատկացնելով նախորդ սերունդների և անցյալի մեծ հերոսների շարքում:

7. ՑԱՀԱԼ-ի կոլեկտիվ հերոսականություններ

հետևում է, որ այդ գործընթացում կարևոր դերակատարություն ունեն համապատասխան հասարակական կառույցները»⁵:

Պատահական չէ, որ պաշտպանական բարեփոխումներն իրականացվում են նաև այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են՝

–նոր պահանջներին համապատասխան ուսուցման և դաստիարակության կազմակերպում, կադրային ճիշտ քաղաքականություն, ուսումնանյութական բազայի կատարելազործում,

–հայ զինվորի, սպայի, հրամանատարի ու նաև ամբողջ հասարակության շրջանում գաղափարականության, գիտակցական վերաբերմունքի ձևավորում⁶:

Կարևոր ենք համարում ընթերցողի ուշադրությունը սևեռել այն հանգանակի վրա, որ ԶՈՒ-ում ինչպես անձնակազմի հոգեբանական պատրաստման, նրանց հոգականացնելու հատկությունների ձևավորման, այնպես էլ անմիջական մարտական գործողությունների արդյունավետության մեծացման կարևոր գործոններից մեկն է հակառակորդի մասին տեղեկացվածության աստիճանը՝ ընդհանրապես, և նրա բանակում անձնակազմի հոգեբանական պատրաստման եղանակների, մերողների, գորքերի մարտական պատրաստության, անձնակազմի ԲՀՎ մակարդակի, նրանց քոյլ և ուժեղ կողմերի մասին՝ մասնավորապես: Այս տեսանկյունից նպատակահարմար ենք համարում ներկայացնել քաղաքական գիտությունների դոկտոր Հ. Ղորանջյանի հետևյալ գիտական եզրահանգումը. «աֆղանական մոշահեղները դեռ մոտ անցյալում ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում Աղրբեջանական Հանրապետության զինված ուժերի կողմից ծավալված մարտական գործողություններում: ...Փաստորեն աղրբեջանական բանակի կանոնավոր գործունեության մեջ փոխակերպված ձևերով, նպատակամղված և զանգվածայնորեն մտցվում են մահմերական սրբազն պատերազմի տարրեր: ...Մոշահեղի կերպարը, զիհադի արժեքները և տերմինները լայնորեն կիրառվում են աղրբեջանական բանակի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստման ժամանակ:

Զիհադի՝ իրենց էությամբ ֆունդամենտալիստական իսլամական արժեքների և դրանց քարոզման ձևերի կիրառմամբ աղրբեջանի զինծառայողների ու բնակչության մարտական ոգու ձևավորման և պահպանման գործում հակառակորդի հնարավորությունները օբյեկտիվորեն զնահատելու համար օգտավետ է հաշվի առնել աֆղանական պատերազմում մոշահեղների անհատական և խմբային գործողությունների արդյունավետության զնահատումը: Աֆղանական պատերազմի դասերը վկայում են բարձր արդյունավետություն ունեցող գենքով սպառազինված, կանոնավոր կազմակերպություն ունեցող հակառակորդի թվապես գերազանցող ուժերի մարտական գործողություններին մոշահեղների հաջող դիմակայման փորձի մասին»⁷:

⁵ Ս. Ս. Օհանյան, նշ. աշխ., էջ 181:

⁶ Տես մոյց տեղում, էջ 30:

⁷ Հ. Ս. Ղորանջյան, Մոշահեղի բարոյահոգեբանական արժեքային կողմնորոշումների հարցի շուրջ: «ՀԲ», 1996, հմ. 1:

Ինքնին հասկանալի է, որ զինծառայողների կշռադատված, գիտականորեն հիմնավորված դաստիարակության, մարտական ու բարոյական հատկությունների ճիշտ ձևավորման ու արմատավորման համար պետք է ունենալ նաև հետևյալ հարցերի պատասխանը. ի՞նչ է «մարտական ողի» հասկացությունը, որո՞նք են մարտի հոգեբանական բաղադրիչները, ինչպես են դրանք մեկնաբանվում ժամանակակից գիտության տեսանկյունից, որո՞նք են զինծառայողի անձի վրա ներգործելու, նրա ԲՀՎ պատշաճ մակարդակն ապահովելու ուժիները:

Ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան ռազմագիտական զրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջատար պետությունների ռազմաքարագրական դեկավարությունը ԶՈՒ-ի անձնակազմի բարձր մակարդակի բարոյահոգեբանական վիճակի ապահովումը համարում է իր գործունեության գերակա ուղղություններից մեկը: Կրա ապահովման արդյունքը պետք է լինի ինչպես առանձին զինծառայողի, այնպես էլ ստորաբաժննան անձնակազմի (նաև՝ ԶՈՒ-ն ամբողջությամբ վերցված) բարձր մակարդակի բարոյական և հոգեբանական կայունությունը: Կառուցվածքային առումով բարոյական և հոգեբանական կայունությունը ներառում է կարգապահություն, մարտական ողի, հաղթելու կամք, ինքնատիրապետում, արժանապատվության զգացում, նվիրվածություն զինվորական գործին և այլն⁸:

Ռազմարվեստի պատմության վերլուծությունը ակնառու կերպով ցույց է տալիս, որ անձնակազմի բարոյահոգեբանական պրոբլեմները այսպես թե այնպես մշտապես հաշվի են առնվել ցանկացած պետության դեկավարության և նրա ԶՈՒ-ի հրամանատարության կողմից: Սակայն անցյալում այդ հարցերը եղել են ռազմական «հոտառության», էմայիրիկ փորձի, կրահողականության ոլորտի հարցեր և գիտական հիմքեր չեն ունեցել: Ներկայում այդ ուղղությունը հիմնվում է գիտական ուսումնասիրությունների և մշակումների տեսական հիմքերի վրա: Այսպես. «ԱՄՆ-ի ազգային անվտանգության ռազմավարությունը հաջորդ հարյուրամյակում» փաստաթղթում որակյալ կադրերի պատրաստման խնդիրն առաջին տեղում է, իսկ տեղեկատվական անվտանգության հարցերը՝ երկրորդ⁹: Կորեայի Հանրապետության կառավարությունը «20–21-րդ դարերի շեմին ազգային անվտանգության ապահովմանն ուղղված պետական բարեփոխումների իրագործման հայեցակարգում» որպես երկրի անվտանգության ապահովման ուղղություններից մեկն առանձնացնում է ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական կայունության մակարդակի բարձրացման խնդիրը, որը պետք է իրագործվի գիտականորեն հիմնավորված կադրային բաղադրականության միջոցով՝ զինծառայողների անհատական առանձնահատկությունների առավելագույն օգտագործմամբ¹⁰:

⁸ Տես B. M. Ազարօ, C. M. Եսրդա. Օценка морально-психологического состояния военнослужащих. «Военная мысль», 2001, № 3:

⁹ Տես «Морально-психологическое обеспечение боевой деятельности подразделений и частей кораблей военно-морского флота», с. 4 ([http://www.nntu.sci-nnov.ru/RUS/FVO/disciplines/textbooks/social_109-1\(for01\).doc](http://www.nntu.sci-nnov.ru/RUS/FVO/disciplines/textbooks/social_109-1(for01).doc)):

¹⁰ Տես նոյն տեղում:

Պատահական չէ, որ ՀՀ ռազմական անվտանգության համակարգի գործունեությունը բաղկացած է Զինված ուժերը, երկրի տարածքը, հասարակությունը և տնտեսությունը պաշտպանությանը նախապատրաստելու և ռազմական անվտանգության միջազգային երաշխիքներ ստեղծելու համապետական գործողություններից: Նախապատրաստումը ներառում է ինչպես ԶՈՒ-ի անձնակազմի, այնպես էլ ամբողջ բնակչության բարոյահոգեբանական պատրաստում և ռազմահայրենասիրական դաստիարակություն՝ միտված բարոյահոգեբանական կայուն վիճակի ապահովմանը և հայրենիքին նվիրվածությանը¹¹:

ԲՀՎ-ն որպես գորքերի մարտունակության նախադրյալներից մեկը ներկայացնելու համար նախ հոգեբանական գիտության տեսանկյունից սահմանենք «մարտ» հասկացությունը, ինչը հնարավորություն կտա հստակ պատկերացնելու ԲՀՎ տեղն ու դերը գորքերի մարտունակության պահպանման գործում: Մարտը կողմերի գինված հակամարտային փոխգործողությունն է, որը բխում է որոշ նյութական արժեքների պաշտպանության (զավթման) նպատակներից և շարժադրություններից¹²:

Մարտի հոգեբանական կառուցվածքի հիմնական բաղադրիչներն են՝ անձնակազմի մարտական պատրաստությունը և մարտական վիճակները:

Մարտական պարագայություններ գորքերի (ուժերի) այն վիճակն է, որը նրանց հնարավորություն է տալիս սահմանված ժամկետներում սկսելու մարտական գործողությունները և հաջողությամբ կատարելու մարտական խնդիրները¹³:

Մարտական գործողություններին պատրաստության մակարդակը որոշվում է գինծառայողի առավել կարևոր անձնային հատկություններով՝ մարտական վարպետությամբ, հոգեբանական կայունությամբ, բարոյահոգեբանական վիճակով:

Մարտական վարպետություններ անհրաժեշտ ընդունակությունների հիմքի վրա գինավարժությունների միջոցով ձևավորված հոգեբանական կառուցվածքների համալիր է, որը համապատասխան շարժադրություններով՝ մարտական վարպետությամբ, հոգեբանական կայունությամբ, բարոյահոգեբանական վիճակով:

Հոգեբանական կայունություններ հանկարծակիության, վտանգի և մարտի այլ հոգեբանական գործուների առկայությամբ հոգեկանի կանոնավոր ակտիվությունը պահպաններու ընդունակությունն է: Զինծառայողների հոգեբանական

¹¹ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 43–44:

¹² Տես E. Г. Баранов, М. В. Мурашко, С. В. Мкртычян. Психологические основы боевой деятельности. М., 1999, с. 19:

¹³ Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 162:

կայունությունը ձևավորվում է նրանց հոգեբանական պատրաստման ընթացքում:

Սարդարական վիճակը հոգեկանի ժամանակավոր վիճակ է, որը մարտական գործունեության ընթացքում ազդում է զինծառայողի հոգեկան պրոցեսների վրա և պայմանավորում տվյալ մարտական իրադրությունում նրա վարքի կոնկրետ ձևերը:

Բարոյահոգեբանական վիճակը ակտիվ գործողություններին զինծառայողի պատրաստությունը արտացոլող հոգեկան երևույթների համախումք է: Այդ պատրաստությունը կապված է զինծառայողի անձի շարժառիթավորման ոլորտի զարգացման հետ և ձեռք է բերվում բարոյահոգեբանական ապահովման միջոցառումների շնորհիվ¹⁴:

Զինծառայողի բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրության համար դեռ չկան համընդիմանուր ճանաչում ստացած մոտեցումներ, գնահատականներ ու կանխատեսումներ: Նշված խնդրի առնչությամբ մեր կողմից կատարված համեմատական վերլուծությունը հանգեցրեց այն եզրակացության, որ ներկայում աշխարհի բազմաթիվ երկրների բանակներում զինծառայողների բարոյահոգեբանական վիճակն ու մարտունակությունը հիմնականում ստուգվում են անանուն հարցումների միջոցով: Այդ առաջավոր փորձը կիրառելի է նաև հայկական բանակում՝ տեղական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բարոյահոգեբանական վիճակի գնահատման համար հանգուցային են համարվում մի շարք հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, «հոգևոր-բարոյական ներուժ», «բարոյական ողի» հասկացությունները:

Հոգևոր-բարոյական ներուժը համարվում է զինվորական գործունեության հաջողության գրավականներից մեկը, բարձրագույն զինվորական արժեքների հանրագումարը, զգացմունքների, բարոյական նորմների և հատկությունների համապատասխանությունը միջյանց: Հենց այդ գործուներն ել զինվորին օգնում են կատարելու իր պարտքը հայրենիքի պաշտպանության գործում: Ժամանակակից գրականության մեջ գործածվում են նաև մի շարք այլ հասկացություններ, մասնավորապես՝ «բարոյական գործոն», «բարոյական ուժ», «բաղաքական-բարոյական վիճակ», «հոգևոր գործոն»:

Բարոյական ողին իդեալների, զաղափարների, պատերազմի բնույթի և նպատակների մասին պատկերացումների, ինչպես նաև այդ ամենի հիման վրա մարտական գործողությունների պատրաստման և վարման ժամանակ զինծառայողների մեջ ձևավորվող տրամադրությունների ու զգացմունքների բարդ միահյուսություն է: Կոնկրետ օպերացիայի հաջողության վրա բանակի բարոյական ոգու ազդեցությունը գնահատելիս կիրառվում է «բարոյական գործոն» հասկացությունը, իսկ բարոյական ոգու դրսուրման աստիճանը կոնկրետ, այդ թվում՝ ոչ պատերազմական, իրավիճակում գնահատելիս կիրառվում է անձնակազմի «բարոյահոգեբանական վիճակ» հասկացությունը¹⁵:

¹⁴ Տես նույն տեղում, էջ 808:

¹⁵ Տես M. Ю. Зеленков. Морально-психологическая подготовка войск в зарубежных армиях. «Военная мысль», 2001, № 1:

Այսպիսով՝ *բարոյահոգեքանական վիճակ* ասելով պետք է հասկանալ յուրաքանչյուր զինծառայողի հոգեկանի կամ ամբողջ զինվորական կողեկտիվի հոգեքանական վիճակը տվյալ ժամանակահատվածում և կոնկրետ պայմաններում, այսինքն՝ զինծառայողների մարտական ակտիվությունը, մարտական գործողություններին նրանց պատրաստությունը։ Դա առաջին հերթին պայմանավորված է ուսումնասիրվող վիճակի և հոգեկան, մասնավորապես՝ ճանաչողական ու կարգավորիչ (հուզական ու կամային), պրոցեսների մեծ դիմամիկությամբ, ինչը հնարավորություն է տալիս ուրվագծելու մարտում զինծառայողների ԲՀՎ պահպանման ուղիները։

ԲՀՎ կառուցվածքը կարող է դիտվել որպես *շարժառիքային* (ակտիվ մարտական վարքի մոդուլների համալիր), *հուզական-կամային* (իրադրության ստրես-գործունների նկատմամբ համապատասխան հակազդում դրսորելու, ինքնատիրապետումը պահպանելու ընդունակություն) և *օպերացիոնալ* (առաջիկա մարտի, առաջադրված խնդիրների և դրանց կատարման եղանակների մասին պատկերացում) բաղադրիչների համախումք¹⁶։ Զանի որ նշված բաղադրիչները սերտորեն փոխկապված են, հետևաբար դրանցից նույնիսկ մեկի ոչ բավարար ձևավորվածությունը կտրուկ իջեցնում է զինծառայողների ԲՀՎ մակարդակը, ուստի և նրանց կատարած գործողությունների արդյունավետությունը։ Արդյունավետ է արդյոք մարտական իրադրությունում «զաղափարապես կրված» զինվորի գործունեությունը, եթե նրա կամքը թույլ է, և հակառակը՝ կարո՞ղ է հրամանատարը վստահել ուժեղ կամային հատկություններով օժտված ենթակային, եթե նա առաջնորդվում է բացառապես նյութական շարժառիքներով։ Այս տեսանկյունից ուշագրավ են առաջին աշխարհամարտի տարիներին հայ կամավորական շարժման նվիրյալներ Ա. Օզանյանի և հայկական 5-րդ կամավորական խմբի հրամանատարի տեղակալ Հ. Մելքոնյանի մշակած հրահանգները^{*}։ Երկուսն էլ կարևոր փաստաթրեր են և պարունակում են կամավորականներին ուրված հստակ խորհուրդներ, ցուցումներ ու առաջարկություններ։ Անդրանիկը պահանջում է, որ բոլոր կամավորականներն առաջին հերթին ամենայն խորությամբ զինվորնեն սուրբ գործի նշանակությունը և ցուցաբերեն ազնվություն ու ինքնազնությունը¹⁷։

Անշուշտ, հայրենիքի պաշտպանությունը հնարավոր չէ պատկերացնել առանց զոհաբերության պատրաստականության։ Ըստ գորավար, քաղաքական գործիչ ու փիլիսոփա Գարեգին Նժենիկի՝ պատերազմում հաղթում է նա, ով ավելի է պատրաստ զոհաբերության։ «Վերջին հաշվով՝ զոհապատրաստության շափն է

¹⁶ Տես C. B. Goncharov. Управление морально-психологическим обеспечением боевых действий: вопросы теории и практики. «Военная мысль», 2004, № 2:

* Ա. Օզանյանի գրած հրահանգը, որը բաղկացած է 8 կետից, բավարկված է 1915 թ. փետրվարի 1-ը։ Հ. Մելքոնյանի մշակած հրահանգը բաղկացած է երեք բաժնից։ Առաջին բաժնը բավարկված է 1915 թ. օգոստոսի 9-ը։

¹⁷ Տես ՀՀ հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթրերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 4047, գ. 1, գ. 86, թ. 2-3։

որոշում այս կամ այն ճակատամարտի, ապա՝ ողջ պատերազմի ելքը: Հաղթում եմ, նշանակում է՝ հակառակորդիս գերազանցում եմ զոհաբերության մեջ: Ասա ուղղմական դրկտրինայի այրն ու փիլիսոփայությունը»¹⁸:

Եթե Ա. Օզանյանի հրահանգի ակնհայտ նպատակն էր «հանուն իր հայրենիքի պաշտպանության զենքը ձեռքին բարձրացած շինականից զինվոր պատրաստելը»¹⁹, ապա Հ. Մելքոնյանի հրահանգի եռյունն էր «կամավորականների բարոյահոգեբանական դաստիարակությունը»²⁰, մասնավորապես, նա առաջին հերթին ուշադրություն է դարձնում նրանց զաղափարական դաստիարակությանը, իմբնավորում է տվյալ պատերազմին հայության մասնակցության նպատակը:

Ինչ վերաբերում է պատերազմի նպատակների խոր գիտակցմանը, ապա վաղուց ապացուցված է, որ պատերազմի զաղափարական ոչ պատշաճ իմբնավորումը մեծ ազդեցություն է գործում զինծառայողի վրա: Պատերազմի պատճառները, նպատակները չըմբռնելը կարող է հանգեցնել հոլովական լարվածության առաջացմանը, ինչը բացասական ազդեցություն է գործում զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի, նրանց հոգեբանական կայունության վրա: Ինչպես ցույց տվեցին Արցախյան պատերազմի իրադարձությունները, հակառակորդի կենացն ուժի և տեխնիկայի բազմապատիկ գերազանցությունը ոչինչ էր մեր մարտիկների բարոյական ոգու, անհույս թվացող իրավիճակներում հաղթական կամքի գերբնական դրսւորման համեմատությամբ, որովհետև այդ ամենը մեր ժողովրդի, մեր մարտիկների համար պայմանավորված էր ոգու կանչով, մեր պատմական հողերը ազատագրելու վճռականությամբ: Զոր չէր, որ մահապարտների գումարտակի 5-րդ տարեդարձին նվիրված հանդիսավորությունում Սպարապետ Վազգեն Սարգսյանն իր ելույթում նշեց: «Դեռևս 1990–1991 թվականներին ես առիթ եմ ունեցել ասելու, որ յուրաքանչյուր ժողովուրդ, անկախ՝ 3-4 միլիոն է, թե 300-400 միլիոն, չի պարտվի, եթե կարողանա 5-6 հարյուր մարտիկ ասպարեզ հանել: Ես համոզված էի, որ հայ ժողովուրդն ի վիճակի է դա անել, որը և կարծես ապացուցեցինք... Ի՞նչ եք կարծում, եթե Աղրեջանը Լաշինի կամ Քելբաջարի պարտությունից հետո ի վիճակի լիներ համախմբվել և գտնել այդ 500 հոգին, մեր առաջնադաշտումը պատճեշեր, մենք կկարողանայինք նման հաղթանակներ տանել: Նույնիսկ Շուշիում ի հայտ չեկան այդ 500-ը, որ մեր զորքերի դեմ ելնեին: Նշանակում է՝ տվյալ ժողովուրդի ոգին այն չէ, նշանակում է՝ տվյալ ժողովուրդն անզրության է դատապարտված: Խուճապը, թերահավատությունը սեփական ուժերի նկատմամբ՝ ահավոր զգացողություն է, որը եթե կյանքով, արյունով չես դիմագրավում, ճնագնդի նման գլորվում, ահազնանում է անընդհատ»²¹:

Որպես ապացույց կարելի է մեջբերել հայտնի խորհրդային զորավար Գենրգի Ժուկովի (1896–1974) այն խոսքը, թե զինված պայքարում հաղթում է նա, ով իրեն

¹⁸ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 294:

¹⁹ Մ. Լ. Կարապետյան, Կամավորական խմբերի համար մշակված հրահանգները՝ որպես առաջին աշխարհամարտում հայ զինված պայքարանի վարժականուն: «ՀՅ», 2002, հմ. 1–2:

²⁰ Նույն տեղում:

²¹ Վ. Սարգսյան, Ոգու փորձություն: Ե., 2000, էջ 279:

վստահված զորքերը բարոյաքաղաքական առումով ավելի լավ է պատրաստել, ով կարողացել է անձնակազմին ավելի հստակ ներկայացնել պատերազմի և սպասվելիք գործողությունների նպատակը, բարձրացնել զորքերի մարտական ոգին, ով չի վախենում կովել անբարենպաստ պայմաններում, ով հավատում է և նվիրված է իր ենթակա անձնակազմին²²:

Բարոյահոգերանական զործոնի դերի ճիշտ գնահատումը սկզբունքային հարց է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ մեծ զործնական նշանակություն, որովհետև դրանից է կախված առաջադրված խնդիրների արդյունավետ կատարումը: Օրինակ՝ «Փորորիկ անապատում» (1991 թ. հունվար – մարտ) օպերացիայի ժամանակ իրաքյան բանակի բարոյահոգերանական ներուժը առավելագույն բոլուցվեց դաշնակցային զորքերի կողմից հոգերանական պատերազմի ուժերի և միջոցների հմուտ կիրառման հետևանքով²³: Կարելի է փաստել, որ Պարսից ծոցում բազմազգ ուժերի հաղթանակը պայմանավորված էր նաև այնպիսի հզոր և համապիտանի գենքի կիրառմամբ, ինչպիսին քարոզչությունն է, որը որոշիչ ազդեցություն գործեց զինծառայողների մարտական զործողությունների և հաղթանակի հասնելու կարողությունների վրա: «Փորորիկ անապատում» օպերացիայի հոգերանական արդյունքներին որպես հակակշխո կարելի է ներկայացնել Կոսովոյում ՆԱՏՕ-ի «Դաշնակցային ուժեր» (1999 թ. մարտ – հունիս) օպերացիայի արդյունքները²⁴: Այդ օպերացիայի ընթացքում Հարավսլավիայի ուղղմաքաղաքական իեկավարության և ԶՈՒ-ի հրամանատարության՝ անձնակազմի բարոյահոգերանական վիճակի մակարդակի բարձրացմանն ուղղված պատեհածամ ու գրագետ զործողություններով կասեցվեց յուրային զորքերի և բնակչության հոգերանական քայլայման զործընթացը, որն ինտենսիվորեն ծավալվում էր ՆԱՏՕ-ի զորքերի կողմից:

Զինծառայողների բարոյահոգերանական վիճակի յուրօրինակությունը պայմանավորված է մի շարք զործուներով և հանգամանքներով, մասնավորապես՝

–զինծառայողների հոգերանության բովանդակությամբ, նրանց արժեքային կողմնորոշումներով, գերակայող հետաքրքրություններով ու ձգտումներով, պահանջմունքներով ու շարժափառներով, մասնագիտական փորձով,

–կոնկրետ իրավիճակներով, որոնցում հայտնվում են զինծառայողները,

–լայն սոցիալական, ներկուեկտիվային և անհատական-անձնային, տնտեսական, քաղաքական, իրավական, ուսումնական գործունեություններով, պահանջմունքներով ու շարժափառներով, մասնագիտական փորձով,

–առաջադրված խնդիրներով,

²² Տես «Военная психология и педагогика». Под ред. П. А. Корчемного, Л. Г. Лаптева, В. Г. Михайловского. М., 1998, с. 305:

²³ Տես Ю. М. Зеленов. Морально-психологическое обеспечение деятельности войск (сил). Учебное пос. М., 2004:

²⁴ Տես А. Гусев. Сотрудничество органов психологической борьбы ВС США со СМИ при освещении конфликта в Косово. «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2007, № 7; С. Гриняев. Эксперты корпорации «РЭНД» об информационной стратегии. «ЗВО», 2001, № 10:

- նպատակներին հասնելու միջոցներով ու եղանակներով,
- ռազմամասնագիտական գործունեության կոնկրետ պայմաններով,
- զորքերի կառավարման առանձնահատկություններով,
- ռազմաքաղաքական դեկավարության ձեռնահասությամբ և հեղինակությամբ²⁵:

Զինծառայողների ԲՀՎ հիմքում են ոչ միայն հասարակությունում գերակայող հոգևոր արժեքները, այլև այդ արժեքների իմաստավորվածությունը: Այս տեսանկյունից ԲՀՎ ասելով պետք է հասկանալ անհատի, կոլեկտիվի, հասարակության ուալ վիճակի այն ինտեգրալային դիմամիկական բնութագիրը, որը ներառում է ռազմաքաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործոնների ազդեցությամբ ձևավորված գիտակցության տարրերի համախումբը: Այդ վիճակը դրսնորվում է զինծառայողների ակտիվության ձևով և կոնկրետ խնդիրների լուծման ժամանակ հանդես է գալիս որպես կոնկրետ աստիճանի բարոյա-հոգեբանական ներուժ:

Զինծառայողների ԲՀՎ-ն բնութագրվում է մի շարք ցուցանիշներով: Այդ ցուցանիշները կազմում են երկու փոխկապված խմբեր:

Առաջին խմբում են համատցիալական ցուցանիշներ՝ որպես հոգևոր ոլորտի ցուցանիշներ, որոնք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի:

Առաջին ենթախմբում ընդգրկված են հիմքային, կամ կայուն, ցուցանիշները, մասնավորապես՝

- անձնավորության բարոյական հասունությունը, դաստիարակվածությունը, պատրաստվածությունը,

- ստորաբաժանումների համախմբվածությունն ըստ հոգևոր և բարոյական, ազգային արժեքների, զորքերի բարոյահոգեբանական միասնության աստիճանը:

Երկրորդ ենթախմբում ընդգրկված են իրավիճակային, կամ դիմամիկական, ցուցանիշները, մասնավորապես՝

- զինծառայողների վերաբերմունքը տեղի ունեցող ներքին և միջազգային իրադարձություններին, պետության ռազմաքաղաքական դեկավարության կողմից ընդունված որոշումներին, իրենց սահմանադրական պարտքի և առաջադրված խնդիրների կատարմանը,

- հաղթանակներու վստահությունը,
- անձնուրաց կերպով գործելու և ժողովրդի շահերը պաշտպանելու վճռականությունը,

- անձնակազմի հասարակական ակտիվությունը:

Երկրորդ խմբում են ռազմատցիալական ցուցանիշները, կամ՝ այլ ձևակերպմամբ, առարկայական-գործնական բնույթի ցուցանիշները, մասնավորապես՝

- մարտական և այլ խնդիրների կատարման որակը,
- զորքերի մարտական և այլ ռազմամասնագիտական պատրաստվածու-

²⁵ Տես «Морально-психологическое обеспечение в Вооруженных силах РФ» (http://armyru.ru/index.php?option=com_content&task=view&id=291&Itemid=1715):

թյան, կազմակերպվածության և զինվորական կարգապահության մակարդակը,
– մարտական տեխնիկայի և գենքի վիճակը,
– զորքերի մարտական, հասարակական-պետական և բարոյահոգեբանական պատրաստումը:

Այսպիսով՝ անձնակազմի ԲՀՎ-ն ներառում է բարոյաքաղաքական, ռազմա-մասնագիտական և հոգեբանական բաղադրիչներ²⁶:

Զինծառայողների ԲՀՎ բարոյաքաղաքական բաղադրիչը բնութագրում է Հայրենիքի պաշտպանության և պետության ռազմաքաղաքական ղեկավարության պահանջների կատարման գործում նրանց քաղաքական հասունությունը:

Զինծառայողների ԲՀՎ ռազմամասնագիրական բաղադրիչը բնութագրում է նրանց ռազմամասնագիտական պատրաստությունը՝ որպես մարտական վարպետության որոշակի աստիճանի իրագործում ու ակտուալացում:

Հոգեբանական բաղադրիչը բնութագրում է կողեկտիվում տիրող սոցիալ-հոգեբանական մքնողորոշը, հայրենասիրության, պարտքի զգացումի խորությունը, իր, ընկերների ու իրանանատարների նկատմամբ վստահությունը, այս կամ այն հոգևոր արժեքներին համապատասխան գործելու հոգեբանական պատրաստությունը:

Վերլուծելով ՌԴ ԶՈՒ-ի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ԶՈՒ-երի անձնակազմի ԲՀՎ ապահովման համակարգերը՝ դրանք կարող ենք ներկայացնել որպես երեք առանձին գործնիքացների համախում՝ ԲՀՎ ձևափորում, պահպանում և վերականգնում:

Անձնակազմի ԲՀՎ չևավորումը ներառում է.

– զինծառայողների շրջանում հայրենասիրության և հայրենիքին նվիրվածության, նրա պաշտպանության համար անձնական պատասխանատվության դաստիարակությունն,

– զինվորական երրման, մարտական դրոշի և ԶՈՒ-ի մարտական ավանդույթների նկատմամբ հավատարմության արմատավորում,

– կարգավարժության, խիզախության, ընկերության և փոխօգնության զգացումի դաստիարակությունն,

– մարտական գործողությունների արդյունավետ վարման համար պատշաճ մակարդակի հոգեբանական պատրաստության ապահովում,

– մասնագիտական աճման, ակտիվության, նախաձեռնողականության, ծառայողական պարտականությունների բարեխիղդ կատարման խթանում,

– պետության կողմից զինծառայողի և նրա ընտանիքի անդամների ռեալ սոցիալական պաշտպանության նկատմամբ վստահության արմատավորում:

Զինծառայողների բարձր մակարդակի ԲՀՎ պահպանման համակարգը ներառում է հետևյալ տարրերը.

– զինվորական ծառայության հեղինակության մեծացմանն ուղղված պետական բաղադրականության մշակում և իրագործում,

²⁶ Տես «Военныи́ энциклопеди́ческий сло́варь», с. 808:

- անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրերի մշակում և իրագործում՝ առկա իրողության հաշվառմամբ,
- գորքերի բարոյական ոգու պահպանման ու ամրապնդման ուղղությամբ պետական միջոցառումների իրականացում,
- միանձնյա ղեկավարման համակարգի, կազմակերպվածության, իրավակարգի և գինվորական կարգապահության ամրապնդում,
- մասնագիտական աճման, ակտիվության, նախաձեռնողականության, ծառայողական պարտականությունների բարեփոխդ կատարման համար բարոյական և նյութական խթանման համակարգի կատարելագործում,
- զինծառայողների, գորացրվածների և նրանց ընտանիքների անդամների մասնագիտական հարմարման, հոգեբանական վերականգնման ապահովում:

ԲՀՎ վերականգնումը ներառում է.

- զինծառայողների **ԲՀՎ մակարդակի** բարձրացում մինչև անհրաժեշտ մակարդակ,
- գորամասերի ստորաբաժանումների անձնակազմի հոգեբանական կայունության վերականգնում,
- մարտական հոգեխոցվածքներով զինծառայողների հոգեբանական վերականգնում,
- անձնակազմի հոգեբանական պատրաստում,
- տեղեկատվական աշխատանքի խաթարված համակարգի վերականգնում,
- զինծառայողների ապահովում ստեղծված մարտական իրադրության և նրանց առաջիկա գործողությունների մասին տեղեկություն,
- անձնակազմի լիարժեք հանգստի և ժամանցի կազմակերպում,
- զինծառայողների սոցիալական խնդիրների լուծում,
- բարոյահոգեբանական ապահովման (**ԲՀՍ**) միջոցների և ուժերի համալրում,
- դաստիարակության տեխնիկական միջոցների վերանորոգում (վերականգնում),
- հակառակորդի նկատմամբ բարոյահոգեբանական առավելության ապահովում:

Նշենք, որ անձնակազմի **ԲՀՎ վերականգնումը** կատարվում է ըստ մարտական խնդիրների կատարման աստիճանների:

Վերը ներկայացվածից հետևում է, որ գորքերի **ԲՀՎ-Ա որոշվում է.**

- գորքերի մարտունակության վերականգնմամբ, ներառյալ՝ հոգևոր ուժերի և հոգեբանական վերականգնումը,
- զինծառայողների կողմից պատերազմի նպատակների խոր գիտակցմամբ, իրենց կրողմից կատարվող մարտական խնդիրների արդարացիության, ռազմաքաղաքական դեկազմական կողմից վարվող քաղաքականության ճիշտ լինելու համոզվածությամբ,

– մարտական խնդիրների կատարմանը բարոյական պատրաստվածությամբ և հաղթանակի հասնելու ամուր կամքով,

– հոգեբանական կայունությամբ, մեծ արիեստավարժությամբ և ֆիզիկական դիմացկունությամբ,

– կառավարման համակարգի արդյունավետությամբ, հրամանատարի նկատմամբ հավատով,

– բարոյանարտական հատկությունների ձևավորմանն ուղղված մշտական աշխատանքով,

– զորքերի պատեհաժամ և բազմակողմանի ապահովմամբ, զինծառայողների կարիքների և պահանջնությների բավարարմամբ:

Կարևորելով զորքերի մարտունակության պատշաճ մակարդակի պահպանման գործում անձնակազմի ԲՀՎ դերը՝ նպատակահարմար ենք համարում, որ հրամանատարական կազմը անձնակազմի ԲՀՎ ձևավորմանն ուղղված աշխատանքում հաշվի առնի հետևյալ պահանջները.

– պատեհաժամություն և անընդմեջություն, այսինքն՝ անհրաժեշտ է դեռ խաղաղ ժամանակ մշտապես ձևավորել և վերահսկել զորքերի ԲՀՎ-ն, քանի որ, ինչպես ցոյց է տալիս պատերազմների և ռազմական բախումների սկզբնական փուլի վերլուծությունը, պատերազմական գործողությունների ընթացքում դրա համար կարող է ժամանակ չլինել,

– ԲՀՎ-ի բովանդակության համապատասխանություն հնարավոր ռազմաքաղաքական, մարտավարական, բարոյահոգեբանական և տեղեկութային հրադրության, ռեալ մարտական գործողությունների պայմաններին, ինչը ապահովում է ԲՀՎ-ի և մարտական պատրաստման համաձայնեցվածությամբ, զորահավաքային ռեսուրսների պլանային ուսումնական հավաքների անցկացմամբ:

Զինծառայողների կայուն ԲՀՎ պահպանական համար անհրաժեշտ է՝

– մշտապես ուսումնասիրել և վերլուծել անձնակազմի ԲՀՎ-ն և ժամանակին խնդիրներ առաջարկել դրա պատշաճ մակարդակի ապահովման համար,

– ճիշտ որոշել զինծառայողների հետ տարվող աշխատանքի ձևերը, միջոցներն ու մերողները և կարողանալ դրանք հմտորեն ու ստեղծագործարար կիրառել ըստ մարտական խնդիրների բնույթի և ձևավորվող իրադրության,

– անձնակազմին մշտապես պարզաբանել մարտական գործողությունների հոգեբանական առանձնահատկությունները, ուսուցանել ինքնակարգավորման մեթոդները՝ ուղղված հոգեբանական լարվածությունների քուլացմանը կամ վերացմանը,

– մշտապես ներազել ենթակա անձնակազմի գործունեության վրա, ուշադրության կենտրոնում պահել ենթականների տրամադրությունները և պահանջնությները, պատեհաժամորեն լուծել կոլեկտիվում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական երևույթների հետ կապված խնդիրները,

– հմտորեն կազմակերպել բարոյահոգեբանական ապահովումը անմիջականորեն ստորաբաժանումներում,

– արմատավորել միանձնյա դեկավարումը, կազմակերպվածությունը, իրավակարգը և զինվորական կարգապահությունը,

– ժամանակին խրախուսել այն զինծառայողներին, որոնք իրենց առաջադրված խնդիրները կատարել են մեծ պատասխանատվությամբ,

– արմատավորել սպայական կորպուսի անձնական օրինակելիությունն ու կատարողականությունը,

– կազմակերպել անձնակազմի անընդմեջ իրազեկում ռադիո- և հեռուստահաղորդումների ունկնդրմամբ,

– ժամանակին հայտնաբերել մարտական հոգեխոցվածքներով անձանց և նրանց ցույց տալ հոգեբանական օգնություն:

Զինծառայողների կայուն ԲՀՎ, մարտական իրադրությունում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ բարոյանարտական հատկությունների ձևավորումը, պահպանումը և վերականգնումը պարտադիր կերպով պետք է կրեն համակարգային, համալիր բնույթ, ինչպես նաև խստագույն ու հետևողականորեն կատարվեն հրամանատարների, շտաբների, անձնակազմի հետ տարվող աշխատանքի (ԱՀՏԱ) մարմինների կողմից: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները պետք է պլանավորվեն ըստ մարտական խնդիրների բնույթի, գորամասերի ստորաբաժանումների անձնակազմի ԲՀՎ մակարդակի և տեղեկութահոգեբանական պայքարի ոլորտում լարվածության աստիճանի: Օրինակ՝ Թուրքիայի բանակում հոգեբանական պատերազմի հարցերով գրադիվոր վարչությունը մշտապես ուսումնասիրում է զինծառայողների ԲՀՎ-ն, դրա վրա ազդող գործուները և մշակում է զինվորների ու սպանների մարտական ոգու պահպանման ուղղված քարոզչական նյութեր: Ավելին, Թուրքիայի ԶՈՒ-ում անձնակազմի պատշաճ մակարդակի ԲՀՎ պահպանմանը հասնում են հրամանատարների՝ անձնակազմի բարոյարադական դաստիարակության գծով տեղակալների և շտաբների նպատականորված գործունեությամբ, ԶՈՒ-ի անձնակազմի տղիալ-իրավական պաշտպանվածության և նյութական վիճակի բարելավման հարցում պետության ռազմաքաղաքական դեկավարության ցուցաբերած մշտական հոգատարությամբ²⁷:

Այսպիսով՝ բարոյահոգեբանական առումով պատրաստված զինծառայողը պետք է ունենա՝

– բարձր մակարդակի բարոյական պատրաստություն, հոգեկան ընդունակություն և ֆիզիկական դիմացկունություն,

– ուժեղ, թվապես զերազանցող թշնամու դեմ մարտական գործողությունները հաջողությամբ կատարելու կարողություն,

– անգամ հիմնական ուժերից կտրվածության պայմաններում մարտնչելու պատրաստություն և հաղթանակի նկատմամբ համոզվածություն,

– իմաստավորված, արդյունավետ կերպով և սառնասրությեն գործելու ընդունակություն:

²⁷ Տես A. Констандов. Морально-психологическое состояние военнослужащих турецкой армии. «ЗВО», 2001, № 5–6:

**МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ
И БОЕВОЙ ДУХ ВОЕННОСЛУЖАЩИХ КАК ПРЕДПОСЫЛКА
ОБЕСПЕЧЕНИЯ ВЫСОКОГО УРОВНЯ БОЕСПОСОБНОСТИ ВС РА:
ТЕОРЕТИЧЕСКИЙ АСПЕКТ**

В. Г. МАРГАРИАН, полковник, кандидат психологических наук, доцент, заместитель
главного редактора военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

Морально-психологическое состояние (МПС) военнослужащих, являющееся одним из основных факторов обеспечения боеспособности войск, рассматривается как интегральная времененная динамическая характеристика их реального состояния как их самих, так и воинского коллектива в целом. Оно включает совокупность тех элементов сознания военнослужащих, сформированного под воздействием военно-политических, социальных, экономических и других факторов, которые проявляются в их активности и выступают как степень реализации морально-психологического потенциала.

Представлена система обеспечения высокого МПС военнослужащих: формирование, поддержание и восстановление. Проанализированы показатели, характеризующие МПС личного состава ВС, которые необходимы для поддержания постоянной боеспособности войск.

**SERVICEMEN'S MORAL-PSYCHOLOGICAL STATE
AND FIGHTING SPIRIT AS A PREMISE FOR ENSURING
HIGH LEVEL OF EFFICIENCY OF THE RA ARMED FORCES:
A THEORETICAL ASPECT**

V. H. MARGARYAN, Colonel, Candidate of Psychological Sciences, Docent,
Deputy Editor-in-Chief of the Defense-Academic Journal «Haikakan Banak»,
INSS, MoD, RA

SUMMARY

Servicemen's moral-psychological state (MPS), being one of the basic factors of ensuring troops' efficiency, is regarded as an integrated temporary dynamic description of their real state and the military collective group on the whole. It includes the whole set of servicemen's consciousness elements formed under the impact of military-political, social, economic and other factors which are revealed during their activity and appear as a level of realizing the moral-psychological potential.

The system of supporting servicemen's high MPS: formation, support and recovery—is presented. The indices characterizing the MPS of the Armed Forces personnel and necessary for keeping troops' constant efficiency are analyzed.

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ
Ա. Ն. ԾԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Տեղեկադրվության
և հասարակայնության հետ կապերի վարչության պետի լրեղակալ –
ՀՀ Պաշտպանության նախարարի մամլո քարտուղար

«Ենք բանակի և հասարակության միջև առկա ջրբաժանն այսօր այնքան աննշան է, որ հնարավոր չեն նրանց պատկերացնել իրարից անշատ»¹:

Հասարակությունում օրեստօրեն ամրապնդվում է այն գիտակցումը, որ բանակն ու ժողովրդը մեկ ամբողջություն են, և այժմ ավելի, քան երբեմն, ուրվագծվում է բանակ-հասարակություն-ԶԼՄ փոխգործությունը որակական նոր մակարդակի հասցնելու առաջնահերթությունը: Հանրության ցանկությունն է ունենալ առավել թափանցիկ և հաշվետու զինված ուժեր, իսկ բանակի դեկավարությունը բազմիցս հավաստել է, որ պատրաստ է համագործակցության, կարևոր հարցերի շուրջ շահագրգիռ քննարկումների: Ուստի պատահական չէր, որ բարեփոխումների ուղին որդեգրած բանակի դեկավարությունը պաշտպանական բարեփոխումների ծրագրում անվերապահութեան ամրագրեց նաև բանակի խնդիրների, դեկավար կազմի գործունեության, զինծառայության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության ապահովման նպատակով ավելի ակտիվ քաղաքականության ուղինելի հանդիպությունը: «Բանակաշինությունը անընդհատ գործընթաց է, որը պահանջում է մշտական զարգացում. տարիներ շարունակ նույն մոտեցումների կիրառումը կարող է հանգեցնել լճացման և բացասարար անդրադառնալ բանակի մարտունակության վրա: Մրանք են պաշտպանական բարեփոխումների իրականացման հիմնական նախադրյալներն ու դրդապատճառները»²:

Երբ 2005 թ. մեկնարկեց պաշտպանական բարեփոխումների ակտիվ գործընթացը, ՀՀ պաշտպանության նախարարությունում հանրային իրազեկման գործառույթներով օժտված էին ՀՀ ՊՆ Մամլո ծառայությունը և ՀՀ ՊՆ Տեղեկատվության վարչությունը: Հենց բարեփոխումների մեկնարկին պարզ դարձավ, որ բանակում առաջնահերթ արմատական փոփոխությունների ենթակա ոլորտ-



¹ Ս. Օհանյան, XXI դարի բանակը: Ե., 2007, էջ 266:

² Ս. Օհանյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. Երկրորդ փոլ: «ՀԲ», 2008, հմ. 2-3:

Աերից մեկը պետք է լինի տեղեկատվության համակարգը՝ կը նրաց հանրությունը հասու դարձնելով բարեփոխումների տվյալ փուլի ծրագրերին։ Բարեփոխումների առաջին փուլի հիմնական խնդիրների թվում էին երկրի անվտանգության ապահովման համակարգի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք փաստարդերի և օրենսդրական դաշտի ստեղծումը, զինված ուժերի բարեփոխումների և զարգացման մեկնարկային ծրագրերի մշակումը³։

Պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թթ. ծրագրում շեշտված է հասարակության տեղեկացվածության ապահովման անհրաժեշտությունը։ Ծրագրի հանրային իրազեկման բաժնում նախանշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ էին նոր մոտեցումներ։ Գործառույթները հստակեցնելու, ստորաբաժանումների կառուցվածքը վերանայելու համար հարկավոր էր կատարել յուրօրինակ «գույքագրում» և ուրվագծել անելիքների շրջանակը։ Բարեփոխումների առաջին փուլում խնդիր դրվեց ստեղծել մի համապարփակ փաստաթուղթ, որում սահմանվեին պաշտպանական ոլորտի հանրային իրազեկման հիմնարար դրույթները, նպատակները, խնդիրներն ու առաջնահերթությունները և առնվազն ընդհանուր գծերով նշվեին դրանց իրազործման միջոցները, գործիքարանն ու մեխանիզմները։ Ծրագրային փաստաթորում բարեփոխումների տեղեկատվական քաղաքականությանն առնշվող բոլոր մտահղացումները պետք է համակարգված ծևով արտացոլեին և կատարող ստորաբաժանման գործառույթները, և պաշտպանության ոլորտի կառավարման համակարգի ու առանձին ստորաբաժանումների փոխկապված գործունեությունը։

Ոլորտի գործունեության վերաբերյալ համընդգրկուն փաստաթուղթ կազմելիս որպես ուղենիշ ընտրվեց ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ՀՀ ռազմական դրույթի մշակման մեթոդաբանությունը։ Ի մի բերվեցին բարեփոխումների իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովների և աշխատանքային խմբերի, ինտերնետային բաց ռեսուրսներով աշխարհի տարրեր երկրների բանակների՝ հասարակության հետ կապերի ասպարեզում առկա փորձի ուսումնասիրության, ինչպես նաև արտերկիր գործուղումների ընթացքում ձեռք բերված գիտելիքն ու փորձառությունը։ 2007 թ. հունիսին ՀՀ ՊՆ Մամլո ծառայությունը^{*} ձեռնամուխ եղավ ծրագրային փաստաթորի ստեղծման աշխատանքներին։ Նման խնդիր էր դրված նաև ՀՀ ՊՆ Տեղեկատվության վարչության առջև**, սակայն դեռ նախնական փուլում աշխատանքները գրեթե սառեցվեցին, և բարեփոխումների հարցերով հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց Մամլո ծառայությունում ստեղծված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության

³ Տես նոյն տեղում։

* Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում կատարված կառուցվածքային փոփոխությունների հետևանքով այդ ծառայությունը 2009 թ. փետրվարին լուծարվեց, իսկ նրա գործառույթները փոխանցվեցին նորաստեղծ ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը, ինչը բխում էր «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգի տրամադրությունից»։

** Այս վարչությունը ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության իրավանախորդն է։

նախարարության հանրային իրազեկման հայեցակարգի» նախազիծը, որը պատրաստ էր արդեն 2007 թ. սեպտեմբերի կեսերին:

Քանի որ ՀՀ գերատեսչություններից և ոչ մեկում չկար նման հայեցակարգի մշակման փորձ, ուստի նախազիծը մինչև Պաշտպանության նախարարի հաստատմանը ներկայացնելը խորհրդատվական փորձաքննություն անցավ արտասահմանում՝ Բրյուսելում, Մոսկվայում, Վիլնյուսում, տարբեր ծևաչափերով կայացած հանդիպումների ժամանակ: Հայեցակարգի մշակմանն իր արժեքավոր խորհրդականությունը մեծապես աջակցեց ՆԱՏՕ-ում այն ժամանակ ՀՀ ԶՈՒ-ի ներկայացուցիչ գնդապետ Դավիթ Տոնյանը, որն այժմ ղեկավարում է ՀՀ ՊՆ Պաշտպանական քաղաքականության վարչությունը:

«ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը» (ՀԻՀ) հաստատվեց 2007 թ. նոյեմբերին: Այն զետեղված է ՀՀ ՊՆ պաշտպանական կայրի գլխավոր էջում⁴:

Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է ի շարս այլ խնդիրների նաև կառավարման համակարգի արդյունավետության մեծացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, ինչը ենթադրում է, որ բանակաշինության յուրաքանչյուր փուլում բարեփոխումները պետք է ի զորու լինեն նախանշելու նպատակների իրականացման իրատեսական ուղիներ: Այսպես, բանակաշինության արդի փուլում պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների իրականացման հիմնական յոր ուղղություններից մեկը պաշտպանության բնագավառում «հանրային իրազեկման հայեցակարգի արդյունավետ և բարենցիկ միջոցների»⁵ մշակումն էր, իսկ արդյունքը եղավ ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից հաստատված «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգը»⁶: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի էջերում փոխնախարար Ա. Նազարյանն անդրադարձել է փաստաթորի ընդունման իրավական հարցերին. ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը» ՀՀ պաշտպանական գերատեսչության միասնական տեղեկատվական քաղաքականության իրազեկման ուղղված կիրարությունը հիմնարար դրույթների ամրողություն է, որը բխում է պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները սահմանող ուղեցույց փաստաթորների՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ՀՀ ռազմական դոկտրինի պահանջներից: «ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգի» հիմնական նպատակն է սահմանել պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի հանրային իրազեկման քաղաքականության առաջնահեր-

⁴ Տես <http://www.mil.am/arm/index.php?page=111>:

⁵ Ա. Նազարյան, ՀՀ պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բնակաշինության արդի փուլում: «ՀՔ», 2008, հմ. 2–3:

⁶ Տես նոյն տեղում:

թուրքուններն ու նպատակները, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման մերողներն ու միջոցները՝ նպաստելով պաշտպանության բնագավառի ընթացիկ ու ծրագրվող բարեփոխումների վերաբերյալ տեղեկացված լինելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրացմանը»⁷:

Պաշտպանության բնագավառի և դրա դեկավարների վերաբերյալ սպառիչ և հավաստի տեղեկույթ ստանալու հարցում հանրության շահագրգությունն առաջին երթին բացատրվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությամբ և այն հանգամանքով, որ մեր բանակը համարվում է զորակոչային սկզբունքով: Հայաստանում, ի տարբերություն պայմանագրային բանակ և խաղաղ հարևաններ ունեցող երկրներից, իիշյալ երկու գործուները լիովին հիմնավորում են բանակի ու երկրի պաշտպանուակության խնդիրներով հանրության մտահոգություններն ու ակնկալիքները: Հանրությունը ցանկանում է, որ անվտանգ լինեն թե՛ երկիրը, թե՛ այն պաշտպանող գինվորը: Տեղեկույթի պակասը պարարտ հող է ասելուների, ստահող լորերի տարածման համար, իսկ հակառակորդի քարոզչական մերենան և որոշ հայրենական անշրջահայաց լրատվամիջոցներն իրենց ապատեղեկատվությամբ կարող են անվտահություն սերմանել, ազդել անհատների և հասարակության վրա՝ առաջ բերելով հակասություններ ու պառակտում: ՈՒստի և վերը տրված հարցերի պատասխանը կարելի է արտահայտել հայտնի «Ով իրազեկված է, նա պաշտպանված է» կարգախոսով:

Հայեցակարգը բարձր գնահատականի արժանացավ ինչպես փորձաքննության վոլում, այնպես էլ ՀՀ-ՆԱՏՕ ԱԳԳԾ շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը գնահատելիս՝ 2008 թ. փետրվարին: Մինչև իրապարակումը Հայեցակարգով արդեն հետաքրքրվում էին ԵՎՀԿ Երևանյան գրասենյակի, «Տեղեկատվության ազատության կենտրոն»՝ ՀԿ և շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչներ: Եթի Հայեցակարգը գետեղեցինք ՀՀ ՊՆ պաշտոնական կայքում, նման հասարակական հետաքրքրությունը վերածեց արժեքավոր կարծիքների: Արձագանքում էին հասարակական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական գերատեսչությունների մամլո քարտուղարներ ու հասարակության հետ կապերի գծով պատասխանատուններ, փորձագետներ: Հետադարձ կապի սկզբունքը ծառայեց իր նպատակին և հնարավորություն տվեց համապատասխան հետևողություններ անելու փաստաթղթի կարևորության և պահանջված լինելու վերաբերյալ: Փոխշահավետ գործակցություն ծավալվեց զինված ուժերի նկատմամբ վերահսկողական գործառույթներ ունեցող հաստատությունների հետ:

Առաջիններից մեկը արձագանքեց և հանդիպում խնդրեց Եվրամիության հետ համատեղ քաղաքացիական հասարակության զարգացման ծրագրեր իրականացնող «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակութ-

⁷ Նոյն տեղում:

յան» ՀԿ⁸ ծրագրերի տնօրեն Նունե Պեպանյանը: Նա ուզում էր պարզել, թե առաջին հայացքից հոչակագրային թվացող Հայեցակարգի դրույթները որքանով են կիրառելի բանակ-հասարակական կազմակերպություններ կապի տեսանկյունից: Հետագա հանդիպումներն ամրապնդեցին Վստահությունը՝ արդյունավետ փոխգործության առումով, և որպես արդյունք՝ նրանց կայքի «Կապեր նախարարությունների և ԱԺ-ի հետ» բաժնում գետեղվեց հղում ՀՀ ՊՆ Հի-ի հայեցակարգին՝ որպես ՀԿ-ների հետ համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթի օրինակի⁹: Կարևորելով համագործակցությունն ու մասնակցությունը՝ «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ն այնուհետև դարձավ ՀՀ ՊՆ Հի-ի «կամավոր քարոզիչը»՝ պետական գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների և ՀԿ սեկտորի ներկայացուցիչների հետ իր ծրագրային հանդիպումների և սեմինար-դասընթացների ժամանակ այն ներկայացներվ որպես նախատեսվ չունեցող և գնահատելի փաստաթուրը: Հավելենք, որ կազմակերպությունը հանրապետության ՀԿ սեկտորի առաջատարներից է, անդամակցում է ընդգրկուն ցանցային կառույցների, իսկ նրա կայքից այցելուների միջին օրական թիվը հանում է 200-ի:

Հայեցակարգում արտացոլված առաջիներքություններով հետաքրքրված մյուս հասարակական կազմակերպությունը «Որակի համընդհանուր կառավարման աջակցման» ՀԿ-ն է, որի ղեկավար Էլենորա Ասատրյանը կառավարման համակարգի միջազգային չափորոշիչների սահմանման ոլորտի փորձագետ է: ՊՆ Մամլո ծառայությունում կայացած հանդիպումների ժամանակ նա առավելապես հետաքրքրվում էր Հայեցակարգի գործարկման մեխանիզմով և պաշտպանության նախարարությունում բարեփոխումների շրջանակներում իրականացվելիք կառուցվածքային փոփոխություններով: Պաշտպանության նախարարի հետ հանդիպման ժամանակ Է: Ասատրյանը պատրաստականություն հայտնեց մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նախարարությունում լճիքացող բարեփոխումներին և առաջարկեց ներդրել կառավարման արդյունավետ համակարգ: Այդ գործընթացները ծավալվեցին 2008 թվականին: Ըստ պայմանագրվածության՝ վերոնշյալ երկու կազմակերպությունների հետ հետագա համագործակցությունն ավելի գործնական բնույթ կստանա, երբ ավարտվեն պաշտպանության նախարարության կառուցվածքում համապատասխան ստորաբաժանման ստեղծման և համալրման աշխատանքները:

Պաշտպանության ոլորտում հանրային իրազեկման ապահովման բնագավառի առանցքային դերակատարներից են նաև լրատվամիջոցները, ուստի Հայե-

⁸ Կազմակերպությունը «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» և Եվրոպական միության ֆինանսական և փորձագիտական աջակցությամբ իրականացնում է երկայնա ծրագիր՝ «Հայաստանում կառավարության և ՀԿ սեկտորի միջև հետևողական երկխոսությանը նպաստում», որի հիմնական նպատակներն են ՀԿ-Կառավարություն համագործակցության հաստատութեացումը և առանցքային նշանակություն ունեցող տեղեկատվության համակարգումը (տես <http://www.ngo.am/>):

⁹ Տես [# 10:](http://www.ngo.am/arm/index.asp?page=ecnl_ministry)

ցակարգի հանրային քննարկումների շարքում բերենք օրինակ նաև այս ոլորտից: 2008 թ. հոկտեմբերի վերջին Երևանում ԵԱՀԿ ներկայացուցիչը կազմակերպեց «ԶԼՄ-ների և մամուլի պետական ծառայությունների միջև համագործակցությունը ժողովրդավարական հասարակությունում» ուսուցողական սեմինար: Օրակարգային հարցի շորջ ծավալված քննարկումներում ներկայացվեց նաև ՀՀ ՊՆ փորձը, որն արժանացավ թե՛ սեմինարի կազմակերպիչների, թե՛ մասնակից լրագրողների հավանությանը:

Անշուշտ, բարեփոխումներն ավելի թափանցիկ կդարձնեն զինված ուժերը, և կրարձիանա բանակաշինության գործընթացի վերաբերյալ հասարակության իրազեկվածության աստիճանը:

Հայեցակարգում կարևոր տեղ է հատկացվում բանակում քաղաքացիական վերահսկությունն իր ծագման վաղ փուլից սկսած համարվում է զինված ուժերի կառավարմանը քաղաքացիական հաստատության հարցերին, որոնք արտացոլված են «Հանրային իրազեկման հայեցակարգի խնդիրներն ու առաջնահերթությունները» գիլում: Պաշտպանական բարեփոխումներով նախատեսվում էր նաև բանակում մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) հաստատության ներդրումը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում 2007 թ. նոյեմբերից արդեն գործում է ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականի պաշտոնը:

«Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկությունն իր ծագման վաղ փուլից սկսած համարվում է զինված ուժերի կառավարմանը քաղաքացիական հաստատությունների (պետական և ոչ պետական) մասնակցությունն ապահովող մեխանիզմների ամբողջություն, որի նպատակներն են՝ պետության քաղաքականությանը զինված ուժերի մասնակցության սահմանափակումը, հասարակության մեջ զինված ուժերի նկատմամբ վստահության մրնողորդի ստեղծումը, զինված ուժերի գործառույթների իրականացման օրինականության ապահովումը, ինչպես նաև զինծառայողների իրավունքների պաշտպանությունը»¹⁰: Այս համատերսում կառուցվեցին և լճաքարի մեջ դրվեցին ՄԻՊ-ի գրասենյակի ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականի հետ հարաբերությունները: Այսպիսով՝ 2008 թ. շրջանառության մեջ դրված ՀՀ ՊՆ ՀՀՀ-ը դարձավ յուրօրինակ ցուցիչ՝ ՊՆ որդեգրած տեղեկատվական քաղաքականության նկատմամբ ներկա փուլում հանրության, շահագրիոն կառույցների վերաբերմունքը պարզելու և զարգացման հետագա միտումներն ուրվագծելու համար:

Բնավ չնեմացնելով ՀՀ ՊՆ ՀՀՀ-ին նախարարությունից դուրս տրված գնահատականների կարևորությունը՝ այդուհանդեք շեշտենք, որ մեզ համար առավել արժեքավոր էր այն գնահատականը, որը հանրային իրազեկման նշանակությանն ու հայեցակարգային դրույթներին տվել է ՀՀ Պաշտպանության նախարար Մերյան Օհանյանը: 2008 թ. դեկտեմբերին ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմին տարեմուտի իր ուղերձում նախարարը, հետադարձ հայացք գցելով ընթացիկ տարում բանակաշինության ոլորտում իրականացված գործընթացների վրա և առանձնացնելով

¹⁰ Ա. Ռ. Ավելիշիս, Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկության հարցի շորջ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

ձեռքբերումներն ու թերացումները, նախանշել է դեպի ավելի հզոր ու մարտունակ քանակ տանող ճանապարհը: Բարեփոխումների ընթացքում ունեցած ձեռքբերումների թվում, մասնավորապես, նշվում է, որ «ԱԺ-ի և հասարակության տեղեկացման նպատակով մշակվել է հասարակական իրազեկման ռազմավարության ծրագիր»¹¹: Ծրագրելով 2009 թ. քանակային տարվա գործունեությունը՝ նախարարը գրում է. «Հիմք ընդունելով քանակ-ժողովուրդ փոխադարձ կապի ամրապնդման ուղղությամբ մինչ այժմ ունեցած հաջողությունները՝ հանրապետության գինված ուժերը այսուհետ ևս պետք է շարունակեն ապահովել կառուցղական հարաբերությունները հասարակության հետ: Դրա լավագույն միջոցներից մեկը ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգի դրույթների գործնական կիրառումն է, ինչը հնարավորություն կտա առավել քափանցիկ դարձնելու Զինված ուժերը, կմեծացնի քանակաշինության գործընթացի վերաբերյալ հասարակության տեղեկացվածության աստիճանը, ինչպես նաև պայմաններ կստեղծի քանակում քաղաքացիական վերահսկողության լծակների կիրառման համար»¹²:

Իրավամբ, Հայեցակարգի ստեղծումից հետո հանրային իրազեկման ապահովման հաջորդ՝ առանցքային, փուլը դրա կիրարկումն էր, ինչի համար անհրաժեշտ էին կառուցվածքային փոփոխություններ: Երբ պաշտպանական քարեփոխումների շրջանակներում ՊՆ-ում կատարվելիք կառուցվածքային փոփոխությունների հարցը քննարկումների փուլում էր, ՊՆ Մամլո ծառայությունը հանդիս եկավ հետևյալ գործնական առաջարկությամբ. արդյունավետ միասնական տեղեկատվական քաղաքականություն ապահովելու համար անհրաժեշտ է ՀՀ ՊՆ գործող երկու ստորաբաժանումները՝ Մամլո ծառայությունը և Տեղեկատվության վարչությունը, միավորել մեկ կառույցի մեջ՝ կառուցվածքի ու հաստիքակազմի եական փոփոխություններով և գործառույթների հստակեցմանը: Ըստ այդ մտահրացման՝ ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի նորաստեղծ վարչության գործառույթները թե՛ ուղղածից, թե՛ հորիզոնական հարթություններում այնպէս էին փոխկապված ձևով բաշխվելու և համադասական ու ուղարկությունների իրականացումը: Մակայն առաջարկն ընդունվեց մասնակի փոփոխություններով, և 2009 թ. ստեղծվեց ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, որի հաստատված կառուցվածքը տեղեկատվական քաղաքականության միջոցների գործադրման տեսանկյունից քարելավման կարիք ունի:

Պաշտպանության նախարարության տեղեկատվական քաղաքականության հարցերի մասին խոսելիս հարկ է շեշտել, որ անվտանգային միջավայրի ուսումնափրկությունը հանգեցնում է նոր հրամայականի. քափանցիկ և հրապարակային

¹¹ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2009 թ. տարեմուտի ուղերձը ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմին»: «ՀՔ», 2008, հմ. 4:

¹² Նույն տեղում:

գործունեության հետ մեկտեղ չի կարելի նվազեցնել տեղեկատվական քաղաքականության մեկ այլ քաղադրիչ՝ տեղեկատվական հակագրման կարևորությունը։ ՈՒստի և, մշակելով բարեփոխումների ուղիղով ընթացող ՀՀ ԶՈՒ-ի տեղեկատվական քաղաքականության հանրային իրազեկման ուղենիշները, պետք է հետևողականորեն ուսումնասիրել և այդ քաղաքականության մեջ հավուր պատշաճի արտացոլել տեղեկատվական հակամարտության պայմաններում գերատեսչական խնդիրները՝ կիրառելով հակակշիռների համամասնական զուգակցման սկզբունքը։

ՀՀ ՊՆ «Հանրային իրազեկման հայեցակարգը» դիմամիկ փոփոխությունների ենթակա մի փաստաթուղթ է, որը հանձնարկում է քանակաշինության տվյալ փոփի խնդիրներին, ուստի, դրանում ներառված խնդիրների, իրականացման միջոցների, գործիքների վերաբերյալ գործնական առաջարկություններ բովանդակող յուրաքանչյուր արձագանք, կարող է էական դեր ունենալ փաստարդում կատարվելիք փոփոխություններում՝ ի շահ քանակի վարկի շարունակական բարձրացման, քանակ–հասարակություն գործուն կապի ամրապնդման։

ИНФОРМИРОВАНИЕ ОБЩЕСТВЕННОСТИ КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ИНФОРМАЦИОННОЙ ПОЛИТИКИ, ОСУЩЕСТВЛЯЕМОЙ В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

С. Н. ШАХСУВАРЯН, полковник, заместитель начальника
Управления информации и связей с общественностью МО РА –
пресс-секретарь Министра Обороны РА

РЕЗЮМЕ

Развитие сотрудничества армия – общество – СМИ и обеспечение его качественно нового уровня – важные составляющие информационной политики МО РА. Оборонные реформы предъявляют повышенные требования к уровню информированности общества и обеспечению транспарентности жизнедеятельности армии. На нынешнем этапе строительства Вооруженных сил разработка стратегии информирования общественности в качестве одного из направлений осуществления оборонных реформ стала крайне актуальной. С этой целью в Министерстве обороны РА была разработана «Концепция МО РА по информированию общественности», в качестве ориентира для которой была выбрана методология межведомственной разработки «Стратегии национальной безопасности» и «Военной доктрины» РА, был изучен опыт армий ведущих стран мира в области связей с общественностью. В ноябре 2007 г. Министр Обороны РА утвердил Концепцию, которая обеспечивает более эффективное информирование общественности, дает возможность более транспарентно представить осуществляемые реформы, повышая степень информированности граждан РА о процессе строительства Вооруженных сил. Документ размещен на официальном сайте МО РА на трех языках.

Согласно логике Концепции в структуре МО РА были осуществлены структурные изменения. В МО РА функциями общественного информирования были наделены Пресс-служба МО РА и Управление информации МО РА. Для обеспечения эффективности деятельности МО в этой сфере они были объединены в единое подразделение – Управление информации и связей с общественностью МО РА, которое призвано обеспечить осуществление всех предначертанных в Концепции целей и приоритетов.

THE PUBLIC INFORMING AS A KEY COMPONENT OF THE INFORMATION POLICY BEING IMPLEMENTED IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS

S. N. SHAHSUVARYAN, Colonel, Deputy Chief of the Board of Information and Public Relations, MoD, RA—Press Secretary of the RA Defense Minister

SUMMARY

Developing Army—society—mass media cooperation and ensuring its qualitatively new level are key components of the information policy of the MoD, RA. The defense reforms make higher demands upon the level of information awareness of the society and ensuring the transparency of vital activities of the Army. At the present stage of building the Armed Forces the elaboration of the strategy of public informing as one of the directions of defense reforms implementation has become utterly urgent. For that purpose the RA Defense Ministry elaborated «The Public Informing Conception of MoD, RA» as a guideline for which the methodology of interagency elaboration of the RA «National Security Strategy» and «Military Doctrine» was chosen, and the experience of armies of the world leading countries in the field of public relations was studied. In November, 2007, the RA Defense Minister approved the Conception which ensures more effective public informing, gives a possibility to more transparently represent the reforms being implemented, increasing the degree of the RA citizens' information awareness of the process of building the Armed Forces. The Document is placed in three languages on the official website of the MoD, RA.

According to the logic of the Conception structural changes were implemented in the structure of the MoD, RA. The Press Service of the MoD, RA, and the Board of Information of the MoD, RA, were endowed with the functions of public informing in the MoD, RA. For ensuring the efficiency of activities of the MoD in that sphere they were amalgamated into a single sub-unit—the Board of Information and Public Relations of the MoD, RA which is called to ensure meeting all the goals and priorities outlined in the Conception.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ԾՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՍԵՐՄԱՆՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈԳՈՒ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ**

Գ. Գ. ԳՅՈՒՐՋՅԱՆ, ՀՀ մշակույթի նախարարի լրեղակալ



Հասարակության մեջ մշակութային արժեքների և, մասնավորապես, *ազգային մշակութային արժեքների* սերմանումը մշակութային քաղաքականության անհրաժեշտ բաղկացուցիչներից է և պայմանավորված է պետության ու հասարակության համար մշակույթի խաղացած նշանակալի դերով: **Անցյալում սրեղծված մշակութային արժեքների ամբողջուրյունը կազմում է մշակութային ժառանգուրյունը**¹: Հասկացես երիտասարդ սերնդի համար, որը ներկայումս կերտվող նորանկախ հայրենիքի լիիրավ տերն է, այդ արժեքների ճանաչումը, հարզումը և պահպանումը այն հենքոն են, որի վրա ձևավորվում է հասարակության լիարժեք անդամը: Մշակութային արժեքների՝ որպես **բարոյական ոգու ժևավորման միջոցի** սերմանումը սերտորեն կապված է դաստիարակության և կրթության համակարգերի հետ. բարոյական ոգին, փոխկապված լինելով գիտակցության, զգացմունքների ու համոզմունքների հետ, նպաստում է անձի որոշակի կողմնորոշման ձևավորմանը՝ մանկության, դեռահասության և երիտասարդության շրջանում:

Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության իմնական նպատակներն են՝ մշակութային ժառանգության պահպանումն ու անխարար փոխանցումն ապագա սերունդներին, նպաստումը մշակութային արժեքների ընկալմանը և տարածմանը: Առանձնակի կարևոր է երիտասարդության և, հատկապես՝ հայկական բանակի գինծառայողների կողմից մեր ազգային պատմամշակութային ժառանգության իմացուրյունը, ինչն անրաժանելի է հայրենասիրության, քաղաքացիական և պատմական գիտակցության ձևավորումից: Պատմամշակութային ժառանգության արժեքների սերմանումը հենց դրա գեղագիտական,

¹ Տես «Մշակութային օրենսդրության իմունիֆների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2002 թ. նոյեմբերի 20-ին), որտեղ արված է հետևյալ սահմանումը. «**Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն՝ անցյալում ստեղծված մշակութային արժեքների ամբողջուրյուն**, որը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովով մշակութային ինքնուրյան պահպանան ու զարգացման, համաշխարհային քաղաքակրթության մեջ ներդրման համար հնագիտական, ճարտարապետական, պատմական, գեղարվեստական կամ սոցիալ-մշակութային հայեցակետից ունի կարևոր նշանակություն»:

պատմական, հասարակական և հոգևոր նշանակության բացահայտումն ու մեկնարանությունն է:

Հայաստանի մշակութային ժառանգության ամենակարևոր ռեսուրսներից մեկը պատմամշակութային անշարժ ժառանգությունն է, որը հանդես է գալիս պատմական անվերջ ընդհարումների հետևանքով ավերված քաղաքների և հնավայրերի մնացորդների, ինչպես նաև քրիստոնեական քաղաքակրթության շուրջ երկհազարամյա շարունակականությունը փաստող եկեղեցների տեսքով: Թեև այդ ժառանգության միջուկը կազմում են կրոնապաշտամունքային հուշարձանները (հերանոսական մեհյաններից մինչև Մայր տաճար), սակայն այն ներկայանում է նաև հարուստ տիպային քազմականությամբ՝ քաղաքաշինական և լանդշաֆտային (հնագույն բնակատեղից մինչև բնապատմական արգելոց), պաշտպանական-ամրաշինական (ամրոց, միջնաբերդ, պարիսպ, գաղտնուղի), բնակելի (քարեդարյան կայանից մինչև պալատ, միջնադարյան քարավանատնից մինչև ժամանակակից հյուրանոց), արհեստաարդյունաբերական (հնձանից մինչև գործարան), քաղաքաշինական-ինժեներական (ջրանցք, կամուրջ, ջրանցույց), ճարտարապետական փոքր ձևեր և հոլշահամալիրներ (մենիիրից^{*} մինչև հուշարձյուր), մոնումենտալ դեկորատիվ ու կիրառական արվեստ (քարձրաքանդակ, խճանկար) և այլն:

Պատմությունից հայտնի են դաստիարակության զանազան եղանակներ՝ սպարտական (ռազմավիճակական), արենական (մտավոր, գեղագիտական, ֆիզիկական) և այլն: Դրանք հիմնականում խարսխված են սերնդեսերունդ փոխանցվող և դարերով ամրապնդվող ամենախոր զգացմունքի՝ հայրենասիրության վրա, որի էռությունը հայրենիքին նվիրվածությունն է, հպարտությունը նրա անցյալի և ներկայի համար, նրա շահերը պաշտպանելու ձգտումը: Հայրենի հողի, լեզվի, ավանդույթների հետ կապվածության ձևով հենվելով պատմական տարրերի վրա՝ **հայրենասիրությունը** մինչ օրս էլ մնում է յուրաքանչյուր երկրի գինված ուժերի մարտունակության քարձրացման և թշնամուն հակահարված տարր պատրաստականության զլսավոր գործոններից մեկը՝ որքան էլ որ կատարելագործված լինեն ճարտական գործողություններ վարելու ժամանակակից եղանակները: Ի՞նչը կարող է երիտասարդի համար ավելի ուսանելի ու տպավորիչ լինել, քան իր ազգային մշակույթը ճանաչելը: Հուշարձաններն ու տեսարժան վայրերը, հարուստ թանգարանները, արխիվներն ու գրադարանները, ազգային գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, ճարտարապետությունը, ծեսերն ու սովորույթները պայմանավորում են թե՛ աշխարհի մյուս ժողովուրդների համեմատությամբ մեր ժողովրդի առանձնահատկությունները, թե՛ նրանց հետ ընդհանրությունները:

Այս համատեքստում, հատկապես՝ երիտասարդությանը կրթելու և դաստիարակելու, ազգային արժեքներին հաղորդակից դարձնելու առումով առանձնակի կարևորություն է ստանում Հայաստանի ռազմապաշտպանական-ամրաշինական ժառանգության հանրահոչակումը: Ռազմապաշտպանական ճարտարապետութ-

* *Մենիր (menhir)*՝ միայնակ կանգնեցված մեծ քար, որ ունեցել է որոշ պաշտամունքային նշանակություն:—Խոլ:

յան նմուշները, պատմության քարեղեն վկաներ լինելուց զատ, վճռորոշ դեր են խսդացել մեր պատմության հերոսական էջերը կերտելիս: Ապրելով լեռնային երկրում՝ մեր նախնիները դեռ նախապատմական ժամանակաշրջանում կերտել են բազմաթիվ բերդեր ու ամրոցներ՝ հմտորեն օգտագործելով բնական լանդշաֆտը և հաջող պայքար մղելով իրենց անկախության ու ազատության համար: Բավական է նշել միայն, որ շուրջ երեքհազարամյա պատմություն ունեցող մեր մայրաքաղաքը՝ Երևանը, հենց ամրոց-քաղաքատեղի էր՝ Էրեբունի (Արին-Բերդ) անվամբ²:



Քաղաքատեղի Էրեբունի, մ. թ. ա. 8–3-րդ դդ.

Դեռ վաղ միջնադարից հայտնի էին Սյունյաց նշանավոր ամրոցները՝ Բաղաբերդը, Սմբատաբերդը, Որոտնաբերդը, Պոռշաբերդը, Աղստևի հովտի Կայան ամրոցը (Աղջկա բերդ), Մահկանաբերդ-Քերդաքարը և այլն: Ի տարբերություն պաշտամունքային կառույցներից, դրանք ավելի մեծ չափով են ենթարկվել թշնամիների հարձակումների, քանդվել, ավերվել են, ինչի հետևանքով մեզ են հասել հնագույն ամրոցների միայն խորուկ մնացորդներ:

9–11 դդ. միջնադարյան Հայաստանի վանքերը պաշտպանական նպատակներով շրջափակվել են պարիսպներով: Հատկապես Հայաստանի անկախության և պետականության կորստից հետո վանքերը շրջապատել են ամրոցներին բնորոշ պաշտպանական կառույցներով: Այսպես. Աշտարակի Ծիրանավոր եկեղեցին (5-րդ դ.) մեզ է հասել ամրոցի վերափոխված: Քաղաքի Քերդաքար թաղամասում գտնվող եկեղեցին հավանաբար կառուցվել է նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեցած բերդատեղում: Իր անառիկ դիրքի շնորհիվ ուշ միջնադարում այն ծառայել է որպես ուազմավարական նշանակություն ունեցող ուազմական հենակետ. հարավային պատին բացված՝ թվով մոտ տասնյակի հասնող ակնատ-

²Տես Կ. Հովհաննիսյան, Էրեբունի: Ե., 1968, նաև՝ Բ. Բ. Պուտրովսկի. Վանսկո ցարство. Մ., 1959:

Աերից պաշտպանվողները կրակ էին բացում թշնամու վրա: Նման ամրությունների են վերածվել նաև Փարավի Շիրանավոր, Բյուրականի Սուրբ Հռիփաննես, Աշնակի, Շիրակավանի և այլ եկեղեցիներ:

Որպես բերդ-ամրոց միջնադարում հատկապես հայտնի էր Ամբերդը (ժողովրդական անվանումը՝ Աշոտ Երկարի բերդ), որը Անի մայրաքաղաքի պաշտպանական համակարգի ինք ամրոցներից մեկն էր³:



Ամբերդ ամրոց, 10–11-րդ դդ..

Միջնադարի հայ նշանավոր քաղաքական գործիչ և գիտնական Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գրած մի նամակում նշվում է, որ 10-րդ դարի սկզբին բերդը և մերձակա շինությունները պատկանում էին հզոր Պահլավունի իշխաններին (մի ժամանակաշրջան այս տոհմից էին ընտրվում Հայոց կաթողիկոսները): Բազրատունիների թագավորության շրջանում Ամբերդը կարևոր ռազմական հենակետերից էր: 11-րդ դարի 70-ական թթ. բերդը գրավում են սելջուկները և վերածում գորակայանի: 1196 թ. հայ-վրացական միացյալ գորքերը Զաքարե ամիրապասալարի գլխավորությամբ ազատում են ամրոցը: Այնուհետև ամրոցը որպես սեփականություն հանձնվում է այդ գորակարին: 13-րդ դարի սկզբին այն Զաքարյանների գործակալ Վաչուտյանների վարչական կենտրոնն էր: 1236 թ. ամրոցը գրավում և հիմնովիճ ավերում են մոնղոլները, ինչից հետո այն 13-րդ դարի վերջին կրկին վերակառուցվում է Վաչուտյանների կողմից: Երբեմնի հզոր ամրոցը վերջնականապես ամայացել և իր նշանակությունը կորցրել է 14-րդ դարի վերջին՝ Լենկրեմուրի արշավանքի հետևանքով:

Ամբերդի օրինակով իրենց պատմություններն ունեն Հայաստանի շատ բերդեր ու ամրոցներ: Համոզված ենք, որ երիտասարդների և, մասնավորապես,

³ Տես Վ. Ա. Հարությունյան, Ամբերդի պաշտպանական սիստեմը: «ՊԲՀ», 1967, հմ. 1, Թ: Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1–2: Ե., 1942–1948, Հ. Մ. Տօքարսկու. Արխիտեկտуրա Արմենիա. IV–XIV ամ. Ե., 1961; նաև՝ «Amberd» («Documenti di architettura Armenia»). Milano, 1972:

մեր զինված ուժերում ծառայողների այցելությունները պատմական վայրեր, ծանոքությունը մեր պատմագրական ու գեղարվեստական գրականության մեջ արտացոլված հերոսների, զորավարների, հայոց քաջավորների ու իշխանների, ուազմիկների կերպարներին և այդ պատմությունների յուրացումը, սոսկ ճանաչողական միջոցառում լինելուց բացի, կունենան նաև մեծ դաստիարակչական նշանակություն: Իսկ Հայաստանը անասելի հարուստ է այսօրինակ վայրերով՝ նախնադարյան, ուրարտական, անտիկ ու միջնադարյան ամրոցների վրա, որոնք կառուցվել են ժայռոտ հրվանդանների, անառիկ քարափների վրա, ոռոգման ցանցերի ակունքներում, ուազմական և առևտրական նշանակություն ունեցող ճանապարհներին: Բրոնզի դարաշրջանում կիկլոպյան ամրոցների խիտ ցանցը՝ գլխավորապես Սևանի ավազանում, Շիրակում և Արագածի լանջերին, ուրարտական քաղաք-ամրոցները (Երերուսի-Արին-քերդ, Արգիշտիխինիլի, Թեյշերախինի-Կարմիր բլուր), անտիկ շրջանի ամրոցաշինության փայլուն օրինակ Գառնին, ուազմավարական տեսակետից կարևոր վայրերում կառուցված հզոր ամրոցները (Ամբերդ, Սմբատարերդ, Դաշտահեմ, Հալիձորի, Սեղոր, Բջնու քերդեր), այս ամենն ասվածի վկայություններն են: Վաղուց ժամանակն է, որ մենք լայն իմաստով մեր հայացքը դարձնենք դեպի մեր ուազմապաշտպանական-ամրաշինական ժառանգությունը: Ոչ միայն քերդերը (իհմնականում ծառայում են պաշտպանական նպատակների), ամրաշինական կառույցներն ու զինանցները (նախստեսված զորավարժանքների ու գենքի կորման համար), այլև՝ քերդապատճենները, դիտակետ-աշտարակները (նախստեսված հեռահաղորդակցության համար), միջնաբերդերը, պարիսպները, ուղեկալները (ստուգողական նշանակությամբ), հուշահամալիրները, բոլոր այս շինություններն ու վայրերը սերտորեն առնչվում են մեր հեռավոր ու մոտ անցյալի պատմական անցքերի հետ: Դրանք անբաժանելի են մեր բնակավայրերի բնապատճերից և շատ անզամ նպաստել են այդ բնակավայրերի պաշտպանությանն ու փոխարձ հաղորդակցությանը:

Սերմանել՝ նշանակում է հետևողականորեն ճանաչելի դարձնել: Սակայն պետք է նաև խոստովանել, որ հասարակության համար այս քենայի մեկնաբանությունն ամենահեշտերից չէ քեկուզել այն պարզ պատճառով, որ խոսքը վերաբերում է տարրեր պատմական ժամանակաշրջանների՝ մեր թվարկությունից առաջ մինչև նոր ժամանակներ, մինչև Արցախյան հերոսամարտ: Բայց շատ կարևոր է մի բան՝ մենք պետք է այդ ժառանգությանը ուղղենք ոչ թե հետադարձ նոստալգիկ հայացք, այլ ընկալենք նորովի՝ որպես ժամանակակից, կայուն և տևական զարգացման գործոն: Պատմական ժամանակներում այդ շենք-շինությունները նպաստել են մեր հայրենիքի պաշտպանությանը, դրանց շուրջն են կերտվել մեր պատմության հերոսական լրվագները, հերոսների կերպարները՝ Պապ թագավոր, Սամվել, Վարդան Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի, Աշոտ Երկար, Գևորգ Մարզպետունի, Դավիթ-Բենեկ: Կերպարներ, որոնք սերնդեսերունդ մեզանում ամրապնդել են հայրենիքի ու հայրենասիրության զաղափարը, դարձել ստեղծագործական ներշնչանքի աղբյուր: Թերևս պատմական ոչ մի փաստաբուլք, ոչ

տարեգրություն այնքան գումար չի մեկնաբանում ժողովրդի հերոսական պատմությունը, որքան դիցարանությունը, էպոսը, գեղարվեստական գրականությունը, կերպարվեստը:

«Սասունի Դավիթ» Էպոսը, Հ. Թումանյանի «Սասնա ծոեր», Քաֆֆու «Սամվել», «Դավիթ-Բեկ», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» երկերը գրականության ասպարեզում, Վ. Սուրենյանցի «Խրիմյան Հայրիկ», «Զապել քագուհու վերադարձ զահին», «Ըստնահարված սրբություններ», Ե. Խարեկյանի «Պատախան Հազկերտին», «Սասունի Դավիթ», «Ավարայրի ճակատամարտ», «Դավիթ-Բեկ», Գ. Խանջյանի «Վարդանանք», Մ. Ավամազյանի «Հերոսի վերադարձը», «Հերոսի երգը» գեղանկարները, Հ. Կոշոյանի «Սասունի Դավիթ» Էպոսի նկարագրությունը, Ե. Քոչարի «Սասունի Դավիթ» ու «Վարդան Մամիկոնյան» արձանները, Կ. Նորիջանյանի «Տորք Անգեղ», «Հայկ Նահապետ», «Վահագն Վիշապարադ» արձանները կերպարվեստում, Տ. Չոլխաջյանի, Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի, Տ. Մանսուրյանի՝ ազգային հերոսական հիմքի վրա ստեղծված գործերը երաժշտարվեստում, «Հյուսիսային ծիածանը», «Գևորգ Մարզպետունին», «Միսիքար սպարապետը» կինոյում. մշակութային այս արժեքների իմացությամբ պետք է ձևավորվի և ամրապնդվի հայ երիտասարդության հոգևոր կերտվածքը:

Կրկին դառնալով հայկական մշակութային ժառանգության քարեղեն վկաներին՝ շեշտենք, որ հուշարձանների, մասնավորապես, ռազմապաշտպանական բնույթի շինությունների ուսումնասիրությունը և դրանց հետ ծանորությունը լուսաբանում են մեր ռազմարվեստի մասնամասները, հնագիտական պեղումներով հայտնաբերված գտածոները ամբողջացնում են անցյալի մասին մեր գիտելիքները: Այդ պատճառով շատ կարևոր է ճանաչել իր ժողովրդի կողմից ստեղծված ժառանգությունը, գտնել կապն անցյալի ու ներկայի միջև: Բոլորովին վերջերս Երևանում՝ Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարանում, բացված «Ծովիշ-Հանրաբերոյ-Տիգրանակերտ» ցուցահանդեսը հասարակության հանդիպումն էր իր ժառանգության հետ, այսպես կոչված «գրավյալ տարածքների» մշակույթի էրնիկական կերպարի ակնառու պարզաբանումը: Այսօր մենք պետք է հանդես գանք որպես սերունդների պատմությունը ներկայացնող այդ ժառանգության ջերմեռանդ պաշտպաններ: Վերջին տասնամյակում ՀՀ կառավարության կողմից իրականացվող՝ հայկական ամրոցների ու բերդերի վերականգնողական աշխատանքներն արդեն փաստում են այդ ժառանգության նկատմամբ պետական առանձնակի հոգածության կարևորությունը:

Կարծում եմ, որ չպետք է հապաղել ՀՀ մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերի, պաշտպանության, տարածքային կառավարման և բնապահպանության նախարարությունների միջոցով համատեղելու բոլորիս ջանքերը՝ մշակելու և կյանքի կոչելու ազգային մի ծրագիր, որը կարող է պայմանականորեն կոչվել «**Մեկը»** կամ «**Հերոսական վայրեղ**» և ուղղված լինել ընդհանուր առմանք մշակութային ժառանգության և, մասնավորապես, Հայաստանի ռազմապաշտպանական-ամրաշինական ժառանգության գնահատմանն ու

հանրահոչակմանը։ Նման վայրերի այցելությունը մարդուն հնարավորություն է տալիս հաղթահարելու ժամանակը, իովելոր կապ ստեղծելու դրանց հետ առնչվող պատմական իրադարձությունների հերոսների հետ՝ նրանց դարձնելով ավելի ընկալելի ու հարազատ։

Պատմամշակութային ժառանգության վայրերն ու հուշարձանները հարթացնում են մարդու կյանքը՝ հաճախ նրան մատուցելով խորը և ոգեշնչող կապ բնապատկերի, անցյալի և ապրած փորձի հետ։ Դրանք խիստ կարևոր ու շոշափելի են պատմական փորձի և յուր ինքնության ճանաշման տեսանկյունից։ Դրանք թանկ են և անփոխարինելի, որովհետև նույնանում են Հայրենիքի հետ։ Այսպիսով՝ կասկածից վեր է, որ պատմամշակութային ժառանգությունը հզոր ռեսուրս է ժամանակակից հայրենասեր երիտասարդի ու հայրենիքի զինվորի բարոյական կերպարը ձևավորելու ճանապարհին։

УКОРЕНЕНИЕ В АРМЯНСКОЙ АРМИИ И СРЕДИ МОЛОДЕЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НАЦИОНАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ КАК ВАЖНЫЙ ФАКТОР ФОРМИРОВАНИЯ МОРАЛЬНОГО ДУХА ВОЕННОСЛУЖАЩИХ

Г. Г. ГЮРДЖЯН, заместитель Министра культуры РА

РЕЗЮМЕ

Знание и восприятие национальных культурных ценностей и формирование уважения и бережного отношения к ним имеют важное значение для государства и общества. Неразрывно связанное с историей армянского народа культурное наследие является прочным фундаментом для сохранения идентичности каждого члена общества. В эпоху глобализации усиливается морально-психологический кризис индивида. Это отчетливо проявляется в среде молодежи. Приобщение молодежи к ценностям историко-культурного наследия является одной из гарантий противостояния таким вызовам. Особенно важными являются создание условий для разностороннего развития, полного самоутверждения и самовыражения подрастающего поколения, его военно-патриотическое воспитание и приобщение к национальным и общечеловеческим ценностям. Необходимо обеспечить межведомственную согласованность усилий по формированию и укреплению морально-патриотического облика молодежи, что позволит повысить эффективность нацеленного на повышение уровня боевого духа армии и боеготовности войск воспитательного воздействия на личный состав ВС и, в первую очередь, новобранцев.

INCULCATION OF NATIONAL-CULTURAL VALUES
AS AN IMPORTANT FACTOR OF SHAPING THE SERVICEMEN'S
MORAL SPIRIT IN THE ARMENIAN ARMY
AND AMONG THE YOUTH OF THE REPUBLIC OF ARMENIA

G. G. GYURDJIAN, the RA Deputy Minister of Culture

SUMMARY

The knowledge and perception of national cultural values and formation of respect and cautious attitude towards them have an important significance for the state and society. The cultural heritage inseparably connected with the history of the Armenian people is a firm foundation for preserving the identity of each member of that society. In the epoch of globalization the moral-psychological crisis of an individual increases. This is distinctly revealed among the youth. Accustoming the youth to values of historical-cultural heritage is one of the guarantees of meeting such challenges. The creation of conditions for various development, complete self-establishment and self-expression of the rising generation, his military-patriotic education and accustoming to national and human values are especially important. It is necessary to ensure interagency coordination of efforts on the formation and strengthening of moral-patriotic countenance of the youth, and that will allow to increase the efficiency of the educational impact on the Armed Forces personnel, and in the first place, on the recruits, which is targeted at increasing the level of the fighting spirit of the army and troops' combat readiness.

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա.Հ. ՊՈՂՈՍՅԱՆ, ՀՀ ապորի և երիտասարդության հարցերի
նախարարի պեղակալ*, գնդեսագիրության քեկնածու



Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում երիտասարդությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա ժամանակակից քաղաքակիրք երկիր կառուցելու գործընթացում՝ ստանձնելով սոցիալական բազայի ու ակտիվ պաշտպանի գործառույթ:

Հայաստանի Հանրապետության նախագահ Ս. Սարգսյանը երիտասարդության հետ հանդիպումներից մեկի ժամանակ նշել է. «Ես ինձ դասում եմ այն մարդկանց շարքին, ովքեր կարծում են մեր այսօրվա երիտասարդությունն ավելի մեծ հնարավորությունների տեր է

և շատ ավելի մեծ հաջողությունների է հասնելու: Նրանք մեր հասարակության մեջ մշտապես ունենալու են իրենց արժանի տեղը, լինելու են ակտիվ և նախաձեռնող»¹:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալների՝ 2007 թ. հունվարի 1-ի դրությամբ 16–18 տարեկան պատանիների և 18–30 տարեկան երիտասարդների թվաքանակը կազմել է ընդիանուր բնակչության 27,2 %-ը (877.310 մարդ): Իսկ դա նշանակում է, որ երիտասարդները և՝ որակապես, և՝ քանակապես հասարակության կարևոր ներուժն են, ուստի պետք է զանալ, որ նրանք դառնան ազատ, բազմակողմանիորեն գարգացած, առողջ և պատասխանատու քաղաքացիներ:

2007 թվականից Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է:

Երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծմամբ ձևավորել համապատասխան իրավական

* Ներկայումս հեղինակն զբաղեցնում է ՀՀ մշակույթի նախարարի տեղակալի պաշտոնը:

¹ՀՀ Նախագահի 2009 թ. փետրվարի 21-ի երույթից՝ «Միասին» երիտասարդական շարժման 1-ին տարեղարձի առքիվ կազմակերպված միջոցառման ժամանակ (<http://www.president.am/events/news/arm/?search=%D0%9F%D1%80%D0%BE%D1%82%D0%BE%D0%BD%D0%BA%D0%B8%D1%87%D0%BD%D1%8C%D0%BA%D0%BE%D1%87%D0%BC%D1%8B>&id = 413):

դաշտ: Այս առումով ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի հմ. 798 որոշմամբ հաստատված «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը» առաջին և առաջմն միակ փաստաթուղթն է, որում նշված են երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները²:

Համաձայն այդ փաստաթուղթի՝ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտներն են՝

ա. Հայաստանի Հանրապետության 16–30 տարեկան քաղաքացիները,

բ. 16–30 տարեկան օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ այնքանով, որքանով Հայաստանի տարածքում նրանց գտնվելն առաջանում է համապատասխան պետական մարմինների պարտավորություններ,

գ. Հայաստանում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնց անդամների տարիքը չի անցնում 30-ից, կամ որոնք գրադարձ են մինչև 30 տարեկան քաղաքացիների շրջանում տարվող աշխատանքներով,

դ. Երիտասարդ ընտանիքները, եթե ամուսիններից մեկի տարիքը չի անցնում 30-ից³:

ՀՀ պետական բյուջեով նախատեսված է պետական երիտասարդական քաղաքականության ծրագրերի ֆինանսավորում, որի չափը տարեցտարի աճում է՝ նախատեսվող նպատակային ծրագրերին համապատասխանեցմամբ: Բացի ՀՀ պետական բյուջեից արվող հատկացումներից, հանրապետությունում երիտասարդական քաղաքականությանն ուղղորդվող ֆինանսական միջոցների այլնուրանքային աղբյուրների շարքում (տեղական և միջազգային իիմնադրամներ, հասարակական ու միջազգային կազմակերպություններ, համայնքային բյուջեներ, բարեգործական կազմակերպություններ և այլն) իր ներդրման ժամաներով առանձնանում է Հանահայկական երիտասարդական իիմնադրամը:

ՀՀ կառավարության ամենամյա ծրագրերում անհրաժեշտ է նախատեսել համակարգված գործողություններ, որոնք նպատակաուղղված լինեն կրթության, առողջապահության, հոգևոր-մշակութային և ֆիզիկական զարգացման, իրավական և սոցիալական պաշտպանության ու զբաղվածության ոլորտներում երիտասարդության խնդիրների լուծմանը:

Դրանց նպատակը պետք է լինի՝ երիտասարդներին ձևավորել որպես մեր ինքնիշխան պետության հավատարիմ ու հայրենասեր քաղաքացիների, խթանել նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում), նպաստել նրանց շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ուստի և Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը, դաստիարակել հոգեպես և

² Տես «Հայեցակարգ երիտասարդական պետական քաղաքականության» (<http://www.youthpolicy.am/am/?nid=6>):

³ Տես նույն տերություն:

ֆիզիկապես առողջ, կրթված, ազգային ավանդույթները շարունակող սերունդներ:

2008 թվականին մշակվել և ՀՀ կառավարության սեպտեմբերի 25-ի հմ. 39 արձանագրության 21-րդ կետով հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թվականների ռազմավարությունը»⁴, որի իրականացման միջնաժամկետ գնահատումը կկատարվի հասարակական երիտասարդական կազմակերպությունների կողմից իրագործվող մշտագննման արդյունքների հիման վրա՝ յուրաքանչյուր տարվա վերջում: Ռազմավարությունը համահունչ է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը», ինչպես նաև կառավարության ռազմավարական ծրագրերին («Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», «Թրափիկինգի դեմ պայքարի ազգային ծրագիր» և այլն): Ռազմավարությունը սահմանում է երիտասարդական պետական քաղաքանության ոլորտում 2008–2012 թվականների համար Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների գերակայությունները, որոնք են՝

1) ապահովել երիտասարդների՝ իրենց ձգություններին, ընդունակություններին ու կարողություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը,

2) ստեղծել զբաղվածության կենտրոններ և նոր աշխատատեղեր,

3) բարելավել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակը,

4) խրանել երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպը, կատարելագործել նրանց հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության համակարգը:

ՀՀ «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ որպես գերակայություն նշվում է առողջ ապրելակերպի արմատավորումը⁵: Սինչդեռ վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում ի հայտ եկան հասարակության ֆիզիկական և հոգևոր առողջությանն առնչվող մի շարք նոր ոլուկեր, որոնք բացասաբար են ազդում հատկապես երիտասարդների վրա:

Երիտասարդների մի որոշ մասը, ցավոր, վաղ տարիքում վկասում է ծխել, օգտագործել ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ: Առողջ ապրելակերպի վերաբերյալ նրանց ունեցած գիտելիքների անբավարարությունը հանգեցնում է ֆիզիկական և հոգևոր արատների, առողջության համար վնասակար սովորությունների ձեռքբերմանը, սեռական կյանքին պատրաստ չլինելուն, մասնավորապես՝ չպաշտպանված սեռական հարաբերությունների, սեռավարակումների (այդ թվում՝ ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի), ինչպես նաև անցանկալի հղիության: Աղքատությունն ստեղծում է վերոնշյալ ոլուկերին ենթարկվելու համար ավելի նպաստավոր պայմաններ: Ուստի հարկավոր է բարձրացնել առողջ ապրելակերպի վերաբերյալ

⁴ Տես «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թվականների ռազմավարություն» (<http://www.youthpolicy.am/am/?nid=6>):

⁵ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հասուլ քողարկում, 2007, էջ 29:

Երիտասարդների իրազեկվածության մակարդակը, նրանց ապահովել բավարար տեղեկույթով և համապատասխան ծառայություններով, միջոցներ ձեռնարկել գրադաժության շնորհիվ նրանց շրջանում աղքատության նվազեցման ուղղությամբ:

Երիտասարդության շրջանում ազգային հոգևոր-մշակութային ժառանգության, ավանդական բարոյական արժեքների քարոզչությունը կնպաստի ի հայտ եկած ուսկերի հաղթահարմանը, կստեղծի պայմաններ հոգևոր ու ֆիզիկական զարգացման համար:

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ թվարկվող ներքին սպառնալիքներից է նաև բարոյահոգեքանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը⁶:

Պետությունը երիտասարդության հոգևոր և ֆիզիկական զարգացումն ու քաղաքացիական, հայրենասիրական դաստիարակությունը դիտում է որպես ազգային զարգացման կարևոր նախապայման: Երիտասարդության ստեղծագործական գործունեության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծումը հասարակության ստեղծագործական և մտավոր ներուժի պահպանման ու զարգացման հիմնական գործունն է: Ուստի անհրաժեշտ է ստեղծել շնորհալի երիտասարդների գործունեությանն աջակցելու և խրախուսելու գործուն համակարգ: Պետությունը կարևորում է հանրապետական, մարզային, տեղային ծրագրերում երիտասարդության (այդ թվում՝ ազգային փորբանամությունների) հոգևոր և ֆիզիկական զարգացմանն ուղղված խնդիրների ներառումը: Երիտասարդությանը կրթելու և դաստիարակելու, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակով պետությունը աջակցություն է ցուցաբերում հասարակական նախաձեռնություններին և ծրագրերին, անհատ ստեղծագործողներին և արվեստագետներին:

Պետական երիտասարդական քաղաքականության բնագավառում Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն ապահովում է այդ ռազմավարության ամենօրյա իրագործումը՝ ըստ 2009–2012 թվականների ծրագրի (2008 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատված է՝ «ՀՀ 2008 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով): Այս գործընթացին մասնակցում են նաև ՀՀ մի շարք նախարարություններ ու պետական կառավարման այլ մարմիններ, մասնավորապես՝ ֆինանսների, էկոնոմիկայի, կրթության և գիտության, մշակույթի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, քաղաքաշինության, սփյուռքի հարցերի, արտաքին գործերի, պաշտպանության նախարարությունները, ՀՀ ոստիկանությունը, ինչպես նաև տարածքային կառավարման պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները, երիտասարդության հարցերով գրադադար հասարակական կազմակերպությունները: Նրանք աջակցում են երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության իրականացմանը՝ տրամադրելով անհրաժեշտ

⁶ Տես նույն տեղում, էջ 21–22:

տեղեկույթ, ինչպես նաև համակարգելով ու փոխհամաձայնեցնելով իրենց քայլերը:

Հաշվի առնելով կարևոր քաղաքական-անվտանգային փաստաթղթերի մշակման՝ ՀՀ-ում արդեն լավ յուրացված միջգերատեսչական մեթոդ՝ նպատակահարմար ենք համարում, որ այս գործընթացի համակարգումը և մշտագննումը կատարվեն նախարարների տեղակալների մակարդակով միջգերատեսչական կանոնավոր աշխատանքային հանդիպումների միջոցով: Ուղղմավարությունից բխող գործողությունները պետք է հնարավորության սահմաններում իրականացվեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետությունում գործող նիշազգային կազմակերպությունների մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է վերահսկի երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թվականների ռազմավարության իրագործումը՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» համատեքսում:

Պետական երիտասարդական քաղաքականության իրականացումը մեծապես կնպաստի երիտասարդության ռազմահայրենական դաստիարակությանը, ինչի շնորհիվ կամրապնդի վարահությունը պետության նկարմամբ: Երիտասարդությունը իրեն ավելի պաշտպանված կզարկ և կցանկանա ավելի պաշտպանված պեսնել պետությունը:

Հայրենասիրական դաստիարակության գործում իր ուրույն տեղն ունի Հայ Առաքելական Եկեղեցին, որը դարեր ի վեր եղալ է հայ ժողովրդի հոգևոր շարժիչ ուժը: 1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախության հոչակումից հետո Հայ Առաքելական Եկեղեցին սկսեց ավելի ակտիվորեն մասնակցել հասարակական կյանքին, ինչից զրկված էր խորհրդային տարիներին: Այօր բավականին մեծ է Եկեղեցու դերը հասարակական, հոգևոր-մշակութային կյանքում, ինչպես նաև մատադ սերնդի քրիստոնեական դաստիարակության և հակազգային ու հակապետական ուղղվածություն ունեցող աղանդավորությունից հեռու պահելու գործում: Պատահական չէ, որ ՀՀ կառավարության որոշմամբ հանրակրթական դպրոցներում ուսուցանվող պարտադիր առարկաների ցանկում այսօր ներառված է «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան:

Անուրանալի են Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակությունը հատկապես սփյուռքահայ երիտասարդների ազգապահանության և ազգային դաստիարակության գործում:

Հայ Առաքելական Եկեղեցու առջև ծառացած հիմնական խնդիրներից մեկը ժամանակակից հայ երիտասարդության հոգևոր պահանջնունների բավարարման պատշաճ մակարդակի ապահովումն է հայ հոգևոր ու մշակութային դարավոր ժառանգության հիմքի վրա:

Երիտասարդների հայրենասիրական և քրիստոնեական դաստիարակության

գործում կարևոր դեր է կատարում ՀՀ Զինված ուժերում Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր ծառայությունը, որը գործում է 1997 թվականից⁷:

Երիտասարդության հայրենասիրական դաստիարակության գործում շատ մեծ դեր պետք է խաղան նաև ԶԼՄ-ներն ու դրանց միջոցով կատարվող քարոզչությունը: Այս առումով անհրաժեշտ ենք համարում հայտնել հետևյալ կարծիքը: Իհարկե, խոսքի ազատությունը ժողովրդավարության կարևոր հիմնարար արժեքներից մեկն է, սակայն կարծում ենք, որ մամուլի էջերում կամ երերում յուրաքանչյուր ելույթ ունեցող (լինի դա լրագրող, քաղաքական, գիտության թե մշակույթի գործիչ) պետք է ազգային-պետական շահերին առնչվող իր արտահայտությունների և՝ բովանդակության, և՝ լեզվի նկատմամբ կիրառի խիստ չափանիշներ՝ դրսւորելով մեծ ներքին պարասախանակություն: Ինչ խոսք, լավը շատ է, բայց ցավոք կան և էական թերացումներ ինչպես թենայի, այնպես էլ բովանդակության ու ձևի առումով: Մինչդեռ չի կարելի մոռանալ, որ վաստ միտումները, սխալները մոլախոտի պես ավելի հեշտ են տարածվում և ավելի դժվար արմատախիլ արգում:

Պետք է նշել, որ թեև պետությունը ակտիվ քաղաքականություն է վարում հայրենասիրական դաստիարակության ոլորտում, այնուամենայնիվ, կան մի շարք խնդիրներ, որոնք ընդիանուր են ամբողջ հանրապետության համար և պահանջում են միասնական լուծում:

Նախ ասենք, որ Հայաստանում դեռևս քիչ են հատկապես երիտասարդությանն ուղղված և երիտասարդությանը հետաքրքրող թենաներով հեռուստահաղորդումներ, այլ հրապարակումներ: Եթե Երևանում կան թեկուզ և խիստ սահմանափակ, բայց որոշ չափով հասանելի տեղեկատվական աղբյուրներ, ապա մարզերում այս խնդիրը շատ ավելի լուրջ է: Ներկայում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդության իրազեկման և նրան տեղեկույթի տրամադրման խնդիրներին: Հրատարակվում է երիտասարդական պետական քաղաքականության և երիտասարդության պրոբլեմները լուսաբանող «Մենք, դուք, նրանք» երկշարաբարեքը: Գործում և պարբերաբար քարմացվում են ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության էլեկտրոնային կայքերը հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով⁸: «Երկիր-Մեղիա» հեռուստաղենկերության, իսկ ՀՀ մարզերում՝ տեղական հեռուստաղենկերությունների միջոցով ԼՂՀ-ում երկու շաբաթը մեկ անգամ հեռարձակվում է «Անկախության սերունդ» երիտասարդական հաղորդաշարը:

Սոցիոլոգիական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների տեղեկույթի ստացման հիմնական աղբյուրը ԶԼՄ-ներն են, և հատկապես՝ հեռուստատեսությունը⁹:

⁷ Տես Արշեն արելա Սահնյան, Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ Զինված ուժերում: «ՀԲ», 2001, հմ. 1-2:

⁸ Տես www.youthpolicy.am, www.armyouthcenter.am:

⁹ Հարցման մասնակիցների 89 %-ը դրան տեղեկատվության աղբյուր նշել է հեռուստատեսությունը, 49 %-ը՝ ռազմական, իսկ 35, 5 %-ը և 25,5 %-ը՝ համապատասխանաբար, գրքերը և մամուլը (տես «Հայաստանի երիտասարդության ազգային գեկույց»: Ե., 2007, էջ 163):

Տեղեկույթը պետք է լինի մատչելի և հետաքրքիր, որպեսզի գրավի լսարանի ուշադրությունը և հետաքրքրությունը առաջացնի: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է պետական և հասարակական սեփական համատեղ աշխատանքի միջոցով իրականացնել լայնածավալ ծրագրեր երիտասարդությանը համապատասխան տեղեկույթ տրամադրելու նպատակով:

Ընդհանրացնելով նշվածը՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

ա. Հայաստանի երիտասարդությունը կարիք ունի հստակ մշակված և պետական աջակցություն ունեցող երիտասարդական տեղեկատվական համակարգի,

բ. բավարար չէ երիտասարդների համար տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մատչելիության մակարդակը,

գ. հաշվի առնելով ՁԼՄ-ների հսկայական դերը՝ պետք է մշակել միջոցառումների համալիր՝ ուղղված լրատվամիջոցների դաստիարակչական ներգործության արդյունավետության մեծացմանը,

դ. պետք է հասուն ուշադրություն դարձնել մարզաբնակ երիտասարդների տեղեկատվական ապահովմանը՝ հաշվի առնելով մարզերի և Երևանի անհամաշավ զարգացումը:

Ուզմահայրենասիրական դաստիարակության հարցում շատ կարևոր դեր ունի բանակը: Բանակը Հայաստանի ամենամեծ «երիտասարդական կազմակերպություն» է, ինչով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ երիտասարդության շրջանում բանակի նկատմամբ վստահությունը և ուշադրությունը բավականին մնե են: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցման մասնակիցները պետական կառույցներից բոլորից շատ վատահում են բանակին՝ 43,4 %-ը¹⁰:

Միևնույն ժամանակ, լինում են ծառայությունից խուսափելու առանձին փորձեր: Դրանց պատճառների պարզությունը պահանջում է համալիր հետազոտություն և լսու դրա արդյունքների՝ նպատակային միջոցառումների մշակում ու իրականացում: Նշենք, որ երիտասարդների մի մասը ծառայությունից խուսափում է՝ համարելով, որ ծառայության ժամկետը բավականին երկար է:

Երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում առաջնահերթ կարևորություն ունեն հետևյալ խնդիրները.

• դպրոցում պատասխանական պահանջում է համալիր հետազոտություն և լսու դրա արդյունքների՝ նպատակային միջոցառումների մշակում ու իրականացում: Նշենք, որ երիտասարդների մի մասը ծառայությունից խուսափում է՝ համարելով, որ ծառայության ժամկետը բավականին երկար է:

• երիտասարդության տարրեր սոցիալական շերտերի կողմից ազգային հոգևոր-մշակութային արժեքների կարևորման պակաս,

• սահմանամերձ մարզերում երիտասարդների աշխատանքային ներուժի օգտագործման հնարավորությունների անբավարարություն,

• գործազրկության հետևանքով երիտասարդների շարունակվող արտագաղք՝ «ուղղելների արտահոսք»,

¹⁰ Տես «Հայաստանի երիտասարդության ազգային գեկույց», էջ 178:

- Երիտասարդության պահանջմունքները և սպասելիքները բավարարող ծառայությունների անձնատչելիություն:

Այս ուղղությամբ նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացման համար կարևորվում է երիտասարդության հարցերով զբաղվող պետական և ոչ պետական կառույցների միջև սերտ, սիներգիկ համագործակցությունը:

Ուղղմահայրենասփառական դաստիարակության իրականացումն ավելի արդյունավետ է քանակ – հասարակություն փոխադարձ կապի շրջանակներում: ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը 2009 թ. մարտի 6-ին Երևանի պետական համալսարանում ուսանողների, ազատամարտիկների ծնողների ու կանաց, ինչպես նաև «Վարդանանք» ռազմահայրենասփառական ակումբի անդամների հետ հանդիպման ժամանակ նշել է. «Մեր պայքարի ընթացքում ձեռք ենք քերել արժեքներ, որոնք պարտավոր ենք մշակել, կատարելագործել և փոխանցել մատադրությունը... Անհրաժեշտ է ստեղծել մի այնպիսի համակարգ՝ անհվ, որտեղ բոլոր քաղաքացիները բռնկված կլինեն հայրենասփառությամբ, և որտեղից մարդիկ չեն կարողանալ դրա գալ այն պարզ պատճառով, որ հասարակության կողմից կիամարվեն ոչ հայրենասեր, անկարող: Արա համար տարիներ են պետք, սրա համար անհրաժեշտ է ունենալ ռազմահայրենասփառական դաստիարակության հայեցակարգ»¹¹:

Երիտասարդության շրջանում ռազմահայրենասփառական դաստիարակության հիմնահարցերն ունեն ռազմավարական նշանակություն: Պետությունը երիտասարդության շրջանում ռազմահայրենասփառական դաստիարակությունը դիտում է որպես ազգի զարգացման կարևոր նախապայման, ուստի անհրաժեշտ է հանրապետական, մարզային, տեղական ծրագրերում ներառել երիտասարդությանն առնչվող խնդիրները:

Հանրապետությունում իրականացվող երիտասարդական պետական քաղաքանության արդյունավետությունը պայմանավորված է համապետական նշանակություն ունեցող փոխհամաձայնեցված ծրագրերով և գործողություններով: ՈՒստի առաջնային ենք համարում հետևյալ գործողություններն ու միջոցառումները.

1. հասուլ ուշադրություն դարձնել դպրոցներում ռազմագիտության դասերին, որոնց ընթացքում ուսումնասիրել ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների ռազմարվեստը, անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի այդ դասերը ձևական բնույթ չկրեն և ծառայեն իրենց նպատակին՝ բարձրացնելով ապագա երիտասարդների հայրենասփառական ոգին,

2. կազմակերպել ռազմահայրենասփառական դաստիարակությանը նպաստող միջոցառումներ, մասնավորապես՝ ամեն տարի անցկացնել հայրենասփառական թեմաներով հանրապետական, մարզային և տեղական օլիմպիադաներ, մրցույթներ, որոնց ժամանակ կստուգվի, թե որքանով են մասնակիցները ծանոթ հայ և օտարերկրյա ռազմարվեստին, իրենց երկրի պատմությանը, գիտեն արդյոք հայ

¹¹ <http://www.mil.am/arm/index.php?page=2&p=2&id=768&y=2009&m=04&d=02>:

ազգային հերոսներին: Միևնույն ժամանակ պետք է կազմակերպել մանկավարժների վերապատրաստում դպրոցները համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով համարելու համար,

3. բարեկավել ուսուցման ծրագրերի որակը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով հայոց պատմության դասերին, որոնք պետք է նպաստեն հայրենասիրական դաստիարակությանը,

4. Երիտասարդության, մասնավորապես՝ դպրոցականների և ուսանողների համար կազմակերպել այցելություններ քանօքարաններ, մշակութային օջախներ, հերոսական անցյալի վայրեր, ինչպես նաև գորամասեր՝ ամրապնդելով քանակ՝ հասարակություն կապը: Հատուկ ուշադրություն դարձնել ազգային հերոսների, պատերազմների վետերանների և աչքի ընկնող գիննառայողների հետ հանդիպումներին,

5. դպրոցներում առավել մեծ ուշադրություն դարձնել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկային, երիտասարդներին իրազեկել հայ Եկեղեցու գործունեության, դպանաբանական առանձնահատկությունների, դերի ու նշանակության, ազգային արժեքների պահպանման գործում ունեցած ավանդի մասին, քարոզչական միջոցներ ձեռնարկել երիտասարդներին աղանդներից զերծ պահելու ուղղությամբ,

6. մշակել երիտասարդական տեղեկատվական համակարգ և ապահովել դրա առավել նպատակային օգտագործումը, մեծացնել ԶԼՄ-ների դաստիարակչական ներգործության արդյունավետությունը, մարզաբնակ երիտասարդներին հասանելի դարձնել իրենց հասցեագրվող տեղեկույթը: Ձեռնարկել միջոցներ ռադիո- և հեռուստահաղորդումների որակը բարձրացման համար, քոյլ չտալ արատավոր սովորությունները որևէ ձևով քարոզող, մարդու, առաջին հերթին՝ հայի ազգային արժանապատվությունը նենամացնող հաղորդումների հեռարձակում,

7. կազմակերպել միջոցառումներ, որոնք նպաստեն սկզբնական փուլում ծառայությանը զորակոչիկների հարմարմանը, բարձրացնել գինվորների հայրենասիրական ոգին, հատուկ ուշադրություն հատկացնել հայրենասիրական դաստիարակությանը, այդ թվում՝ հայոց պատմության ուսուցմանը,

8. գորամասերի միջն կազմակերպել «Լավագույն սպորտային հրապարակ» խորագրով մրցույթ (լավագույն գորամասերի համար սահմանել մրցանակներ 3 անվանակարգերում): Ընթացքը լուսաբանել ԶԼՄ-ներով: Զորամասերի միջն հաճախակի կազմակերպել թիմային և անհատական մրցույթներ: Հրավիրել ոլորտի մասնագետների՝ միջոցառումները ճիշտ կազմակերպելու համար: Զորամասերում անցկացվող միջոցառումներին պարտադիր կերպով մասնակից դարձնել զորակոչային տարիքի պատանիների,

9. զորամասերում անցկացնել մշտագննումներ. պարզել գինվորներին հուզող խնդիրները, զինվորների կողմից արված առաջարկությունները ներկայացնել վերադասին, համապատասխան կառույցներին, և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս առաջարկությունները հասցեագրված են և պե-

տական կառույցներին, և՝ հասարակական կազմակերպություններին, ինչը պայմանավորված է խնդրի ռազմավարական մասշտարներով և համալիր բնույթով։ Կարծում ենք, որ նշված խնդրների լուծման նկատմամբ պատշաճ մոտեցումը և առաջարկվող գործողությունների ու միջոցառումների հետևողական իրականացումը էապես կմեծացնեն մեր երկրում ընթացող համալիր բարեփոխումների և հատկապես պաշտպանական բարեփոխումների արդյունավետությունը։

ЗАДАЧИ, МЕХАНИЗМЫ И ОЖИДАЕМЫЕ РЕЗУЛЬТАТЫ ВОЕННО-ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ МОЛОДЕЖИ

А. А. ПОГОСЯН, заместитель Министра спорта и по делам молодежи РА,
кандидат экономических наук

РЕЗЮМЕ

В статье рассматриваются вопросы военно-патриотического воспитания молодежи РА. Представлены соответствующие правовые, политические документы, в том числе целевые программы, направленные на повышение эффективности военно-патриотического воспитания.

Очевидно, что решение множества сложнейших проблем в жизни страны во многом зависит от уровня сформированности у молодежи гражданской позиции, потребности в духовно-нравственном совершенствовании, уважения к национальному историко-культурному наследию. В связи с этим значительно возросла роль государственных и общественных институтов, в рамках которых происходит военно-патриотическое воспитание молодежи. В частности, учитывая угрозы и вызовы РА за последнее десятилетие, правительство разработало и утвердило «Стратегию государственной молодежной политики Республики Армения на 2008 – 2012 гг.», которая устанавливает приоритеты и последовательность деятельности государства в сфере молодежной политики. В деле военно-патриотического воспитания молодежи важная роль отводится Армянской Апостольской церкви, СМИ и другим общественным структурам.

Предложены меры по повышению эффективности молодежной политики, нацеленной на обеспечение научного, духовно-культурного и физического развития молодежи, формирование и развитие личности, обладающей качествами гражданина-патриота.

В рамках осуществляемых реформ предлагается разработать систематизированные программы, реализация которых существенно повысит эффективность осуществляющей в нашей стране политики в отношении молодежи.

TASKS, MECHANISMS AND EXPECTED RESULTS OF MILITARY-PATRIOTIC EDUCATION OF THE YOUTH

*A. H. POGHOSYAN, the RA Deputy Minister of Sport and Youth Affairs,
Candidate of Economic Sciences*

SUMMARY

In the article the problems of military-patriotic education of the RA youth are examined. The corresponding legal, political documents, including target programs aimed at increasing the efficiency of military-patriotic education are given.

It is obvious that the solution of a great number of the most complicated problems in the country's life mostly depends on the formation level of the civil position among the youth, need in moral-spiritual improvement, respect for the national historical-cultural heritage. In connection with that the role of state and non-governmental institutions within the framework of which the military-patriotic education of the youth takes place, has considerably increased. Particularly, the Government, taking into account the threats and challenges to the RA for the last decade, elaborated and approved «The 2008 – 2012 Strategy on the State Youth Policy of the Republic of Armenia» which sets the priorities and consistency of the State activity in the sphere of the youth policy. A key role in military-patriotic education of the youth is given to the Armenian Apostolic Church, mass media and other public structures.

Measures are proposed to increase the efficiency of the youth policy targeted at ensuring academic, spiritual-cultural and physical development of the youth, at forming and developing a person possessing qualities of a patriot citizen.

It is suggested to elaborate the systematized programs within the framework of current reforms, the realization of which will essentially increase the efficiency of the youth policy being implemented in our country.

**ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԱՎՈՐՈՒՄԸ
ՆԱԽԱԶՈՐԱԿՈՂԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

*Ա. Ռ. ԶԱԼՅԱՆ, զիներալ-մայոր, ՀՀ զինվորական կոմիսար,
Ա. Լ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ զինվորական կոմիսարիալի
նախագորակոչի պատրաստման բաժանմունքի պետ*



Երկրի պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման գործում շարունակում է մեծ դեր խաղալ նարդկային գործոնը: Ուստի երիտասարդության ռազմահայրենափրական դաստիարակության խնդիրները պետության գլխավոր գերակայություններից են: Հայրենասեր, վտանգի պահին



գեները ձեռքին երկիրը պաշտպանելու պատրաստ երիտասարդության դաստիարակությունը բարդ գործընթաց է, որը չի կարող իրականացվել սուկ կոչով կամ հրահանգով և սահմանափակվել միայն մեկ սերնդով¹: Իսկ դա նշանակում է, որ այդ գործընթացը պետք է լինի ոչ միայն պաշտպանական կառույցների, այլև կրթության, մշակույթի, առողջապահության ոլորտների դեկավարության, հասարակական, երիտասարդական, մարզական կազմակերպությունների, մտավորականության, ԶԼՄ-ների, հատկապես՝ ազգային ռադիոյի և հեռուստատեսության ուղարկության կենտրոնում:

Երկրի տնտեսական վիճակը, իրավական և սոցիալական արդարության մակարդակը, հասարակության մեջ տիրող ընդհանուր բարոյահոգեբանական կյանքի ծևափորում են այն հիմքային արժեքային համակարգը, որի վրա խարսխվում է մատաղ սերնդի դաստիարակությունը: Ասվածը կարելի է լուսաբանել ընտանիքում երեխայի դաստիարակության օրինակով: Այն իրականացվում է ոչ թե սուկ խրատական գրույցների, բացատրական աշխատանքի կամ պատժի ու խրախուսանքի միջոցով, այլ ընտանիքի անդամների միջև հարգաճքի, սիրո, վստահության ու փոխօգնության մթնոլորտի ծևափորմամբ, ինչպես նաև ծնողների անձնական օրինակով, նրանց արդարամտությամբ և ճիշտ վարքագծով: Բարձր կենսամակարդակ և հոգևոր արժեհամակարգ ունեցող հասարակությունում կան

¹ Տես Ն. Ն. Գոլովին, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 3:

այն ամիրաժեշտ նախապայմանները, որոնք որոշիչ դեր ունեն աճող սերնդի բարոյահոգերանական դաստիարակության համար: Մինչդեռ, ինչպես նշվում է ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թվականների ռազմավարության մեջ, «Հանրապետությունում սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, հասարակական կյանքի տարրեր ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններն ու բարեփոխումներն իրենց ազդեցությունն են քողովում ընտանիքում և դպրոցում դաստիարակվող ու կայացող երիտասարդների հոգևոր և հայրենասիրական արժեհամակարգի վրա: Հզօնոր բարձրակարգ արժեքները ստորադասվում են առօրեական, նյութական, ոչ մնայուն և մակերեսային արժեքներին, ինչի հետևանքով երիտասարդության մի ստվար զանգված դառնում է արժեքային ոչ լիակատար համակարգի կրող՝ իր համար կարևորելով հասարակության համար բացասական համարվող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են նյութապաշտությունը, պետության և հայրենիքի նկատմամբ պատասխանատվության բացակայությունը և քաղաքացիական պարտականությունների ոչ լիարժեք կատարումը»²:

Նման պայմաններում այդ բացասական երևույթները վերացնելու համար էլ ավելի մեծ նշանակություն են ստանում մատադ սերնդի արժեհամակարգի ձևավորման վրա զաղափարախոսական և հոգևոր-մշակութային ներգործության մեխանիզմները, որոնք են՝

1. հայ ժողովրդի պատմական անցյալի իմաստավորումը,
2. ազգային մշակութային արժեքների պահպանումը և դրանց շարունակականության ապահովումը, գեղագիտական և կրոնական դաստիարակությունը,
3. հայոց պետականության զաղափարի շուրջ համախմբումը և այն անսասան պահելու պատրաստականության սերմանումը,
4. ռազմական գործի որակյալ ուսուցումը, ծանոթացումը ժամանակակից ռազմարվեստի նորույթներին,
5. միջազգային, մասնավորապես՝ տարածաշրջանային, ռազմաքաղաքական զարգացումների վերաբերյալ տեղեկացվածությունը,
6. բարոյական բարձր արժեքների քարոզումը (բարոյական դաստիարակություն),
7. կամային որակների ձևավորումը (հոգեբանական դաստիարակություն),
8. բավարար մակարդակի ֆիզիկական պատրաստության ապահովումը (ֆիզիկական դաստիարակություն):

Լինելով փոխկապված ու մեկը մյուսին լրացնող՝ նշված մեխանիզմները գործում են հասարակական գիտակցության տարրեր ոլորտներում (գիտական, քաղաքական, կրոնական, բարոյական, գեղագիտական) և կարող են կիրառվել համապատասխան պետական կառույցների ու տարաբնույթ հասարակական կազմակերպությունների համատեղ գործունեության միջոցով:

² «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թվականների ռազմավարություն» (<http://www.youthpolicy.am/am/?nid=6>):

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ պաշտպանության նախարարությունը «ղեկավարում է նախազորակոչչային պատրաստությունը և ռազմահայրենափրական դաստիարակությունը»³: Այսինքն՝ պետության պաշտպանության և անվտանգ կենսագործունեության խնդիրներում կարևորվում է նախազորակոչչիկների հետ տարրող աշխատանքը:

Լինելով բանակ–հասարակություն հարաբերության առաջին գծում՝ զինվորական կոմիսարիատներն անմիջականորեն առնչվում են այն բոլոր բացասական երևույթներին, որոնք առկա են բանակում և հասարակության մեջ: Գերակա խնդիր ունենալով ՀՀ ԶՈՒ-ի համալրումը ազգային բանակում ծառայելու պատրաստ երիտասարդներով՝ զինվորական կոմիսարիատները պետք է նորովի՝ ժամանակի պահանջներին համապատասխան, կազմակերպեն իրենց գործունեությունը՝ ապահովելով լիակատար օրինապահություն և բափանցիկություն:

Իր կազմավորումից (1922 թ.) մինչև օրս հանրապետության զինվորական կոմիսարիատը, իմնական գործառույթների՝ զորահավաքային, զինվորական հաշվառման, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության զորակոչման, ուսումնական հավաքների կազմակերպման և այլ գործունեության հետ մեկտեղ, պետք է լուծի նաև նախազորակոչչային ու զորակոչչային տարիքի քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայությանը նախապատրաստելու, հայրենասեր, ֆիզիկապես ու բարոյապես առողջ պատաճներով զինված ուժերը համալրելու խնդիրները: ՈՒստի և զինվորական կոմիսարիատները կատարում են նախազորակոչչիների ռազմահայրենասփրական դաստիարակության, հանրակրթական ուսումնական հաստատություններում նախնական զինվորական ու ֆիզիկական պատրաստման, մարզատեխնիկական կազմակերպություններում ՀՀ ԶՈՒ-ի համար մասնագետների պատրաստման, բուժառողջարարական միջոցառումների կազմակերպման ու համարական աշխատանքներ:

Համառոտակի ներկայացնենք վերը բվարկված գործուներից յուրաքանչյուրը և զինվորական կոմիսարիատների, մասնավորապես՝ նախազորակոչչ պատրաստման բաժանմունքի այն գործառույթները, որոնք կապված են դրանց հետ:

1. Միջնակարգ դպրոցում դասավանդվում է «հայոց պատմություն» առարկան, որը ներառված է նաև դպրոցական ավարտական քննական ծրագրում: Այն աճող սերնդի ռազմահայրենասփրական դաստիարակության հիմքն է, քանի որ միայն իր ժողովրդի պատրաստման ակունքների և անցյալի իմացության, օտար նվաճողների դեմ նրա մղած պայքարի հերոսական դրվագների իմաստավորման դեպքում կարելի է դառնալ հայրենասեր, հայրենիքն ընկալել ոչ թե որպես սոսկ աշխարհագրական տարածք, այլ որպես հայ ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի տարածածամանակային միասնություն: Այս առումով հույժ կարևոր է

³ «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թ. նոյեմբերի 27-ի ՀՕ-198-Ն օրենք, հոդված 13:

դաստիարակությունը հատկապես հայ ժողովրդի նոր ու նորագույն պատմության հերոսական օրինակներով: Զինվորական կոմիսարիատները, համագործակցելով հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ, կազմակերպում են հուշ-ցերեկույթներ, հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան ազատամարտի մասնակիցների հետ, ռազմահայրենասիրական թեմաներով դասախոսություններ, պատմահայրենասիրական բովանդակությամբ զրքերի շնորհանդեսներ ու ֆիլմերի ցուցադրումներ, այցելություններ ռազմապատմական թանգարաններ և այլն:

2. Հայոց բազմադարյան մշակութային զարգացման հոլովույթում բյուրեղացել են այն նվաճումներն ու հոգևոր ավանդույթները, որոնց հարատևումն ու սերնդեսերուն փոխանցումը կարևոր են ազգային ինքնության պահպանման, հայրենասիրական ոգու սերմանման տեսակետից: Հայոց լեզուն, Հայ Առաքելական եկեղեցին, ազգային արվեստն ու գրականությունը կազմում են այն մշակութային հենքը, որի վրա կառուցվում է ազգային ինքնագիտակցությունը, ձևավորվում են ազգային արժեհամակարգն ու գաղափարախոսություններ: Հայրենիքի պաշտպանության զարափարն իր արտացոլումն է ստացել հայ արվեստի՝ երաժշտության, կերպարվեստի, գրականության ստեղծագործություններում, իսկ ազգային ինքնության պահպանումը դարեր շարունակ եղել է հայ եկեղեցու կարևորագույն գործառույթներից մեկը:

Ուսումնահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր դեր ունի նաև ազգային ավանդույթների ու ծեսերի պահպանումը: «Էթնիկական ավանդույթների ողջ իմաստը կայանում է իր անհատականության, անկրկնելիության ընդգծման մեջ, ընդ որում՝ հուզական երանգով, ինչը նպաստում է երեխայի ինքնագիտակցության ձևավորմանը, ինքնահաստատմանը՝ ապահովելով համապատասխան հոգեբանական միջավայր... Էթնիկական համայնքի գործառնության յուրօրինակ պայմանների հիման վրա ստեղծված, տվյալ համայնքի ինքնորշման, ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական պատճառների հետ կապված, ավանդույթները ձեռք են բերում դաստիարակչական հատուկ ազդեցություն»⁴:

Հարկ է նշել, որ ազգային ավանդական ծեսերն ունեն ոչ միայն սոցիալ-էթնիկական ու քարոյահոգեբանական, այլև ռազմամարզական դաստիարակչական նշանակություն: Ուստի զինվորական կոմիսարիատները նախազորակոչիների հետ տարվող աշխատանքում պետք է հաշվի առնեն ազգային առանձնահատկությունները, ավանդույթները, տեղական սովորույթները և պլանավորեն այնպիսի միջոցառումներ, որոնք համարունչ լինեն այդ ավանդույթներին:

3. Այսօրվա 17–18 տարեկան երիտասարդները ծնվել և հասունանում են անկախ Հայաստանի Հանրապետությունում: Ուստի և երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունեն ազգային պետականության խորհրդանշների՝ դրոշի, օրիններգի, զինանշանի

⁴ Գ. Պ. Հովսեակիսյան, Ազգային ավանդույթների և սովորույթների հոգեբանություն: Ե., 2005, էջ 82:

նկատմամբ հարգանքը, աշխարհասփյուռ հայություն ունենալու պայմաններում ազգային պետականության գաղափարի շուրջ համախմբումը, այն բանի գիտակցումը, որ մեր երկիրը աշխարհի այլ պետությունների ընտանիքի համահավասար անդամ է: «Մեր սերնդի պարտքն է հարգանքը ցուցաբերել մեր անկախ պետականության ու ազգային բանակի խորհրդանիշների նկատմամբ, հարգանքը, որի առհավատչյան է լինելու նաև մեր երկիր քաղաքացիների գիտակցումն ու ակնածանքը հազարամյակների մաքառումով, անդառնալի կորուստներով, սակայն վերածննդի հաստատ ձգտումով օժտված նախնյաց մշակութային ու պատմական արժեքների հանդեպ»⁵, այսպես է արժեքավորում հայոց անկախ պետականության և բանակի խորհրդանիշների դերը ՀՀ «Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Հայոց անկախ պետականության գաղափարը մարմնավորող պաշտոնական խորհրդանիշների նկատմամբ հարգանքը մատադ սերնդի մեջ ծևավորվում է վաղ հասակից՝ պետական օրիներգի հնչեցման դպրոցական արարողությամբ, դրոշի և զինանշանի խորհրդանշային իմաստների իմացությամբ, ապա աճում ու խորանում է ԲՈՒՀ-ում և, հատկապես՝ զինվորական ծառայության ընթացքում: Այս առումով կարևոր նշանակություն ունեն ինչպես զորամասերի, այնպես էլ զինվորական կոմիսարիատների շենքային պայմանները, արտաքին ու ներքին տեսքը, համապատասխան կահավորանքը և ճիշտ ծևավորումը:

4. Որպեսզի երիտասարդությունը ոչ միայն պարզապես հաղորդակցվի իր ազգի պատմությանն ու մշակութային արժեքներին, այլև պատրաստ լինի գենքը ձեռքին պաշտպանելու հայրենիքը, անհրաժեշտ է հատկապես նախազորակոչյային տարիքի պատահներին տալ նախնական ռազմական գիտելիքներ և զորային փորձ: Նախազորակոչյային պատրաստման ուսումնական ծրագրերի մշակումն ու իրականացումը՝ որպես ռազմական կրթության ոլորտի խնդիրներ, կարևորվում են նաև «ՀՀ ռազմական դրվագինում»⁶:

Ռազմական գործն ուսուցանվում է հանրակրթական դպրոցների 8–11-րդ դասարաններում: «նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի դասավանդումը կազմակերպում է կրթության և գիտության նախարարությունը՝ համագործակցելով պաշտպանության նախարարության, մասնավորապես, զինվորական կոմիսարիատների հետ: Այս նպատակով հանրապետության տարածքային զինվորական կոմիսարիատներն անցկացնում են զինդեկների հետ ուսումնամերութական պարապմունքներ: Այդ պարապմունքների ժամանակ ամփոփվում են կատարված աշխատանքները, կազմվում է ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների պլան, կատարվում են առարկայի դասավանդման փորձի փոխանակում և նոր մերոդների ուսումնասիրություն ու ներդրում:

⁵ Ս. Օհանյան, Մուտքի խոսք: «Հայկական զինանշաններ, դրոշներ, պետական պարզեցում»: Ե., 2008, էջ 3:

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դրվագին»: «Աշխատանքային տեսքեր», 2007, հմ. 4, էջ 54:

Զինկոմիսարիատները աջակցում են զորամասերի ու ռազմական ուսումնական հաստատությունների հետ հանրակրթական դպրոցների կապերի հաստատմանը, նախազորակոչային տարիքի պատանիների համար կազմակերպում դաշտային պարագմունքներ, մարտական հրաձգություն: ՆԶՊ առարկայի ծրագրով նախատեսվում է նաև մարտավարության, կրակային պատրաստության, համագորային կանոնադրությունների ուսուցանում, ժամոքացում ժամանակակից ռազմարվեստի նորույթներին:

ՈՒսումնախրությունները ցույց են տալիս, որ ներկայում ՀՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ՆԶՊ առարկայի դասավանդման և նյութատեխնիկական ապահովածության մակարդակը չի կարելի բավարար համարել: ՈՒսումնական հաստատությունների 18 %-ը չունի համապատասխան դասասենյակ, 36 %-ը՝ ուսումնական գենքի պահման սենյակ, 50 %-ը՝ մարտավարության, շարային պատրաստության և քաղաքաշտպանության, իսկ 33 %-ը՝ ֆիզկուլտուրայի, ուժային վարժությունների, պաշտպանական զանգվածային միջոցառումների անցկացման հրապարակներ, 66 %-ը ապահովված չէ ուսումնական գենքով, 83%-ը չունի հրաձգարան, իսկ եղածներն էլ հնարավոր չէ օգտագործել:

ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով Երևանի մաքենատիկական մերենաների գիտահետազոտական ինստիտուտում նախազգել և պատրաստվել է «Սենամարտ» համակարգչային վարժասարքը, որի օգտագործումը աշակերտությանը հնարավորություն կտա իրականությանը մոտ պայմաններում տիրապետելու կրակային պատրաստության հմտություններին: Նախատեսվում է Երևանի և մարզերի դպրոցները մինչև 2012 թ. ապահովել այդ վարժասարքով:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում ամրագրված է, որ ՀՀ Զինված ուժերի համար մասնագետներ պատրաստվում են պաշտպանական բնույթի մարզատեխնիկական կազմակերպություններում: Ներկայում ՀՀ տարածքում գործում է միայն ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունը (ՊՄՏՀԿ), որը կազմավորվել է խորհրդային տարիների ԴՌԱՍԱՖ-ի հիմքի վրա: Խորհրդային տարիներից սկսած այդ կազմակերպությունը կոչված է նեցուկ լինելու ԶՈՒ-ին՝ պատրաստելով ռազմատեխնիկական մասնագիտություն ունեցող, ռազմահայրենասիրական դաստիարակություն ստացած նախազորակոչիների: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ թեև այդ խմբակներ հաճախողները ուսուցումն ստանում են անվճար, սակայն զորակոչիկների մի որոշակի մասը խուսափում է ՊՄՏՀԿ-ում սովորելու հնարավորությունից՝ ցանկանալով ներքրկել դրա ներքին կարգուկանոնին, որը մոտեցված է բանակի կանոնագրերի պահանջներին:

5. Նախազորակոչային տարիքի պատանիները արդեն որոշակի պատկերացում են ունենում Հայաստանի Հանրապետության տարածքի, նրա աշխարհագրական դիրքի, հարևան պետությունների, միջազգային հարաբերությունների

և իրավիճակի, միջազգային կազմակերպությունների, համաշխարհային ու տարածաշրջանային զարգացումների մասին: Երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործը մեծապես կշահեր, եթե նրանք նաև որոշ պատկերացում ստանային հայրենի երկրի շահերին և անվտանգությանը սպառնացող վտանգների ու ժամանակակից մարտահրավերների մասին, իրազեկ լինեին «Հայկական հարցի» պատմությանը, նրա միջազգային շահարկումներին, Արցախյան հակամարտության պատմությանը, Լեռնային Ղարաբաղի անկախության օրինապատշաճության իրավական հիմնավորմանը և Ղարաբաղյան հակամարտության լուծման իրավաքաղաքական տեսանկյուններին: Մեր կարծիքով՝ երիտասարդների այս ընդհանուր քաղաքական պատրաստությունը կմեծացներ նրանց պատասխանատվությունը ազգի և պետության ճակատագրի համար, նրանք ավելի խորը կգիտակցեին հայրենիքի նկատմամբ ունեցած քաղաքացիական պարտք և, վերջապես, կունենային բավարար գաղափարախոսական պատրաստություն՝ հակառակորդի քարոզությանը դիմակայելու համար: Թեև այս առումով ԶԼՄ-ները և հատկապես հեռուստատեսությունն ու ինտերնետ համացանցն ընձեռում են լայն հնարավորություններ, սակայն իր ուրույն տեղն ունի նաև կենդանի շփումը քաղաքագետների, քաղաքական ու պետական գործիչների հետ: Պաշտպանության նախարարության աջակցությամբ կարելի է կազմակերպել հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների հանդիպումներ քաղաքագետ-վերլուծաբանների հետ: Երիտասարդները ոչ միայն կհարստացնեն իրենց քաղաքական գիտելիքները, այլև կգտնեն ներկայիս աշխարհաքաղաքական իրողությունների ու զարգացումների վերաբերյալ իրենց հոլովող շատ ու շատ հարցերի պատասխաններ:

Զինվորական կոմիսարիատները պատրաստ են այս առումով համագործակցելու տեղական ինքնակառավարման մարմինների հետ, պլանավորելու և կազմակերպելու հանդիպումներ աշակերտների հետ:

6. Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը պայմանավորված է նաև բարոյական դաստիարակությամբ: Մանուկ հասակից՝ դեռ ընտանիքում, ձևավորվում են այն հիմնական բարոյական հատկանիշները (ազնվություն, արդարամտություն, բարություն, պարկեշտություն, քաջություն, հավատարմություն, ընկերասիրություն և այլն), որոնք հետազում վերաճում են բարոյական նորմերի ու արժեքների: Անհատի բարոյական արժեհամակարգը ձևավորող գործոնները բազմաթիվ են, սակայն տվյալ դեպքում հատկապես կարևորվում է պատասխների դաստիարակությունը «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» հիմնարար արժեքներով՝ ազգային շահ, անկախություն, պետության ու ժողովրդի պաշտպանվածություն, հայապահպանություն և այլն⁷: «Հայրենապաշտական դաստիարակութիւն - ահա՛ մեր փրկութեան խարիսխը: Ահա՛ թե ինչու հայրենասիրութեան, չէ՛, հայրենապաշտութեան - մարդկային առա-

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հասուլ քողարկում, 2007, էջ 14:

թինուրիմների այդ աստιածային մօր – համար պէտք է զահ բարձրացնել մեր հոգիների մեջ, մեր դպրոցներում, մեր ընտանեկան յարկի տակ, մեր գաղթականական վրանների տակ, ամէն տեղ, ուր կ'ապրի, կը շնչի հայ մարդը»⁸: Կարծում ենք՝ հայ նշանավոր գորավար, մտածող ու քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի այս միտքը հույժ արդիական է նաև մեր օրերում:

7. Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը սերտորեն կապված է նրա հոգեբանական դաստիարակության հետ: Վաղվա զինվորը պէտք է մեծանա քաջ, համարձակ, ունենա բարձր բարոյակամային հատկանիշներ, չընկրկի դժվարությունների առջև, չվախենա խոչընդոտներից, հավատա իր ուժերին, ինի բարի և ընկերասեր: Տարեցտարի հանրակրթական դպրոցներում ավելանում է նաև կապական հոգեբանների թիվը, ինչը հնարավորություն է տալիս դեռ վաղ տարիքից հսկողության տակ պահելու աշակերտների հոգեկան զարգացման վիճակը: Դա հատկապես կարևոր է հոգեբանական լարումներով, բռնության դեպքերով ու աղետներով լեցուն մեր ժամանակներում: Կարծում ենք՝ ճիշտ կիմնի Զինված ուժերու հիմնել ռազմական հոգեբանի հաստատություն, ինչը հնարավորություն կտա ժամանակին հայտնաբերելու և վերացնելու նորակոչչիկների բարդույթները՝ կապված զինվորական կյանքին հարմարման, իրենց ծառայողական պարտականությունների կատարման հետ: Այս ուղղությամբ պէտք է կազմակերպել համապատասխան հոգեբանական նախապատրաստական աշխատանքնաև զինվորական կոմիսարիատներում:

8. Նորակոչչիկների բարոյահոգեբանական դաստիարակությունը լրացվում և ամրողացվում է նրանց ֆիզիկական դաստիարակությամբ: Առողջ, ֆիզիկապես կոփված երիտասարդները որպես կանոն լինում են իրենց ուժերի նկատմամբ վստահ, ունենում են բարձր բարոյակամային հատկանիշներ, իրենց հասակակիցների շրջանում վայելում են հարգանք ու վստահություն: «Արհամարիել և անտեսել մատադ սերնդի առողջության, ֆիզիկական կատարելության հարցերը, կնշանակի վերացնել նրանց երջանիկ ապրելու, բնականոն զարգանալու հիմնահողը: Իսկ դաստիարակել ֆիզիկապես առողջ երիտասարդություն, նշանակում է ունենալ առողջ սերունդ, հմուտ ու տոկուն երիտասարդություն, ուսման առաջադիմություն, աշխատանքի բարձր արտադրողականություն, ավելի կենսունակ և կենսախինդ ժողովուրդ, ավելի մեծ թվով տաղանդներ կյանքի բոլոր բնագավառներում»⁹: Թևավոր դարձած «առողջ հոգին առողջ նարմնի մեջ» խոսքն արդիական է հատկապես գիտատեխնիկական առաջնորդացի, բնապահանական ճգնաժամի, տեղեկատվական տեխնոլոգիաների գերակայության ներկայիս ժամանակներում:

Հայ ժողովուրդը միշտ կարևորել է աճող սերնդի առողջության, բնության հետ կապի, ֆիզիկական մարզվածության խնդիրները՝ դրանք համարելով ռազմահայ-

⁸ Գարեգին Նժդեհ, Հատընտիք: Ե., 2001, էջ 55:

⁹ Գ. Ա. Պետրոսյան, Ֆիզիկական կրթությունը ընդհանուր կրթական համակարգում: «Ազգային բանակին՝ առողջ զինվոր: Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու»: Գյումրի, 2002, էջ 14:

թենասիրական դաստիարակության բաղկացուցիչ մաս: Օրինակ՝ իին հայկական Նավասարդ ու Վարդավառ տոնախմբություններն ըստ Էության ռազմակիրառական ու մարզամշակութային հանդեսներ էին: «Նավասարդյան տոնն ունեցել է ռազմահայրենասիրական և մարզական դաստիարակության ուղղվածություն: Հայկական ազգային մարզաձևերը և խաղերը ունեին ինչպես ֆիզիկական (ըմբշամարտ, մականախսաղ և այլն), այնպես էլ ռազմակիրառական (նիզակախսաղ, նետաձգություն, վահանախսաղ) պատրաստման իմաստ: Այս տոնն ուներ ժողովրդի միասնության և հայրենասիրության մեծ խորհուրդ»¹⁰: Դպրոցականների ֆիզիկական կուլտուրայի հարցերով գրադփող շատ նաև ազգեստներ նպատակահարմար են համարում «որոշ ազգային մարզական խաղերի վերակենդանացումը»¹¹:

Հաշվի առնելով նախազորակոչի պատրաստման գործընթացում նշված խնդիրների լուծման կարևորությունը՝ ՀՀ պաշտպանության և ՀՀ կրթության և գիտության նախարարների 2009 թ. փետրվարի 30-ի համատեղ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ հանրապետությունում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին լուծում տալու, համատեղ միջոցառումների պլան ստեղծելու և իրազորդելու նպատակով: Աշխատանքային խնդրում ընդգրկված են ՀՀ պաշտպանության նախարարության, այդ թվում՝ ՀՀ զինվորական կոմիսարիատի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի կրթության ոլորտի պատասխանատուններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ, մեր կարծիքով, նախազորակոչի նախապատրաստման խնդիրների արդյունավետ և օպերատիվ լուծման համար անհրաժեշտ է ընդլայնել Հանրապետական զինվորական կոմիսարիատի նախազորակոչի պատրաստման կառույցը, որը կոչված է համակարգելու հանրապետության տարածքային զինվորական կոմիսարիատների՝ այս ուղղությամբ տարվող աշխատանքները:

Եվ այսպես. նախազորակոչային տարիքի երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը հույժ կարևոր, բայց և բարդ ու բազմագործոն գործընթաց է, որում ներգրավված են և՛ պետական, և՛ ոչ պետական կառույցներ: Նշված աշխատանքների ռազմավարական պլանավորման, համադասման ու կազմակերպման գործառույթներն իրականացնում են ՀՀ պաշտպանության նախարարությունը և նրա համապատասխան ստորաբաժնումները, այդ թվում և զինվորական կոմիսարիատները:

¹⁰ Վ. Բաբայան, Ռազմական գործում ֆիզիկական դաստիարակության դերի գնահատումը. Փիլիսոփայական առումներ: «ՀԲ», 2004, հմ. 3–4, էջ 117:

¹¹ Տես, օրինակ, Կ. Լ. Բագրեյան, Հայ ժողովրդական խաղերը որպես պատասխների սոցիալիզացիայի և ռազմահայրենասիրական դաստիարակության գործոն: «Ազգային բանակին՝ առողջ զինվոր: Հանրապետական զիտաժողովի նյութերի ժողովածու»:

ФОРМИРОВАНИЕ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ И МОТИВАЦИЯ ВОЕННОЙ СЛУЖБЫ У МОЛОДЕЖИ ДОПРИЗЫВНОГО ВОЗРАСТА

С. Р. ЧАЛЯН, генерал-майор, военный комиссар РА,

А. Л. АЙРАПЕΤЯН, подполковник, начальник

Отделения допризывной подготовки Военного комиссариата РА

РЕЗЮМЕ

Важной составляющей оборонных реформ в РА является решение задач по комплектованию Вооруженных сил патриотически настроенными, морально и физически здоровыми, грамотными юношами, что требует инновационных подходов к данной проблеме.

Военно-патриотическое воспитание, являющееся фундаментом мотивации службы в армии, т. е. защиты Отечества, представляет собой комплексную деятельность по нескольким направлениям различных структур: Министерств обороны, образования и науки, культуры, спорта и по делам молодежи, СМИ и ряда общественных организаций. В их ряду немаловажное место отводится военным комиссариатам республики, которые находятся на передовой линии во взаимоотношениях армия – общество. В своей работе с юношами допризывного и призывающего возраста военкоматы особое внимание уделяют вопросам обеспечения их подготовки по военно-учетным специальностям, морально-психологической и физической подготовки к службе с нацелом на повышение приспособляемости новобранцев к строгим требованиям армейской службы и снижение риска возникновения различных комплексов, связанных с резким изменением условий жизнедеятельности юношей.

THE FORMATION OF VALUE ORIENTATIONS AND MOTIVATION OF MILITARY SERVICE AT THE YOUTH OF PREMILITARY AGE

S. R. CHALYAN, Major General, the RA Military Commissar,

A. L. HAYRAPETYAN, Lieutenant-Colonel, Head of the Department
of Premilitary Training of the RA Military Commissariat

SUMMARY

A key component of the RA defense reforms is the solution of tasks on recruiting the Armed Forces with patriotically disposed, morally and physically strong, competent youth. This requires innovative approaches to the given problem.

The military-patriotic education, being a cornerstone for motivating the military service, i. e. the protection of Fatherland, is a complex activity in some directions of different structures: the Ministries of Defense, Education and Science,

Culture, of Sport and Youth Affairs, mass media and a number of non-governmental organizations. Military commissariats of the Republic which are at the front line in the interrelations Army–society have a significant place among them. Military commissariats in their activities with the youth of premilitary and military service age pay special attention to the issues of ensuring their preparation for military-registration specialities, moral-psychological and physical training for service aimed at increasing adaptability of recruits to strict requirements of the army service and reducing the risk of getting different complexes connected with drastic change in conditions of vital activity of the youth.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐԶԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏՔԱՏՈՒՄ

Ա. Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, գեներալ-մայոր, ԼՂՀ Ազգային հերոս,

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏՔԱՏՈՒՄ



ՀՀ Զինված ուժերում իրականացվող պաշտպանական բարեփոխումների գերխնդիրն է, ինչպես նշում է Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, «այնպիսի ստանդարտների մշակումն ու Զինված ուժերում ներդրումը, որոնք լիովին համապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության գերակայություններին, լուծեն ռազմական անվտանգության ազգային խնդիրները»¹: ՀՀ «Ռազմական դոկտրինում» ձևակերպված են բարեփոխումների հիմնական նպատակները և խնդիրները, մասնավորապես, կարևորվում է «բազմակողմանի զարգացած սերունդների ռազմակայրարակության դաստիարակության կազմակերպումը»²: ՀՀ Պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունը (ՊԱՇՏՊ) երկար տարիներ նպաստել է երիտասարդության բազմակողմանի զարգացմանը, աջակցել ռազմահայրենասիրական դաստիարակության գործին և Զինված ուժերի համար պատրաստել արժանի հերթափոխ:

Հայաստանի Հանրապետության անկախության հոչակումից հետո 1991 թ. նոյեմբերի 20-ին կայացած ԴՕՍԱՖ-ի 4-րդ արտահերթ համագումարում ԴՕՍԱՖ-ի հայաստանյան մասնաճյուղը վերակազմավորվեց որպես ինքնուրույն հասարակական կազմակերպություն և վերանվանվեց ՀՀ Պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպություն:

Հարուստ են Կազմակերպության պատմությունն ու հայրենասիրական ավանդույթները: Հայաստանի Պաշտպանական ընկերությունը ստեղծվել է դեռ 1927 թ. և կարճ ժամանակամիջոցում դարձել հայ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության դպրոց: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ են մնկեն Պաշտպանական ընկերության հարյուր հազարավոր սաներ: Մենք հպարտանում ենք այն փաստով, որ ընկերության սաներից քանութք արժանացել են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչմանը³:

¹ Ս. Ս. Օհանյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. Երկրորդ փոլ: «ՀԲ», 2008, հմ. 2-3:

² «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինա»: «Աշխատանքային տետրեր»: 2007, հմ. 4, էջ 38:

³ Այս մասին ավելի հանգամանորեն տես Ա. Հ. Տիր-Թադևոսյան, Հայաստանի պաշտպանական ընկերության ներդրումը Մեծ Հայքանակում: «ՀԲ», 2005, հմ. 2-4:

Զգալի ավանդ ունեցան Կազմակերպության սաները Արցախյան հերոսական ազատամարտում, Հայաստանի սահմանների պաշտպանության, ազգային բանակի ստեղծման գործում՝ շարունակելով նախորդ սերունդների հերոսական ավանդույթները: Ազատամարտի առաջին խոկ օրերին Կազմակերպությունը ավելի քան հարյուր սպա է գործուղել Պաշտպանության կոմիտե, նրա հազարավոր անդամներ ինքնակամ մեկնել են պաշտպանելու հայրենիքի սահմանները: Հայկական քանակի ձևավորման համար Կազմակերպությունը տրամադրել է կառույցներ, քազաներ, տեխնիկա, ավտոտրանսպորտային միջոցներ, գենք, գինամթերք և ամենակարևորը՝ որակյալ մասնագետների: Մեզ պարտադրված պատերազմի տարիներին ՊԱՏՀԿ ուսումնական մարզատեխնիկական կազմակերպություններում 12 ուսումնական մասնագիտություններով (տանկի, ՀՍՄ և ՄՏԼՇ մեխանիկ-վարորդներ, ԶՓԴ վարորդ, ավտոկունկավար, «C» կարգի վարորդ և այլն) պատրաստվել է ավելի քան 8 հազար մասնագետ, որոնց մի զգալի մասը մասնակցել է մարտական գործողություններին՝ ցուցաբերելով արիություն և տուկունություն:

Միայն 2005–2008 թթ. ՀՀ Զինված ուժերի համար երեք մասնագիտություններով («C» կարգի ավտովարորդ, ՄՏԼՇ մեխանիկ-վարորդ, ուսումնական մասնագետ) պատրաստվել է շուրջ 9 հազար մասնագետ: Միևնույն ժամանակ պատրաստվել է շուրջ 75 հազար մասնագետ ժողովրդական տնտեսության համար:

ՀՀ ՊԱՏՀԿ-ն իր նպատակները իրականացնում է՝ համագործակցելով շուրջ 50 ուսումնական, մարզատեխնիկական, մարզական կազմակերպությունների հետ:

Ներկայում ՊԱՏՀԿ 18 ուսումնական կազմակերպություններում պայմանագրային իիմունքներով իրականացվում է ՀՀ Զինված ուժերի համար ուսումնագիտական մասնագետների պատրաստում երեք մասնագիտությունների գծով: Վերջին տարիներին մեր ուսումնական կազմակերպություններում վարորդական կարդի պատրաստումը կատարվում է Հայաստանի բնակչության պայմանների և այդ պայմաններում տեխնիկատրանսպորտային միջոցների պահպանման ու շահագործման առանձնահատկությունների հաշվառմամբ⁴: Պետք է նշել, որ այդ նույնցումը իիմնվում է գիտական հետազոտությունների արդյունքների վրա: Կազմակերպություններն ունեն հարուստ ուսումնանյութական քազա և որակյալ մասնագետներ: Նախատեսվում է ուսումնական գործընթացը համալրել նաև համակարգչային և այլ տեխնիկական միջոցներով, մասնավորապես՝ վարժասարքերով:

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ուսումնավարության» մեջ կարևորվում է ներկա և գալիք սերունդների կենսագործունեության համար քարենապատ միջավայրի ձևավորումը⁵: Այս առումով մեր Կազմակեր-

⁴Տես A. Խաչատրյան. Подготовка водительских кадров в природно-климатических условиях Армении. М., «Патриот», 2006, № 2:

⁵Տես «ՀՀ ազգային անվտանգության ուսումնավարություն»: «Հայկական բանակ» ուսումնագիտական համեստի հասուն քողարկում, 2007, էջ 15:

պուրյունը իր համեստ մասնակցությունն է ունենում այդ համապետական նշանակություն ունեցող խնդիրների լուծման գործին:

Երկրում իրականացվող պաշտպանական բարեփոխումները ենթադրում են ժամանակի պահանջներին համապատասխան արդիականացնել և հարտացնել Կազմակերպության ուսումնանյութական բազաները՝ օգտագործելով հայրենական և մշշագգային փորձը:

Ժամանակի պահանջներին համապատասխան վերականգնվում և լրացվում են ավտոփորձարկման կայանները, տեսական ուսուցման դասարանները, գրքնական ուսուցման լարորատորիաները: Մայրենի լեզվով մշակվում և տպագրվում են ուսումնական մասնագիտական գրականություն, պլակատներ, մեթոդական հրահանգագրեր և այլն:

Ցուցադրական ստեղծմերը և փահանակները լրացվում են հայ ժողովրդի անցյալի և ներկայի ռազմական, գիտական, մարզական սիրանքների, առաջավոր անձանց մասին պատմող նյութերով: Կազմակերպվում են հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի և Արցախի ազատամարտի վետերանների, ՊՄԾԿ անվանի մարզիկներ Զինաբիդա Սիմոնյանի, Շավարշ Կարապետյանի, Հրաչյա Շահազիլյանի, Սորերտ Մանուկյանի, Սվյուտիք և Հայրենիքի աճվանի գիտամշակութային ու մարզական գործիչների հետ: Ուսումնական կազմակերպություններում գործում են «Փառքի բանգարաններ», ցույց է տրվում օգնություն զոհված ազատամարտիկների ընտանիքներին, կազմակերպվում են դպրոցականների տեխնիկական ստեղծագործության ստուգատես-մրցույթներ, երիտասարդների պատմահայրենասիրական արշավներ:

ՀՀ ՊՄԾԿ-ն կարևոր դեր է կատարում բանակ-հասարակություն կապի ամրապնդման գործում: Հանրապետության ամրող տարածքում գործող նրա ստորաբաժանումներում կատարվում է զանգվածային կազմակերպական-քարոզչական աշխատանք՝ բնակչության և, հատկապես՝ երիտասարդության շրջանում պետական մտածողության և հայրենասիրական ոգու ամրապնդման, ազգային հոգեկերտվածքի ծևագործման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, մենք գիտակցում ենք, որ նոր մարտահրավերների պայմաններում խիստ անհրաժեշտ է էլ ավելի ընդլայնել ու խորացնել երիտասարդության շրջանում տարվող ռազմահայրենասիրական բնույթի աշխատանքները:

Այսօր ՊՄԾԿ-ն ՀՀ Զինված ուժերի վստահելի գործընկերն է, որի հիմնական նպատակն է երիտասարդությանը որևէ ռազմատեխնիկական մասնագիտություն ստվորեցնելը և ազգային բանակում ծառայելու սրբազն գործին նախապատրաստելը: ՊՄԾԿ ուսումնական կազմակերպությունների սաները զինվորական ծառայության են մեկնում լիարժեք կերպով պատրաստված: Որպես կանոն, նրանք զորամասերում սեղմ ժամկետներում յուրացնում են մարտական բարդ տեխնիկան, տիրապետում գենքին, արագ հարմարվում բանակային առօրյային, բարեխորդեն վերաբերվում իրենց զինվորական պարտքի կատարմանը:

ՀՀ ՊՄՏՀԿ ուսումնական կազմակերպությունները սերտորեն համագործակցում են գորամասերի հետ, հաճախակի կազմակերպում այցելություններ գորամասեր, որտեղ սաները ծանոթանում են ուսումնական տեխնիկային, զինվորական առօրյային: Նման միջոցառումները լրացուցիչ լիցք են հաղորդում ապագա զինվոր-վարորդներին:

Դրա հետ մեկտեղ, մեր գործունեության արդյունավետության ու համակարգվածության մակարդակների բարձրացման համար անհրաժեշտ է նշակել պետական երկարաժամկետ ծրագիր, որի իրականացմանը, պետական գերատեսչություններից բացի, մասնակցեն տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները: Գիտակից քաղաքացու դաստիարակության ուղղված նման ծրագրի իրականացումը էապես կնպաստի պաշտպանական բարեփոխումների արդյունավետության մեծացմանը: Պետական և շահագոփոխ այլ կազմակերպությունների աջակցությամբ հնարավոր կլինի վերականգնել ուսումնամարզական ճամբարների գործունեությունը, ինչը կարևոր գործոն է դպրոցականների և ուսանող երիտասարդության հետ տարփող աշխատանքների հաջող ընթացքի ապահովման համար: Հատկապես կարևորում ենք հանրապետությունում այնպիսի մարզաձևների վերականգնումը, ինչպիսիք են ձմեռային երկամարտը (բիատլոն, որը ներառում է դահուկարշավ՝ հրաձգությամբ), պարաշյուտային սպորտը, ուսումնակիրառական բազմամարտը, ավտոմոտոսպորտը, ռազմիոսպորտը և այլն:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում խիստ կարևոր է վերականգնել տեխնիկական ու ուսումնական ակումբները, իրականացնել տեխնիկական և ուսումնական ուղղվածություն ունեցող մարզաձևների զարգացման նպատակային ծրագրեր: Մասնավորապես՝ անհրաժեշտ է լայն թափ հաղորդել «Կորյուն» ուսումնամարզական խաղերին, շարային պատրաստության հանրապետական ստուգատես-մրցույթին, հրաձգության միանմյակին և այլն:

Վերջերս Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ օգնատուի 11-ն ընդունեց որպես «Ազգային ինքնության» տոն: Նախատեսվում է տոնին նախորդող հինգ օրերին անցկացնել «Նախասարդյան խաղեր»: Այս նախաձեռնությունը լավ առիթ է համաժողովրդական տոնի շրջանակներում անցկացնելու նաև ուսումնակիրառական մարզաձևների մրցություններ:

«ՀՀ ուսումնական դրվագներ» նախատեսում է ուսումնական և ուսումնականիկական միջազգային համագործակցություն՝ ազգային անվտանգության հիմնարար արժեքների ու ուսումնական անվտանգության ապահովման խնդիրների հաշվառմամբ⁶: Այս շրջանակներում էլ մեր Կազմակերպությունը համագործակցում է ԱՊՀ երկրների հետ:

Այդ համագործակցության հիմքերը դրվեցին Մինսկում 1993 թ. ապրիլի 28-ին ԱՊՀ մասնակից պետությունների կողմից ընդունված Համաձայնագրով, որի հիման վրա ձևավորվեցին ԱՊՀ երկրների Պաշտպանական կազմակերպություն-

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության ուսումնական դրվագին», էջ 40:

ների միության դեկավար մարմինները՝ Խորհուրդը և գործադիր մարմինը⁷: Համաձայնագիրը լավագույն հնարավորություն է ստեղծում համագործակցության և փորձի փոխանակման համար, մասնավորապես՝ ռազմահայրենափրական դաստիարակության, ռազմատեխնիկական ոլորտի մասնագետների պատրաստման, տեխնիկական և ավիացիոն մարզաձևերի զարգացման, ուսումնական և մարզական միջոցների ապահովման համար: Այս համագործակցության շրջանակներում կազմակերպվում են բազմաթիվ կարևոր միջոցառումներ՝ փորձի փոխանակում, միջազգային մրցումներ ու սպարտակիադաներ: Այդ միջոցառումներին մեր Կազմակերպությունը մասնակցում է իր հնարավորությունների չափով, իսկ դրանք սահմանափակվում են հասարակական կազմակերպության կարգավիճակով: Մինչդեռ, օրինակ, Ռուսաստանի Դաշնության Պաշտպանական կազմակերպությունը Պետդումայի ընդունած հասունական օրենքով համարվում է պետական հասարակական կազմակերպություն⁸:

Ըստ գործող Համաձայնագրի՝ ՀՀ կառավարությունն ստանձնել է մի շարք պարտավորություններ՝ աջակցել մեր կազմակերպությանը ՀՀ Զինված ուժերի համար տեխնիկական մասնագետների պատրաստման գործում, նպաստել տեխնիկական, ռազմակիրառական և ավիացիոն մարզաձևների զարգացմանը, համապատասխան մրցումների և առաջնությունների կազմակերպմանը, առաջավոր փորձի ուսումնափրաման ու փոխանակման նպատակով պատվիրակությունների փոխանակմանը և այլն:

Այս տասնինեց տարիների ընթացքում մեր կառավարությունը, ցավոք, կատարում է միայն ԶՈՒ-ի համար մասնագետների պատրաստման վերաբերյալ իր պարտավորությունը: Մի քանի անգամ մշակել և ներկայացրել ենք Հայաստանում տեխնիկական մարզաձևների զարգացման նպատակային ծրագրեր, սակայն՝ ապարդյուն: Մեր մարզիկները հաճախ հնարավորություն չեն ունենում մասնակցելու ԱՊՀ շրջանակներում կազմակերպվող մարզական միջոցառումներին: Միայն 2006 թ. ԱՊՀ կազմավորման 15-ամյակին նվիրված Սպարտակիադային մասնակցեց մեր հրածիգների թիմը և գրավեց պատվավոր երրորդ տեղը: Մինչդեռ երկրի հեղինակության, պաշտպանունակության ամրապնդման տեսակետից նման միջոցառումներին մասնակցությունը խիստ կարևոր է:

Համագործակցության շրջանակները ընդլայնելու համար անհրաժեշտ է պետական աջակցություն: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պաշտպանական բարեփոխումների նպատակներից է նաև պաշտպանության բնագավառում միջազգային առաջատար փորձի իմաստավորումն ու ներդրումը՝ ի նպաստ պետության ռազմաքաղաքական ու ռազմական հզորացման:

⁷ Տես «Соглашение о совместной деятельности по содействию работе оборонных спортивно-технических организаций (обществ) государств-участников Содружества Независимых Государств». Минск, 28 апреля 1993 г. (<http://www.bankzakonov.com/d2008/time84/lav84377.htm>):

⁸ Տես «Федеральный закон «О Российской оборонной спортивно-технической организации». М., 1998 г. (<http://www.pravoteka.ru/pst/210/104893.html>):

Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» համագործակցության շրջանակներում ստեղծվել է առաջավոր փորձին ծանրանալու նոր հնարավորություն։ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը մասնակցում են խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային գործողություններին։ Արդեն մի քանի տարի է, ինչ մեր Կազմակերպությունը իր համեստ մասնակցությունն է ունենում խաղաղապահների պատրաստման գործում։ Նրանք ներկայացնում են մեր երկիրը թեժ կետերում, ուստի Կազմակերպությունը մեծ պատասխանատվություն է կրում նրանց պատրաստության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար։ Իսկ դրա համար պետք է ոչ միայն նորիկիզանել մեր բոլոր հնարավորությունները, այլև ուսումնասիրել ու տեղայնացնել միջազգային փորձը։ ՈԽուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն երկրների բնակիլմայական պայմանները, տեխնիկատրանսպորտային միջոցների շահագործման ու պահպանման առանձնահատկությունները, որտեղ իրականացվելու են խաղաղապահական առաքելությունները։

Պաշտպանական համակարգի զարգացման գործում **ՊԱՏՀԿ-ն** կարող է դառնալ պաշտպանության նախարարության հուսալի հենարանը, հետևարար անհրաժեշտ է համատեղ մշակել և իրականացնել համագործակցության հեռանկարային ծրագրեր՝ հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային ռազմաքաղաքան իրադրությունը, դրա զարգացման հեռանկարները, եղած ու հավանական մարտահրավերներն ու սպառնալիքները։ Չէ՞ որ բանակում տարվող մարտական ու դաստիարակչական աշխատանքի հաջողությունը մեծապես կախված է Զինված ուժերը համարող նորակոչիկի պատրաստականությունից։

ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБОРОННОЙ СПОРТИВНО-ТЕХНИЧЕСКОЙ ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ РА В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

А. О. ТАДЕВОСЯН, генерал-майор, Национальный герой НКР,
Председатель ЦС ОСТОО РА

РЕЗЮМЕ

В наш век высоких технологий ощущается недостаток в квалифицированных кадрах даже в самых развитых армиях мира, в особенности тех, которые формируются на призывной основе. Качество боевой и воспитательной работы в армии в значительной мере зависит от уровня предварительной выучки новобранцев. А это значит, что в процессе подготовки воинов-специалистов большую роль должна играть и играет Оборонная спортивно-техническая общественная организация РА. Организация подготовила для ВС тысячи специалистов и продолжает выполнять функцию кузницы специализированных кадров для ВС РА. Кроме этого, Организация развивает свои традиции по воспитанию патриотизма в среде юношества допризывного возраста.

Для повышения эффективности функциональной деятельности Организации необходимы: изменение ее статуса на «общественную государственную организацию», разработка и совместная с заинтересованными ведомствами реализация общегосударственной программы по развитию оборонных видов спорта и подготовке кадров для ВС, укрепление материально-технической базы подразделений Организации в соответствии с мировыми стандартами, создание возможностей для расширения организационно-технических и спортивных связей с соответствующими организациями как в рамках СНГ и ОДКБ, так и НАТО.

THE ACTIVITY OF THE RA DEFENSE SPORTS AND TECHNICAL PUBLIC ORGANIZATION IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS

A. H. TADEVOSYAN, Major General, National Hero of the NKR,
Chairman of the Central Council of the RA DSTPO

SUMMARY

In our age of high technologies the shortage of qualified specialists is felt even in the most developed armies of the world, especially in those, which are formed on the conscription basis. The quality of operational and educational activities in the army considerably depends on the level of new recruits' preliminary preparedness. This means that the RA Defense Sports and Technical Public Organization should play and plays a great role in the process of preparing specialist-soldiers. The Organization has prepared thousands of specialists for the Armed Forces and continues to fulfil the function of a forge of specialized staff for the RA Armed Forces. Besides, the Organization develops its traditions of training patriotism among the youth of premilitary age.

For increasing the efficiency of the Organization's functioning it is necessary to: change its status into «public state organization», elaborate and realize the all-state program on developing defense sports and preparing specialists for the Armed Forces together with concerned agencies, strengthen the material-technical base of the Organization's sub-units in accordance with world standards, create possibilities for developing organizational-technical and sport contacts with corresponding organizations both within the framework of the CIS and CSTO, and NATO as well.

ԼԵՇՆԱՅԻՆ ՏԵՂԱՆՔՈՒՄ
ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎՐԱ
ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒԽԸԸ՝ ՈՐՊԵՍ
ՄԱՐՏԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ
Հ. Յ. ՍԱՅԱԴՅԱՆ, գնդապետ, զորամասի հրամանակարի պետակալ,
աշխարհագրական զիրուրյունների քեկնածու



ՀՀ-ում ներկայում իրականացվող պաշտպանական բարեփոխումները նպատակառությամբ են մեր Զինված ուժերի մարտունակուրյան մակարդակի բարձրացմանը¹, որի կարևոր գրավականներից է աճնակազմի զինվորական (մարտական) վարպետությունը: Զինվորական վարպետությունը «զինծառայողի և զինվորական ստորաբաժանումների բարձր մակարդակի մասնագիտական և հատուկ պատրաստվածությունն է զինվորական ծառայության հետ կապված մարտական խնդիրների և պարտականությունների կատարմանը»: Այն ենթադրում է հաստատված գործառության պարտականությունների բարձր որակով, արագ, խնայողական, ճշգրիտ կատարում կոնկրետ պայմաններում: Զեռք է բերվում շնորհիվ նպատակառությամբ ուսուցման, կանոնավոր վարժանքների, որոնց հետևանքով ձևավորվում են կայուն հոգեկան ու ֆիզիոլոգիական կապեր»²:

Այսպիսվ՝ մարտական վարպետությունը կապված է կոնկրետ պայմանների, այդ թիվով՝ տեղանքի, կյանքի և այլ աշխարհագրական առանձնահատկությունների հետ: Քանի որ ՀՀ ռազմական դոկտրինը պաշտպանողական բնույթի է³, ապա մեր զինծառայողներն ու ստորաբաժանումները պետք է առաջին հերթին պատրաստ լինեն մարտական գործողություններ վարելու լեռնային տեղանքում: Ընդսմին, ինչպես երևում է մարտական վարպետության վերը բերված սահմանումից, այն ներառում է նաև տվյալ պայմաններում սպառագինության ու ռազմական տեխնիկայի ճիշտ շահագործումն ու սպասարկումը: Եվ ինչ լեռնային տեղանքի առանձնահատկությունների՝ որպես մարտական վարպետության ապահովման գործոնի ուսումնասիրությանն է նվիրված այս հոդվածը:

Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է. միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1830 մ է, ամենացածր կետերը՝ 375–380 մ, գտնվում

¹ Տես *Ս. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. Երկրորդ փող: «ՀԲ» 2008, հմ. 2–3:

² «Военно-энциклопедический словарь». М., 2002, с. 760.

³ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 24, «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 30:

Են Դերեղ և Արաքս գետերի ափերին, իսկ ամենաբարձր կետը՝ 4090 մ, Արագածի հյուսիսային գագարն է⁴:

Հանրապետության բնական պայմանների (կլիմայի, ջրերի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի և բնական լանդշաֆտների) խստ բազմազանությունը և վերընթաց գոտիականությունը պայմանավորված են նրա բարդ ռելիեֆով, տարածքի բացարձակ և հարաբերական բարձրությունների մեծ տատանումներով:

Տեղումների տարեկան քանակը և կայուն ձյունածածկույթի տևողությունը բերված են աղ. 1-ում, իսկ միջին ջերմաստիճանի արժեքները՝ աղ. 2-ում:

Աղյուսակ 1

ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՁՅՈՒՆԱԾԱԾԿՈՒՅԹԸՆ ԸՍՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ⁵

Բարձրություն, մ	Միջին տարեկան տեղումներ, մմ	Կայուն ձյունածածկույթ, ամիս
3000–3500	1000 և ավելի	հոկտեմբերի կես – հունիսի կես
2500–3000	800–1000	նոյեմբերի սկիզբ – մայիսի կես
2000–2500	600–800	նոյեմբերի կես – ապրիլի կես

Աղյուսակ 2

ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՄԻՋԻՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ⁶

Բարձրություն, մ	ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ, °C	
	հունվար	հուլիս
3000	-14÷-42	+8÷+25
2000	-8÷-34	+18÷+34
մինչև 800	-2÷-20	+26÷+42

Հայկական լեռնաշխարհի բարձրեռնային գոտիներում ձյունածածկույթի հզորությունը մինչև 1,5-2 մ է, իսկ նրա մակերևույթի և ստորին շերտի ջերմաստիճանների միջև տարբերությունը՝ 25-27°C:

Մակերևույթի բազմապիտիքունը թելադրում է, որ հակառակորդի նկատմամբ առավելության հասնելու համար անհրաժեշտ է մարտական պլանավորումների ժամանակ հաշվի առնել ռելիեֆի ու կլիմայի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ մարտական տեխնիկայի և այլ տեխնիկական միջոցների շահագործման ամառային և ձմեռային ժամանակաշրջանները որոշելիս անպայման պետք է նկատի ունենալ ջերմաստիճանի փոփոխություններն ըստ բարձրության:

Լեռնային տեղանքը բնութագրվում է ուժեղ կտրտված ռելիեֆով, «մեռյալ» գոտիների, բնական թաքսոնցների և զաղտնի մատուցների առատությամբ, քոյլ

⁴ Տես «Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան»: Ե., 1986, էջ 15:

⁵ Տես «Հայաստանի ազգային ատլաս», հ. Ա: Ե., 2007, էջ 42:

⁶ Տես նոյն տեղում:

զարգացած և ցածր բողունակությամբ ճանապարհային ցանցով, եղանակի կտրուկ փոփոխություններով՝ ցածր ամպամածություն, մառախոտ, հանկարծակի ինտենսիվ ամպրոպներ, օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի կտրուկ տատանումներ, քամու ուղղության և արագության, լեռնային գետերի և առվակների ռեժիմի հաճախակի փոփոխում⁷:

Վերը նշված գործոններն էապես ազդում են մարտական գործողությունների վարման վրա, խոշոնդոտում զինվորական ստորաբաժանումների առջև դրված խնդիրների կատարմանը: Չորքերի գործողությունների վրա ազդում են բացարձակ բարձրությունը և կլիման, ռելիեֆը և բուսական ծածկույթը: Բացարձակ բարձրությունը կարևոր պայման է, որը որոշում է կլիմայի առանձնահատկությունները: Այսպես, բարձրության յուրաքանչյուր 100 մ աճման դեպքում օդի միջին ջերմաստիճանը նվազում է $0,6^{\circ}\text{C}$ -ով, մընոլորտային ճնշումը իշնում է մինչև $8-10$ մմ սնդիկի այուն, օդի խսությունը պակասում է $1,2\text{ \%}$ -ով, իսկ կայուն ձյունածածկույթի տևողությունը ավելանում է $8-10$ օրով:

Սպասարկման հետ կապված մեծ խնդիրներ են առաջանում արդեն -23°C -ի դեպքում և բարդանում են ամեն մի աստիճանով նվազելիս.

- քսանյութերը դառնում են ավելի մածուցիկ՝ ընդիուպ մինչև պնդացում,
- մետաղները կորցնում են ամրությունը,
- ռետինատեխնիկական պարագաները կորցնում են իրենց առաձգականությունը,
- պլաստմասսայից և կերամիկայից պատրաստված առարկաները դառնում են պակաս ճկուն,
- կտրուկ նվազում է կուտակային մարտկոցների աշխատանքի արդյունավետությունը,
- վառելիքի որակն զգալիորեն վատքարանում է,
- ապակին կտրուկ տաքացման դեպքում ճարում է,
- աճում է ստատիկ էլեկտրականությունը, բաց մեկուսիչները կորցնում են իրենց հատկությունը,
- չափիչ սարքերի և էլեկտրոնիկայի աշխատանքում առաջանում են խարարումներ⁸:

Այս պայմաններում ներքին այրման շարժիչների աշխատանքի արդյունավետությունը նվազում է կուտակային մարտկոցների հզրության անկման պատճառով: Ավտոարիեստանոցներում կարգարերված մեխանիզմների նորմալ աշխատանքը խախտվում է, մասնավորապես՝ անվարողները կպչում են անվահեցերին: Վառելիքի առաձգական տարաների պիտանելիությունը կասկածելի է դառնում արդեն -29°C ջերմաստիճանում: Ստատիկ լիցքերի առաջացման հետևանքով

⁷ Տես «Большая Советская Энциклопедия», т. 5. М., 1971, с. 541:

⁸ Տես Дж. М. Колинз. Военная география для профессионалов и не профессионалов. М., 2005, с. 137 (նաև՝ John M. Collins. Military Geography for Professionals and the Public. Washington, DC, 1998):

վառելիքը կարող է ինքնաբերաբար բռնկվել, ուստի անհրաժեշտ է հողանցել շարժիչները և վառարանները:

Զնածածկ տեղանքով շարժվող ավտոտրանսպորտի համար պահանջվում է մոտավորապես 25 %-ով ավելի վառելիք, քան ամուր գրունտով շարժվելու դեպքում:

Լեռնային պայմաններում փոխվում է մարդկանց և տեխնիկայի համար պահանջվող ջրի քանակը: Օրինակ՝ մարդու խմելու ջրի օրական պահանջմունքը կազմում է 3,8-ից մինչև 5,7 լ, որպեսզի բացառվի ցածր ջերմաստիճանում ջրագրկումը: Հսկայական քանակությամբ ջուր է անհրաժեշտ ստորաբաժանումների գազագերծման և ակտիվազերծման համար, եթե նրանք ենթարկվել են կայուն բունավոր նյութերով քիմիական հարձակման⁹:

Ռազմական տեխնիկայի վրա զգալի ազդեցություն է գործում մքննորտի նոսրացումը: Դա հանգեցնում է տաճկերի և ավտոմեքենաների շարժիչների հզորության անկման (յուրաքանչյուր 1000 մ վերելքին՝ մոտ 10 %-ով), միևնույն ժամանակ ավելանում է վառելիքի ծախսը և իշնում է ջրի եռման ջերմաստիճանը (յուրաքանչյուր 1000 մ-ին՝ 3-4°-ով)¹⁰:

Լեռնային տեղանքի կարևոր բնուրագրիչ է անցանելիությունը: Այն բնորոշող ցուցանիշ են նաև լանջերի թեքությունները: Այսպես, զինվորների խմբի միջին արագությունը մինչև 10° թեքությամբ երթուղով $4-5$ կմ/ժ է, մինչև 20° ՝ $2,3-3$ կմ/ժ և մինչև 30° ՝ $1,5-2$ կմ/ժ: Լեռնային ճանապարհներին ավտոտրանսպորտի արագությունը լանջերի $10-15^{\circ}$ թեքության դեպքում մոտ $8-12$ կմ/ժ է, իսկ $15-20^{\circ}$ թեքության դեպքում՝ $5-8$ կմ/ժ (տես աղ. 3):

Աղյուսակ 3

ԼԵՂՈՆԱՅԱՆՉԵՐԻ ԱՆՑԱՄԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՈՒՐ ՉՈՐ ԳՐՈՒՏՏԻ ԴԵՊՔՈՒՄ¹¹

Լանջի թեքությունը, °	Լանջերի անցանելիությունը	
	թրուրափոր մեքենաներ	անվափոր մեքենաներ
մինչև 5	հեշտ հաղթահարվում է	հաղթահարվում է
5-10	հաղթահարվում է	հաղթահարվում է դժվարությամբ
10-20	հաղթահարվում է դժվարությամբ	հաղթահարվում է մեծ դժվարությամբ և միայն փոքր արագություններով
20-30	հաղթահարվում է մեծ դժվարությամբ և միայն փոքր արագություններով	գործնականում անհաղթահարելի է
30-ից ավելի	գործնականում անհաղթահարելի է	

Անցանելիության վրա ազդող կարևոր գործոն է նաև լեռնալանջերի հողագրունտների խոնավությունը: Նշենք, որ գրունտի 50 % խոնավության դեպքում

⁹ Տես նոյն տեղում:


¹⁰ Տես նոյն տեղում:

¹¹ Տես A. M. Говорухин, A. M. Куприн, M. B. Гамезо. Справочник по военной топографии. М., 1973, сс. 90, 100:

(սովորական պայմաններում գրունտների խոնավությունը 20 %-ի) հաղթահարվող թեքությունները նվազում են երկու անգամ:

Լանջերի թեքությունների իմացությունը հնարավորություն է տալիս հաշվարկելու տվյալ տարածքի անցանելիությունը:

Ուսւ գեռմորֆոլոգ Ի. Ս. Շչոկինը լեռնալանջերն ըստ ձևի բաժանում է չորս խմբի՝ ա) ուղիղ, բ) գոգավոր, գ) ուռոցիկ, դ) աստիճանաձև¹² (տես նկ. 1):



Նկ. 1. Լանջերի ձևաբանական դասակարգումը

ա) և բ) ձևի լանջերի դեպքում մարտական կատարը ընտրվում է տեղագրական կատարին ավելի մոտ, քանի որ այնտեղից լանջն ավելի լավ է երևում, իսկ զորքերը և մարտական տեխնիկան հակառակորդի կողմից չեն պրոյեկտվում երկնքի ֆոնի վրա: գ) և դ) ձևերի լանջերի դեպքում մարտական կատարն ընտրվում է տեղագրական կատարից ավելի հեռու, որպեսզի հնարավոր լինի հսկողության տակ պահել ամբողջ լանջը՝ մինչև ստորոտ:

Մեծ նշանակություն ունի մակերևույթի մասնատվածությունը՝ ինչպես հորիզոնական, այնպես էլ խորքային բաղադրիչներով:

Լեռնային ուղիելքը դժվարացնում կամ անհնար է դարձնում ճանապարհներից դուրս մարտական տեխնիկայի, տրանսպորտի և քարշող կենդանիների շարժը: Այդ պատճառով էլ ճանապարհների մշտական հսկումը հնարավորություն է տալիս հայտնաբերելու հակառակորդի ուժերի և միջոցների տարաշարժը:

Լեռներում օդի բարձր թափանցիկության և լանջերի ու լեռնաշղթաների տարբեր լուսավորության պատճառով հաճախ տեղի է ունենում «տեսողության պատրանքի» երևույթ, երբ օրյեկտների չափերը և մինչև այդ օրյեկտները եղած հեռավորությունները ենթարկվում են օպտիկական շեղումների: Խորը հովիտները, ձորերը և ձորակները «կրճատում» են լեռնաշղթաների միջև եղած հեռավորությունները. նույնիսկ 20 կմ հեռավորության վրա գտնվող օրյեկտների հեռավորությունը անգեն աշջով հաճախ գնահատվում է 6-8 կմ: Ուստի դիտումներ կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ երևույթը: Ընդամեն խարուսիկ է նաև թեքության ընկալումը. հաճախ սկսում է թվականը բարձրանում է, մինչդեռ իրականում վար է իջնում:

Լեռներում, տարվա եղանակից կախված, հաճախ են փոփոխվում գետերի լայնությունը, հոսանքի արագությունը: Զրի մակարդակի բարձրացման ժամանակ

¹²Տես Ի. Ս. Շյուկին. Общая геоморфология, т. 2. М., 1964, с. 149:

լեռնային գետերը լուրջ արգելք են նույնիսկ լողացող մարտական տեխնիկայի համար: Այդ պատճառով էլ գետանցման տեղերը որոշելու համար անհրաժեշտ է նախօրոր ուսումնասիրել դրանք և հանգամանորեն նախապատրաստվել: Գետանցման լավագույն ժամանակը առավոտյան ժամերն են, եթե ջրի մակարդակը ամենացածրն է, քանի որ լեռնային գետերը հիմնականում սնվում են ձնիալիք ջրերով: Պետք է խիստ գգուչանալ սեղավներից, քանի որ լեռներում ուժեղ անձրևների հետևանքով անգամ գետակները կարող են սաստիկ վարարել՝ վնաս պատճառելով մարդկանց, շինություններին, տեխնիկային:

Լեռներում դժվար է կողմնորոշվել հատկապես մառախուղի ժամանակ և գիշերը: Պետք են լեռնային տեղանքի մասին գիտելիքներ, արագ ու ճիշտ կողմնորոշման տարաբնույթ ձևերի ու եղանակների իմացություն, համապատասխան միջոցներից օգտվելու հմտություն, ինչին կարելի հասնել պարբերական վարժանքներով:

Գրոհի ժամանակ հարձակման ուղղությունների ընտրությունը շատ սահմանափակ է: Հարձակվող հակառակորդի համար լեռները դժվարացնում կամ ընդհանրապես բացառում են մեկ առավել նպատակահարմար ուղղությամբ խոշոր խմբավորումների կիրառումը: Ստորաբաժանումներն ստիպված են գործել իրարից անջատ: Լեռնային տեղանքը խանգարում է հակառակորդին կիրառել մարտակարգի տարրեր, սահմանափակում է զորքերի տարաշարժը, նվազեցնում հարձակման տեմպը և ցանքային զորքերի ու ավիացիայի կրակային միջոցների հնարավորությունները, դժվարացնում կապի միջոցների աշխատանքը և նյութատեխնիկական բազայի ապահովումը, մեծացնում է ինժեներական միջոցառումների անցկացման տևողությունը: Հարձակումները կատարվում են առավելապես եղած ճանապարհների օգտագործմամբ, հովհանքներով, լեռնաշղթաների լանջերով: Հրթիուային և հրետանային զրամացների ու ստորաբաժանումների դիրքավորման շրջաններն ընտրվում են ճանապարհներին մոտ՝ սովորաբար հովհանքներում կամ լեռնաշղթաների մեջմարելք լանջերին, դարավանդներին:

Տանկային ստորաբաժանումները լեռներում հիմնականում կիրառվում են ճանապարհների երկայնքով գործող մոտոհետեւակալին աջակցելու համար, ինչպես նաև որպես ուղղակի ճշանառությամբ կրակի վարման միջոց:


Լեռներում հարձակողական գործողությունների ժամանակ մեծ դեր է հատկացվում բանակային ավիացիային՝ հատկապես գերիշխող բարձունքների զրավման ժամանակ մարտավարական օդային դեսանտի իջեցման, շրջանցող մարտավարական խմբերին¹³:

Լեռնային տեղանքն ընորոշ են փլուզումները, սողանքները, ձնահյուսերը, որոնք ակտիվանում են գարնանը և ուղղմական գործողությունների ընթացքում տեղի ունեցող հզոր պայքարունների դեպքում: Դրանք լանջային երևույթներ են, որոնք լայն տարածում ունեն հատկապես բարձր լեռների մերձգագարնային մա-

¹³ See «Mountain Operations». Headquarters Department of Army. Washington, DC, 1980, 30 June, PP. 3.1 – 3.37:

սերում, որտեղ լեռնային ապարների ինտենսիվ սառնամանիքային հողմահարման հետևանքով դրանց ներքին կապը խախտվում է, և ամենատարբեր չափերի ժայռաբեկորներ անջատվում են հիմնական զանգվածից¹⁴: Այս երևոյթները մեծապես խոչնդրություն են ամրաշինական և ճանապարհաշինական աշխատանքներին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մոսկվայի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսոր Գ. Կ. Տուշինսկու հաշ-



Նկ. 2. Խտացման աղբյուրի պարզագույն պիտման
ա) ընդհանուր տեսքը, բ) կտրվածքը. 1. մշտապես փշող քամի, 2. խճաքարային լիցք,
3. ջրամերժ շերտ, 4. դույլ՝ խտացված ջուրը հավաքելու համար, 5. քաց գույնի
սալիկներ՝ խճաքարի տաքացումը կամիւլու համար

վարկներով և առաջարկությամբ Կովկասյան լեռներում հրետանու կրակ էր արձակվում ձյան կոտակումների վրա, ինչի հետևանքով ձնահյուսերը քափվում էին գերմանական լեռնահրաձգային ստորաբաժանումների վրա՝ խոչընդրությով նրանց տեղաշարժին: Տուշինսկին նաև մասնակցում էր ձնահյուսերի դեմ պայքարին, նրա մշակած երթուղիներով խորհրդային զորքերը շարժվում էին անվտանգ լանջերով¹⁵:

Արևմտյան ռազմագետների կարծիքով՝ լեռներում գրոհի ժամանակ կարելի է լայնորեն կիրառել փոքր ստորաբաժանումներ՝ որպես քափանցող խմբեր, շրջանցող մարտավարական (դիվերսիոն-հետախուզական) խմբեր: Այս տեսության կենսունակությունը բազմից հաստատվել է վերջին տասնամյակներում տեղային ռազմական գործողությունների ժամանակ (Աֆղանստան, Չեչիա և այլն)¹⁶:

Բարձրենային շրջաններում ամռանը խմելու ջրով ապահովումը նույնապես կարևոր խնդիրներից է, քանի որ աղբյուրները հիմնականում մնում են ավելի ցածր: Այս խնդրի լուծման տարրերակներից մեկն է սարքավորել խտացման (կոնդեն-

¹⁴ Տես B. P. Եօնագրան. Տեղագործական պատմություններ. Ե., 2007, с. 166, նաև՝ Վ. Գաբրիելյան, Վ. Սրբիամյան, Է. Մնջրյան, Լանջային պրոցեսների դրսորման վտանգի աստիճանը Հայաստանի Հանրապետության տարածքում վլվածարավագածքային երևոյթների ու քարվեժների օրինակի վրա: «ՀԲ», 2007, հմ. 1:

¹⁵ Տես ՅՈ. Պ. Սուրունենկո. Էտո սպասարկության գործությունները. Մ., 1987, с. 64:

¹⁶ Տես, օրինակ, Մ. Ա. Արրահամյան, Լեռնային պայմաններում տեղային պատերազմների վարման եղանակները (Աֆղանական և Չեչենական պատերազմների օրինակով): «ՀԲ», 1999, հմ. 4:

սացման) աղբյուր, որի գործողության սկզբունքը հիմնված է օդում եղած խոնավության խտացման վրա (նկ. 2):

Առաջարկում ենք բարձրեռնային տեղամասերի քամբածն հատվածներում, որտեղ անընդհատ փշում են լեռնահովտային քամիներ, կառուցել խտացման աղբյուրներ¹⁷, որոնք ջուր մատակարարեն հենակետերին:

Այսպիսով՝ լեռնային պայմաններում մարտական գործողությունների արդյունավետությունը մեծացնելու համար անհրաժեշտ է դրանց պլանավորման ժամանակ հաշվի առնել այն բոլոր հնարավոր գործուները, որոնք կարող են բացասարար ազդել ինչպես տեխնիկական միջոցների շահագործման, այնպես էլ անձնակազմի գործողությունների վրա: Այդ գործուների հաշվառումը հնարավորություն կտա առավելություն ստանալու հակառակորդի նկատմամբ:

¹⁷ Այդ մասին ավելի հաճամանորեն տես Հ. Յ. Սայադյան, Գեղամա և Վարդենիսի լեռնավահաններում մթնոլորտային տեղումների ներծծման չափանիշները և ջրօգտագործման իրմանների սեփականաշնորհման պայմաններում: Ե., 2000, էջ 120–121:

УЧЕТ ФАКТОРОВ, ВЛИЯЮЩИХ НА ВЕДЕНИЕ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ В ГОРНОЙ МЕСТНОСТИ, КАК СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ БОЕВОГО МАСТЕРСТВА

А. Я. САЯДЯН, полковник, заместитель командира войсковой части,
кандидат географических наук

РЕЗЮМЕ

Боевое (военное) мастерство предполагает быстрое, экономное, точное выполнение установленных функциональных обязанностей в конкретных условиях с высоким качеством.

Вопросы ведения боевых действий в горах занимают важное место в теории военного искусства. Актуальность их изучения обусловлена прежде всего тем обстоятельством, что горы есть практически на всех театрах военных действий, а на некоторых из них преобладают. В частности, Республика Армения является горной страной.

К особенностям горной местности, влияющим на планирование боевых действий, можно отнести наличие сильно пересеченного рельефа с большим количеством труднодоступных массивов; большую разобщенность направлений, доступных для действий войск, трудность передвижения по такой местности и отсутствие достаточного количества дорог; специфические особенности горного климата с резкими перепадами температуры и количества выпадающих осадков; постоянную опасность возникновения горных обвалов, лавин и обширных завалов как природных, так и вследствие взрывов при военных действиях; высокую прозрачность воздуха и неуклонное понижение атмосферного давления с увеличением абсолютной высоты, что приводит к возникновению кислородного голода, оптическому

обману зрения при определении расстояний; отсутствие достаточного количества питьевой воды. Таким образом, горы создают сложную и весьма разнообразную обстановку для действия подразделений, частей и соединений, сильно затрудняют применение родов и специальных войск в наступлении и в то же время способствуют созданию глубоко эшелонированной и прочной обороны относительно меньшими, чем в обычных условиях, силами и средствами.

THE ACCOUNT OF FACTORS INFLUENCING
COMBAT OPERATIONS IN A MOUNTAINOUS TERRAIN
AS A MEANS OF ENSURING COMBAT EXPERTISE

*H. Ya. SAYADYAN, Colonel, Deputy Commander of the Military Unit,
Candidate of Geographical Sciences*

SUMMARY

Combat (military) expertise assumes quick, economical, precise meeting of the established functional commitments in concrete conditions with high quality.

The problems of conducting combat operations in mountains are of great significance in the theory of war art. The urgency of their study is conditioned, first of all, by the circumstance that mountains are practically in all the theatres of military actions, and even prevail in some of them. Particularly, the Republic of Armenia is a mountainous country.

The peculiarities of a mountainous terrain, having influence on planning combat operations, may be the existence of strongly rugged relief with a great number of almost impassable massives; great disconnection of directions accessible for troops' actions; difficulty to advance in such a locality and absence of sufficient number of routes; specific peculiarities of a mountainous climate with sharp drops in the temperature and quantity of precipitation; constant danger of rockfalls, avalanches and enormous blockages both natural ones and as a result of explosions at military operations; high air transparency and steadfast fall of atmospheric pressure with increase of absolute height causing scarcity of oxygen, optical illusion while fixing distances; absence of sufficient amount of potable water. Thus, mountains create complicated and quite diverse conditions for operations of sub-units, units and formations, and strongly obstruct the use of corps and special troops while advancing, and at the same time contribute to developing deeply echeloned and stable defense by relatively small forces and means than usually.

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԽՄԲԱՅԻՆ ԼԻԴԵՐՆԵՐԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ

ՀՀ ՊԱՇՏՈԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՏԵՔՍՈՒՄ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիրուրյունների դոկտոր,

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման
և քաղաքական վերլուծուրյան ամբիոնի վարիչ*



Քաղաքական համակարգի ժողովրդավարական կերպափոխմանը միտված բարեփոխումների գործընթացում որոշիչ է խմբային լիդերների^{*} դերը. մասնակցելով ինչպես որոշումների ընդունմանը, այնպես էլ իրականացմանը՝ նրանք մշակում են ազգային անվտանգության պահանջներին համապատասխանող ծրագրեր: 20-րդ դարի 30-ական թթ. ԱՄՆ-ի «մեծ ճգնաժամի» հայրահարման ուղղված քաղաքական գործունեության փորձը վկայում է, որ խմբային լիդերներ լինում են ուազմավարական պրամաշափի մղաղորդական և կառավարչարյուրուկրագրական անհատները:

Նրանցից յուրաքանչյուրը, մոդելավորելով իր վարքագիծը, սոցիալական դաշտում ինքնահաստատվում է ազգային արժեքաշահային համակարգի գոյության և դրա արդիականացման նպատակով կատարվող քաղաքական փոփոխուրյունների պայմաններում: Կարծում ենք, որ խմբային լիդերների պրոբլեմը կարևոր է նաև ՀՀ պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումների տեսանկյունից:

Քաղաքական համակարգի՝ ժողովրդավարացման «երրորդ ալիքի»^{**} շրջանակներում տեղի ունեցող կերպափոխման գործընթացում խմբային լիդերի հաստատության կայացման փորձաքարն են նրա նորամուծական (ինովացիոն) ընդունակությունը, իշխանության իրականացման մշակույթի վերաբերյալ նրա պատկերացումները, իշխելու պահանջմունքի հիմնավորումը, ինչպես նաև քաղաքացիների հետ երկխոսություն վարելու կարողությունը: Փաստորեն, ժողովրդավարական կերպափոխման գործընթացում լիդերի էությունը համակարգվում է

* Սոյն հոդվածում կիրապել են հայ քաղաքականների շրջանում ընդունված «լիդեր, լիդերություն» տերմինները «առաջավար, առաջավարություն» համարժեքների փոխարեն: – Խմ.:

** Ժամանակակից ժողովրդավարությունների կայացումն սատ երկրների և տարածաշրջանների քննարկվում է երեք ալիքների շրջանակներում, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է իր պատմական պայմաններով և առանձնահատկություններով, առանձին երկրներում և տարածաշրջաններում ժողովրդավարության ամրապնդմանը, իսկ ճյուններում՝ անհաջող փորձերով: Համաձայն Ս. Հանտինգտոն՝ առաջին ալիքը (1820–1926) ընդգրկել է 29 երկիր, երկրորդը (1942–1962)՝ 36 երկիր, իսկ երրորդը (1974), ընդգրկելով 100-ից ավելի երկրներ, իր զարգացման տարարմույթ փուլերով շարունակվում է մինչ օրս (տես C. Хантингтон. Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003, с. 368):

երկու տարբեր արժեքային չափումներով՝ **օգտավելիություն և նորմադիվություն:** Դրանք ժողովրդավարության որակի ապահովման ակունքներն են, որոնք մեծացնում են համագործակցային մշակույթի պահանջարկը: Մի կողմից՝ ժողովրդավարացման պայմաններում ազգային անվտանգության ապահովումը, բարեփոխումների բազմաչփությունը, մյուս կողմից՝ կերպափոխող հասարակություններում ինչպես քաղաքական տարածության ու ժամանակի տրոհվածությունը, այնպես էլ աններդաշնակ պատկերացումների առկայությունը որակական նոր մակարդակի են հասցրել խմբային լիդերի կայացման գործընթացում համագործակցային բաղադրիչի կարևորությունը:

Ներկայումս ՀՀ-ում ընթացող ժողովրդավարական կերպափոխումը և ազատական արժեքների արմատավորումը առաջ բերեցին նոր պրոբլեմներ՝ կապված ՀՀ-ում լիդերության հաստատության կայացման հետ, քանի որ այն անմիջականրեն առնչվում է ինչպես իշխանության իրականացման մշակույթի ժողովրդավարացման, այնպես էլ որոշումների նշանման, ընդունման և իրականացման հետ: Ակնհայտ է, որ ՀՀ-ում պաշտպանական բարեփոխումները տեղի են ունենում լիդերության հաստատության կայացման բարդ պայմաններում: Դա պայմանափորված է ոչ հեռավոր սոցիալիստական անցյալով և հակասականությամբ լիքուրժուականացվող ներկայության հայ իրականության մեջ կան լիդերներ, որոնք թեև արտահայտում են սոցիալական տարբեր խավերի, կուսակցությունների շահերը, այնուհանդերձ իրենց խաղային վարքագծով չեն նպաստում ո՛չ հայրենասիրական դաստիարակությանը, ո՛չ էլ հանրային շահերին: Վերոշարպրյալից հետևում է, որ ազգային, հանրային ու պետական շահերը անձնական շահերի հետ ներդաշնակելու նկատառումներով պետք է կարևորել խմբային լիդերի բազմաչափ էությունը:

Ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորման պայմաններում խմբային լիդերը դիտվում է որպես ազգային անվտանգության ուազմավարություն իրականացնող դերակատար, քանի որ ընտրությունների միջոցով խորհրդարան եկած և գործադիր իշխանությունում որոշակի աստիճանի դեկավարի կարգավիճակ ստանձնած կուսակցական ակտիվիստները մեխանիկորեն ձեռք են բերում պետական իշխանության լծակներ: Սակայն, ինչպես նշել է Ռ. Միխելսը, «ժողովրդավարական կուսակցությունների առաջնորդների անսահմանափակ իշխանության հայեցակարգը փաստարկման կարիք ունի, քանի դեռ լիդերը տեսականորեն կախված է զանգվածների կամքից: Վերջիններիս փոքր-ինչ դժգոհությունը կարող է պետական իշխանությունից կուսակցության առաջնորդի հեռացման պատճառ դառնալ: Այսինքն՝ ցանկացած պահի նա կարող է փոխարինվել կամ հեռացվել»¹: Այս մոտեցումը առանձնահատուկ դրսևորում է ստանում ժողովրդավարական կերպափոխման ժամանակ, քանի որ խմբային լիդերը կուսակցությունների մեկուսախմբային (կորպորատիվ) շահերը հիմնականում

¹ P. Mihelcic. Социология политической партии в условиях демократии. «Диалог», 1990, № 27.

օգտագործում է իր խնդիրները լուծելու համար. իր կուսակցության անդամներից կախումը հասցնելով նվազագույնի՝ նա կարողանում է ձեռնածության (մանիպույացիա) ենթարկել վերջիններիս գիտակցությունը: Ա. Մենեգետին նշում է, որ լիդերը համակարգում է կուեկտիվի գործունեությունը հանուն ընդհանուր շահերի: Նա ապահովում և իրականացնում է քաղմաքիվ գործողությունների, պահանջմունքների, հնարավորությունների և միջոցների միասնականությունը²: Ժողովրդավարական կերպափոխման ժամանակ խմբային լիդերի էությունը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ նրա գործառույթներն անմիջականորեն պետք է բավարարեն հետևյալ ելակետային պահանջներին:

- ունենան քաղաքական երկխոսություն վարելու կարողություն և համակեցության կանոնները պահպանելու ընդունակություն,

- կարողանան մատնանշել իրենց ներկայացվող ծրագրերի իրականացման ուղիներ և պատասխանատվություն կրել դրանց հետևանքների համար,

- ի վիճակի լինեն բարեփոխումներ իրականացնելու՝ պահպանելով «հանրային շահը համբողիանուրի բարիքն է» Ժ. Ժ. Ռուսոյի (1712–1778) սկզբունքը:

Փաստորեն կոնկրետ իրավիճակում խմբային լիդեր դառնում է նա, ով կարող է ժամանակի պահանջին համարժեքորեն «արդիականանալ»: Հենց այս պարագայում են հանդես գալիս ուժեղ, հանձարեղ և նույնիսկ քոյլ լիդերները: Ընդ որում՝ իրադրությունը կարող է «ստեղծվել» շնորհիվ կողոր լիդերի, իսկ ահա քոյլ լիդերը կարող է «ստեղծվել» շնորհիվ իրադրության: Յուրաքանչյուր իրադրություն տարբեր կարգի և ոճի լիդերների կարիք ունի: Հետևաբար, յուրաքանչյուր իրադրություն ծնում է իր լիդերին. «...Մեծ իրադրածությունները միշտ ել մարդու և ժամանակի ամուսնություն են»³:

Կախված այն բանից, թե ինչպես է տեղի ունենում իրադրություններով թելադրվող ռազմավարական խնդիրների լուծումը, լիդերները դասակարգվում են ըստ իրենց քարիզմայի (ունենալով մեծ հեղինակություն) կամ ըստ արդյունավետ կերպով կառավարելու ունակության, ինչով ապահովվում է խմբային շահերի համադրումը:

Ընդհանուր առմամբ գոյություն ունի մի օրինաչփություն. եթե որևէ սոցիալական խումբ կամ անհատ, ձգտելով իշխանության, կուսակցություն է ստեղծում կամ անդամագրվում որևէ կուսակցության և ստանում ժողովրդի աջակցությունը, ապա լիդեր դառնալու առավել մեծ հնարավորություն է ստանում քարիզմատիկ կամ իրեն որպես այդպիսին ներկայացնող անձը: Իշխանական հարաբերություններում որոշակի տեղ ու դեր գրավելուց հետո լիդերության հաստատության ուղղված մարտահրավերներին պատասխանում է այն անհատը, որն իր ռացիոնալ-իրավական (լեզվա) վարքագծով կարողանում է վերահսկել կառավարչական ապարատը և տնօրինել ֆինանսական ու իշխանական ռեսուրսները: Ժողովրդա-

² Տես A. Menegetti. Психология лидера. Изд. 4-е, дополненное. М., 2004, с. 39:

³ M. Mark, K. Пирсон. Герой и Бунтарь. Создание бренда с помощью архетипов. СПб., 2005, сс. 18 – 19.

վարական կերպափոխման ընթացքում որոշակի պատմական էվոլյուցիայի հետևանքով առաջացող լիդերությունը ենթադրում է.

ա) հասարակական շարժումներ, որոնք ուղեկցվում են լիդերի ի հայտ գալով,
բ) շահային խմբերի կազմավորում, դրանց ծրագրերի, կազմակերպական սկզբունքների մշակում,

գ) ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական հանրային ու քաղաքական հարաբերությունների պահպանում,

դ) բոլոր մակարդակների իշխանական հարաբերություններում տեղ գրավելու համար մղվող պայքարում մասնակցություն հանրային և պետական կառավարման գործընթացին, ինչի հետևանքով լիդերները դառնում են ընդունված որոշումների իրականացման համար պատասխանատու,

ե) կառավարման ընթացքում բարոյական սկզբունքների պահպանում և ներդաշնակում:

Նման մոտեցումը նպաստում է խմբային լիդերի կայացմանը և հնարավորություն է տալիս պատասխանելու հետևյալ հարցերին՝ **ով, ինչու, ինչպես** դարձավ լիդեր: Ուստի ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է կարևորել խմբային լիդերի ոչ միայն հոգեբանական առանձնահատկությունները, այլև նրա իրավաբարական գիտակցության մակարդակը, հակվածությունը նորարարությանը, ինչպես նաև իշխանության իրականացման կուլտուրան: Այս առումով նպատակահարմար ենք համարում ներկայացնել ամերիկացի քաղաքացին Մարգարետ Հերմանի կողմից առանձնացված այն բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են խմբային լիդեր դառնալու համար.

1. պատմականությունը, որի համատեքստում իրականացվում է սերնդի հայրենախրական ու քաղաքացիական դաստիարակությունը,

2. լիդերի հոգեբանական բնութագիրը (վերաբերմունք իշխանության և նրա դրսևորումների նկատմամբ, մարդկանց նկատմամբ վերահսկողություն ունենալու շահագործությունը, ձեռքբերումներ ունենալու մղումը, ինչպես նաև խոցելի խմբերի անդամներին՝ որպես քաղաքացիների կայացմանն աջակցելու պատրաստականությունը),

3. լիդերի հարաբերությունները իր համախոհների, կողմնակիցների և հետևողների հետ,

4. իրավիճակային վերլուծություններում լիդերի օգտագործած բառամբերքի համապատասխանությունը լավ կառավարման սկզբունքներին (աջակցություն, մասնակցություն, խոսքի և գործի ներդաշնակում, իրավունքի գերակայություն, համագործակցության մշակույթ):⁴

Կարևորելով լիդերի հոգեբանական բնութագրիչները՝ Մ. Հերմանը դրանք բաժանել է հետևյալ խմբերի.

ա) հիմնային համոզմունքներ,

⁴Տես Մ. Չ. Խերման. Составные части лидерства. Политология вчера и сегодня. Вып. 2. М., 1990, сс. 179 – 180:

թ) կառավարման ոճ (օրինակ՝ միայնակ կամ խմբային աշխատանք, հոեսուրություն, տեղեկույթի հավաքում և վերլուծություն),

գ) վերաբերմունք ստրեսների և ճնշումների նկատմամբ,

դ) կառավարման փորձ,

ե) սոցիալ-քաղաքական մքնություն, որում ձևավորվել է լիդերը⁵:

Ակնհայտ է, որ Հերմանի կողմից մշակված այս համակարգը կառուցվածքային առումով ունի իր ներքին տրամաբանությունը, ըստ որի՝ հասարակությունում առկա քաղաքական մշակույթը ստեղծում է այն հոգեբանական բնութագրիչների դաշտը, որոնք լիդերին հնարավորություն են տալիս հասնելու իշխանության բարձունքներին՝ նպաստելով ազգային անվտանգության ապահովմանը: Նկատի ունենալով վերոհիշյալը՝ Հերմանը ժողովրդավարացման գործընթացում տարերակել է դրոշակակիր, առևտրական, խամաճիկ և հրշեց լիդերների:

Դրոշակակիր լիդեր: Որպես խոշոր ռազմավար և մարտավար՝ նա, լսելով իր ներկայացրած ծրագրի իրականացման վերաբերյալ համախնների կարծիքները, վերջնական որոշումը կայացնում է միանձնյա: Այս տիպի լիդերն աշքի է ընկնում աշխարհբունմամբ և աշխարհաճանաչողությամբ:

Առևտրական լիդեր: Ընտրողներին «վաճառելով» իր գաղափարներն ու մշակած ծրագրերը՝ նա իշխանական հարաբերություններում տեղ գրավելուց հետո խոստանում է աջակցել նրանց: Նման լիդերներին բնորոշ առանձնահատկությունն է համոզել բոլորին, որ իրենց միջն կնքվող գործարքը ամենաօգտավետն է:

Խամաճիկ լիդեր: Որպես որոշակի խավի, խմբի շահերի արտահայտիչ՝ նա ձգուում է քաղաքին նույնիսկ այն դեպքում, եթե չունի համապատասխան հատկանիշներ: Նման լիդերները զարդնեց չիննելու համար հաճախ իշխանություն են իրականացնում՝ առաջնորդվելով «Քաժանեա», «Հաց և զվարճանք» կարգախոսներով:

Հրշեց լիդեր: Շիշու ժամանակին արձագանքերվ հասարակության պահանջներին՝ կարողանում է տնօրինել և ձկուն կերպով փոփոխությունների ենթարկել քաղաքական դաշտը, վարժ ու արագ մարել պատեհորեն ու անպատեհորեն ծագած «հրդեհները»⁶:

Զննարկվող տիպերը երբեք հանդես չեն գալիս մաքուր տեսքով և ենթադրում են՝

ա) իշխանության համար պայքարելու պատրաստ որոշակի խմբերի առկայություն,

թ) այդ խմբերի կազմակերպվածություն, ինչը մեծացնում է նրանց կարողությունները,

զ) այդ խմբերում լիդերների առկայություն, ի դեպ, այդպիսի խմբեր կարող են լինել քաղաքական կուսակցությունները, զանազան հասարակական միավորները, շահային խմբերը և այլն:

⁵ Տես նոյն տեղում:

⁶ Տես նոյն տեղում, էջ 201, 203–204:

Այս մոտեցմամբ լիդերությունը կարելի է դիտել որպես ղեկավարում, իսկ լիդերին՝ որպես ղեկավարի, քանի որ ժողովրդավարական կերպավոխումը ենթադրում է անընդհատ փոփոխություններ՝ իշխանության իրականացման և համագործակցության մշակույթի ապահովման նկատառումներով։ Հետևաբար լիդերությունը ենթադրում է՝

- ա) լիդերության ձեռքբերում, ստանձնում,
- բ) լիդերության իրականացում ու կիրառում,
- գ) լիդերության պահպանում։

Որոշիչ է լիդերության ձգտող անհատի՝ որպես ազգային արժեքաշահային համակարգի բնականոն արդիականացման արտահայտչի սոցիալ-հոգեբանական էության հիմնախնդիրը։ ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոփոխումների համատեքստում խմբային լիդերի կայացման համար անհրաժեշտ են հետևյալ որակական առանձնահատկությունները.

- սուր միտք, զարգացածություն, մտավոր մեծ կարողություններ,
 - ամուր կաճք և նպատակապահություն,
 - կենսունակություն և բնականոն կերպով արդիականանալու ընդունակություն,
 - կազմակերպչական կարողություններ,
 - հեղինակություն, բազմակողմանի իրազեկվածություն և ունեցած տեղեկություն օգնությամբ համակարգային կանխատեսումներ կատարելու կարողություն,
 - որոշումների կայացման համար պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամություն,
 - վստահություն ներշնչելու ունակություն,
 - արտաքին գրավչություն, հազնելու և խոսելու ոճ, լուսանկարչական ապարատների և տեսախցիկների առջև ճիշտ կեցվածք ընդունելու կարողություն,
 - հետևողիներին ովկուրելու և խրախուսելու կարողություն,
 - միջանձնային հարաբերությունների ձևավորման և պահպանման ունակություն,
 - հակվածություն նորարարությանը, շրջապատի պահանջմունքների և քաղաքական իրավունքների զարգացումների կանխատեսում,
 - կայունություն՝ առանց ընդդիմախոսների առջև տատանողականության դրսւորման,
 - քարիզմա՝ մարդկանց մեջ դրական ընկալումներ առաջացնելու առումով,
 - լիազորությունների մի որոշ մասը հետևողիներին փոխանցելու հետ կապված ոյսկի դիմելու ունակություն,
 - ճկունություն, փորձի և նոր մտահղացումների վրա հենվելու կարողություն,
 - վճռականություն, եթե դա պահանջում է իրավիճակը։
- Այս որակական հատկանիշների մեծ մասը ձեռք է բերվում լիդերության ընթացքում։ Ոխտի խմբային լիդերության համար պահանջվող հիմնական որակներից են՝

1. ռազմավարական մտածողությունը,
2. աշխատանքային թիմի ձևավորման, ղեկավարման և դրա հետ համագործակցելու կարողությունը,
3. քարիզման, որը ենթադրում է դրոշակալիք, առևտրական, խամաճիկ և հրշեց լիդերների հատկանիշների գույքակցում,
4. իրավիճակի բազմաչափ գնահատման և տարաբնույթ ռեսուրսների հայքարման համար վերլուծության ու կանխատեսման կարողությունը,
5. ռազմավարական նպատակներին հասնելու համար նորարարության ունակությունը:

Ժողովրդավարական կերպափոխման գործընթացում խմբային լիդերին անհրաժեշտ այս հատկությունները ձևավորվում են տեխնոլոգիական ու տեղեկատվական միջոցների հետագա զարգացումներին համընթաց: Այդ միջոցները ենքարիզմում են վոլոֆինման հանուն **լիդերության պահպանման**⁷: Կառավարման համակարգում գտնվող ցանկացած լիդեր միշտ ենթարկվում է իրենից մեկ քայլ հետ գտնվողների ազդեցությանը, քանի որ վերջիններս ևս, հատկապես՝ զիսապտույտ կերպով ազատականացող իրականությունում, պրորեմների նկատմամբ նորարարական վերաբերմունք ցուցաբերելու պատճառով ձգտում են ձեռք բերելու «առաջինը հավասարների մեջ» կարգավիճակ⁸:

Այս խնդիրների համատեքստում կարևորում ենք խմբային լիդերի գործառույթները՝ իրենց ներքին և արտաքին դրսնորումներով: Եթե ներքին բաղադրիչը որպես կանոն կապված է ներգերատեսչական կառավարման հարցերում լիդերի լիազորությունների և պարտականությունների հետ, ապա արտաքին բաղադրիչն իրականացվում է հասարակության կամ այլ կառույցների հետ հարաբերություններում, որտեղ և դրսնորվում են լիդերի ունակությունները՝ լուծելու ազգային անվտանգության ռազմավարության նպատակային խնդիրները: Այս մեխանիզմում որոշիչը վերլուծական և ախտորոշման գործառույթն է, որի միջոցով լիդերը կարևորում է տարաբնույթ ռեսուրսների օգտագործման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

Ռազմավարական գործառույթը⁹ որպես լիդերի հիմնական գործառույթներից մեկը, առաջին հերթին արտահայտում է նրա կարողություններն ու ունակությունները: Ենթարկվելով արտաքին միջավայրի և իրավիճակի հնարավոր փոխակերպումների ազդեցությանը՝ այս գործառույթը լիդերին հնարավորություն է տալիս մշակելու որոշումների ընդունման և կատարման յուրօրինակ մեխանիզմներ՝ համախմբելով քաղաքական դաշտում իրեն աջակցող ուժերը:

Ինքնուրային գործառույթը ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բաղադրիչներ: Ներքին բաղադրիչը կապված է այն կարծիքների և տեսակետների համաձայնեցման հետ, որոնք ժողովրդավարական կերպափոխման ընթացքում

⁷Տես Մ. Մարկ. Կ. Փիլոսոփ. նշ. աշխ., էջ 227 – 228:

⁸Տես Э. Берн. Лидер и Группа. О структуре и динамике организаций и групп. Екатеринбург, 2001, с. 223:

արտահայտվում են բազմաբնույթ սոցիալական խմբերում: Արտաքին բաղադրիչը պայմանավորված է այլ կուսակցությունների և խորհրդարանական խմբակցությունների, բլոկների և հասարակական-քաղաքական շարժումների հետ հարաբերությունների հատակեցման խնդիրներով: Ընտրազանգվածի հետ համագործակցության և երկխոսության միջոցով այս գործառույթը, անկախ իր զաղափարական արժեքային բովանդակությունից, ինչպես նշել է Օ՛Դոննելը, ենթադրում է, որ «լիդերը ազգային միարանության մարմնավորումն է»: Առաջ քաշելով «դեեզատիվ ժողովրդավարության»* հայեցակարգը՝ Օ՛Դոննելը այն կարծիքն է հայտնում, որ եթե կերպափոխման գործընթացը չի տեղափորվում ժողովրդավարացման արժեքային համակարգում, ապա ավելի մեծ չափով է ենթարկվում *մրցակցային խմբիշխանության* (օլիգարքիսայի) լրացմարանությանը: Լիդերը կոչված է արդիականացնելու ազգային արժեքային համակարգի քաղաքական էությունը՝ այդ տրամարանությունը բացառելու նպատակով:

Հաղորդակցական գործառույթը պայմանավորված է խմբային լիդերի և տեղական կառույցների դեկավարների ու ակտիվ անդամների միջև գոյուրյուն ունեցող անձնական, ինչպես նաև հասարակության լայն զանգվածների հետ բազմազան շարժառիթներով ծնավորվող կապերով: Այս բազմաչափ գործընթացի շնորհիվ խմբային լիդերի և զանգվածների միջև հաստատվում է փոխադարձ վստահություն, որն էլ կարող է խմբային լիդերի կարգավիճակը վերափոխել հասարակության լայն զանգվածների ճանաչմանն արժանացած քարիզմատիկ քաղաքական լիդերի կարգավիճակի:

Գաղափարական գործառույթը արտահայտում է քաղաքական շուկայում լիդերի ներկայացրած մտահղացումների, ծրագրերի ու գաղափարների մրցունակությունը: Առաջարկի և պահանջարկի հիմնախնդիրների հաշվառմանը այդ շուկայի միջոցով է փոխսհամաձայնեցվում իշխանության հաստատությունների գործունեությունը՝ լիդերի և շուկայում գործող քաղաքական այլ դերակատարների գործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Լիդերը՝ որպես արդարամիտ միջնորդ դատավոր և հովանավոր (*patron*), պարտավոր է հսկման, խրախուսման և պատժամիջոցների օրինական կիրառման միջոցով քաղաքացիներին զերծ պահել անօրինականությունից, բյուրոկրատական քաշըշուկից և կարգ պաշտպանել:

Նորարարական գործառույթը: Քաղաքական դաշտի հարաբերական կայունության պայմաններում լիդերը, դառնալով նորարար, *հասարակության ընկալանոն զարգացման համար* մշտապես առաջադրում է նոր զաղափարներ ու նպատակներ: Հասարակության սոցիալական օրգանիզմում գիտակցարար

* Հեկագալիկի ժողովրդավարությունը քաղաքական զարգացման ընթացքում տեղի ունեցող հաստատութեանական փոփլստությունների հետևանքով ստեղծված մի իրավիճակ է, որը, ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն անցման ժամանակ ստանալով խառնածին (ավտորիտարիզմ, ամբողջատիրություն, ժողովրդավարություն) բռնույթը, չի նպաստում իրավունքի և օրենքի գերակայության հաստատմանը (տես Գ. Օ՛Դոնիել. Դելեгատивная демократия (www.polit.susu.ac.ru/docs/modul2.rtf):

Աերդրելով նոր զաղափարներ՝ լիդերը մշակում է նոր ռազմավարական ծրագրեր, որոնց միջոցով ապահովում է քաղաքական կայունությունը: Ծավալելով նորարարական գործունեություն՝ լիդերը, որպես կանոն, այն ուղղում է ապագային, իսկ նորարարության իրատեսականությունը պետք է հաշվարկելի լինի անհրաժեշտ ռեսուրսների առկայության դեպքում: Սակայն նորարարությանն ուղղված անմիջական գործունեությունը առաջ է բերում ամենօրյա խնդիրներ, որոնք պահանջում են անհատական լուծումներ: Կերպափոխման գործընթացում նորարարական խնդիրների լուծումները սոցիալական խնդիրի համար ունեն ընթացիկ նշանակություն, քանի որ դրանց անտեսման դեպքում հասարակությունը այլևս չի վստահի կառավարող ընտրախսավի ռազմավարական ծրագրերին ու խոստումներին: ՈՒԽՏԻ խմբային լիդեր կարելի է դառնալ՝ կանխատեսելով կամ նպատակային ուսումնասիրություններով պարզելով լայն զանգվածների շահերը և իր հոգևոր արժեքները համապատասխանեցնելով նրանց պահանջմունքներին: Կանխատեսումը լիդերին հնարավորություն է տալիս քաղաքական մարկետինգի* սկզբունքների համաձայն իրականացնելու կառավարում, որի ընթացքում որոշում կայացնելիս նա՝ որպես անձնավորություն, պետք է պատրաստ լինի փորձագիտական նյութի միջոցով կատարված կանխատեսումների ընդունման ու սոցիալքաղաքական դաշտում առկա արժեքաշահային համակարգի փոխներդաշնակման վերաբերյալ սոցիալական երկխոսություն վարելուն և իր համոզմունքների համաձայն պատասխանատվություն կրելուն:

Միայն այս պարագայում լիդերի կերպարանքն իր կառուցվածքային քաղմաշափ բովանդակությամբ հանդերձ կարող է համապատասխանել ժամանակի մարտահրավերներին՝ նրբունակ մեխանիզմներ մշակելով, մի կողմից, հասարակական կայերի ապահովման, մյուս կողմից՝ ազգային անվտանգության պահպանման ուղղված որոշումների արդյունավետ իրականացման համար: Փաստում, քաղաքական մարկետինգի օգնությամբ հասարակությունը հնարավորություն է ստանում իր իրագեկության մակարդակին համապատասխան ընտրելու ոչ միայն քաղաքական կուսակցությունների գործունեության ծրագրերն ու դրանց լիդերներին, այլև խմբային լիդերների նկատմամբ դրսերելու դիրքորոշումներին վերաբերմունք: ՈՒշագրավ է քաղաքագետ Ֆ. Իլյասովի մոտեցումը ժողովրդավարական կերպափոխման գործընթացում քաղաքական մարկետինգի՝ որպես քաղմանակարդակ համակարգի նկատմամբ: «Քաղաքական լիդերի մարկետինգը մի համակարգ է, որը ներառում է քաղաքական լիդերի բնութագրական տվյալները և այն տեղեկատվական մեխանիզմները, որոնք ուղղված են նպատակային ծևով ընտրված լսարաններին՝ ընտրություններում նրանց առավելագույն ձայններն ստանալու համար»⁹:

* Քաղաքական մարկետինգի առաջին հերթին հզր և նպատակամդված ագրեցություն է, որը, ներկայացնելով մրցակից լիդերների սոցիալական ու ազգային արժանիքները, հասարակական լայն խմբերին ստիպում է հետաքրքրություն ցուցաբերել նրանց նկատմամբ:

⁹ Ф. Н. Ильясов. Политический маркетинг, или как «продать» вождя. «Полис», 1997, № 5.

Իրականում խմբային լիդերի կայացումը պարունակում է ավելի մեծ քվով չափումներ, քանի որ քաղաքական համակարգի յուրաքանչյուր հաստատություն, օգտագործելով իր ունեցած կուսակցական ցանցը, ստեղծում է սոցիալական խմբերի վրա դրական ազդեցություն ունեցող այնպիսի լիդերների կերպարներ, որոնց շնորհիվ ընդարձակում է իր ընտրազանգվածը: Այս նկատառումներով (համաձայն Մ. Վերերի «իդեալական տիպերի» տեսության) մենք փորձել ենք համակարգել խմբային լիդերի հիմնական հասկանիշները (տես աղ.):

Օգտագործելով նշված հատկանիշները՝ կարող ենք քննարկել լիդերության հետևյալ հնարավորությունները.

1. Լիդերությունը՝ որպես սոցիալական հարաբերությունների ցանկացած մակարդակում տեղ ապահովող ազդեցություն, հեղինակություն և վերահսկողություն,

2. Լիդերությունը՝ որպես կառավարչական կարգավիճակ, որը, սոցիալական դիրք ապահովելով, հնարավորություն է տալիս որոշումներ կայացնելու և իրականացնելու, ընդամին խմբային լիդերը կազմակերպում, վերահսկում, խրախուսում, պատժում կամ ուղղորդում է կողեւկտիվ վարքը,

3. Լիդերությունը՝ որպես քաղաքական գործունեության հաստատութենական դրսևորում, տնօրինում է քազմաշափ ռեսուրսներ և արժեքներ, ընդամին խմբային լիդերը, մրցակցային պայքարում ստանձնելով պատասխանատվություն քաղաքական ծրագրերի և ընդունված որոշումների իրականացման համար, որպես նորարար և ձեռներեց՝ հակված է երկխոսության:

Խմբային լիդերի քազմաշերտ դերակատարման կայացման համար նպատակահարմար ենք համարում համագործակցության մշակույթը դիտարկել սոցիալական ցանցերի հիման վրա: Այս մոտեցումը արդյունավետ է, քանի որ ժամանակակից քաղաքական գիտության մեջ քննադատվում է համագործակցության միաշափությունը, իսկ Մ. Դուգլասը արդիականացրել է «համագործակցական ցանցերի» քազմաշափություն ենթադրող հին կտակարանային տեքստը¹⁰:

Ցանցերը սոցիալական բյուրոկրատական ապակենտրոնացման միջոցով քազմակարծության հաստատման, քաղաքացիների շահերի արտահայտման և անվտանգության պահպանման անմիջական կրողներ են: Ցանցի անդամներն աշխատում են պահպանել ուժերի հավասարակշռությունը և ներխմբային խնդիրների լուծման ժամանակ լիդերի են ընտրում՝ միմյանց անվտանգությունն ապահովելու ակնկալիքով: Նկատի ունենալով պատմության հոլովույրում այս մեխանիզմի գործունեության արդյունավետությունը՝ Մ. Դուգլասը վերանայեց անվտանգության ապահովման Հիրամի* ցանցային բորզը¹¹ (տես նկ. 1): Ծարտա-

¹⁰ Տես A. B. Олескин. Сетевые структуры современного социума с точки зрения биополитики. «Полис», 1998, № 1:

* Հիրամի անունը, նաև՝ HIRAMA – High Intensity Research and Management Association (Մեծ արդյունավետության հետազոտությունների և կառավարման միություն՝ ՄԱՀԿՍ):


¹¹ Տես նոյն տեղում, էջ 80:

Աղյուսակ
ԽՄԲԱՅԻՆ ԼԻԴԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԸ

Կառուցվածքի բաղկացուցիչներ	Խմբային լիդերին բնորշ հատկանիշներ և վարք	Անկալվող արյունքներ
Սոցիալ-հոգեբանական	հեշտությամբ բռնկվում է, բախումնածին է, նենգ է կամ բարի, հակված է երկխոսության կամ մենախոսության	ճնշում կամ խրախուսում է մրցակիցների և ենթականների ուղիղության գործունեության կարողությունները՝ հասանալով վախի կամ հանդուժողականության մքնողորոտ
	ինքնավստահ է, տիրապետում է հուստորական արվեստին և հակված է նորարարության	լիդերի հետևից «զնալու» համոզության ենթականների մեջ առաջացնում է ոչ միայն նրան կողմնակից, այլև բարեկամ լինելու պահանջնունք
Գոյաբանական	ունի լիդերին բնորշ արժեքաշահային համակարգ	ընտրող զգայական մակարդակում ընդունում է նրա լիդերության իրավունքը
	ունի «համապատասխան» հեղնակալություն և գիտելիքներ	ընտրողը ուսցիունալ-գիտակցական մակարդակում ընդունում է նրա լիդերության իրավունքը
Ուզմավարական	ունի միավորող գաղափարներ ու մտահետացումների ունակություններ, այդ բվում՝	
	ա) վախեցնող («ձեր շուրջը միայն թշնամիներ են», «ձեզ սպառնում է որոշակի վտանգ», «ձեր ապագան վտանգված է» և այլն)	առաջանում են տագնապի զգացողություն, վախ, անօգնականության գիտակցում, ապագայի նկատմամբ որոշակի մտավախություններ
	բ) հանգստացնող («մենք ուժեղ ենք, և մենք կհարթենք», «մեր ուժին ճիշտ է», «դու մեր համախոհ ես, և մենք կփրկենք ձեզ այս վիճակից» և այլն)	առաջանում է լիդերի հետ նույնականացման զգացողություն, ուժի և աջակցության պահանջնունք, սպառնալիքներից «կողեկտիվ» կերպով խուսափելու կամ հաղթահարելու ցանկություն
	գ) գրավող («դու կստանաս այն, ինչ երազում ես»)	առաջ է թերում երախտագիտության և հարգանքի զգացում

բապես Հիրամը Երուսաղեմում Սորոնմն Իմաստունի տաճարը կառուցելու համար հավաքում է տարբեր էրնիկական պատկանելությամբ վարպետների, նրանցից կազմում աշխատանքային խմբեր և նրանց միջև հարաբերությունների անկայունությունը (անվստահությունը) կանխելու նպատակով կատարում է աշխատանքի բաժանում՝ պահպանելով նրանց ստվորույթները, կրոնածիսական առանձնահատկությունները: Ցանցային համակարգի առանձնահատկություններով օժտված այդ կառույցի աշխատանքային խմբերի կազմակերպիչները, անկախ իրենց էրնիկական պատկանելությունից, հանդիպում էին «կլոր սեղանի» շուրջ՝ Հիրամի հետ քննարկելով Սորոնմն Իմաստունից ստացած հրահանգների արյունավետությունը:

յունը, քանի որ դրանց անթերի կատարման համար պահանջվում էր վարպետների սերտ համագործակցություն: Այդպիսով Հիրամին հաջողվեց ստեղծել մի ցանցային համակարգ¹², որը Սոլոմոնին հնարավորություն տվեց ուղղահայաց և



Նկ. 1. ՀԻՐԱՄԻ ԲՈՒՐԳԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.
կայունության իրավիճակային գծապատկեր

Ս' ստեղծագործող լիդեր, ԱՆ՝ անհրաժեշտ անդամներ, Հ՝ հյուրեր, որոնք համագործակցում են տեղեկույթ ստանալու նպատակով, ՀԲ՝ հոգեբանական լիդերներ, որոնք խաղային տրամարանությամբ կամ կայունություն են պահպանում, կամ հակասություններ սերմանում, Ար՝ արտաքին կապերի իրականացման լիդեր:

Կոր հետազծերով պատկերված են այն տարածքները, որտեղ հանդիպում են կայունության և անվտանգության երաշխավոր դերակատարները:

Համագործակցության տիպերը՝ խմբային լիդերություն
 հորիզոնական ցանցային կապեր ապահովող լիդերներ

հորիզոնական սկզբունքների համաժամանակյա կիրառմամբ ապահովելու ամբողջ տարածքի անվտանգությունը և դրանով իսկ ապակենտրոնացնելու իր իշխանությունը՝ տիրելու հավակնություններ ունեցող խմբային լիդերների գիսավորությամբ: Հիրամի ցանցային համագործակցության մողելը ենթադրում է առանձին ենթախմբերի անվտանգության ապահովում՝ աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը միտված գրղծառութային բաժանման միջոցով: Քանի որ կա խմբային լիդերների «կառույցի» կայունության և անվտանգության ապահովման պրոբլեմը, ապա սոցիալական ցանցերի առկայությունն ստիպում է ընդունել հետևյալ կենսասոցիալական սկզբունքները.

¹² Տես Ա. Վ. Օլեսկին, 62. աշխ., էջ 81:

• **ապակենդրոնացված ասղիճանակարգություն**, որը հնարավորություն է տալիս ընդլայնելու մրցակցային մասնակցության հիմունքների վրա զարգացող սոցիալական ցանցերի անվտանգ գործունեությունը,

• **բազմադերային կառավարման դաշտ**, որում քննարկումների և ընդհանուր շահերի ռացիոնալացման շնորհիվ ընդունվում են համընդհանուր անվտանգությունն ապահովող բանաձևներ,

• **հեփեռղական ուշադրություն**, որի շնորհիվ ձևավորվում է հոգեբանական հանդուրժողականություն՝ ուրվագծելով փոխօգնության և փոխլրացման կարևոր երևույթների մուտքը անվտանգության դաշտ:

Ցանցային համակարգի հիրամյան ճարտարապետության համաձայն՝ խմբային լիդերների պարագայում հնարավոր է մեծացնել աշխատանքի արդյունավետությունը՝ ապահովելով համագործակցության վրա հիմնված անվտանգություն։ Խմբային լիդերը՝ որպես սոցիալական ցանցի արժեքաշահային համակարգի քնականոն արդիականացման համար պատասխանատու, գրադարձ է կոնկրետ երևույթի առանձին հատվածի ուսումնասիրությամբ՝ այդ ուղղությամբ կենտրոնացնելով իր ուժերը, ընդունակությունները, կարողությունները և ապահովելով հասարակական անվտանգության համակարգի արդյունավետությունը։

Կառավարման ապակենտրոնացումը, սոցիալական ցանցի անդամների միջև հորիզոնական հարաբերությունների հաստատումը, բազմադերային լիդերների առկայությունը հասարակությանը հնարավորություն են տալիս, քաղաքական դաշտում պահպանելով կայունություն, ռացիոնալացնելու առկա իրողություններին արվող գնահատականները։ Հիրամի ցանցային կառավարման մոդելը այսօր մասնակիորեն կիրառվում է ցեղային կամ էթնիկական խմբերի առաջնորդների միջոցով հանրային անվտանգությունն ապահովելու համար։ Այս հանատեքստում սոցիալական և քաղաքական ցանցերն սկսեցին համագործակցել որպես բազմավեկտոր կայունության միավորներ։ Սակայն ժողովրդավարական կերպափոխման հետմողեռնիստական մեկնաբանություններում, ցանցային սկզբունքի հիմն վրա քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման զարաֆարները մինչ այժմ ստանում են տարրեր գնահատականներ՝ կախված համընդհանրացման գործնթացների վերաբերյալ գոյություն ունեցող տարարնույթ դիրքորոշումներից (գլոբալիստներ, հակազդորակիստներ)՝¹³։

Փաստորեն, խմբային լիդերների ցանցային հայեցակարգն իր բազմաչափ դրսևորումներով հանդերձ կայունության և անվտանգության նկատմամբ իր ռազմավարությունը կառուցում է՝ եկանելով պետության ու հասարակության, հասարակական կյանքի հանրային ու մասնավոր հատվածների միջև նոր աշխարհակարգի ձևավորման արժեքաշահային բնույթով պայմանավորված համագործակցային մշակույթից։ Վերջինս, ներառելով քաղաքական զարգացմանը մասնակցող դերակատարների (կառավարող ընտրախավ, ճնշման խմբեր, լիդերներ,

¹³Տես B. M. Sergeev, A. C. Kuzymin, B. D. Nечаев, E. C. Алексеенкова. Доверие и пространственное взаимодействие социальных сетей. «Полис», 2007, № 2:

ընտրազանգված, կուսակցություններ) զիտակցված համագործակցությունը, հանդես է գալիս որպես ժամանակատարածական հատուկ շարունականության մեջ ինքնադրսնորվող, պատմաքաղաքական զարգացման ժառանգականություն և հաջորդականություն ապահովող երևույթ: Վերջինս՝ որպես հանրային ոլորտում վարքի ձևերի ամրողություն, մարմնավորում է քաղաքական կյանքի զարգացման նպատակների մասին արժեքաշահային պատկերացումների համակարգը՝ ապահովելով պետության ու հասարակության միջև հարաբերությունների պահպանման համար անհրաժեշտ համագործակցության մշակույթը: Իսկ նման մշակույթը հատուկ է այն հասարակություններին, որոնց անդամները կողմնորոշված են դեպի քաղաքական համակարգի «մուտքեր» (ազդեցության տարաքննույթ մեխանիզմներ) և «ելքեր» (կայացրած որոշումների նկատմամբ վերաբերմունքի դրսնորման տարաքննույթ ձևեր), մասնավորապես՝ վարչական կառույցներ և գործընթացներ: Այսինքն՝ համագործակցության մշակույթը դրված է քաղաքացիական հասարակության կայացման հիմքում, որի ընթացքում անհատները, մասնակցելով քաղաքական որոշումների ընդունմանը, ապահովում են քաղաքական կայունության ռացիոնալ և իռացիոնալ դրսերումների ներդաշնակ զարգացումը¹⁴: Համագործակցության մշակույթը, ընդարձակելով սոցիալական ցանցերի համագործակցային տիրույթը, ներառում է և՝ զորալ քաղաքակրթության ընդհանուր արժեքային համակարգը, և՝ քաղաքացիների կողմից քաղաքականությանը մասնակցության ընդունակությունը, և՝ մարդու իրավունքների ու պարտականությունների օգտագործման անհրաժեշտությունը, և՝ ժողովրդավարական քաղաքական համակարգի արժեքայնությունը:

¹⁴ Stein G. Almond, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон. Сравнительная политология сегодня: мировой обзор. Под ред. М. В. Ильина. М., 2002, сс. 102 – 103:

**СУЩНОСТЬ ГРУППОВОГО ЛИДЕРА
В ПРОЦЕССЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО ПРЕОБРАЗОВАНИЯ
В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА**

М. М. МАРГАРЯН, доктор политических наук, заведующая кафедрой
политического управления и политического анализа
Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

В процессах демократических трансформаций решающим фактором является роль группового лидера. Из этих соображений в статье рассмотрены стратегические интеллектуальные иправленческо-бюрократические качества лидеров, так как необходимость непрерывного реформирования и соблюдения принципов стратегии национальной безопасности предполагает ценностную многомерность. В статье в контексте осуществляемых в РА оборонных реформ рассмотрена задача конвергенции

национальных и общечеловеческих ценностей, при которой групповые лидеры получают возможность целенаправленно реагировать на существующие вызовы, проявляя инновационные подходы.

Выдвинутая американским политологом Маргарет Герман типология лидеров: «знаменосцев», «торговцев», «марионеток» и «пожарников» – используется для обобщения социально-психологических особенностей, обуславливающих качественные параметры групповых лидеров.

Групповые лидеры как создатели и носители сетевого управления получили возможность в целях сохранения лидерства регулировать свои функции, выделяя их стратегические, коммуникационные и инновационные составляющие. Их наличие даст возможность групповым лидерам обеспечить выполнение принципов военно-патриотического воспитания в рамках оборонных реформ РА с гармонизацией национальных и общечеловеческих ценностей. Только в этом случае имидж группового лидера своей структурной многомерностью будет соответствовать вызовам времени путем разработки конкурентоспособных механизмов обеспечения общественных связей, с одной стороны, и в целях эффективной реализации принятых решений – с другой стороны.

Таким образом, процесс институционального и социально-психологического становления группового лидера в интересах повышения эффективности оборонных реформ РА предполагает ценностную многомерность, поскольку посредством сетевого и иерархического управления эти лидеры становятся носителями модернизации этнической самости. Эффективность данного подхода обуславливается применением пирамиды Хирاما, что даст групповым лидерам возможность осуществлять управление в вертикальной и горизонтальной плоскостях в границах культуры сотрудничества.

THE NATURE OF A TEAM LEADER IN THE PROCESS OF DEMOCRATIC TRANSFORMATION IN THE CONTEXT OF THE RA DEFENSE REFORMS

*M. M. MARGARYAN, Doctor of Political Sciences,
Head of the Chair of Political Administration and Political Analysis
of the RA Public Administration Academy*

SUMMARY

The role of a team leader is a key factor in the processes of democratic transformations. In this article the strategic intellectual and administrative-bureaucratic qualities of leaders are examined in these terms, since the necessity in continuous reforming and adhering to the principles of the national security strategy assumes multidimensional values. In the article the convergence problem of national and human values is examined in the context of the defense re-

forms being implemented in the RA, at which team leaders get an opportunity to give a directed response to the existing challenges displaying innovative approaches.

The typology of leaders – «standard-bearers», «merchants», «puppets» and «firemen» – proposed by the American political scientist Margaret German is used to generalize social-psychological features determining qualitative parameters of team leaders.

Team leaders as creators and bearers of network management got a chance to regulate their functions in order to keep leadership, earmarking their strategic, communication and innovative components. Their presence will give an opportunity to team leaders for ensuring the fulfilment of principles of the military-patriotic education within the framework of the RA defense reforms with the harmonization of national and human values. Only in this case the image of a team leader in its structural multidimensionality will conform with time challenges through the elaboration of competitive mechanisms for ensuring public relations on the one hand, and for effective realization of the taken decisions – on the other.

Thus, the process of institutional and social-psychological formation of a team leader in order to increase the efficiency of the RA defense reforms assumes multidimensional values since these leaders become the bearers of the modernization of ethnic identity through the network and hierarchical management. The efficiency of the given approach is conditioned by using Hiram's pyramid that will provide a chance to team leaders to implement administration in vertical and horizontal planes within the boundaries of the cooperation culture.

ԷՆԴՀԱՆՈՒԹ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ОБЩИЕ СТАТЬИ

GENERAL ARTICLES

**ՀԹՆՈՀԱՏՎԱԾԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ
ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅԱԿ ՏԱԿ**

**Կ. Ս. ԴԱԼԼԱԶՅԱՆ, փոխգնդապետ, քաղաքական գիլուրյունների
բեկմածու, ՀՀ պաշտպանության նախարարի վարչական ապարագի
էկողոգիական անվտանգության բաժանմունքի պետ**



Մուտք գործելով 21-րդ դար՝ Հայաստանը, այլ երկրների նման, բախվել է իր անվտանգության դեմ ուղղված նոր մարտահրավերների: Վերջին տասնամյակում դրանց ներածին* գործոնների ուսումնասիրությանը նվիրվել են մի շարք աշխատությունների¹: Մեր կարծիքով՝ կարևոր է արտածին**, առաջին հերթին՝ մոլորակային-էվոլյուցիոն, գործոնների հետազոտումը: Համընդիանացման քափ առնող գործընթացները բազմակի ոժեղացրել են սոցիետալ համակարգի մինչ օրս աննկատ միտումները՝ դրանով իսկ հարուցելով ենթահամակարգային շեղումներ և ամրող հասարակական համակարգի նախատարարության ու պահպանական պարագաների առաջացում: Մենք սկզբունքորեն կարևոր ենք համարում համընդիանուր բնույթի գործընթացների հետազոտումը, քանի որ դրանցում թաքնված են նոր պրոբլեմներ, մարտահրավերներ և սպառնալիքներ ոչ միայն համընդիանուր քաղաքական կազմակերպվածքի սուբյեկտների, այլև ազգերի, ժողովուրդների և առանձին անհատների խաղաղ գոյակցության ու զարգացման համար: Այս հոդվածում ուսումնասիրության առարկան է մոլորակային մասշտարի գործընթացների հիմքային քաղաքատարրերից մեկը՝ Էրնոհատվածայնացումը, նրա բնույթը և գործառական արժեքը, որը հասարակության ամրող համակարգում առաջ է բերում նոր արտածին պարամետրներ: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն ներգրավված է միջազգային քաղաքական, տնտեսական, անվտանգային ու ազգային առարկաներուն կապված է ՀՀ ազգային

* Ներածին (Ենրոքին)՝ առաջանում է հանրության ներքին միջավայրում գտնվող պատճառներից:

¹ Տես, օրինակ, Ի. Բագրյան. Արմանտե առ գրանց – առ գրանց: «Գոլոս Արմենիա», 26 ապրеля 2007 թ.; Ա. Ավազյան. Стратегические провалы в политическом сознании армянства, или аксиомы геополитического бытия Армении. «Голос Армении», 10 ноября 2005 թ.; Անյան՝ Հայկական ինքնուրբամ գրավականները, կամ ո՞վ է հայր (<http://www.hetq.am/arm/society/7521/>):

² Արդարածին (Էկողոգին)՝ առաջանում է հանրության միջավայրից դուրս գտնվող պատճառներից:

անվտանգության հետ և պետք է հաշվի առնվի ինչպես հաճրավետությունում իրականացվող համապարփակ բարեփոխումների, այնպես էլ, մասնավորապես, պաշտպանական ոլորտի բարեփոխումների հետագա ծրագրման ժամանակ:

1. Համընդիանրացումը՝ որպես համամոլորակային բնույթի երևույթ

Կան համընդիանրացման բազմաթիվ տեսություններ, համապատասխանաբար, կան նաև «համընդիանրացում» հասկացության շատ սահմանումներ, որոնց մեծ մասը տրվել է տնտեսական մոտեցման դիրքերից: Դրանց համաձայն՝ համընդիանրացումը հանգեցված է մեկ՝ տնտեսական, չափման, որը, ի դեպ, պատկերացվում է որպես գծային, այս է՝ համաշխարհային շուկայից ամեն տեսակի կախվածությունների անընդիատ ածում: Մյուս բոլոր չափումները «թեմայափորփում են (եթե դա ընդիանրապես արվում է) միայն այն ենթադրությամբ, որ գերակշռում է տնտեսական համընդիանրացումը»²:

Սեկնուրյունների բազմազանությամբ հանդերձ՝ համընդիանրացման իմաստավորման նկատմամբ բոլոր մոտեցումները, կախված հեղինակների տեսական հայացքներից, կարելի է հսնեցնել հետևյալ երեք հիմնական դիրքորոշումների:

– ունալիսկրամերը համընդիանրացումը դիտում են ոչ թե որպես որպակական բոլիչք աշխարհի փոխակերպման ընթացքում, այլ առավելապես որպես նրա էվոլյուցիոն զարգացման գործընթաց,

– նոր մարքսիստամերը ժամանակակից գործընթացները դիտում են որպես կապիտալիզմի զարգացման եզրափակիչ փուլ, որի ժամանակ առաջ է գալիս աշխարհի տնտեսական գերբևորացվածություն,

– նոր ազարականների համար համընդիանրացումը քաղաքական կառուցվածքի և ընդիանրապես քաղաքակրթության զարգացման որակապես նոր փուլ է:

Սենք առավել ընդունելի ենք համարում այն հեղինակների տեսակետը, որոնք ներկայիս համընդիանրացումը համարում են սոցիալական էվոլյուցիայի մի փուլ, որը բնութագրվում է ժամանակային և տարածական մասշտաբների առավելարկմամբ, համաշխարհային հարաբերությունների, քաղաքականության, էկոնոմիկայի, մշակույթի փոխապահության ու փոխախախածության ինտենսիվացմամբ³: Փաստարկումը հետևյալն է. եթե ամբողջ մարդկային հասարակությունն ընկալվում է որպես համակարգագործառական սոցիետալ հարաբերությունների ամբողջություն և տարբեր մակարդակներ ունեցող ենթահամակարգերը (հանրություններ, սոցիալական խմբեր և անհատներ) միմյանց կապող փոխարարերությունների բարդ համակարգ, ապա համընդիանրացման երևույթներով կարելի

² Յ. Բեկ. Что такое глобализация? Ошибки глобализма – ответы на глобализацию. М., 2001, с. 201.

³ Տես M. B. Ильин. Глобализация политики и эволюция политических систем. «Политическая наука России: интеллектуальный поиск и реальность». М., 2000, с. 215; R. Robertson. Mapping the Global Condition: Globalization as the Central Conception. «Theory, Culture & Society», 1990, Vol. 2 – 3:

Է ներկայացնել մարդկային ցեղի առանձին հատվածների և սոցիումների միջև ընդհանուր փոխադարձ կապի ձևավորումը և ուժեղացումը, սոցիոհամակարգի միշարք կառույցների փոխարարություններն ու փոխայմանավորվածությունները, համապատասխացումն ու վերազգայնացումը:

Չնայած հայեցակարգային բնութագրերի բավական ճապաղ և հակասական չափանիշներին՝ ներկայումս բնական ու հասարակական երևույթների համակարգային ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստելու առավել էական համանորակային միտումները, որոնք սկզբունքային նշանակություն ունեն տվյալ երևույթի էությունը հասկանալու համար:

Առաջին, 20-րդ և 21-րդ դարերի սահմանագծում տեղի են ունենում տեղեկութափում, տեղեկատվական տարածության ինտենսիվ հանրայինացում, հաղորդակցային-տեղեկատվական ցանցերի համատարած արդիականացում և զարգացում:

Երկրորդ տեղեկութային հասարակության կայացումը կխորհրդանշի արտադրության ինտերնացիոնալացումը, ժամանակակից էկոնոմիկայի փոխկապվածությունն ու փոխկախվածությունը:

Երկրորդ մոլորակի բնական ու կենսաբանական համակարգերը գործում են որպես մեկ միասնական համակարգ, և ցանկացած տեղային կամ տարածաշրջանային ապագրութառում* այս կամ այն չափով անխուսափելիորեն ազդում է ամբողջ համանորակային համակարգի վրա:

Չորրորդ անվտանգությունն «իր համապիտանիությունը դրսևորում է համընդհանուր մասշտաբով»⁴: Ցանկացած՝ ազգային, տեղային, տարածաշրջանային, սուրյեկտի (օրյեկտի) անվտանգությունը չի կարող ապահոված լինել առանց մոլորակային հրամայականների վրա հիմնվող համընդհանուր անվտանգության ապահովման:

Հինգերորդ պետությունը՝ որպես հասարակության կազմակերպման հիմնական ձև, կորցրել է իր հրամայականները: Նրա ինքնիշխանության ներկա պարամետրները չեն ներգրվում համընդհանրացման համակարգային մատրիցի մեջ: Ազգային պետությունների անխուսափելի կերպավոխումը հանգեցնում է սոցիումների կազմակերպվածքի նոր ձևերի և պետությունների արդիական (հետազգային) մոդելների որոնման հարցադրման:

Վեցերորդ համընդհանրացման գործընթացը ենթադրում է մարդու կենսագործունեության տարրեր պարամետրների միօրինակացում և ստանդարտացում, տեղային առանձնահատկությունների և արժեքների վերացում, երնիկության և ազգային մշակույթի արժեքների համասեռացում և արժեզրկում: Մոլորակային

* *Ապագրութառում* (Ճիշտականացում)՝ համակարգի աշխատանքի, գործառույթների կատարման խանգարում:

⁴ Յ. Բ. Պերօվ. Իсторичность и историческая реальность. СПб., 2000, с. 8 (http://anthropology.ru/ru/texts/parzv/global2_09.html).

մաշտարով ստեղծվում է մշակույթի յուրօրինակ արժեհամակարգ, ձևավորվում են մարդկանց միասնական նույնականություն, գործողությունների միատեսակ շարժափառներ ու գործեկալեկրպ:

Այսպիսով՝ համընդհանրացումը դրսեւրպում է հասարակական կյանքի բոլոր՝ տեղեկատվական, քաղաքական, բնապահպանական, մշակութային, տնտեսական, տեխնոլոգիական և այլ ոլորտներում: ՈՒ թեն ներկայիս մոլորակային ինտեգրման համար էկոնոմիկան իմֆքային բաղադրիչն է, իսկ համընդհանրացման դերակատարներն ու գործակալները շահագրգոռված են առավելագույն տնտեսական օգուտ քաղելու մեջ, այդուհանդերձ, երկարաժամկետ, բացառված չէ՝ նաև միջնաժամկետ, կտրվածքով հետևանքները կլինեն ոչ միայն տնտեսական, այլև, և դա առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար, եթեքաղաքական բնույթի:

2. Հատվածայնացումը որպես համընդհանրացման հակամիտում

Անկախ ամեն ինչից, աշխարհը բազմապիսի և բազմակացութածն է: Մարդկության գոյության ամրող պատմության ընթացքում մշտավես դիտվում են փոխադարձաբար բացառող ու լրացնող երկու համընդհանուր միտումներ, որոնք երբեմն ուղեկցում, երբեմն էլ հաջորդում են միմյանց՝ քենոներում առանձնացված միասնացմամբ ստեղծվող բազմազանության միջոցով ցուցադրելով տարբերակված միասնականություն, ամբողջականության դիալեկտիկա: Ո՞չ տեսությունը, ո՞չ պատմությունը հիմքեր չեն տալիս որևէ էքնիկական, մշակութային, կրոնական, տարածքային և այլ տարբերությունների միաձուլման կամ մենուրդորդված ու անվերապահ անհետացման, աշխարհայցքի հիմնարար հենքի արմատական միօրինակացման վերաբերյալ եզրակացություններ անելու համար: Հետազոտողները նշում են, որ հակասական զարգացումները, որոնք ներկայացնում են համապիտանիության և հակառակ ուղղվածությամբ միտումների նույնականություն ու տարբերություն, տարբեր դարբերում դրսեւրպել են տարբեր հիմքերով:

Ն. Ն. Մուհսենը պնդում է, որ «ինտեգրման և ապահովեցրման միտումները մարդկության պատմության մեջ անընդհատ փոխադրում ու փոխազդում են, և դրանց հակասականությունը անընդհատ ծնում է կյանքի կազմակերպման նոր ձևեր»⁵: ՈՒշագրավ է, որ Եվրոպական ինտեգրման նախագծերում*, որոնք վերաբերում էին մեծ ու փոքր հանրությունների գոյակցության և կազմակերպման օպտիմալ ձևերի որոնումներին, շեշտվում էին Եվրոպայի բազմապիտությունը, Եվրոպական ազգերի մերձեցման անհրաժեշտությունը՝ նրանց յուրահատկու-

⁵ H. H. Moussiev. С мыслями о будущем России. М., 1997, с. 97.

* «Քաղաքականության» և «Հավերժ աշխարհի» միավորման տարբեր նախագծեր երևան են եկը ինչպես Վերածննդի, այնպես էլ Լուսավորության դրաշշրջանում: Նման ծրագրերից մեկի հեղինակ Ֆրանսիայի բազմով Հենրի 4-րդի ֆինանսների նախարար դուքս դը Սյուլին («Սեծ պյան», 1617–1638 թթ.) դրսեւ խաղաղության երաշխափորում առաջարկում էր Եվրոպան դարձնել 15 քրիստոնեական պետությունների համադաշտությունը՝ նրանց յուրահատկու-

թյունների պահպանման պայմանով, առաջարկվում էին ամբողջ աշխարհում համընդիմանուր խաղաղության և առևտրի ազատության հաստատման հնարավորություններ ու միջոցներ, և չեր նախատեսվում պետական ինքնիշխանության որևէ սահմանափակում. «ոչ թե պետության իշխանության ձեռքբերում, այլ միայն ամեն մի պետության ազատության պահպանում և ապահովում»⁶, մեծ միասնական քաղաքական համակարգի՝ Եվրոպայի Միացյալ Նահանգների (*United States of Europe*) ստեղծում*, որտեղ յուրաքանչյուր պետություն կունենար իր տեղը⁷:

Իր ստեղծումից կես դար անց Եվրամիությունը դեռ մնում է որպես ինքնիշխան պետությունների դաշինք: Այն միասնական դաշնության վերածելու, հատվածայնացման միտումների և անջատողական շահերի մեղմացումն ապահովող համապատասխան մեխանիզմներ ու սկզբունքներ մշակելու ուղղությամբ բոլոր ջանքերը հանդիպում են ուժեղ դիմադրության: Վերջին հիասքափության համար առիր էր 2008 թ. հունիսի 12-ին Իոլանդիայում անցկացված հանրաքվեն, որտեղ մեծամասնությունը քվեարկեց Լիսարոնյան համաձայնագրի վավերացման դեմ**:

Չնայած ինտեգրմամբ ընձեռվող օբյեկտիվ տնտեսական օգուտներին՝ աննախանակ մասշտաբներով կենտրոնախույս միտումներ և ինքնորոշման չմարող ձգուումներ են ի հայտ գալիս Խսապանիայում (բասկերի երկիր, Կատալոնիա), Խտալիայում (Հարավային Տիրող, Հարավի և Հյուսիսի պրորլետ), Բելգիայում (վալոններ և ֆլամանդացիներ), Ֆրանսիայում (Կորսիկա), Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլն: Միգրացիայի միջկառավարական հանձնաժողովի (*ICM*) կողմից Բրիտանիայում անցկացված հասարակական կարծիքի հարցման շրջանակներում «Ցանկանո՞ւմ եք, արյոք, որ Միացյալ Թագավորությունը տրոհվի, օրինակ, Անգլիայի, Շոտլանդիայի, Ուելսի և Հյուսիսային Իոլանդիայի» հարցին մեծ մասը տվել է դրական պատասխան: Այսպես Շոտլանդիայում հօգուտ իրենց երկրի անկախության քվեարկել է հարցվածների 52 %-ը (կտրականապես դեմ էր միայն 35 %-ը), «մայր երկրում» բնակչության 59 %-ը ևս կողմ էր հարևանների անջատմանը⁸:

Համընդիմանքանը հակառակ ուղղվածության միտումներ են նկատվում սոցիալական միջավայրի բոլոր ոլորտներում: Տեղի է ունենում ոչ միայն կապիտալի, այրանքների և գաղափարների արտահոսք ինչ-որ կենտրոններից մնաց-

⁶ И. Кант. К вечному миру. Соч. в 8 т., т. 7. М., 1994, с. 19.

* Հաճախ այս գաղափարի հեղինակ համարում են Զոլգեպան Մաձմինին (1805–1872) կամ նրա ընկեր գիտնական-համագիտարանագետ, քաղաքական գործիչ Կարլ Կատանենին (1801–1869):

⁷ Տես Յ. Родерпсон. История о государствствовании императора Карла V. СПб., 1775:

** Լիսարոնյան համաձայնապիրը Եվրոպական սահմանադրության պարգևված տարրերակն է: Համաձայնագիրը Ենթադրում է ԵՄ-ի նախագահի պաշտոն, ԵՄ-ի առաջնախառնությունների դերի նվազեցում: Մասնավորապես՝ գալախորեն կը ըստատիվ այն հարցերի թիվը, որոնց վրա Եվրամիության յուրաքանչյուր անդամ պետություն կարող է վետ դնել: Համաձայնագիրն սոորագրվել է Եվրոպական պետությունների դեկապարների կողմից 2007 թ. աշնանը և ուժի մեջ կմտնի 2009 թ. հունվարի 1-ին այն դեպքում, եթե վավերացվի Եվրամիության բոլոր անդամ երկրների կողմից:

⁸ Տես В. Загуто. Европа: размножение делением. «Время новостей», 29 января 2007 г., № 14:

յալ աշխարհ, այլև հակադարձ հոսք, այդ թվում և շատ այլ մակարդակներում: Ծիշտ չէր լինի աշխարհը դիտել որպես ամերիկյան կենտրոնով միաբներ տնտեսական համակարգ և անտեսել Շապոնիան, Հյուսիսարևելյան ու Հարավարևելյան Ասիայի զարգացող կենտրոնները: Համընդհանուր զարգացման որոշ միտումներ ստիպում են քննադատարար վերաբերվել դրա ուղղությունների մասին հաճախ արվող անապացոյց եզրակացություններին: Պարզվում է, որ խոշորագույն վերազգային ընկերությունների (ՎԱԸ) եկամուտների տեսակարար կշիռը ոչ միայն չի աճում, այլև նվազում է, որ ազգ-պետությունները բնավ էլ չեն զրկվել իրենց ինքնիշխանությունից, չեն կորցրել համաշխարհային ընկերությունների վրա իրենց ազդեցությունը և բավական հաճախ ստիպում են նրանց փոխել պլանները, որ վերջին տարիներին բնահամակարգի նկատմամբ իրենց համընդհանրացման «վերազգային գործակալներն» են «տեղական» ձեռնարկատերերի համեմատությամբ ավելի «քաղաքակիրք» վարդում, որ ազգային սահմանները և քաղաքական պատճենները դեռ չեն կորցրել իրենց նշանակությունը, և որ համընդիանրացման գործընթացը այնքան էլ անշրջելի չէ⁹:

Այսպիսով՝ ժամանակակից աշխարհի բափ առնող համընդհանրացումը տարիմաստորեն ուղեկցվում է նրա հատվածայնացմամբ, որը ննան հարցադրման դեպքում կարող է ներկայացվել որպես գործառությային հակամիտում համընդհանրացման համանորդակային գործընթացին: Վ. Ֆերտստվայի պատկերավոր արտահայտությամբ՝ համընդհանրացման բարդ համակարգային գործընթացները երբեմն ընդհատվում են հանակարգային ընդդիմություններով¹⁰, այն է՝ նրանք, ում համար համընդիանրացման պատումները անհասանելի են, ովքեր գգում են որշակի անհարմարավետություն, կփորձեն պաշտպանվել վնասներից ու ունահարումներից՝ իրենց տարածաշրջանին հասուկ ուսուրաների, իրենց երնիկության որոնման միջոցով, իսկ դա հանգեցնում է նեղ տարածաշրջանային, նեղ երնիկական կամ տեղային շահերի աճմանը:

3. Երնիկականությունը՝ որպես հատվածայնացման հիմնական գծանշիչ

Դեռ 1975 թ. մի շարք հեղինակներ կարծիք հայտնեցին, որ սոցիալական պատմության մեջ կգերիշխեն ոչ թե երնիկական ուժացումն ու ինտեգրումը, այլ բազմազանեցումը¹¹:

Բ. Ո. Բարբերը առաջիններից էր, որ նկատեց երնիկատվածայնացման միտումը: Դեռ 1990-ական թվականների սկզբին նա ուշադրությունը կենտրոնացրեց անշատողական շարժումների, երնիկական ու կրոնական հակամարտու-

⁹ Տես John Micklēthwait, Adrian Wooldridge. The Globalization Backlash (public opinion, reality and myths). «Foreign Policy», 2001, September:

¹⁰ Տես B. Федотова. Терроризм и глобализация. «Космополис», 2003, № 3 (<http://cosmopolis.mgimo.ru/fileserver/5/5-12.pdf>):

¹¹ Տես, օրինակ, N. Glazer, D. P. Moynihan. Ethnicity: Theory and Experience. Cambridge, 1975, PP. 1 – 26:

թյունների վրա՝ դրանք անվանելով «ջիհադ ընդեմ համընդհանուր աշխարհի»¹²: Եվ, բազմաթիվ դիտարկումների վկայությամբ, սոցիալական համակարգի հատվածայնացումը կատարվում է եթե ոչ բացառապես, ապա, որպես կանոն, ըստ էքնիկականության հատկանիշի ինչպես համաշխարհային (նոր էքնոազգային պետությունների կազմավորում), այնպես էլ ներազգային մասշտարով (տարբեր հանրությունների և տարածքների ինքնավարացում)¹³: Դա են հաստատում գործնականում ամբողջ աշխարհում սփյուռքների և հայրենակցական միությունների կազմակերպվածության աճման, բնակության երկրի շրջանակներում ինքնակազմակերպվելու ու ինքնորոշվելու, ինչպես նաև էքնիկական հայրենիքի հետ կապերն ամրապնդելու դրանց ձգտման փաստերը: Ըստ որում, ինչ և նոր վերաբնակիչները, հակառակ սպասելիքների, մեծ մասամբ չեն ինտեգրվում նոր հասարակության մեջ, չեն ձուլվում բնիկ բնակչության հետ, այլ ստեղծում են համայնքներ՝ պահպանելով իրենց լեզուն, ազգային ավանդույթներն ու սովորույթները*:

Այսպիսով՝ շարադրված նյութը հնարավորություն է տալիս փաստելու, որ էքնիկության բուն էությունը հանդես է գալիս որպես հատվածայնացման գերակշռող պարամետր: Ծիշտ է, այն հանդես չի գալիս որպես համընդհանրացմանը անմիջականորեն հակադրվող գործոն: Դրանց միջև գոյություն ունեցող հակասությունը միջնորդավորված է և զլխափորապես ձևավորվում է այն վերազգային, տարածաշրջանային ու ազգային համակարգերի հակամարտայնության մակարդակի բարձրացման հետևանքով, որոնց շրջանակներում էքնիկականությունն ունի ինքնուրույն դերակատարություն և խաղում է ակտիվ քաղաքական դեր: Այսինքն՝ էքնիկականությունը, լինելով հատվածայնացման հետ միաձովված, հանդես է գալիս որպես մարտահրավեր ոչ թե համընդհանրացման ու համընդհանուր զարգացման գործընթացներին, այլ արմատապես փոփոխվող պայմաններում ռացիոնալ քաղաքական գործելակերպի անընդունակ վերազգային, ազգային և այլ բյուրոկրատիայի իշխանական դիրքերին: Հարկ է շնչտել, որ նման էքնոմշակութային և (կամ) էքնոկրոնական** վարքը առավելապես բխում է ոչ թե հրապուրիչ գաղափարներից ու կարգախոսներից, այլ կենսական շահերից ու ռեալ տեսլականից: Հայկական «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հ. Դինքը (1957–2007) գրում էր, որ ինչ բուրքերն են իրեն դարձրել հայերի իրավունքների համար պայքարի ակտիվիստ¹⁴:

ՈՒ Ալտերմատը գրում է. «Որքան շատ են հավասարվում տարբեր եվրոպա-

¹² Barber R. Benjamin. Jihad vs. McWorld. 1996, August.

¹³ Տես O. A. Բելյկօ. Անտիոմիա հազարական. «ՀԱՎԻԳՅՈՒ», 2005, № 5:

* Միայն Ռուսաստանում վերջին տասը տարիների ընթացքում հայկական դպրոցների թիվն աճել է ավելի քան 10 անգամ: ΩՀՍ-ն արդեն ունի 70 տարածաշրջանային և 400 շրջանային ու քաղաքային կազմակերպություններ (տես <http://www.agz.am/AR/2008070502>):

** Շատ հեղինակավոր հետազոտողներ կրնում համարում են հայկական ինքնագիտակցության ամենակարևոր նաևը: Տվյալ դեպքում խոսքը Հայ Առաքելական Եկեղեցու հետևողների մասին է:

¹⁴ Տես «Հրանտ Դինք. «Ես իրավունք ունեմ մեռնել այն երկրում, որտեղ ծնվել եմ»: «Ազատություն» ուսումնական պաշտոնական կայք (<http://www.armenialiberty.org>), 2007 թ. հունվարի 25:

կան երկրներ տեխնիկական և տնտեսական տեսակետից, այնքան շատ մարդիկ ավելի ուժեղ են զգում իրենց մշակույթի նույնականացման դեմ ուղղված սպառնալիքը և կարիք են ունենում որևէ կերպ իրարից տարրերվելու: Այն ժամանակ, երբ եվրոպացիները տնտեսավարման և սպառնան եղանակով ավելի ու ավելի են նմանվում միմյանց, մշակույթի մակարդակով նրանք խոռվություն են բարձրացնում համբույրացման դեմ»¹⁵: Ի դեպ, շատ փորձագետներ ոչ միայն արդարացնում են նման իրավիճակը, այլև իմնավորում են աշխարհի երնոքադարձական քարտեզի մասնատումը խրանելու անհրաժեշտությունը:

Ինչպես ցույց է տալիս ժամանակային երնոքադարձագիտական վերլուծությունը, երնիկական առանձնության զարգացման ու պահպանման միտումն աճում է և արտացոլում է ստանում նաև կենցաղում: Ավելի հաճախ է դառնում քանկը չուրյան մի մասի ձգոտում՝ սպառնան ժամանակ ցուցադրելու իր երնիկական պատկանելությունը, այդ թվում և ավանդական մշակույթի՝ մոռացության տրված հատկանիշների նկատմամբ: Շատ երկրներում սկսեց զարգանալ այնպիսի ձեռնարկչություն, որը կապված է սպառողների շրջանում երնիկականության խորհրդանիշների նկատմամբ ձգոտում արմատավորելու հետ: Այսօր արդեն համաշխարհային արտադրողները, քողարկվելով երնիկականությամբ, իրենց արտադրանքը բողաքակում են փոքր խմբաքանակներով՝ պիտակավորումը կատարելով ազգային լեզուներով, առանց էապես ազրելու գնի վրա, և դրանով իսկ նյութապես ամրապնդում են երնիկական սահմանները զնօղող զանգվածային սպառումից հեռանալու միտումը:

Համաշխարհային հաղորդակցային ընկերությունները, ինչպիսիք են «Մայկրոստիլը», «Գուգլը», «Յահում», երնիկական առանձնահատկություններն օգտագործում են որպես միցունակության լրացուցիչ ռեսուրս: Ծիշտ է, ազգային գծանիշների կիրառումը երեմն տնտեսապես կարող է ավելի թանկ արժենալ: Այսպես, մեկ *SMS* հաղորդագրությամբ կարելի է ուղարկել կիրիլիցայի 70 նշան, իսկ լատիներեն տառերով՝ 160 նշան:

Կարելի է փաստել, որ 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի համբույրացման միտումներին մեծապես հակարգվում է երնիկական հատվածայնացման միտումը: Ինչպես ցույց են տալիս փորձնական հետազոտությունները, այս հակամիտումը ձևավորվում է ըստ երնիկականության պարամետրների: Դա հաստատվում է նաև այն փաստով, որ ԱՄՆ-ում, ձուլման միտումների հետ մեկտեղ, հստակորեն նկատվում էր և հակառակ՝ հեռավոր հայրենիքի երնիկական մշակույթի պահպանման ու վերածննդի միտում: Արդեն 1960-ական թվականներին սկսեցին լույս տեսնել տեսական աշխատություններ, որոնցում կասկածի տակ էին դրվում «հալոցային կարսայի» նախազգերը¹⁶: 1990 թ. մարդահամարը ակնառու կերպով ցուցադրեց նման պնդման կեղծ գիտականությունը. նոյնականացումը

¹⁵ Բերվում է ըստ՝ *O. A. Бельков*. Антимонии национализма. «Власть», 3 марта 2006 г.:

¹⁶ Տես, օրինակ, *N. Glazer, D. P. Moynihan*. Beyond the Melting Pot. Cambridge, 1963:

կառուցվում է մեծ մասամբ ոչ թե պետականության, այլ էքնիկականության հիմքի վրա: Այսպես ԱՄՆ-ի քաղաքացիների միայն 5 %-ն էլ իրեն համարում «պարզապես ամերիկացի», մյուսներն իրենց դասում էին 215 էքնիկական խմբերի շարքը¹⁷: Այս առնչությամբ Օ. Ա. Բեկովը գրում է. «Մարդկությունը չի վերածվի միատեսակ մտածող ու միատեսակ գործող անհատների չտարբերակված զանգվածի»¹⁸:

4. Եզրակացություններ

Առաջին համընդիմանքացումը ժամանակակից զարգացման թեև հիմնական, սակայն ոչ միակ նշանակալից գործոնն է: Այն կրում է վերագգային բնույթ, հեշտությամբ կլանում և իր մեջ միավորում է համակարգային մատրիցի ինչպես փոքր, այնպես էլ մեծ հաճրությունները, ինչպիսիք են ազգային պետությունները: Մինչդեռ համընդիմանքացումը ոչ միայն ինտեգրում է և սահմանները բացում, այլև փակում, քանի որ համընդիմանքացման մետատարածությունը, ինչպես ապացուցում է Օ. Դոլֆյուսը, «զարգանում է իր իսկ օրենքներով»¹⁹:

Երկրորդ արդի համընդիմանուր զարգացման կարևոր գործոններից է հատվածայնացումը, որի հիման վրա ներկայիս պայմաններում կատարվում է քաղաքակրթության տեղայնացում, և որի ծայրահեղական դրսնորումները երբեմն կարող են հանգեցնել մեկուսացման:

Երրորդ սոցիալական էվոլյուցիայի ընթացքում ոչ միայն տեղի են ունենում էքնիկականության միօրինակացում և ստանդարտացում, այլև առկա է օրինաչափ հակառիքքավորում. ընթանում է տարրեր քաղաքակրթական կառույցների ու տարրերի տարրերակման գործընթաց, առանձին հատվածների ու սոցիումների միջև ուժեղանում է անջատման, մարդկության տարրեր մակարդակների կենսագործունեության մի շարք համակարգերի ու կառույցների մեկուսացման կենտրոնախույս միտումը, ինչը հաճախ դրսնորվում է էքնոազգային ինքնորոշման հստակ ձևակերպված և կառուցվածքային առումով լավ կազմակերպված ձևով:

Չորրորդ հակառակ ուղղվածությամբ այս երկու գործընթացների՝ համընդհանրացման և հատվածայնացման յուրահատկությունն այն է, որ դրանք կատարվում են միաժամանակ: Մի կողմից՝ տեղի է ունենում համընդիմանուր մեզահասարակության ձևավորում, ինչը կատարվում է կենսակերպի նման գծերի, ստանդարտների ու նորմերի գործեր համատարած սփռման շնորհիվ, մյուս կողմից՝ թափ են առնում էքնիկական զատումն ու անջատումը, որոնք արտահայտում են սոցիոմշակութային միասնականության և տնտեսական ծավալման հետ կապված մարտահրավերների սպեկտրին նարդու հարմարվելու մշտական ձգուումը, ընդունին

¹⁷ Ст. «История мировой культуры (мировых цивилизаций)». 2-е доп. и переред. изд. Ростов/Д., 2002, с. 446:

¹⁸ О. А. Бельков. Антиномии национализма. «Власть», 3 марта 2006 г.

¹⁹ О. Дольфиос. Глобализация. «Мировая экономика и международные отношения», 1999, № 4.

դա արվում է մարդու բնությանը ամենամոտ և ամենաբնորշ էքնիկությամ՝ որպես ինքնանույնականացման «կոշտ» հենքերից մեկի վրա:

Ամփոփում

Այսպիսով՝ ակնհայտ է, որ հենց տեղայնորեն յուրահատուկ մշակութային ինքնատիպության պահպանումն է պայմանավորում քաղաքակրթական զարգացման մշակութային մատրիցի պարամետրները: Պատմական փորձը վկայում է, որ էքնոազգային հաստատությունների էռության ոչ համապատասխան ընթացումը և սոցիալականացման գործընթացներին ուժային միջամտությունը առաջ են բերում երկակի վերաբերմունք՝ խթանելով իր փոխմշակութային ուրվապատկերի ինքնարարումը: Օրինակ՝ Ֆրանսիայում աշխարհիկ դպրոցներ հաճախելու արգելքը այն դեպքում, եթե հազուստի մեջ նկատելի են կրոնականության ակնհայտ խորհրդանշներ, տեսանելի ապագայում կարող է հանգեցնել կրոնամշակութային ապահնութեգրման, կրոնական դպրոցների ու այլ կրթական հաստատությունների թվի մեծացման:

Հենց նման բարդ հանգամանքներով է պայմանավորված այդքան լայն սպեկտրով գիտական դատողությունների, կարծիքների, տեսակետների առկայությունը: Համընդհանրացման և էքնոհատվածայնացման միաժամանակյա գոյությունը պարտադրում է մեզ Հայաստանի կայուն ու անվտանգ զարգացման հեռանկարները կանխատեսելիս ու ծրագրելիս հաշվի առնել դրանց հաշվեկշիռ՝ առանց որևէ մեկն անտեսելու:

ВОЕННАЯ ПОЛИТОЛОГИЯ

ВОПРОС ОБ ЭТНОФРАГМЕНТАЦИИ В СВЕТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА

*К. С. ДАЛАКАЯН, подполковник, кандидат политических наук,
начальник отделения экологической безопасности
административного аппарата Министра Обороны РА*

РЕЗЮМЕ

В XXI веке Армения сталкивается с новыми вызовами безопасности, поскольку возрастающие глобализационные процессы многократно усиливают доселе незаметные тенденции развития социетальной системы, таящие в себе новые проблемы, вызовы и угрозы не только для субъектов глобальной политики, но и для развития и мирного сосуществования наций и индивидов.

В статье отмечается, что набирающая темпы глобализация современного мира сопровождается его фрагментацией, которая автором пред-

ставляется как функциональная контратенденция. При этом фрагментация проявляется если не исключительно, то, в основном, по признаку этничности как в мировом масштабе, так и во внутригосударственной плоскости.

MILITARY POLITICAL SCIENCE

THE ISSUE ON ETHNIC FRAGMENTATION IN LIGHT OF THE RA DEFENSE REFORMS

*K. S. DALLAKYAN, Lieutenant-Colonel, Candidate of Political Sciences,
Head of the Department of Ecological Security of the Administrative Staff
of the RA Defense Minister*

SUMMARY

In the XXI century Armenia faces new security challenges as the growing globalization processes repeatedly enhance hitherto imperceptible development tendencies of the societal system. Those tendencies are fraught with new problems, challenges and threats not only to entities of global politics but also to the development and peaceful coexistence of nations and individuals.

It is mentioned in the article that the contemporary world's growing globalization is accompanied by its fragmentation, which is presented by the author as a functional counter-tendency. Besides, the fragmentation is manifested if not exclusively but mainly by the sign of ethnicity both world-wide and nationally.

ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՅԻՆ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՆԵՐԱԶԴՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ
ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՀԱՍԱԿԱՐԳԸ՝
ՈՐՊԵՍ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱԴՐՅԱԼ

- Լ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Գառնիի երկրաֆիզիկական դիրքարանի
ղմաօրեն, երկրաբանական գիտությունների դոկտոր,
Ա. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԵՊՀ միներալոգիայի, պետրոլոգիայի
և երկրաքիմիայի ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, Ի. Խ. ԽԱՉԻՅԱՆ, ԵՊՀ միներալոգիայի,
պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի լաբորատոր



Վերջին տասնամյակներում
ամբողջ աշխարհում սպառնալից
կերպով ածում է բնական ար-
տակարգ իրավիճակների թիվը:
Բնակչության խտության կտրուկ
աճման, ուրբանիզացման և արդ-
յունաբերության ինտենսիվ զար-
գացման հետևանքով զգալիորեն
մեծանում է բնակչության խոցե-
լիությունը: Մի շարք երկներում
բնական աղետների կործանա-

րար հետևանքներն իրենց զգացնել են տալիս տասնամյակների շարունակ՝ «կլա-
նելով» ազգային բյուջեի մի զգալի մասը:

Պատահական չէ, որ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտան-
գության ռազմավարության» մեջ նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը,
կարևորելով գերատեսչական-ճյուղային քարեփիխումների համալրը, այն նպա-
տակառողում է՝ ...բնական և տեխնածին աղետների կանխատեսմանն ու վաղ
ազդարարմանը, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացմանը, ար-
տակարգ իրավիճակների բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծ-
մանը...»¹:

Մարդկության ջանքերն առաջին հերթին ուղղված են բնական աղետների

¹ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկա-
կան բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ բողարկում, 2007, էջ 26:

կործանարար հետևանքները նվազագույնի հասցնելուն: Ակնհայտ է, որ այդ կարևոր սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական խնդրի հաջող լուծումը անմիջականորեն կապված է բնական աղետների վտանգի գնահատման մեթոդների մշակման հետ: Խոսքը վերաբերում է ինչպես առանձին երկրաշարժների, այնպես էլ սեյսմիկ ռեժիմի բնուրագրերի վրա արտաքին ազդեցություններին, այսինքն՝ հարուցված սեյսմիկուրյանը:

Ստորերկրյա միջուկային պայյեցումների արգելման վերաբերյալ 1987 թ. Ժնևում կայացած եռակողմ (ԱՄՆ, ԽՍՀՄ, Ֆրանսիա) բանակցություններում պայմանավորվածություն ձեռք բերվեց սեյսմիկ տվյալների միջազգային փոխականական կազմակերպման մասին, ինչի շնորհիվ կմեծանար յուրաքանչյուր առանձին պետության վերահսկողության հուսալիությունը: Զինարքաման հարցերով գիտաժողովի երկրաշարժագետ-փորձագետների հատուկ խումբը մշակեց տվյալների փոխանակման միջազգային համակարգի գիտամեթոդական կառուցվածքը: Համակարգի հիմքը կազմում են երկրագնդի՝ ըստ աղմուկի մակարդակի բարենպաստ շրջաններում տեղաբաշխված 50 սեյսմիկ կայանների տվյալները: Դրանց հավաքումը կատարվում է արքանյակային կապուղիներով: Հավաքման միջազգային կենտրոնները տեղաբաշխված են Մուլվայում, Վաշինգտոնում, Ստոկհոլմում և Կանբերայում: Նման ցանցը կարող է 90 % հավանականությամբ հայտնաբերել 1 Կտ հզորությամբ ստորերկրյա պայքարություններ հյուսիսային կիսագնդում և 3 Կտ հզորությամբ՝ հարավային կիսագնդում: Եթե հաշվի առնենք նաև ազգային միջոցների առկայությունը, ապա միջուկային գենքի փորձարկման վերահսկողության հուսալիությունը բավականին մեծ է:

Սեյսմագիտության հետազոտական ինստիտուտների միավորում՝ ԱՀԻՄ-ը (*The Incorporated Research Institutions for Seismology—IRIS*), համալսարանական հետազոտական կոնսորցիում է, որն գրադաւում է սեյսմագրային տվյալների ստացման և բաշխման միջոցով երկրագնդի ներքին կառուցվածքի հետազոտման: ԱՀԻՄ-ի ծրագրերը կիրառվում են գիտական հետազոտությունների, կրթության, երկրաշարժների ռիսկերի նվազեցման գործում և «Միջուկային գենքի փորձարկումների արգելման մասին» պայմանագրի կատարման վերահսկման ծրագրերում: Դրանք ֆինանսավորում են Ազգային գիտական հիմնադրամը (*National Science Foundation*)՝ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի միջոցով, այլ դաշնային գործակալություններ, համալսարաններ, ինչպես նաև մասնավոր հիմնադրամներ:

ԱՀԻՄ-ի գործունեությունը կառավարում են ոչ մեծ թվով հաստիքային աշխատողներ, որոնց կենտրոնակայացանը գտնվում է Վաշինգտոնում (Կոլումբիայի օկրուգ), ինչպես նաև Սիետլ քաղաքում (Վաշինգտոնի նահանգ) տեղաբաշխված տվյալների կառավարման կենտրոնի արքանյակային գրասենյակը: Այդ համակարգի հիմնական բաղադրիչներից է ԱՀԻՄ-ի համընդհանուր սեյսմագրական ցանցը՝ ՀՍՑ (Global Seismographic Network (GSN)):

ՀՍՑ նպատակը երկրի մակերևույթով հավասարաշահ բաշխված ավելի քան

120 մշտական սեյսմիկ կայանների շահագործումն է: ՀՍՅ-ն կառավարում է մի կոմիտե, որը կազմված է ՍՀԻՄ-ի մասնակից կազմակերպությունները ներկայացնող սեյսմագետներից:

ՍՀԻՄ-ի միջազգային սեյսմագրային ցանցի ավտոմատ սեյսմիկ կայաններից մեկը 1991 թ. տեղակայվել է Հայաստանում (Գառնի): Կայանը գրանցում է տեղի բույլ և հեռավոր ուժեղ, այդ թվում՝ տեխնածին, երկրաշարժները: Ստանդարտաց-



Նկ. 1. ՍՀԻՄ-ի միջազգային սեյսմագրային ցանցի
Գառնիի ավտոմատ սեյսմիկ կայանը

ված սեյսմագրիչների համաշխարհային ցանցը (ՍՍՀՅ) և Համընդիանուր թվային սեյսմաբանական ցանցը (ՀԹՍՅ) բարկացած են աշխատող կայաններից և ունեն փորձառու անձնակազմ, որը հմուտ է տվյալների գրանցման ու փոխանակման բնագավառում հիմնայի համագործակցության առումով²:

Կայանի տվյալները տեղակայված են Գառնիում՝ հյուսիսային լայնության $40^{\circ}07'$ և արևելյան երկայնության $44^{\circ}48'$ կողղոքային բարձրությունով կետում: Լայնաշելու STS-1 ու GS-13 տվյալները, ինչպես նաև FBF-23 արագացումաշափր գրանցում են կարճ պարբերականությամբ սեյսմիկ ալիքները $0.001\text{--}30$ Հց հաճախականային տիրույթում (տես նկ. 1):

Տվյալների լրակազմն ու գրանցող հեռացված են միմյանցից և կապված են հաղորդման հեռաչափական գծով այնպիս, որ տվյալները կարելի է տեղակայել արհեստական աղմուկներից մեկուսացված տեղերում: Գառնու կայանից տվյալները ռադիոկապով հաղորդվում են Երախավան, այնտեղից՝ վերահաղորդվով Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) կենտրոնական վարչություն, այնուհետև՝ ՍՀԻՄ-ի կենտրոնակայան (ԱՍՆ) (նկ. 2):

Տվյալները ձևափորվում են փաթեթների տեսքով և օժտվում են ժամանակային մակնիշներով՝ հեռավոր մոդուլում կուտակման համեմատ, ուստի չկա հեռավորության որևէ սահմանափակում կապույիներով ազդանշանի հապաղեցման

² Stev O. K. Kegrov. Сейсмические методы контроля ядерных испытаний. Москва—Саранск, 2005:

պատճառով: Համակարգը ցանկացած մազմիտուղ ունեցող հեռասեյսմիկ իրադարձություններից ստացվող ազդանշանի ամրող սպեկտրը գծայնորեն գրանցում է անընդհատ աշխատող մեկ լայնաշերտ կապուղու միջոցով: Հաճախական տիրույթը այնքան լայն է, որ հնարավորություն է տալիս գրանցելու ինչպես ծավալային հեռասեյսմիկ ալիքները, այնպես էլ երկրին հատուկ տատանումների ամենացածր հաճախականությամբ նողերը, իսկ դիմամիկ տիրույթը բնական աղ-



Նկ. 2. ՍՀԻՄ-ի կենտրոնակայան (ԱՄՆ)

մուկի մակարդակից հասնում է մինչև ուժեղագույն հեռասեյսմիկ դեպքերից սպասվող մակերևության ալիքների լայնույթի մակարդակ:

Գոյություն ունեն ՍՀԻՄ-ի համակարգի երկու տարրերակ՝ զատված (Գառնի՝ ՍՊԱԾ) և համապարփակ: Զատված տարրերակում տվյալների լրակազմը, ժամանակի ազդանշանների ընդունիչը և տվյալների գրանցման համակարգիշը մի հեռավոր գրանցող մոդուլի մասեր են: Այն կապի գծով միացված է տվյալների մշակման համակարգչին և գրանցման մոդուլին (ՍՊԱԾ): Որպես կապի գիծ կարող են ծառայել հաղորդալարը կամ օպտիկաթելքային մալուխը, առանձնացված հեռախոսային կապուղին, ռադիո- կամ արքանյակային կապուղին: Նկ. 2-ում պատկերված են տվյալների մշակման համակարգիշն ու գրանցման մոդուլը: Գառնուց ստացված տեղեկույթը համակարգչի միջոցով հաղորդվում է ինքնազրիշին (տես Նկ. 2): Ցնցման ժամանակ միանում է ձայնային ազդանշանը: Գլխավոր համակարգիշը միանում է մեկ այլ համակարգչի, որի միջոցով տվյալները բերվում են թվային տեսքի և մշակվում DIMAS ծրագրային փաթերով: Օրական տեղեկույթը կազմում է 25 Մբ:

Իհարկե, սեյսմիկ տեղեկույթի հավաքման մշտագննական ցանցերի առկայությունը ինքնին չի երաշխավորում պայթյունի հայտնաբերումը: Անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես կարելի է ըստ սեյսմիկ տվյալների հայտնաբերել միջուկային պայթյունը և տեղայնացնել այն: Իսկ ի՞նչ հնարավորություններ է տալիս դրանց

հայտնաբերման և պարամետրների որոշման սեյսմիկ մեթոդը: Նման հնարավորությունները շատ են: Նշենք դրանցից մի քանիսը:

Հայտնաբերման սեյսմիկ մեթոդով ստորգետնյա պայյըունների հզորությունը որոշվում է երկայնական սեյսմիկ ալիքների մագնիտուդի գնահատմամբ ու այնպիսի պարամետրների հաշվառմամբ, ինչպիսիք են պայյըունի շրջանում պարփակող հանքատեսակների խտությունը, ծակոտկենությունը, խոնավությունը և գազաբերությունը:

Օրինակ՝ 1976 թ. մինչև 1990 թ. ժամանակահատվածում Գազիի շրջանում տեղի են ունեցել 11 երկրաշարժներ՝ 5,0-ից մեծ մագնիտուդով: Դրանք առաջացել են Սեմիպալատինսկի գինափորձարանում երկու շաբարվա լնիքացքում կատարված ստորգետնյա պայյըունների հետևանքով. այդ աֆտերշոկները (հետհարփածները) կարծեն «երկու անգամ են հարուցված»՝ հիմնական ուժեղ երկրաշարժներով և ստորեղիկյա միջուկային պայյըուններով³:

Ստորերկրյա պայյըունների նույնականացման համար արժեքավոր տեղեկույթ է տալիս նաև սեյսմիկ գրառումների լուսապատկերային վերլուծությունը: Ինչպես արդեն նշվել է, մեծ հաճախականությունների տիրույթում (30–40 %) տվյալների գրանցումն ու վերլուծությունը հնարավորություն են տալիս մեծացնելու ստորերկրյա խոռոչներում կատարված պայյեցումների նույնականացման ճշգրտությունը: Սեմիպալատինսկի գինափորձարանի մոտակայքում մեծ հաճախականությամբ ալիքների մարման և աղնուկների մակարդակի գնահատումը նաև ցույց է տալիս, որ եթե պայյեցումները կատարվում են անգամ թաքնաբար, ապա ավելի բարձրհաճախականային գրանցիչ սարքեր կիրառելու դեպքում դրանց հայտնաբերումը պարզէն չէ: Ներկայում եղած սարքերը հնարավորություն են տալիս հայտնաբերելու նման պայյեցումները, քանի որ տեղակայված են զինափորձարանին բավականին մոտ:

Պայյըունի պահին շրջապատող միջավայրը ենթարկվում է ավերումների. գոյանում է մեծ խոռոչ, ապարում առաջանում են մեծ ծագարներ ու ճեղքվածքներ: Թույլ պայյըունները, հատկապես՝ կատարված մեծ խորություններում, երկրի մակերևույթին այդքան ակնհայտ հետքեր չեն բողնում: Տիեզերական նկարահանման ժամանակակից միջոցները հնարավորություն են տալիս հայտնաբերելու ավելի բույլ պայյըուններն ու դրանց նախապատրաստումը: Տիեզերական մեթոդներն զգայի չափով հեշտացնում են սեյսմաբանական նյութի հավաքման ու մշակման օպերատիվության ապահովման հարցը, քանի որ պայյըունի հետքերը երևում են լուսանկարներում: Հետո կարելի է առանձին հավաքել ու հետազոտել սեյսմիկ տվյալները միայն դիտարկվող ժամանակահատվածում: Հետևաբար, պայյըունների հայտնաբերման վերը նշված մեթոդների համալիր կիրառումը էապես կմնացնի վերահսկողության հուսալիությունը:

Այսպիսով՝ այսօր միջուկային փորձարկումների սեյսմիկ վերահսկողության

³Տես A. B. Николаев. Развитие методов нелинейной геофизики. «Вестник ОИФЗ РАН», 2002, № 1:

անհրաժեշտությունը չափազանց արդիական է ու հնարավոր, մասնավորապես՝ Կովկասին հարակից շրջաններում⁴:

Բնության վրա տեխնածին ներգործության մասշտաբների մեծացման թերումով հնարավոր եղավ պարզել, որ երկրակեղիսը դրան արձագանքում է ոչ միայն ուժեղ երկրաշարժներով, այլև լեռնային ցնցումներով, սեյսմիկ էմիսիայի ինտենսիվության մեծացմամբ, դանիադ երկրածնախախտումային ալրոցեսներով: Սեյսմիկությունը, այսինքն՝ երկրաշարժների շարքը, մոլորակի երկրաբանական էվոլյուցիայի դրսնորումն է: Այն ուղեկցում է լեռնային զանգվածների սեյսմիկ հոսանքներին, նյութի ֆազային ու երկրաքիմիական փոխակերպումներին: Սեյսմիկ էմիսիան անընխատ աղմկային պրոցես է՝ կապված հսկայական թվով միկրոերկրաշարժների, ճայրյունների, միկրոճայրյունների հետ, որոնք գործնականում ուղեկցից են լարվածությունների տեղային վերաբաշխմանը հանգեցնող բոլոր երկրաբանական պրոցեսներին:

Սեյսմիկության ուժգնացման վրա ազդում են հետևյալ տեխնածին ներգործությունները՝ մեծ ջրամբարների ստեղծումը, նավքի ու զազի և պինդ հանածոների արդյունահանումը, ստորգետնյա միջուկային պայրյունները և հզոր էլեկտրական իմպուլսները⁵:

Բնական աղետների հանգեցնող երկրադինամիկական պրոցեսների ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկը հետազոտությունների ճիշտ մեթոդաբանության մշակումն է: Ներկայում համաշխարհային փորձի ընդհանրացման հիման վրա առաջարկված է համալիր հետազոտությունների ուսանակարություն: Այն ներառում է երկրաֆիզիկական, երկրաքիմիական, հիդրոդինամիկական հետազոտություններ, բնական աղետների օջախների տարածաշրջանային կառուցվածքի և բնական աղետների հանգեցնող ակտիվության օջախների տեղաշարժների ուսումնասիրություն, սեյսմիկ վտանգի քարտեզագրում (եթե խոսքը երկրաշարժների մասին է), բնական աղետների նախանշանների և տրիգերային գործարկիչ երևույթները բնութագրող քազմաքիվ այլ պարամետրների վերլուծություն:

Ընդհանուր առմամբ չհարուցված երկրաշարժներ չեն լինում. չափազանց մեծ ընդմիջակայքի էներգիայով երկրաշարժները՝ ամենաավելիք ցնցումներից մինչև միկրոցնցումներ ու սեյսմիկ էմիսիայի առանձին ակտներ, կազմում են այնպիսի իրադարձությունների բարդագույն համակարգ, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ և կրում են մի շարք տեխնածին ու բնական պրոցեսների ազդեցություն:

Ելեկով շարադրվածից՝ խստ անհրաժեշտ ենք համարում կատարել հետազոտություններ՝ միտված Հայաստանի տարածքում արտակարգ իրավիճակներին (բնական, տեխնածին) պատրաստության մակարդակը բարձրացնելու համար

⁴Տես Օ. Կ. Կեղրով, նշ. աշխ., նաև՝ Ռ. Գ. Գևորգյան, Լ. Ս. Բաղդումյան, Բնական և տեխնածին բնույթի հարուցված սեյսմիկություն: «ՀԲ», 2006, հմ. 1, Ղ. Ա. Սոբոլեվ. Сейсмические опасности. М., 2000, թ. 6, с. 139–151:

⁵Տես Ռ. Գ. Գևորգյան, Լ. Ս. Բաղդումյան, նշ. աշխ., Ս. Յ. Բալասանյան, Շ. Հ. Նազարետյան, Վ. Ս. Ամիրբեկյան. Сейсмическая защита и ее организация. Гюмри, 2004:

բնական աղետների աղբյուրների վիճակի ու զարգացման երկրադինամիկայի գնահատման համալիր համակարգի ստեղծմանը:

Նշված նպատակին հասնելու համար պետք է լուծել հետևյալ խնդիրները.

1. մշակել երկրադինամիկական պրոցեսների գրանցման համար նոր գերզգայուն տվյալներ ու սարքեր (հեղուկբյուրեղական տվյալներ (ՀԲՏ), այլ օպտիկակելեկտրոնային սարքեր, գազային տվյալներ և այլն) և դրանցով համալրել մշտագննման ցանցերը,

2. կազմակերպել գրանցման ավտոմատացված սարքերի համալիր կիրառմամբ երկրադինամիկական պրոցեսների մշտագննում երկրաֆիզիկական, երկրաքիմիական, ջրօդերևութաբանական և այլ մերոդներով,

3. զարգացնել երկրադինամիկական պրոցեսների բնույթի մասին տեսական պատկերացումները և մշակել սեյսմիկ օջախների վիճակի ու երկրադինամիկայի գնահատման ծրագրերի փարեր,

4. մշակել սեյսմոռակտիվ և պասիվ տեկստոնական խզվածքների տարրերակման արդյունավետ մերոդներ,

5. զարգացնել բնական և տեխնածին բնույթի հարուցված սեյսմիկության դեպքում սեյսմիկ ակտիվության ուժգնացման մակարդակի գնահատման մերոդներն ու միջոցները,

6. մշակել Գառնիի ավտոմատացված հետազոտական կայանի (ԳՀԿ) սկզբունքային սխեման՝ նկատի ունենալով բնական ու տեխնածին աղետների մասին վայ տեղեկացման միջազգային հաղորդակցական համակարգի (EWS) հետ փոխգործության և լծորդման հնարավորություն, փորձադաշտի (Գառնի-Երևան-ՀԱԷԿ) վերաբերյալ տվյալների հիման վրա ստեղծել ԳՀԿ գործող մանրակերտը (M 1:50000 մասշտարով):

Հետազոտությունների մերոդաբանությունը.

* ստեղծել չափումների նոր յուրատիպ օպտիկակելեկտրոնային և այլ համակարգերի համալիր, այդ թվում՝ գերզգայուն հեղուկբյուրեղական տվյալ սեյսմիկական տատանումների գրանցման համար,


* բնական և տեխնածին աղետների երկրադինամիկայի գնահատման համար մշտագննման ցանցի հիմքի վրա ստեղծել փորձարարական դաշտ, կենտրոն՝ Գառնիում,

* փորձադաշտի տարածքում ($R=50$ կմ) բնածին արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում օպերատիվ որոշումներ կայացնելու համար գնահատել ոիսկի աստիճանը,

* տարածաշրջանի (Ռուսաստան, Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրներ) գիտնականների ինտեգրումը հայ գիտության հարուստ փորձի օգտագործմամբ ավելի բարձր մակարդակի կիացնի միջազգային համագործակցությունը բնական աղետների կործանիչ հետևանքների կանխման և հաղթահարման ուղղությամբ:

Համալիր համակարգը (նկ. 3) առանցքային է «նոու-հաու» առաջադիմական

տեխնոլոգիաների մշակման ու կիրառման միջոցով բնական աղետների հետևանքների մեղմացման և նվազեցման համար: ՄԱԿ-ը, Եվրամիությունը և այլ միջազգային հեղինակավոր կազմակերպություններ նման համակարգերի ստեղ-



Նկ. 3. Մշտական ցանցի վրա հիմնվող փորձակայանի համակիր համակարգը
(կենտրոն՝ Գառնիում)

ծումը համարում են գերակայություն: Այդ համակարգի գործողության առավելագույն արդյունավետություն կարելի է ակնկալել բոլոր տեղային և տարածաշրջանային համակարգերը միասնական համընդհանուր համակարգում միավորելու դեպքում:

Որպես համակարգի փորձարկման և ներդրման հիմնային օբյեկտ առաջարկվում են $R=50$ կմ շառավիղով Գառնիի փորձարարական կայանը (ԳՓԿ) և Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) նույնանուն Երկրաֆիզիկական դիտարանը (ԵՖԴ) (նկ. 3):

Փորձակայանը մասնագիտացված ստորգետնյա Երկրաֆիզիկական դիտարան է, որը գտնվում է ՀՀ մայրաքաղաքից 30 կմ հեռավորության վրա՝ Գառնի գյուղի մոտակայքում, ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա, 1679 թ. Գառնիի ուժեղ ($M=7$) երկրաշարժի բուն օջախում: Նրա հիմնական առավելությունը հանքուղին է, որի լայնական հատվածը (3x4,5 մ) P տափի ձևի է, ընդհանուր երկարությունը՝ 375 մ, գտնվում է երկրի մակերևույթից 67 մ ցածր, ունի չոր մքննորտ, 14°C մշտական ջերմաստիճան, օժտված է 10 մեկուսացված խցիկ-տաղավարներով (յուրաքանչյուրի մակերեսը՝ 50 m^2): ՀՀ ԳԱԱ ԵՖԴ-ն տեղաբաշխված է ակտիվ սեյսմածին տեկտոնական խզվածքների հատման հանգույցում, որտեղ միևնույն ժամանակ առկա են Երևանին սպառնացող մի շարք հզոր սողանքային հատվածներ (Արովյան–Գառնի–Ռոդարերդ–Սովետաշեն): Բացի այդ, Գառնիի խզվածքի գոտում կա ամբարտակ ունեցող ջրամբար, նրա համար

բնութագրական են նաև այլ գեղինամիկական պրոցեսների դրսնորումները:

Հոյժ կարևոր և հրատապ խնդիր է այնպիսի համալիր համակարգի մշակումը, որը մշտագննան պարամետրների օպտիմալ համախմբի որակական վերլուծության հիման վրա, մի կողմից, ապահովեր սեյսմիկ ակտիվության զնահատումը, արտակարգ իրավիճակներին պատրաստության մակարդակի բարձրացումը և բնակչության վաղ իրազեկումը, մյուս կողմից, հնարավորություն տար հետազոտելու միջուկային պայքարուների ու մարդածին այլ գործոնների՝ որպես տրիգերային մեխանիզմների ազդեցությունը:

Եզրակացություն

Հարուցված սեյսմիկության մշտագննումն ու ուսումնասիրումը հիմնարար և կիրառական սեյսմարանության կենտրոնական խնդիրներից են: Երկրակեղեկի վրա տեխնածին բեռնվածքի մեծացումը, նոր տարածքների ուրբանիզացումը ուղեկցվում են սեյսմիկ վտանգի ու ռիսկի արագ աճմամբ. հարուցված երկրաշարժներ են առաջանում այնտեղ, որտեղ երկրաշարժներ երթեր չեն եղել: Թեև արդեն տեղի ունեցած ներգրությունների (օգտակար հանածոների արդյունահանում, ջրամբարների ստեղծում) բազմաթիվ բացասական հետևանքներ դեռ չեն դրսնորվել, սակայն ի հայտ կգան ապագայում: Բնական ներգրությունները ակտիվացնում են տեկտոնական բույլ և չափավոր երկրաշարժների միջոցով լարման մշտական պարպումը, էապես նպաստում են ուժեղ երկրաշարժների մագնիտուդների նվազմանը: Բնությունն ինքն է հուշում, թե ինչպես հակագործել աճող սեյսմիկ վտանգին. հարկ է բնօտագործման վերահսկողություն և բնական ներգրություններին համապատասխանեցված ռեժիմների պահպանում՝ ինչով խև կնվազեցվի հարուցված երկրաշարժների վտանգը, պետք է մշակել տեկտոնական լարման արիեստական պարպման մերոդմեր, որոնցում կիրառվեն ներգրության սեյսմիկ և էլեկտրական եղանակները:

Ներկայում կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է նման ծրագրերի իրականացման համար. կուտակված գիտելիքներ տեկտոնական էներգիայի սեյսմիկ պարպման պրոցեսների մասին, համալիր դիտարկումների համակարգեր, որոնց միջոցով կատարվում է սեյսմիկության և նրա վրա ներգրություն երկրաֆիզիկական պրոցեսների մշտագննում, էլեկտրական և սեյսմիկ դաշտերի այնպիսի աղբյուրներ, որոնք կարող են հարուցել տեկտոնական լարումների պարպում:

Այս պրոբլեմի մշակումը միավորել է Հայաստանի ՍՊԱԾ-ի, Գառնու երկրաֆիզիկական դիտարանի, Երևանի պետական համալսարանի և այլ կազմակերպությունների գիտնականների ու մասնագետների ջանքերը՝ նշված խնդիրները Հարավային Կովկասի սահմաններում սեյսմիկ վտանգի համալիր զնահատման նպատակային ծրագրի շրջանակներում լուծելու համար:

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

КОМПЛЕКСНАЯ СИСТЕМА ОЦЕНКИ УРОВНЯ УСИЛЕНИЯ СЕЙСМИЧЕСКОЙ АКТИВНОСТИ ПРИ ВОЗДЕЙСТВИИ ЯДЕРНЫХ ИСПЫТАНИЙ И АНТРОПОГЕННЫХ ФАКТОРОВ

Լ. Ա. ԱԽՎԵՐԴՅԱՆ, *Директор Гарнийской геофизической обсерватории НАН РА,
доктор геологических наук, Р. Գ. ԳԵՎՈՐՔՅԱՆ, заведующий кафедрой
минералогии, петрологии и геохимии ЕГУ, доктор геологических наук,
профессор, И. Խ. ԽԱՇԻՅԱՆ, лаборант кафедры минералогии,
петрологии и геохимии ЕГУ*

РЕЗЮМЕ

Изучение и мониторинг наведенной сейсмичности являются одной из центральных проблем фундаментальной и прикладной сейсмологии. На усиление сейсмичности влияют следующие техногенные воздействия: создание крупных водохранилищ, добыча нефти и газа, твердых ископаемых, подземные ядерные взрывы и мощные электрические импульсы. Сейсмический метод обнаружения позволяет определять мощность подземных взрывов оценкой магнитуды продольных сейсмических волн с учетом ряда параметров, таких, как: плотность, пористость, влажность и газовость вмещающих пород в районе взрыва. Ценную информацию для распознавания подземных взрывов дает также спектральный анализ сейсмических записей. Таким образом, действительный сейсмический контроль над ядерными испытаниями крайне необходим и возможен, в частности, в прилегающих к Кавказу регионах.

В настоящее время есть все необходимое для начала осуществления комплексных исследований с целью мониторинга сейсмичности и воздействующих на неё геофизических и техногенных процессов. Этому способствует одна из автоматических сейсмических станций международной сейсмографической сети *IRIS*, установленная в 1991 году в Армении (Гарни). Создание комплексной системы оценки состояния и геодинамики развития источников природных бедствий для повышения готовности к чрезвычайным (природным, техногенным) ситуациям на территории Армении является актуальной задачей. В качестве базового объекта испытания и внедрения системы предлагаются Гарнийский экспериментальный полигон (ГЭП) с $R=50$ км и одноименная Геофизическая обсерватория (ГГО) Национальной академии наук Республики Армения (НАН РА).

ECOLOGICAL SECURITY

COMPREHENSIVE SYSTEM OF EVALUATING INCREASE IN SEISMIC ACTIVITY INFLUENCED BY NUCLEAR TESTS AND ANTHROPOGENIC FACTORS

L. A. HAKHVERDYAN, Director of the Garni Geophysical Observatory, NAS, RA, Doctor of Geological Sciences,

R. G. GEVORGYAN, Head of the Chair of Mineralogy, Petrology and Geochemistry, YSU, Doctor of Geological Sciences, Professor,

I. Kh. KHACHIYAN, Laboratory Assistant at the Chair of Mineralogy, Petrology and Geochemistry, YSU

SUMMARY

The study and monitoring of the induced seismicity are one of the key problems of the fundamental and applied seismology. The following anthropogenic impacts lead to the increase in seismicity: construction of big reservoirs, production of oil and gas, as well as solid fossils, nuclear underground explosions and power electrical pulses. Seismic method of detection allows to determine the power of underground explosions by estimating magnitude of longitudinal seismic waves taking into account the following parameters: density, porosity, humidity and gaseousness of holding rocks in the explosion zone. The spectral analysis of the seismic records is very important for the identification of underground explosions. Thus, actual seismic control of nuclear tests is urgent and possible, particularly, in the regions adjacent to the Caucasus.

Presently, there exist all the necessary for conducting a comprehensive studies aimed at monitoring seismicity, as well as geophysical and anthropogenic processes that influence it. One of the automatized seismic stations of the international seismographic network – *IRIS* – contributes to it; the station was installed in Armenia (Garni) in 1991. Creating a comprehensive system of evaluating the state and geodynamics of the sources of natural disasters in order to increase readiness for emergencies (natural and anthropogenic) in Armenia is an urgent matter. As a basic object for testing and installing the system we propose Garni experimental area (GEA) ($R=50$ km) and Garni Geophysical Observatory (GGO) of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS, RA).

**ԶՐԱՀԻ ՀԱՐՎԱԾԱԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ
ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴ**

Ա. Ա. ՎԱՆՅՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՄԻԽԱԱՀԻԿԱՅԻ ինստիվուտի առաջակար
գիրաշխակող, ֆիզիկամաթեմատիկական գիլուրյունների դոկտոր, պրոֆեսոր,
Դ. Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՄԻԽԱԱՀԻԿԱՅԻ ինստիվուտի հայցորդ




Զրահի մեջ արկերի ու փամ-
փուշտների միարձման խնդրին
նվիրված են բազմաթիվ աշխա-
տություններ¹: Դրանցում փոքր
արագությունների դեպքում կի-
րառվել են խնդրի միաշափ մո-
դելներ, ըստ որոնց՝ միարձվող
մարմինը չի ձևախախտվում:
Սակայն արագության մեծաց-
մանը գործնքաց փոփոխվել են



նաև խնդրի լուծման մոդելները, քանի որ մեծ արագությունների դեպքում զրահի
մեջ միարձվող մարմինը հիմնականում ենթարկվում է խփառ ձևախախտման:

Սույն աշխատության նպատակն է նախկինում հեղինակի կողմից փոր-
ձարարական ճանապարհով հայտնարերված՝ զրահի էլեկտրադինամիկական
պաշտպանության մեթոդի² տեսա-
կան հիմնավորումն ու զրահի մեջ
փամփուշտի միարձման ընթացքում
տեղի ունեցող մի շարք ֆիզիկական
երևույթների մեկնաբանությունը:

Փորձերի գծապատկերը ներկա-
յացված է նկ. 1-ում:



Նկ. 1. Զրահի պաշտպանումակության մեծացման
էլեկտրադինամիկական մեթոդի գծապատկերը


¹ Տես, օրինակ, M. E. Backman, W. Goldsmith. The mechanics of penetration projectiles into targets. «International Journal of Engineering Science». New York, 1978, Vol. 16; A. Г. Багдоец, А. А. Ванциян. Проникание тонких тел в упругие среды. «Механика». Е., 1981, т. 34, № 1; Ա. Ա. Վանչյան, Դ. Խ. Հովսեփյան. Տարրեր ձև ունեցող ձևախախտելի ինդենտորների ներքափակումը նախապես առաջական միջավայրում: «ՀԲ», 2005, հմ. 1, Ա. Ա. Vantsyan, D. Kh. Hovsepyan. The penetration of deformable indenter into half-space in the presence of discharge current and magnetic field. «Actual Problems of Mechanics of Continuum Media». Yerevan, 2007; W. Goldsmith. Penetration and perforation processes in metal targets on and above ballistic velocities. «International Journal of Mechanical Sciences». New York, 1971, Vol. 13; Ա. Յ. Սոգոմոնյան. Проникание. М., 1974, с. 299:

² Տես Ա. Ա. Վանչյան. Влияние электромагнитных полей и анизотропных свойств среды на динамические процессы в сплошных средах. Е., 2004, с. 224:

Արկը, ծակելով բարակ մետաղյա թիթեղը, անցնելով էլեկտրամեկուսիչ շերտը և քրամասով դիպչելով զրահին, փակում է զրահ-թիթեղ-կոնդենսատոր շղբան: Նախապես լիցքավորված կոնդենսատորից լիցքերը թիթեղով և արկով անցնում են զրահի մեջ: Արկի միջոցով կատարվում է $\sim 10^5 \div 10^8$ Ա հոսանքով պարպում: Էլեկտրապլաստիկուրյան երևոյթի համաձայն՝ այն միջավայրում, որով անցնում է պարպման մեծ հոսանք, տեղի է ունենում արկի պլաստիկուրյան սահմանի անկուս³: Պարպման հոսանքը՝ $10^5 \div 10^8$ Ա, որն անցնում է արկով, հանգեցնում է արկի խիստ ձևախախտման, ինչի հետևանքով մեծանում է նաև զրահի դիմադրությունը, հետևաբար նաև նվազում է զրահի մեջ արկի միարժման խորությունը:

Նկ. 2-ում ներկայացված են բնական պայմաններում կատարված փորձերի նկարները նմուշի կտրվածքում: Նկ. 2 ա)-ում ներկայացված է միարժման հետքի և այնտեղից հանված փամփուշտի տեսքը պարպման հոսանք չլինելու դեպքում: Արգելով եղել է դուրավումինից (D-16), և փամփուշտի արագությունը հարվածի պահին՝

~ 720 մ/վ: Նկ. 2 բ)-ում (կոնդենսատորի պարամետրները՝ 0,02 ֆ, 200 Վ) և 2 գ)-ում (կոնդենսատորի պարամետրները՝ 0,04 ֆ, 200 Վ) ներկայացված են նույն արգելքում ու հարվածի նույն սկզբնական արագության դեպքում միարժման հետքի և այնտեղից հանված ձևախախտված փամփուշտի տեսքերը:



Նկ. 2.

ԽՆԴԻՔԸ ԲՆՈՒԹՎԳՐՈՂ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԸ

ԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒ ԵԶՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դիտարկենք առանցքահամաշափ, սկզբնապես արգելքի մակերևույթին ուղղահայաց շարժվող, ձևախախտվող մարմնի միարժման խնդիրը (տես նկ. 3):

Այստեղ՝ $\Omega_1 = \omega_1 \cup \omega_2$ -ը միարժվող մարմնի մակերևույթն է,

$$\Omega_2 = \omega_3 \cup \omega_4 - \text{ազատ } \text{մակերևույթը:}$$

Սկզբնական պայմաններն են՝

$$\sigma_{rr}(r, z, 0) = \sigma_{zz}(r, z, 0) = \sigma_{rz}(r, z, 0) = 0,$$


$$\sigma_0(r, z, 0) = \epsilon(r, z, 0) = \rho(r, z, 0) = \rho_0,$$

$$t = 0,$$

$$v(r, z, 0) = \begin{cases} v_0, & \text{եթե } (r, z) \in \Omega_1 \\ 0, & \text{եթե } (r, z) \in \Omega_2, \end{cases}$$

$$j_z = j_r = 0, \text{ եթե } r > r_0, \quad j_z = J_0, \text{ եթե } r \leq r_0,$$

$$u(r, z, 0) = 0, \text{ եթե } (r, z) \in \Omega_1 \cup \Omega_2:$$



Նկ. 3.

³ Տես Վ. Ի. Շուշան, Օ. Ա. Տրուպկի. Էլեկտրոլատիկական էֆֆեկտ մետալներու վերաբերյալ. «Վեստնիկ АН СССР», 1974, № 11; Հ. Հ. Բեկլեմիշև, Գ. Ս. Շալիպո. Օ օրու դեֆորմացիա և քանակական դիմադրության փոփոխությունը պարագաների վերաբերյալ. Մ., 1984, ս. 41—59:

Եզրային պայմաններն են՝ $\sigma_{nn} = \sigma_{n\tau} = 0$, եթք $(r, z) \in \omega_1 \cup \omega_3$,

$u = v = 0$, եթք $(r, z) \in \omega_4$ (կատարվում է ինքնաբերաբար, ելնելով լուծումից՝ ω_4 -ի արժեքը կարող ենք վերցնել այնքան, որ համապատասխանի անվերջ միջավայրի մոդելին), ω_2 -ի դեպքում $u_n^+ = u_n^-$, $u_\tau^+ = u_\tau^-$ կամ $u_r^+ = u_r^-$, $u_z^+ = u_z^-$, ինչը համապատասխանում է հպման մակերևույթին տեղափոխության և արագության վեկտորների անընդհատության պայմանին՝ $\bar{u}^+ = \bar{u}^-$, $\bar{v}^+ = \bar{v}^-$, որտեղ «+» նշանով նշագրված են միարժող մարմնին համապատասխանող, իսկ «-» նշանով՝ միջավայրին համապատասխանող լուծումները:

$z = h$ դեպքում (h -ը արգելի հաստությունն է) կատարվում են ազատ մակերևույթի պայմանները:

Այստեղ օգտագործված են զանգվածի, շարժման քանակի և էներգիայի պահպանման ու մակածության հավասարումները, որոնք կոռորդինատների գլանային համակարգում ունեն հետևյալ տեսքը՝

$$\frac{\partial}{\partial t}(\bar{U}_r) + \frac{\partial}{\partial r}(\bar{F}_r) + \frac{\partial}{\partial z}(\bar{G}_r) = \bar{H}, \quad (1)$$

որտեղ՝

$$\bar{U} = \begin{vmatrix} \rho \\ \rho u \\ \rho v \\ e \end{vmatrix}, \quad \bar{F} = \begin{vmatrix} \rho u \\ \rho u^2 - \sigma_r \\ \rho uv - \sigma_{rz} \\ (e - \sigma_r)u - \sigma_{rz}v \end{vmatrix}, \quad \bar{G} = \begin{vmatrix} \rho v \\ \rho uv - \sigma_{rz} \\ \rho v^2 - \sigma_z \\ (e - \sigma_z)v - \sigma_{rz}u \end{vmatrix}, \quad \bar{H} = \begin{vmatrix} 0 \\ \sigma_\varphi \\ 0 \\ 0 \end{vmatrix}: \quad (2)$$

Այստեղ u -ն և v -ն միջավայրի մասնիկների արագություններն են, համապատասխանաբար, r և z առանցքներով, $\sigma_r = \sigma + s_r \cdot \mathbf{l}$, $\sigma_z = \sigma + s_z \cdot \mathbf{l}$, $\sigma_\varphi = \sigma - (s_r + s_z) \cdot \mathbf{l}$, $\sigma_{rz} = s_{rz} \cdot \mathbf{l}$ լարումների թենօրի բաղադրատարրերն են, ե-ն լրիվ էներգիան է՝

$$e = \rho \left[\varepsilon + \frac{1}{2} (u^2 + v^2) \right], \text{ որտեղ } \varepsilon \text{-ը միջավայրի ներքին էներգիան է:}$$

Համակարգի ամփոփման համար անհրաժեշտ է այն լրացնել հետևյալ որոշիչ առնչություններով՝

$$\bar{E} = \frac{D}{Dt} \bar{S} + \lambda \bar{S}, \quad \bar{E} = \begin{vmatrix} 2\mu e_r \\ 2\mu e_\varphi \\ 2\mu e_z \\ \mu e_{rz} \end{vmatrix}, \quad \bar{S} = \begin{vmatrix} s_r \\ s_\varphi \\ s_z \\ s_{rz} \end{vmatrix}, \quad (3)$$

$$s_r = \sigma_r - \sigma, \quad s_\varphi = \sigma_\varphi - \sigma, \quad s_z = \sigma_z - \sigma, \quad \sigma = \frac{1}{3} (\sigma_r + \sigma_\varphi + \sigma_z),$$

$$e_r = \frac{\partial u}{\partial r} - \theta, \quad e_z = \frac{\partial v}{\partial z} - \theta, \quad e_{rz} = \frac{\partial u}{\partial z} + \frac{\partial v}{\partial r}, \quad e_\varphi = \frac{u}{r}, \quad \theta = \frac{1}{3} \left(\frac{1}{r} \cdot \frac{\partial(ru)}{\partial r} + \frac{\partial(v)}{\partial z} \right),$$

$$\sigma(\rho, \varepsilon) = \sum_{i=1}^3 a_i \left(\frac{\rho}{\rho_0} - 1 \right)^i + \rho \left[a_4 + a_5 \left(\frac{\rho}{\rho_0} - 1 \right) \right] \varepsilon:$$

λ-ի արժեքը կարելի է գտնել Միզեսի առնչություններից, սակայն, ինչպես ցույց է տվել ՈՒիլկինսը⁴, կարելի է սահմանափակվել դրանց առաձգական մասով՝ $E = Ds^e / Dt$, և այնուհետև լարումները բերել հոսունության շրջանի (D/Dt -ն Յառամանի ածանցյալն է):

Դիցուք՝ s_r^e, s_z^e, s_{rz}^e -ը լարումների առաձգական շեղիներն են, որոնց համար $E = Ds^e / Dt$:

$$\text{Այդ դեպքում՝ } 2\mu e_r = \frac{Ds_r^e}{Dt}, \quad 2\mu e_z = \frac{Ds_z^e}{Dt}, \quad \mu e_{rz} = \frac{Ds_{rz}^e}{Dt}, \quad (4)$$

ինչից բխում է՝ $e_\theta = Ds_\theta^e / Dt$:

Պլաստիկության տիրույթի համար թենգորի s_r^e, s_z^e, s_{rz}^e բաղադրատարրերից յուրաքանչյուրը բազմապատկելով հետևյալ բազմապատկիշով՝

$$\sqrt{\frac{1}{3}\sigma_s} / \left[\left(s_r^e \right)^2 + \left(s_z^e \right)^2 + s_r^e s_z^e + \left(s_{rz}^e \right)^2 \right]^{\frac{1}{2}}, \quad (5)$$

կստանանք՝

$$\frac{s_i}{s_i^e} = \frac{\sqrt{\frac{1}{3}\sigma_s}}{\left[\left(s_r^e \right)^2 + \left(s_z^e \right)^2 + s_r^e s_z^e + \left(s_{rz}^e \right)^2 \right]^{\frac{1}{2}}}; \quad (6)$$

(4) և (6) հավասարությունները կատարվում են այն առաձգավաստիկական տիրույթում, որի համար տեղի ունի հետևյալ պայմանը.

$$\left(s_r^e \right)^2 + \left(s_z^e \right)^2 + s_r^e s_z^e + \left(s_{rz}^e \right)^2 > \frac{1}{3}\sigma_s^2 : \quad (7)$$

Եթե (7) պայմանը չկատարվի, ապա միջավայրը կգտնվի առաձգական վիճակում, այսինքն՝ անհրաժեշտ կլիմի ընդունել, որ $s_i = s_i^e$:

Խնդիրը լուծվում է արկի ձև ունեցող միրճվող մարմնի համար: Թվային լուծումների նպատակն է գտնել միրճվող մարմնի, միրճման հետքի և արգելքի ազատ մակերևույթի տեքրերը, ինչպես նաև արգելքի և արկի լարվածածնախախոտումային վիճակը:

Թվային հաշվարկումը կատարում ենք Լաքս-ՈՒենդրոֆի մեթոդով: Կիրառվում է բացահայտ երկշերտ սխեմա, որն ունի 2-րդ կարգի մոտարկում: Ցանցի տարրական բջիջը X, Z, t առանցքներով ունի, համապատասխանաբար, $2\Delta r, 2\Delta z, 2\Delta t$ չափեր⁵:

⁴Տե՛ս A. A. Վանշյան, Դ. X. Օվսեպյան. Напряженно-деформированное состояние при соударении деформируемого индентора об упругое полупространство при наличии разрядного тока. «V международная конференция «Проблемы динамики взаимодействия деформируемых сред»». Горис, 2005, сс. 116 – 123, Ա և Վանցյան, Դ. Խ. Հովսեպյան, նշ. աշխ., էջ 497–499:

⁵Տե՛ս D. Kh. Hovsepyan. Numerical and physical experiment of the penetration of deformable indentor. «Information Technologies and Management». Yerevan, 2003, Vol. 4:

Նախ հաշվենք միջին արժեքները ժամանակի $t=(n+1)\Delta t$ պահին հետևյալ բանաձևով՝

$$U_{j,l}^{n+1} = \frac{1}{4} \left(U_{j+1,l}^n + U_{j-1,l}^n + U_{j,l+1}^n + U_{j,l-1}^n \right) - \Delta t \left(\frac{(rF)_{j+1,l}^n - (rF)_{j-1,l}^n}{2r_{j,l}\Delta r} + \frac{G_{j,l+1}^n - G_{j,l-1}^n}{2\Delta z} \right) + \frac{\Delta t}{4r_{j,l}} (H_{j+1,l}^n + H_{j-1,l}^n + H_{j,l+1}^n + H_{j,l-1}^n) : \quad (8)$$

Այնուհետև հաշվենք ժամանակի $t=(n+2)\Delta t$ պահին վերջնական արժեքները հետևյալ բանաձևով՝

$$U_{j,l}^{n+2} = U_{j,l}^n - \Delta t \left(\frac{(rF)_{j+1,l}^{n+1} - (rF)_{j-1,l}^{n+1}}{r_{j,l}\Delta r} + \frac{G_{j,l+1}^{n+1} - G_{j,l-1}^{n+1}}{\Delta z} \right) + \frac{2\Delta t H_{j,l}^n}{r_{j,l}} + Q_{j,l}^n : \quad (9)$$

(9) բանաձևի աջ կողմում ավելացված է արհեստական մածուցիկությունը բնութագրող արտահայտությունը: Ըստ Բուրստայնի՝ եթե արհեստական մածուցիկության համար կիրառելի է հետևյալ բանաձևը՝

$$Q = \chi \frac{\Delta t}{2\Delta r} [\Delta_r (q_r \Delta_r U) + \Delta_z (q_z \Delta_z U)], \quad (10)$$

որտեղ՝ X -ն արհեստական մածուցիկության գործակիցն է, Δ -ն կենտրոնացված տարրերության օպերատորն է, $(q_r)_{j,l} = |u_{j+1,l} - u_{j-1,l}| I$, $(q_z)_{j,l} = |v_{j,l+1} - v_{j,l-1}| I$, ապա սխեման կինդի կայուն:

Պարզեցնենք արհեստական մածուցիկության համար եղած արտահայտությունը.

$$U = \begin{vmatrix} U_{11} & U_{12} & U_{13} & \dots & U_{1n} \\ U_{21} & U_{22} & U_{23} & \dots & U_{2n} \\ U_{31} & U_{32} & U_{33} & \dots & U_{3n} \\ \dots & \dots & \dots & \dots & \dots \\ U_{n1} & U_{n2} & U_{n3} & \dots & U_{nn} \end{vmatrix}, \quad U_{j,l} = U(r, z),$$

$$\Delta_r U = \begin{vmatrix} \frac{U_{2+1/2,2} - U_{2-1/2,2}}{2} & \frac{U_{2+1/2,3} - U_{2-1/2,3}}{2} & \dots & \frac{U_{2+1/2,n-1} - U_{2-1/2,n-1}}{2} \\ \frac{U_{3+1/2,2} - U_{3-1/2,2}}{2} & \frac{U_{3+1/2,3} - U_{3-1/2,3}}{2} & \dots & \frac{U_{3+1/2,n-1} - U_{3-1/2,n-1}}{2} \\ \frac{U_{n-1+1/2,2} - U_{n-1-1/2,2}}{2} & \frac{U_{n-1+1/2,3} - U_{n-1-1/2,3}}{2} & \dots & \frac{U_{n-1+1/2,n-1} - U_{n-1-1/2,n-1}}{2} \end{vmatrix},$$

$$\Delta_r U|_{j,l} = \frac{U_{j+1/2,l} - U_{j-1/2,l}}{2}; \quad j = 2, \dots, n-1; \quad l = 2, \dots, n-1$$

$$q_r = \begin{vmatrix} |u_{2+1/2,2} - u_{2-1/2,2}| & 0 & \dots & 0 \\ 0 & |u_{3+1/2,3} - u_{3-1/2,3}| & \dots & 0 \\ \dots & 0 & \dots & |u_{n-1+1/2,n-1} - u_{n-1-1/2,n-1}| \end{vmatrix}$$

$\Delta_r U$ -ի վրա կիրառելով q_r օպերատորը՝ կստանանք.

$$q_r \cdot \Delta_r U|_{j,l} = \frac{(U_{j+1/2,l} - U_{j-1/2,l}) \cdot |u_{j+1/2,j} - u_{j-1/2,j}|}{2} :$$

Այնուհետև կիրառելով Δ_r օպերատորը $q_r \cdot \Delta_r U$ -ի վրա՝ կստանանք.

$$[\Delta_z(q_z \cdot \Delta_z U)]_{j,l} = \frac{(U_{j+1,l} - U_{j,l}) \cdot |v_{j+1,j} - v_{j,j}| - (U_{j,l} - U_{j-1,l}) \cdot |v_{j,j} - v_{j-1,j}|}{4} : \quad (11)$$

Նման ձևով կստանանք նաև.

$$[\Delta_z(q_z \cdot \Delta_z U)]_{j,l} = \frac{(U_{j,l+1} - U_{j,l}) \cdot |v_{j,j+1} - v_{j,j}| - (U_{j,l} - U_{j,l-1}) \cdot |v_{j,j} - v_{j,j-1}|}{4} : \quad (12)$$

(12) և (11) բանաձևերը տեղադրելով (10)-ի մեջ՝ կստանանք.

$$\begin{aligned} Q_{j,l}^n = & \chi \frac{\Delta t}{2\Delta r} \left[\frac{(U_{j+1,l}^n - U_{j,l}^n) \cdot |u_{j+1,j}^n - u_{j,j}^n| - (U_{j,l}^n - U_{j-1,l}^n) \cdot |u_{j,j}^n - u_{j-1,j}^n|}{4} + \right. \\ & \left. + \frac{(U_{j,l+1}^n - U_{j,l}^n) \cdot |v_{j,j+1}^n - v_{j,j}^n| - (U_{j,l}^n - U_{j,l-1}^n) \cdot |v_{j,j}^n - v_{j,j-1}^n|}{4} \right] : \end{aligned} \quad (13)$$

Խնդրի թվային հաշվարկումները կատարված են (1-7) խնդրի a_i հաստատումների հետևյալ արժեքների համար (պարզության համար արգելի և միարժվող մարմնի համար վերցված են հաստատումների միևնույն արժեքներ)⁶.

$$\sigma_s = 3 \cdot 10^8 \text{ Ն}/\text{մ}^2, \rho_0 = 2700 \text{ կգ}/\text{մ}^3, \mu = 7 \cdot 10^8 \text{ Ն}/\text{մ}^2, a_1 = -1,53 \cdot 10^{11} \text{ Ն}/\text{մ}^2,$$

$$a_2 = -1,74 \cdot 10^{11} \text{ Ն}/\text{մ}^2, a_3 = -0,532 \cdot 10^{11} \text{ Ն}/\text{մ}^2, a_4 = -1,912, a_5 = 0,386:$$

Խնդրը կարելի է լուծել a_i հաստատումների ցանկացած արժեքների դեպքում, եթե դրանք հայտնի են տրված արգելի և միարժվող մարմնի համար:

Ստորև ներկայացված նկարներում շրջանակները ցույց են տալիս լարումների չափը, ընդ որում, սև շրջանակները համապատասխանում են դրական, իսկ դատարկ շրջանակները՝ բացասական լարումներին, ընդսմին տեղի ունի հետևյալ համապատասխանությունը՝


\bigcirc	$\sim -6\sigma_s$	\bullet	$\sim 6\sigma_s$
\bigcirc	$\sim -3\sigma_s$	\bullet	$\sim 3\sigma_s$
\bigcirc	$\sim -10^{-1}\sigma_s$	\bullet	$\sim 10^{-1}\sigma_s$

Մեր կողմից կատարվել են բազմաթիվ գիտափորձեր և գրանցվել են միարժման ընթացքը բնութագրող մեծությունները՝ նշված սկզբնական արագության, պարզման հոսանքի խտության և արգելի հաստության տարրեր արժեքների համար:

Նկ. 4-ում պարզ երևում է, որ արգելը և արկը ենթարկվում են բարդ լարվածածևախսախտման, առկա են լարումների ինչպես ձգող, այնպես էլ սեղմող

⁶Տե՛ս A. A. Վահագին, Դ. X. Օվսեպյան. Проникание деформируемого индентора в первоначально упругую среду при наличии магнитного поля. «V международная конференция «Проблемы динамики взаимодействия деформируемых сред»». Горис, 2005, сс. 105 – 115:


σ_{zz} լարումների դաշտերը



$V_{\text{ճճ.}} = 360 \text{ մ/վ}$ (արգելից դուրս գալու արագություն)

Նկ. 4. $V_0 = 720 \text{ մ/վ}$, $h = 25 \cdot 10^{-3} \text{ մ}$, $J_0 = 0$

σ_{rr} լարումների դաշտերը



Նկ. 5. $V_0 = 720 \text{ մ/վ}$, $J_0 = 10^5 \text{ Ա/մ}^2$



ախրույթներ: Կետագծերով նշված են առաձգական և պլաստիկական տիրույթների քաժանման մակերևույթները: Դժվար չէ նկատել նաև, որ թե՛ արգելքում, թե՛ արկում մխրճման ընթացքում տեղի են ունենում շառավիլի և մխրճման ուղղույթյամբ տատանումներ:

Համեմատելով 4 և 5 նկարները, որտեղ մխրճումը կատարվում է, համապատասխանաբար, պարպման հոսանքի բացակայությամբ ($J_0 = 0$) և առկայությամբ ($J_0 \neq 0$), կարելի է նկատել, որ եթե $J_0 = 0$ դեպքում արկը ծակում է արգելքը՝ դուրս գալով $V_{\text{ճճ.}} = 360 \text{ մ/վ}$ արագությամբ, ապա $J_0 \neq 0$ դեպքում արգելքը չի ծակում, և արկը ենթարկվում է ավելի մեծ ձևախախտումների: Առկա է նաև

պլաստիկուրյան տիբույքների մեծացում, ինչը բացատրվում է էլեկտրապլաստիկուրյան երևույթով⁷:

Հաշվարկները ցույց են տալիս, որ հարվածի տիբույքի շրջանում տեղի է ունենում արգելքից և արկից բեկորների անջատում, ըստ որում, $J_0=0$ դեպքում բեկորների թիվն էապես փոքր է, իսկ J_0 -ի առկայությամբ տեղի է ունենում պայյուն՝ կարճ միացման առաջացման (հոսանքի կտրուկ աճման) պատճառով, որը հանգեցնում է բեկորների քանակի մեծացման և արկի ձևախախտման (ծայրամասի բացման):

Նկ. 6-ում և նկ. 7-ում բերված σ_{rr} և σ_{zz} լարումների դաշտերը համապունեցիալ մակերևույթների պատկերներից պարզ երևում է, որ պարպման հոսանքի առկայության դեպքում տեղի է ունենում լարումների տեղաբաշխություն: Միջավայրում պարպման հոսանքի առաջացման պատճառով $\bar{J} \times \bar{H}$ ամպերյան ուժի ազդեցուրյամբ միջավայրը սեղմվում է, ինչի հետևանքով արկում լարումների արժեքներն էապես մեծանում են:



Եթե $V_0=500$ մ/վ և $J_0=0$, ապա արկը, ծակելով արգելքը, դուրս է զալիս բնականաբար ավելի փոքր արագույթյամբ՝ 180 մ/վ, իսկ եթե $J_0 \neq 0$, ապա արկը մնում է արգելքի մեջ ($V=0$ դեպք)՝ նրա հետնամասում առաջացնելով խորդուրոդ ուռուցիկ մակերևույթ:





Ավելի փոքր՝ 300 մ/վ, արագույթյամբ շարժվող արկի հարվածի $J_0=0$ և $J_0 \neq 0$ դեպքերում առկա է արգելքի մակերևույթի ընդգծված ձևախախտում, ինչը բացատրվում է իներցիայի ուժերի ավելի փոքր լինելու հանգամանքով: Թեև այս արագույթյամբ հարվածի, և $J_0=0$, և $J_0 \neq 0$ դեպքերում արգելքը չի ծակվել, սակայն

⁷ Տես Ն. Ն. Բիկլիմիշի, Գ. Ա. Շասլիկոն, 62. աշխ., էջ 41–59:

$J_0 \neq 0$ դեպքում միարձման խորությունը շատ ավելի փոքր է, քան $J_0=0$ դեպքում:





$V_0=300$ մ/վ արագությամբ հարվածի դեպքում պարպման հոսանքի առկայությունը դարձյալ հաճացեցնում է պլաստիկության տիրույթի և արկի ձևախախտման զգալի մեծացման:

σ_{rr} լարումների դաշտերը



$V_{\text{աջ}}=550$ մ/վ

σ_{rr} լարումների դաշտերը



$V_{\text{աջ}}=500$ մ/վ

Նկ. 8. $V_0=720$ մ/վ, $h=15 \cdot 10^{-3}$ մ, $J_0=0$

Նկ. 9. $V_0=720$ մ/վ, $h=15 \cdot 10^{-3}$ մ, $J_0=10^5$ Ա/մ²

Ավելի բարակ արգելքի դեպքում արկի միարձման արագությունը դանդաղ է նվազում, ուստի պարպման հոսանքի ազդեցությունը ավելի կարծ է տևում, հետևաբար լիքրավորված կոնդենսատորի էներգիան լրիվ ծավալով չի օգտագործվում, ինչի հետևանքով $J_0 \neq 0$ դեպքում նույնապես տեղի է ունենում արգելքի ծակում: Այս դեպքում նկատվում է արգելքի ճկվածքի, բեկորների քանակի ու պլաստիկության տիրույթի զգալի մեծացում: Այս դեպքը ներկայացված է նկ. 8-ում ($J_0=0$) և նկ. 9-ում ($J_0 \neq 0$):

Բարակ արգելքի դեպքում տրամաբանական է, որ հարվածի սկզբնական պահին բեկորները հայտնվում են արգելքի ճակատային մասում, իսկ արգելքից արկի դորս գալու պահին բեկորները գերակշռում են արգելքի հետնամասում:

Հաշվարկները ցույց են տալիս, որ արգելքի մեջ արկի միարձումը տեղի է ունենում փոփոխական արագությամբ՝ տատանումներով: Այս երևույթը պայմա-

նավորփած է արգելքում և արկում տեղի ունեցող առաձգական տատանումներով, ինչպես նաև ժամանակի լինթացքում պարզման հոսանքի տատանումներով, ինչը դրսնորփում է $\bar{J} \times \bar{H}$ ամպերյան ուժի տեսքով:

Պետք է նշել, որ արգելքի և նրա առջև տեղադրված հաղորդիչ թիթեղի միջն եղած հեռավորությունը որոշակի ազդեցություն է գործում արգելքի մեջ մարմնի միարժնան արագության վրա: Կատարված փորձարկումները և համապատասխան հաշվարկները ցույց տվեցին, որ արկը կանգնելուց հետո ունենում է բացասական արագություն, որը արկի և արգելքի միջն փոքր շփման ուժի դեպքում կարող է հանգեցնել միարժնան հետքից արկի դրուս մոլորուն:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ եթե արգելքի մեջ արկի կամ փամփուշտի միարժումն ուղեկցվում է մեծ խտությամբ պարպումային հոսանքի առաջացնմամբ, ապա միարժնան խորությունը էապես նվազում է, ինչի հետևանքով էլ մեծանում է արգելքի հարվածադիմացկունությունը: Նշված երևույթն առաջացնելու համար կոնդենսատորի $CU^2/2$ էներգիան կազմել է միարձվող մարմնի $m^2/2$ էներգիայի լրնամենը 10-15 %-ը:

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

ЭЛЕКТРОДИНАМИЧЕСКИЙ СПОСОБ ПОВЫШЕНИЯ УДАРОПРОЧНОСТИ БРОНИ

*А. А. ВАНЦЯН, ведущий научный сотрудник Института механики НАН РА,
доктор физико-математических наук, профессор,
Д. Х. ОВСЕПЯН, соискатель Института механики НАН РА*

РЕЗЮМЕ

Предлагается электродинамический способ увеличения защитных свойств брони. Проведенные эксперименты и теоретические исследования обосновывают эффективность предложенного способа. Выявлено, что используя дополнительно всего 10-15 % от энергии снаряда можно более чем в два раза уменьшить глубину его проникания в броню.

Проведен подробный теоретический анализ физических явлений, сопутствующих процессу проникания деформируемого снаряда в броню при наличии разрядного тока.

MILITARY ENGINEERING

AN ELECTRODYNAMIC METHOD OF INCREASING THE ARMOUR IMPACT RESISTANCE

A. A. VANTSYAN, *Leading Research Fellow at the Institute of Mechanics, NAS, RA,
Doctor of Physical and Mathematical Sciences, Professor,*
D. Kh. HOVSEPYAN, *Applicant at the Institute of Mechanics, NAS, RA*

SUMMARY

In this article an electrodynamic method of increasing the protective properties of armour is proposed. The conducted experiments and theoretical studies verify the effectiveness of the method proposed. It is revealed that the additional use of only 10-15 % of the projectile energy may decrease its penetration length into armour more than twice.

A detailed theoretical analysis of physical phenomena is carried out, which accompany the process of deformable projectile penetration into armour under the discharge current.

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԽԱԹԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

**Դ. Ա. Չիլինգարչյան, գնդապետ, ԱՌՀԻ-ի պետի փեղակալ –
«Հայկական բանակ» ռազմագիրական համակի գլխավոր խմբագիր**



Անկախացումից հետո Հայաստանում բարձրացավ «ազգային վերածննդի» ալիք: Ալեկոծվող ազգային օվկիանոսը, Շիրազի հանճարեղ խոսքով, ջրի երես հանեց փրփուրը՝ նրանց, ովքեր իրադարձությունների բնականոն ընթացքի դեպքում երբեք երևան չէին գա: Մինչդեռ մարզարիտները քաքնվեցին հատակում կամ էլ ի սպառ վերացան տեսադաշտից: Եթելից «բրուս մղվեցին» Կոմիտասը, Մակար Եկմայանը, Արամ Խաչատրյանը: Արմենակ Շահմուրադյանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի, Հայկանուշ Դանիելյանի, Նար Հովհաննիսյանի, Շարա Տայյանի, Լուսիկ Քոչյանի, Արաքս Գյուլգաղյանի բարձրարվեստ կատարումներին «փոխարինելու» եկան անտաղանդ «երգահանների» ստեղծագործությունների բաղաձայն «երգիշ-երգչուիխների» կատարումները: Այդ «արվեստագետների» հաջողությունները պայմանավորված են ոչ այնքան նրանց ձայնային տվյալներով կամ երգեցողական արվեստով, որքան բարեկամական և այլ կապերով, ինչպես նաև հատուկ ձայնային տեխնիկական միջոցների կիրառմամբ: Մամուխ Էջերն ու եթերը լցվեցին ոչ մասնավիտական, բառիս վատագույն իմաստով սիրողական կարծիքներով ու դատողություններով: Այնպիսի հաղորդումներ, ինչպիսիք են «Ինչպես դառնալ միլիոնատեր», զանազան հեռուստավիկտորինաներ և այլն, խաչքառները, որոնք կոչված են տարածելու գիտելիք, տգիտություն են սերմանում: Կարո՞ղ էր որևէ մեկն սպասել, որ «Չիռ-Չիռ-Սան» օպերայի հեղինակ կհայտարարվի Վերդին, կամ որ «Մատնաչափիկը» Անդերսենի հերիաքը չի հանարվի, որ Հինդենրուրգը կհոչակի Գերմանիայի կայսր (դրամբ «ճիշտ» պատասխաններն են): Եվ կա՞ արդյոք զարմանալու պատճառ, եթե մեր ռադիոյի այսպես կոչված առաջատար ու բազմափորձ հաղորդավարը ռադիոյի գյուտն անելու համար շնորհակալություն է հայտնում Պավորվիճ:

Դպրոցներում քննադատվում է Սամվել Մամիկոնյանի արարքը*: Որոշ գիտնականներ, խաղաղով «օբյեկտիվություն» և «հիմնվելով պատմական տվյալների

* Խոսքը վերաբերում է Սամվել իշխանին, որն ըստ Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությունների սպանեց իր դավաճան հորը, իսկ Բաֆֆու հանրահայտ համանուն վեպում սպանեց նաև դավաճան մորը:

վրա», փաստորեն կասկածի տակ են դնում ազգային արժեքները, քանի որ նսեմացնում են սխրագործությունները՝ դրանց վերագրելով ճղճիմ շարժառիթներ (Վարդան Մամիկոնյան, Անդրանիկ և ուրիշներ):

Հատկապես ահավոր են գովազդային տեքստերն ու մարզական մեկնաբանությունները: Ահա գովազդներից մեկը. «*Մեզ կա ինչ ասել»* (իմա՝ մենք ասելու քան ունենք): Մի կողմ բողնենք մարզական «մեկնաբանների» մասնագիտական պատրաստականության հարցը, սակայն անընդունելի է, եթե մեզ հրամցվում են «Գնդակը դիմուից դարպասաջողին», «Ես երեսուն դրարի կանգնած եմ հայկական ֆուլբոլի ակունքների մուտ», «Իսկ «Դմամոն» իմշու է բողոքում ֆեղերացիայից, որին ոչ ոք չիսանգարեց գրավել երրորդ դրեղը» (երրորդ տեղ գրավել էր «Դմամոն») և այլ նմանատիպ «գոհարներ»: Եվ արդյոք չի ամաչում բանասիրական գիտությունների դոկտորը, «Ֆուլբոլ+» թերքում այդ «գիտակներից» մեկին վերագրելով հայերնի «կատարյալ իմացություն»:

Այս ամենը կարող է ընթեցնելու բավարար սերնդի հասցեին հնչեցված հերթական «վիճրվինթոց», եթե չլիներ հետևյալ նկատառումը: **Լեզուն ոչ միայն հաղորդակցվելու գերգիշավոր միջոցն է, այլև ազգային ինքնության, ազգային մտածելակերպի առավել ցայտուն դրսորումը, որը հետադարձ կապով ներգործում է այդ մտածողության վրա:** Ահա սա է լեզվի աղավաղման հետ կապված մեծագույն վտանգը. օրինականացնելով լեզվական կոպիտ սխալները՝ մենք խեղում ենք մեր ազգային մտածելակերպը: Իսկ սխալները շատ արագ են տարածվում և մոլախոտի պես ահուելի դժվարությամբ են արմատախիլ արվում: Դրա պատճառը, մեր կարծիքով, հետևյալն է: Զարգացած տրամարանություն ու լեզվագրացողություն չունեցող մարդկանց հաճելի է ցանկացած «նորույթ», որը ոչ միայն հնարավորություն է տալիս քողարկելու իրենց տգիտությունը, այլև խախտելու օրինաչափության միապահադությունը՝ ստեղծելով հոետորական տաղանդի առկայժման տպակիրություն:

Անընդհատ կրկնվող լեզվական սխալներն աղավաղում են ամբողջ ժողովրդի լեզվամտածողությունը՝ առաջ բերելով նաև ազգային մտածողության, ուստի և՝ ազգային արժեքների համակարգի, կացութաձևի, ազգային ինքնության աղճատում: Մինչդեռ ժողովուրդն է խաղաղ և պատերազմի ժամանակ իր զավակներին ուղարկում բանակ, նա է մեծապես ազդում երիտասարդ սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության, մարտական ոգու ծևավորման վրա: ՈՒստի համատարած լեզվական սխալներն իրենց բացասական ազդեցությունն են բողնում ամբողջ պաշտպանական-անվտանգային համակարգի բնականոն գործունեության վրա:

Լեզվի օգտագործման առավել տարածված, ուստի և ազդու միջոցներն են մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն, իսկ անկախացումից հետո այնտեղ «հորդեցին» կիսագրագետ, լեզվատրամարանությունից գուրկ մարդիկ: Բերենք հետևյալ օրինակը: Առաջին թարգմանիչները ծօւայ ոցշուական գործունեության վրա:

կան պատրաստություն» և «մարտական պատրաստականություն» տերմիններով: Այն հարցին, թե այդ դեպքում ինչպես պետք է քարգմանվի ծօւայ առաջարկում են օգտագործել դարձյալ «մարտական պատրաստականություն» բառակապակցությունը, թեև ծօւայ առաջարկում ծօւայ կարող ասել՝ «մարդկան պարրասպականությունը մարդկան պարրասպականության կարևոր փարրան է»: Հայտնվելով անելանելի դրույթն մեջ՝ նրանք «հույժ տրամաբանորեն» հայտարարում են, թե հայերենում նման հասկացություն չկա, անզամ շինանալով, որ լեզվում չկան և չեն կարող լինել հասկացություններ, այլ կան դրանք նշանակող տերմիններ:

Այսօր մենք կխոսենք շատ տարածված մի սխալի մասին ևս: Դա «ով» և «ոք» դերանունների սխալ օգտագործումն է: Ամենուրեք լսում կամ կարդում ենք. «Այդ գիրնականը, **ով** իրականացրեց փլյալ հեղուազությունը», «Այդ մրցավարը, **ով** սուլիչը հնչեց...» և այլն: Հայեցի մտածող ու խոսող մարդու համար սրանք անընդունելի սխալներ են: Եթք փորձում են պարզել, թե ինչու են այդպես խոսում կամ գրում, այդ սխալի «հեղինակները» հայտարարում են, որ «ով»-ը վերաբերում է մարդուն, իսկ «ոքը»՝ անշունչ առարկայի: Ուրեմն հայերենին չեն տիրապետել Հ. Աճառյանը, որը գրել է՝ «Երեսն էլ եր այս գրքերում չեն գրել իհաջ հարկատր քառը՝ դիմել եմ Հ. Աճառյանին, **ոք** միշտ յօժարակամ օգնել է իհաջ»¹, Է. Աղայանն ու Հ. Քարսեղյանը, որոնց դասագրքում կարդում ենք՝ «Երևում էին մի քանի պահապաններ, **որոնք** անցուղարձ էին անում, **ոմանք** ամրոցի դրաների մուր կամ պահականցի առաջ, և **ոմանք** դլյակի շորջը... (Մուրացան)»², կամ «Հա առաջին աղջիկն էր, **ոք** հեկ Հիսանն խոսում էր այդքան մոլիկ»³ (ընդգծումները մերն են): Հայերենին վաստ էին տիրապետում նաև հանճարեղ Հովհաննես Թումանյանը, որը գրել է՝ «Գիրորը հանգութացակ, թեև լսում էր աղջիկ պարոնն իշայնը, **ոք** ճշում էր.-Ակոր ընչի՞ն պահում...»⁴, «Նոր կտակարանի» աշխարհաբար քարգմանիները՝ «Ամենայն մարդ, **ոք** կնոց նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հեկ իր սրբում»⁵:

Սիսականու, բայց «հնարամիտ» մարդկանց տրամաբանությամբ, երբ ձեզ հարցնում են, թե՝ չեք տեսել արյոց Հասմիկին, ճշտելու համար պետք է հարցնել՝

¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա: «Գիտական աշխատություններ», հ. XXI: Ե., 1949, էջ 5:

² Սով. Մալիսասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա: Ե., 1944, էջ ԺԳ:

³ Տես Է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու. դասագիրք V–VII դասարանների համար: Ե., 1986, էջ 125:

⁴ Տես նույն տեղում, էջ 111:

⁵ Հ. Թումանյան, Գիրորը: «Երկերի ժողովածու», հ. 3: Ե., 1969, էջ 49:

⁶ Աւետարան լսու «Սատրեռսի», գլուխ Ե, 28: «Նոր կտակարան. չորս աւետարաններ եւ գործը առաքելոց»: Մայր Արքու Ս. Էջմիածին, 1969:

«Ո՞վ Հասմիկին», հակառակ դեպքում Հասմիկը կարող է խիստ վիրավորվել:

«Հայերենագիտական բառարանում» նշվում է, որ դերանունները նաև բառայնորեն ցույց են տալիս «անձի ու ոչ անձի դասային տարրերակումը (ով-ինչ)»⁷: Այո՛, «ով»-ը վերաբերում է անձանց, իսկ «ինչ»-ը՝ ոչ անձանց, սակայն դա ամենին էլ չի նշանակում, թե «որ»-ը ևս չի կարող վերաբերել անձանց: Պարզապես, վերջինս հավասարապես կարող է վերաբերել ինչպես անձանց, այնպես էլ ոչ անձանց:

Վերը բերված օրինակները, կարծում ենք, լիովին բավարար են ապացուցելու համար, որ անձանց նկատմամբ «որ» դերանվան **կիրառության անրույյագրելիությունը** պարզապես մոլորություն է: Սակայն պետք է հիշել, որ «ով» և «որ» դերանունները հոնանիշներ չեն. դրանցից յուրաքանչյուրն ունի գործածության հստակ սահմանված ոլորտ: Դուք չեք կարող ասել՝ «Նրանք, **որոնք** ուզում են մասնակցել այս միջոցառմանը, պետք է նախապես գրանցվեն», «**Որը** չի սիրում իր ծնողներին, նա ուրիշն սիրել չի կարող», «**Որը** աշխատի, նա կուտի», «Նա, **որը** չի լրի ջոկապը, կանմահան», «Այն մարդիկ, **ովքեր** դիմում են մեզ, պետք է անձնագիր ներկայացնեն», «Հայերը, **ում** (ավելի վատ՝ **ումոնց**) ճակարտագիրը ժամանակին հուզել է շատ ու շատ առաջադիմ մարդկանց, այսօր կերպում են իրենց անկախ պերության լուսավոր ապագան»:

«**Ով**», «**որ**», «**ինչ**» դերանունները ինչպես հարցական, այնպես էլ հարաբերական դերանուններ են: «**Ով**-ը հատկացուցիչ է, «**որ**-ը և «**ինչ**»-ը՝ որոշիչ:

«**Ով**» դերանունը գործածվում է այն դեպքերում, երբ մենք ուզում ենք մի որոշ խումբ անձանց առանձնացնել մյուսներից՝ ցույց տալով խոսողի համար նրանց առավել կարևոր հատկանիշը, և ունի ներքակայական գործածություն՝ արտահայտելով ամբողջը՝ մասի հարաբերությամբ: Ստորադասական նախադասությունը դերբայական դարձվածով պարզ նախադասության փոխակերպելու դեպքում այն դառնում է ենթակա կամ ուղիղ խնդիր: Օրինակ՝ «Նրանք, **ովքեր շատ են կարդում, ունեն շատ զիրելիք»»—«**Շատ կարդացողները ունեն շատ զիրելիք», «**Մենք սիրում ենք նրանց, ովքեր դրսերում են ազնվություն»»—«**Մենք սիրում ենք ազնվություն դրսերողներին»:********

«**Որ**» դերանունը, ինչպես նշվեց, կարող է վերաբերել և՝ անձի, և՝ ոչ անձի («Արմենը, **որը**...», «Այն զիրքը, **որը**...» և այլն) ու գործածվում է այն դեպքում, երբ մենք նշում ենք տվյալ առարկաների հատկանիշը: Այս դերանունը արտահայտում է մասը՝ ամբողջի հարաբերությամբ: Ստորադասական նախադասությունը պարզ նախադասության փոխակերպելու դեպքում այն վերածվում է գոյականական անդամի լրացնան: Օրինակ՝ «Այն մարդը, **որը սիրում է իր հայրենիքը, կոչվում է հայրենասեր»»—«**Իր հայրենիքը սիրող մարդը կոչվում է հայրենասեր», «Դպրոցի լրացնալը, **որը միաժամանակ հայոց լեզվի մեր ուսուցիչն է**, մեծ դեր է խաղում մեր հայրենասիրական դաստիարակության գործում»—«**Դպրոցի լրացնալը՝ միաժամանակ հայոց լեզվի մեր ուսուցիչը**, մեծ դեր է****

⁷ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան: Ե., 1987, էջ 178:

խաղում մեր հայրենասիրական դաստիարակության գործում»: Եթե լիներ՝ «Նա, **ով սիրում է իր հայրենիքը**, կոչվում է հայրենասեր», ապա փոխակերպման դեպքում մենք կունենայինք՝ «**Իր հայրենիքը սիրողը կոչվում է հայրենասեր**»:

«**Ինչ**»-ը ևս դերանուն որոշիչ է, սակայն վերաբերում է միայն ոչ անձերին: Պետք է շեշտել, որ «**որ**»-ը վերաբերում է առարկաների կամ երևոյթների, մինչդեռ «**ինչ**»-ը վերաբերում է նաև գործողության: Օրինակ՝ «**Նա սրեղծեց մի երկ, որը հարստացրեց մեր հայրենասիրական գրականությունը**»—«**Նա սրեղծեց մի երկ, ինչը հարստացրեց մեր հայրենասիրական գրականությունը**»: Առաջին դեպքում հայրենասիրական գրականությունը հարստացվեց **երկի**, երկրորդ դեպքում՝ **երկի սրեղծման** շնորհիվ: Բերենք ևս մի քանի օրինակ: «**Ո՞Դ-ն ու ՀՀ-ն կնքեցին բարեկամության պայմանագիր, որը կնպաստի ՀՀ անվտանգությանը**» և «**Ո՞Դ-ն ու ՀՀ-ն կնքեցին բարեկամության պայմանագիր, ինչը կնպաստի ՀՀ անվտանգությանը**»: Առաջին նախադասության իմաստն այն է, որ ՀՀ անվտանգությանը կնպաստի պայմանագիրն ինքը, իսկ երկրորդ դեպքում խոսողը նկատի ունի, որ անվտանգությանը նպաստելու է պայմանագրի կնքման փաստը: Հայերենին հարիր չեն հետևյալ նախադասությունները. «**Նրանք կնքեցին համաշայինագիր, որը գեղի ունեցավ հանդիսավոր պայմաններում**» (համաձայնագիրը չի կարող տեղի ունենալ), «**Նրանք կնքեցին համաշայինագիր, ինչը ներառում է մի քանի կարևոր կերպ**» (կնքումը չի կարող ներառել կետեր), և այլն:

Դերանունների մասին խոսելիս չենք կարող շնչել մի տարածված սխալ ևս: Դա ուսերեննի ազդեցությամբ «**այս**» և «**այսպիսի**», «**ինչ**» և «**ինչպիսի**» դերանունների սխալ օգտագործումն է:

«**Այս**» և «**այսպիսի**», դերանունները ցուցական են, «**ինչ**»-ը և «**ինչպիսի**»-ն՝ հարաբերական (նաև՝ հարցական): Նախ՝ «**այս**» և «**ինչ**» դերանունները չունեն հոգնակի, մինչդեռ մյուս երկուսն ունեն՝ «**այսպիսիք**» և «**ինչպիսիք**»: Սակայն կարևոր է նշել հետևյալը. «**այս**» և «**ինչ**» դերանունները միայն փոխարինում են առարկայի կամ երևոյթի անունը՝ կոնկրետացնելով, բայց չմանրամասնելով, «**այս մարդը**», «**այս դեպքը**», «**ի՞նչ մարդ**», «**ի՞նչ դեպք**», մինչդեռ մյուս երկուսը օգտագործվում են այն դեպքերում, եթե խոսողը նկատի ունի որակական հատկանիշների նմանությունը՝ «**ինչպիսի մարդիկ**» (այսինքն՝ որքան լավ մարդիկ), «**այսպիսի գիրը**» (այսինքն՝ այսքան արժեքավոր գիրը), սակայն՝ «**ի՞նչ հոյակապ գիշեր է**» (բայց ո՛չ «**ինչպիսի հոյակապ գիշեր է**»), «**այս դեպքը քննարկելիս**» (այսինքն՝ կոնկրետ տվյալ դեպքը քննարկելիս), «**այսպիսի դեպք քննարկելիս**» (այսինքն՝ այս կարգի դեպքը քննարկելիս):

Հուսով ենք, որ այս համառոտ քննարկումը կօգնի մեր ընթերցողին ավելի լավ տիրապետելու մեր մայրենի լեզվին, որը մեր մեջ այլ հանճարեղ բանաստեղծ Ա. Խսահակյանի խոսքով՝ **մեր հայրենիքն է**: Ես հնարավոր չեմ լինել հայրենասեր, բայց չսիրել հայոց լեզուն կամ չձգտել լավ տիրապետելու նրան:

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիկյան, Լ. Յ. ՊԱՊԻԿՅԱՆ, կապիկյան,
Դ. Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգային ինքնուրյուն – տես <i>ազգային նույնականություն</i>	քափանցիկություն – прозрачность, transparency
ազգային նույնականություն – национальная идентичность, национальная сущность; national identity	լարման պարպես – разрядка напряжения; tension discharging
անվահեց – обод; rim	լարվածաձևախափումային վիճակ – напряженно-деформированное состояние; mode of deformation, deflected mode
ապակենորոնացված աստիճանակարգություն – децентрализованная иерархия; decentralized hierarchy	լիդեր – տես <i>առաջավար</i>
ապարատային վարչարարության բրած – բրածանիկ – пирамидальная модель аппаратурного администрирования; pyramidal model of machinery bureaucracy	լուսապատկերային վերլուծություն – спектральный анализ; spectral analysis
առաձգական շեղիչ – упругий девиатор; elastic deviator	լսովածքածություն – 1. разрыв, 2. разлом; 1. гибкость, 2. breach
առանցքահամաչափ խնդիր – осесимметричная задача; axially symmetric problem	խճարարային լիցք – щебеночная насыпь; macadam embankment
առաջավար – лидер; leader	կարգաբերում – наладка; 1. debugging, 2. adjustment
բազմազանեցում – диверсификация; diversification	կարգախոս – девиз, лозунг; 1. motto, 2. slogan
բազմականություն – многоукладность; multiformity	կարգավարժություն – дисциплинированность; discipline
բարդույթ – комплекс; complex	կերպափոխում – трансформация; transformation
գազարերություն – газовость; gaseousness	կշռադաշտություն – разумная военная достаточность; reasonable military sufficiency
դրույթ – положение, тезис; 1. provisions, regulations, statute, 2. thesis, tenet	կուանուատված ռազմական բավարարություն – интуиция; intuition
երկրածնախախումային պրոցես – геодеформационный процесс; geodeformation process	կուտակային մարտկոց – кумулятивная батарея; cumulative battery
զարգացման գործություն – экспансия; expansion	հակագշիների համամասնական զուգակցման սկզբունք – принцип пропорционального сочетания противовесов; principle of combining proportional counterbalances
զուգաչափ հատուցում – соразмерное возмездие; proportionate retribution	համակարգաստեղծ հասկացություն – системообразующее понятие; system-forming concept
էթնիկական առանձնություն – этническая обособленность; ethnic isolation	համակշռություն – компенсация; compensation
էթնիտավածայնացում – этнофрагментация; ethnic fragmentation	

համբնդիանրացում – глобализация; globalization	մեկնություն – толкование, интерпретация; interpretation, commentary
հանրային իրազեկում – информирование общественности, общественное информирование; public inform-ing	մեջյան – капище; pagan temple
հանրություն – штольня; gallery, adit	մշտագնում – мониторинг; monitoring
հասկացության պարագաներ – понятийный аппарат; conceptual machinery	մոտարկում – аппроксимация; approxi-mation
հաստատութենացում – институционализация; institutionalization	մտավոր ներուժ – интеллектуальный по-tential; intellectual potential
հարգածայիմացկունություն – ударо-прочность; impact resistance, shock resistance	մրցագային խմբիչանություն – конку-рентная олигархия; competitive oli-garchy
հարուցված երկրաշարժ – инициирован-ное землетрясение; induced earth-quake	նմանարկիչ – драматическая имитационная программа; imitating program
հեղուկրուելական տվյալ – жидкокри-сталлический датчик; liquid crystal sensor	շարժական գործունեություն – торгашес-кая деятельность; merchant's activi-tivity
հոգեխոցվածք – психическая травма; shock	պատեհաժամություն – своевремен-ность; timeliness
հոգեծիճին կորուս – психогенная потеря; psychogenic loss	պատփառ վարքականություն – кодекс чести; code of honor
հոգեկերտվածք – духовный облик; spir-itual countenance	պարփակող հանրատեսակ – вмещаю-щая порода; holding rock
հրահանգագիր – инструкция (письмен-ная); 1. directive, 2. regulation	պետութենակենտրոնություն – государ-ствоцентричность; state-centricity
ձեռնահասություն – компетентность; competence	ջրանիված շելլ – водоотталкивающий слой; water-repellent layer
ձնահյուս – снежная лавина; snow ava-lanche, snowslip	ջրանցույց – акведук; aqueduct
մածուցիկություն – вязкость; viscosity, tenacity	սլանածն – оползень; landslide, landslip
մակածում – индуктирование; induction	վերազգային – транснациональный; transnational
մարտական – боевой; 1. battle, 2. com-bat, 3. fighting	տարանջատում – дистанционирование, разделение; disconnection, dissociation
– մարտական հոգեխոցվածք – боевая психическая травма; battle shock	տեղեկութափում – информатизация; informatization
– մարտական պատրաստականություն – боевая выгрука; combat preparedness	տրամաչափ – калибр; 1. calibre, 2. gage
– մարտական պատրաստություն – боевая готовность; combat readiness	փոխակերպում – преобразование; trans-formation
– մարտական պատրաստում – боевая подготовка; combat training	փոխազդություն – взаимодействие; in-teroperability
մեկնակերպ – версия; version	քանակային սմազական – смазочный материал, смазка; oil, lubricant

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

- акведук — ջրանցույց
аппроксимация — մոտարկում
боевой — մարտական
— боевая выгucha — մարտական պատրաստականություն
— боевая готовность — մարտական պատրաստություն
— боевая подготовка — մարտական պատրաստում
— боевая психическая травма — մարտական հոգեխոցվածք
версия — մեկնակերպ
взаимодействие — փոխգործություն
вмешающаяся порода — պարփակող հանքանիսակ
водоотталкивающий слой — ջրամերժ շերտ
вязкость — մածուցիկություն
газовость — զազարերություն
геодеформационный процесс — երկրածնախախտում
глобализация — համընդհանրացում
государствоцентричность — պետության առաջնականություն
девиз — կարգախոս
децентрализованная иерархия — ապակենարկացած աստիճանակարգություն
диверсификация — բազմազնեցում
дистанцирование — տարանջատում
дисциплинированность — կարգավարժություն
духовный облик — հոգեկերտվածք
жидкокристаллический датчик — հեղուկվորտեղական տվյալ
имитационная программа — նմանարկիչ ծրագր
индуцирование — մակածում
инициированное землетрясение — հարոցված երկրաշարժ
институционализация — հաստատություն
инструкция — իրահանգ, իրահանգավիր
интеллектуальный потенциал — նուավոր ներուժ
- интерпретация — см. толкование
интуиция — կուահողականություն
информатизация — տեղեկության պրոցես
информирование общественности — համային իրավելում
калибр — տրամաչափ
копище — մեջյան
кодекс чести — պատվո վարքականություն
компенсация — համաշվուում
компетентность — 1. իրավասություն, 2. ձեռնահասություն, 3. իրազեկվածություն
комплекс — 1. համալիր, 2. բարդույք
конкурентная олигархия — մրցակցային խմբիչխանություն
кумулятивная батарея — կուտակային մարտկոց
лидер — առաջավար, իդեոլոգ
лозунг — см. девиз
многоукладность — բազմակացություն
мониторинг — մշտագինում
мотивация — շարժանիրավորում
наладка — կարգարերում
напряженно-деформированное состояние — լարվածականացումային վիճակ
национальная идентичность — ազգային նույնականություն, ազգային ինքնություն
национальная самость — см. национальная идентичность
обод — 1. անվանեց, 2. բոլորակ
общественное информирование — см. информирование общественности
оползень — սլաք
оптиковолоконный кабель — օպտիկաբելում մարտիկ
осесимметричная задача — առանցքահամաշափակ
пирамидальная модель аппаратурного администрирования — ապարատային վարչարության բրածև մողել
положение — 1. դրույթուն, 2. կանոնադրույթուն, 3. դրույք
понятийный аппарат — հասկացության

ապարատ	снежная лавина – ձնահյուս
преобразование – փոխակերպում	сопразмерное возмездие – զուգաչափ
принцип пропорционального сочетания – դիմացական գուգակցման սկզբունք	հաստցում
прозрачность – քափանցիկություն	спектральный анализ – լուսապատկերային վերլուծություն
психическая травма – հոգեխոցվածք	тезис – 1. թեզ, 2. см. положение 3
психогенная потеря – հոգեծննին կորուս	толкование – մեկնություն
разделение – 1. քաժանում, 2. см. гистанцирование	торгашеская деятельность – շարչիական գործունեություն
разлом – խզվածք	транснациональный – 1. անդրազգային, 2. վերազգային
разрыв – 1. խզում, 2. խզվածք, 3. ճեղքվածք	транспарентность – см. прозрачность
разрядка напряжения – լարման պարպիւմ	трансформация – կերպավիխում
разумная военная достаточность – կշռադատված ուազմական քափարարություն	ударопрочность – հարվածադիմացկունություն
своевременность – պատեհաժամություն	упругий девиатор – առաձգական շեղիչ շտունք – հանրություն
системообразующее понятие – համակարգաստեղծություն	щебеночная насыпь – խճաքարային լիգր
смазка – см. смазочный материал	экспансия – զավթողագործություն
смазочный материал – քաշնյութ	этническая обособленность – էթնիկական առանձնություն

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

adit – see <i>gallery</i>	compensation – համակշռում
adjustment – կարգաբերում	competence – 1. իրավասություն, 2. ճեղքանահասություն, 3. իրազեկվածություն
approximation – մոտարկում	competitive oligarchy – մրցակցային խընդիշյանություն
aqueduct – ջրանցույց	complex – 1. համալիր, 2. բարդույք
axially symmetric problem – առանցքահամաչափ խնդիր	conceptual machinery – հասկացութային պարաբան
battle – մարտական	cumulative battery – կուտակային մարտկունք
– battle shock – մարտական հոգեխոցվածք	debugging – կարգաբերում
breach – խզվածք	decentralized hierarchy – ապակենտրոնացված աստիճանակարգություն
calibre – տրամաչափ	deflected mode – see <i>mode of deformation</i>
code of honor – պատվո վարքականություն	directive – հրահանգ, հրահանգագիր
combat – see <i>battle</i>	discipline – կարգավարժություն
– combat preparedness – մարտական պատրաստականություն	disconnection – տարանջատում
– combat readiness – մարտական պատրաստություն	dissociation – see <i>disconnection</i>
– combat training – մարտական պատրաստում	diversification – քազմազանեցում
commentary – see <i>interpretation</i>	elastic deviator – առաձգական շեղիչ

ethnic fragmentation – էթնիկատվածայ-նացում	pagans temple – հեթանոսական տաճար, մեհյան
ethnic isolation – էթնիկական առանձնություն	principle of combining proportional counterbalances – հակակշիռների համամասնական գուգակցման սկզբունք
expansion – զավթողագործություն	proportionate retribution – գուգաչափ հասուցում
aqueduct – ջրանցույց	provisions – լրացրաց
fighting – մարտական	psychogenic loss – հոգեծին կորուս
gage – տրամաչափ	public informing – հանրային իրազեկում
gallery – հանրուղի	pyramidal model of machinery bureaucracy – ապարատային վարչարարության բրազանական ստորագրություն
gaseousness – զազարերություն	reasonable military sufficiency – կշռադատված ռազմական բավարարություն
geodeformation process – երկրածնա-խախտումային պրոցես	regulation – 1. հրահանգ, հրահանգագիր, 2. կարգավորում, 3. կանոնագիրը
globalization – համընդհանրացում	regulations – see <i>provisions</i>
holding rock – պարփակող հանքատեսակ	rim – անվահեց
imitating program – նմանարկիչ ծրագիր	rupture – խզվածք
impact resistance – հարվածադիմացկու-նություն	shock – 1. հարված, 2. հոգեխոցվածք
induced earthquake – հարուցված երկրա-շարժ	shock resistance – see <i>impact resistance</i>
induction – մակածում	slogan – կարգախոս
interpretation – մեկնություն	snow avalanche – ձնահյուս
informatization – տեղեկության վերաբերյալ	snowslip – see <i>snow avalanche</i>
institutionalization – հաստատութեացում	spectral analysis – լուսապատկերային վե-րաբերյուն
intellectual potential – մտավոր ներուժ	spiritual countenance – հոգեկերտվածք
interoperability – փոխազդություն	state-centricity – պետութենակենտրո-նություն
intuition – կրահողականություն	statute – see <i>provisions</i>
landslide – սողանք	system-forming concept – համակարգա-ստեղծ հասկացություն
landslide – see <i>landslide</i>	tenacity – see <i>viscosity</i>
leader – առաջավար, լիդեր	tenet – see <i>thesis</i>
liquid crystal sensor – հեղուկբյուրեղա-կան տվյալների ստուգիչ	tension discharging – լարման պարագում
lubricant – see <i>oil</i>	thesis – լրացրաց
macadam embankment – խճաքարային լիցք	timeliness – պատեհաժամություն
merchant's activity – շարժիական գործու-նություն	transformation – 1. կերպափոխում, 2. փո-խակերպում
mode of deformation – լարվածածնա-խախտումային վիճակ	transnational – 1. անդրազգային, 2. վեր-ազգային
monitoring – մշտագննում	transparency – թափանցիկություն
motivation – շարժառիթավորում	version – 1. սարքերակ, 2. մեկնակերպ
motto – կարօնիչություն	viscosity – մածուցիկություն
multiformity – բազմակացութայնություն	water-repellent layer – ջրամերժ շերտ
national identity – ազգային նույնակա-նություն, ազգային ինքնություն	

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի անսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ուսերեն և անգերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է կայակցնեն օգտագործված առավել կարևոր աղյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում թերփող փաստերի հավաստիորյան և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարունակիր չէ, որ համբեմի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիմումները, սխեմաները, գծագրերը, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները: Զնագրերը հետ չեն վերապարձուում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելոց հետո:

Նյուերի մասամբ կամ ամբողջությամբ արտասպամ թույլատրվում է միայն խմբագրության գրաֆը համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ Ա. Ս. Շահվերդյան
Ուսազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ Զ. Գ. Ասապրյան
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ Ա. Ս. Մովսիսյան
Տեխնիկական բաժնի պետ՝ Ա. Պ. Նազարերյան

Հայերեն տեքստերի խմբագիր՝ Ա. Կ. Շահրազյան
Ուսուերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Լ. Հ. Պապիկյան
Զեավորող նկարիչ՝ Հ. Գ. Սահակյան
Լուսանկարիչ՝ Ա. Գ. Ներսիսյան

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրում՝ Ա. Պ. Նազարերյանի
Տեքստերի թարգմանությունը՝ Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի
Համակարգչային պատճենումը՝ Գ. Ա. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի
Սրբագրիչներ՝ Ն. Հ. Բաղդասարյան, Տ. Մ. Տիրացույան

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ Ա. Հ. Հակոբյանի

Լուսանկարչական ապահովումը՝
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն,
ԶՈՒ-ի մարտական պատրաստության վարչություն

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒնեցու փողոց, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:

Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ուսումնական հետազոտությունների ինստիտուտի
«Հայկական բանակ» ուսումնական հանդես, 2009 թ.

Ստորագրվել է տպագրության 22.05.2009:

Թուղթը՝ օֆսեթային: Զնաշափը՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 220 էջ + 8 էջ ներդիր:

Պայմանական տպագրական 16,75 մամուլ: Տպագրանակը՝ 500:
Տպատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:

Վկայական՝ 523: Դասի՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:



ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանը, Պաշտպանության նախարար Ա. Օհանյանը,

Կրթության և գիտության նախարար Ա. Մելքոնյանը
մասնակցում են «Փոքր Սիեր» կադետասեպուհական կրթահամալիրի
7-րդ տարեղարձի առթիվ կազմակերպված միջոցառմանը.

2009 թ. մարտի 28



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ